ՍՏՈՒԳՎԱԾ 1951

# ՀԱՄԱՀԵՏԵՒՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ,

Թովմայի Գեմբեցւոյ.

# IMITATIO CHRISTI

THOMÆ A' KEMPIS.

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1958




149

~~119~~

~~126860~~

ԵՊՀ Գրադարան

SU0159264

# ԳԻՐՔ

## Թովմայի Գեմբեցւոյ:

Կանոնաւորի Կրօնաւորին՝ ի
Կարգէ Սրբոյն Օգոս
տինոսի:

Յաղագս Նմանողութեան
Քրիստոսի:

Թարգմանեցեալ՝ ի Յօհաննիսէ
Վարդապետէ Կոստանդնու
պօլսեցւոյ, ՝ի Հոգեկան
Օգտակարութիւն Ազգին
Հայաստանեայց:

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1958

ROMÆ, Typis Sacræ Congregationis de Propaganda Fide. 1674.

*Superiorum Permiſsu.*

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] [illegible]

[illegible]
[illegible]
[illegible] [redacted]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
1788

Քան առ սրբուհին ընծայելոյն:

Ո՛վ ամենասրբուհին կոյս Մարիամ, դշխոյ պանծալի, աղբիւր հոգեկանի խնդութեան, մայր և ծնող կեցուցչին մերոյ, լրումն կուսութեանց, ճոխութիւն շնորհաց, և դաստիարակ հանուրց ճշմարտասիրաց՝ քրիստոնէից՝ ի քեզ ապաւինեցելոց:

Զայն որդւոյ քոյ միածնի քաղցրանուագ հնչէ յարաժամ ՚ի մէջ եկեղեցւոյ. Թէ ես եմ ճանապարհ ճշմարտութիւն և կեանք: Ահա որք հետևելով ընթացելոցն պարուց ոմանք զմահուան նորին բերելով յինքեանս զչարչարանաց, մարտիրոսականաւ քաջութեամբ վճարեցին զկեանս, և ոմանք զսրբակրօնութեան նորին և զառաքինութեան

ռանելով զշաւիղ, ճգնողականօք
վարուք կատարեցին զընթացս:
Ոմանք կուսութե և մաքրութե
նորին ճառագայթելով յինքեանս
զշնորհ, ողջախոհականաւ բարե-
համբաւութե փոխեցան յերկինս,
Եւ այլք խոկականն վարդապետու-
թե նորին գրով Ջատագովք, բա-
նիւք և գրովք արձանացուցին ըզ
նոյնն. Ըստ որում և Թօմայն
Գ-նմբեան հեղինակն այսորիկ
գրեան, որ ըստ տուեալութե աղ-
դողական իւրում խղճմտանի վա-
յելչայարմարիւք և հոգեշօշափիւք
ածովք վաղուրեան արտադրեաց
զսոյն; Զոր տեսեալ Պարոն Գ-ա-
պարի ճուղայեցւոյ, որդւոյ Խօ-
ճայ Սահրատի, Թախանձանօք
խնդրեաց յինէն Թարգմանել ըզ
նոյնն ՚ի մերն բարբառ, ՚ի զբօսանս

և ՚ի

և՛ իղձուարձուԹին համուրց հոգէ-
ղարմից ։ Քանզի սովաւ ծրաւի
կարէ ոք ուսանիլ, կրել յօժարա-
բար զբաղցր լուծ փրկչինմերոյ
յի ։ Բայց առ կեանն յաւիտենա-
կան, և առ ճշմարտուԹին անեզրա-
կան, ո՞ է որ կարիցէ մատչիլ Թարց
քոյոց օժանդակուԹեանց, ո՜վ ամէն-
երանուհին մայր , որովհետև դու
ես դուռն ևծ-ապուածն արևու ,
յորմէ ծագեցաւ մեզ արեգակն
արդարուԹեան քս միածինն քո ։
Առ քեզ ուրեմն դիմեմ սրտով խո-
նարհական համոզերձ ծնաւիւք ի-
մովք համազգենօք , և վերանուիրեմ
քում մայրականին գԹուԹեան զգու-
շաւոր զոյս աշխատուԹիւ , զի
կուսականաւ քոյով հոգեբարձու-
Թեան ազնուազարդեալ սերիցես
զսոյն ՚ի մէջ մերազնեայց , ներգործա-
ւորէ

ւարելով ՚ի խնամս նոցին զազդեց-
մունս սորին ջերմեռանդականս,
ևնպաստելով նոցին ՚ի կրթութիւնս
առաքինականս: ՚Ի փառս անուան
Որդւոյ քոյ միածնի, ՚ի գովութ̃ի
քում բարեգթութ̃եդ և ՚ի յօգուտ
հանուրց ադամազնեաց : Որոց և
արդիւնականօք աղօթիւքն միջնոր-
դեա՛ յերկնից զառողջութ̃ի և զա-
ջողութ̃ի Պարոն Գ—ասպարի խմ-
դրողի սորին և ընտանեաց նորին,
և զհանգիստ յաւիտենական հո-
գւոյ հօր նորին Խօճայ Աւհրա-
ամին, նաև և նմին Թշուառացելոյս
զուղղութ̃ի վարուց, զի քոյ եմ ես
յաւիտեան :

Անարժան ծառայ
Յոհաննէս բուզանդեան
չնչին քահանայ :

## Առ ընթերցօղս Աղօթից:

ՈՐ 'ի դեռ եւ մանն իմ ըստ աղօ-
եցուԹԷ տն յարև մուտ
ս 'ի համօրինել ինձ գրգա
նագրագանս լեզուս տաճ-
քերից աղգաց Եւրոպէացւոց նոցին
գիտուԹիս, Նախնակէս՝ Եւ մանա-
ւանդակէս՝ վերադարձել, որ դրնի
վերաստացման ուէնջալեացն համ
դերձելոց, ըստ սակի և ըստ տոչու-
ԹԷ հոգւոյն, պնոյնս իբր բարե-
կամ համագնեաց, սփոփեցեմ և սար
ծարծեցեմ 'ի մէջ հայկազունեաց:
Արդ այսպէս՝ 'ի Ժամանելին իմ առ նորա
տանիս փարելի, և 'ի գնմայլելն իմ նա
քօջ, ուխտ եդի անձին, զի զօրինակ
գեղեցիկ, և զօրինակ շահաւէտ ան

կանեցի

կանոնցն ՚ի ձեռն իմ, ածանցիցեմ ըղ
նոյնն ՚ի հայկաբանութ̅ն, ՚ի յօգուտ
և ՚ի զուարճութ̅ն հայոց: Վ̅ս որոյ
զկնի այլոց երից գործակաց արտա
դրեցելոց, գտի զգրոցիկս զայս հա
մահետևմանն ք̅ն, որք մինն ՚ի բազ
մաց առաքինեաց և հռետորաց գրե
անց ՚ի միջ լաթինացւոց, զորև
տեսի գոլ Թարգմանեցեալ ՚ի յոք
ունս բարբառս այսինքն ՚ի յունա-
կանն, ՚ի յարաբականն, ՚ի կալլիա-
կանն, ՚ի յիսպանականն, յիտալա-
կանն, և ՚ի նիօլօնականն և յայլս, և
շարժեցեալ ՚ի նախանձ զբուռն ար
կի ՚ի լոյս ածել զնոյնն, զոր և նպաս
տութ̅բ միշտ կուսին Մարիամու
և աղօթիւք հօրն մերոյ Սրբոյն
գրիգորի լուսաւորչին աւարտե-
ցի յամի տ̅ն. 1670. ամսեանն մար

տի

մի նուաճուք առաջնում ; եւ զոր ըստ
կալարուք զատ , եւ արկէք 'ի ներս , 'ի
փառս մեծագունին այ̃ , եւ եթէ
արդիւնաւորեսցի շնորհօք ձերովք
որպէս զախորժակս ձեր , բարի է ,
իսկ եթէ ոչ , ներեցէք իմում տկա
րութեն , ողջ լերուք ։

# APPROBATIO.

EGo Vartanus Hunanian Sacerdos Armenus, iussu Sacræ Congregationis de Propaganda Fide, reuidi hunc librum interpretatum à Latina in Armenam, & testor esse concordem cum originali suo, quo ad linguam verò Armenam elegantem.

*EGo Basilius Barsech, assero hunc librum, ex latino in Armenicum idioma translatum, omninò conuenire cum suo originali.*

*Imprimatur*,

Si videbitur Reuerendiſsimo Patri Magiſtro Sac. Pal. Apoſt.

*I. de Angelis Archiep. Vrb. Viceſg.*

*Imprimatur*,

r. Raymundus Capiſuccus, Sac. Pal. Apoſt. Magiſter.

# Թօմայի Գեմբեցւոյ.

## Յաղագս համահետեւմանն Քրիստոսի:

## Գիրք առաջին:

### Մակադրեցութիւնք առ կեանս հոգեկանս Օգտակարք:

### Գլուխ առաջին:

### Յաղագս համահետեւմանն Քի, եւ ունայնութեց ամենեցուն աշխարհի խոտման:

1. Ո՛Ր հետեւի ինձ, ո՛չ շրջի 'ի խաւարի, ասէ տրն: Այս յորդորեն բանք քի որովք առ
ազդիմք,

ազդիմք, ոպ̄ զի կենաց նորին եւ վա_
րուց համահետեւիցիմք ։ Քանզի
եթէ կամիցիմք ճշմարտապէս՝ լու_
սաւորիլ, եւ յամ̃է կուրութ̄ե սրտի
ղերծանիլ, Ուրեմն ծայրագոյն
Ջանն մեր լիցի, զի զվարուցն Յ̄ի Ք̄ի
համախորհիցիմք ։

2 . Վարդապետութ̄ին Ք̄ի,
զվարդապետութ̄իս բնաւս սրբոց
գերազանցէ՝ . Եւ որ ունի զհոգի
նորին, զմանանայն ծածկեցեալ 'ի_
նմա գտանէ ։ Բայց պատահի եր_
բեմն, զի բազումք 'ի յաճախէ լսոյ
աւետարանին զդոյն ինչ իղձ զգան,
վս̄ զի ոչ ունին զհոգին Ք̄ի ։ Իսկ
որ կամի լրապէս՝ եւ քաղցրապէս՝
իմանալ զբանս Ք̄ի, պարտի համա_
կերպել նմին զկեանս իւրս բնաւս ։

3 . Զի՞նչ օգուտ է քեզ խորթնա_
պէս՝

պես՝ զհիմաբանելն զերրորդութ͞է,
եթէ ո՛չ ունիցիս զխոնարհութ͞ի,
որով երրորդութ͞են անհաճոյ լինիս՝
Զի իրաւի բանք խորինք ո՛չ առ-
նեն զմարդ ս͞բ, և ո՛չ արդար: Այլ
կեանք առաքինականք սիրելի առ-
նեն զմարդ ա͞յ: Ըղձամ ուրեմն
մանաւանդ զգալ զապաշաւութ͞ի,
քան թէ գիտել զսահման նորին:
Եթէ ունէիր զբոլոր ա͞ծաշունչն
առեալ 'ի բերան. և զասացուածս
հանուրս փիլիսոփայից, թարց սի-
րոյն ա͞յ, և շնորհաց նորին, զինչ
օգտէին քեզ էնաւքն: Ունայնու-
թ͞ի ունայնութ͞եց, ա͞մինչ ընդու-
նայն է, բաց՝ ի սիրոյն ա͞յ, և 'ի ծա-
ռայութ͞է նորին միայնոյ: Այս է
ուրեմն ծայրագոյն իմաստութ͞ի,
խոտել զաշխարհս, և փութալ առ

արքայութ̃ին երկնային :

4. Ունայնութ̃ի է ուրեմն խնդրելն զփարթամութ̃իս կորըստականս. և յուսալ ՚ինոսա : Ունայնութ̃ի է և ս փարիլն զպատուօք, և զինքն ՚իյաստիճանս վեհագոյնս բարձրացուցանել: Ունայնութ̃ի է հետևիլն մարմնոյ ցանկութ̃ե . և ըղձալ այնմ , որոյ աղագաւ զկնի պատժիլ պա́րտէ ծանրապէս: Ունայնութ̃ի է և ս հայցելն զկեանս երկարս , և զկենաց բարեաց զդոյն ինչ փոյթ ունելն: Ունայնութ̃ի է միայն նշմարելն զկեանս ներկայս , և ո́չ զայնս որք ապառնիքն են նախատեսանել : Ունայնութ̃ի է և ս սիրելն զայն, որ ամենևիմէ արագապէս՝ անցանէ: և ո́չ ճեպելն յայն, ուր մշտնջենական խնդութ̃ի մնայ :

Յիշեա́

5 . Յիշեա՛ յաճախապէս՝ զա-
ռակն զայն: Թէ ո՛չ յագին աչք 'ի տե-
սութ̃է; և ո՛չ լնանին լսելիք երբէք
'ի լսոյ: Ջանա՛ ուրեմն զսիրտ քո
'ի սիրոյն երևելեաց արտաքարշել,
և առաներևոյթս անդրաբերել:
Քանզի հետևօղք զգայութ̃ց իւր-
եանց բծաւ̂որեն զխղճմտանս իւր-
եանց և կորուսանեն զշնորհն այ̃:

## Գլուխ: Երկրորդ:

### Յաղագս զինքենէ կարծեաց խոնարհաց:

1. Ամ մարդ բնականաբար
ցանկայ գիտել, բայց
գիտութի̃ թարց եր-
կիւղին այ̃ զինչ օգուտէ;

Յիրաւի ասե՛մ , բարեգոյնէ գռեհիկ խոնարհ , որ ծառայէ ա̅յ , ք̅ զփիլիսոփայ հպարտ , որ զին քէնէ անփոյթ եղեալ , զընթացս երկնից նկատէ : Որբարեպէս՝ ճանաչէ զինքն , խոտի յինքենէ , եւ ո՛չ հրճուի գովութ̅բք մարդկայ նօք : Եթէ գիտիցեմ զա̃մ ինչ որ յաշխարհի է եւ զսէր ո՛չ ունիցիմ , զի՛նչ օգուտ է ինձ առաջի ա̅յ , որ արդէնդատելոց է զիս :

2 . Հանգի՛ր ՚ի սաստկագունէ ըղձէ գիտելոյ , զի ՚ի նմա գտանին ցնդմունք մեծամեծք եւ պատրանք: Քանզի որք գիտունքն են , յօժա րութ̅ք կամին տեսանիլ , եւ իմաս տունք անուանիլ : Եւ զի բազումք ինչք գոն , որոց գիտութ̅իւն կամ սակաւինչ . կամ բնաւին ո՛չ ինչ

օգուտքէն հոգւոյն ։ Ուստի յոյժ անմիտ է այնպիսին, որ առաւել դիտէ առ այլս ինս, քան յայնս որք իւրում հոգւոյն օգտակարքեն։ Վասնզի բանից բազմութ͞իք ո՛չ յագեցուցանեն զհոգին ։ Այլ կեանք բարիք, զովացուցանեն զմիտս, և խղճմտանք մաքուրք, տան մեզ զյոյս մեծ առ ա͞ծ ։

3. Որքան առաւել և բարիապէս՝ գիտես, այնքան ծանրապէս՝ անտի դատեսցիս, եթէ ո՛չ սրբութ͞է կեցցես ։ Մի՛ փքանար ուրեմն արհեստիւ կամ գիտութ͞է, այլ մանաւանդ երկիր սակս շնորհեցելոյ քեզ ծանօթութեան ։ Եթէ թուեսցի քեզ թէ զբազում ինչ գիտեցես, և բարեպէս՝ իմանայցես, սակայն գիտեա՛, զի պա՛ն ևս բա-

զուտք ինչք, զորս անգիտանաս: Մի՛ կամիր բարձրամտել, այլ մանաւանդ զտըգիտութիւն քո խոստովանեա՛ց: Ընդէ՞ր կամիս զքեզ յառաջ արկանել, որով հետեւ գտանեն բազումք քան զքեզ գիտունք, եւ հմտագոյնք յօրէնս: Վասն որոյ եթէ կամիս օգտակարապէս՝ գիտել զինչ ինչ եւ ուսանիլ, սիրեա՛ զոչ գիտելն, եւ զոչ ինչ համարելն:

4. Ահա այս՞ է բարձրագունեղ եւ օգտակարագունեղ ընթերցուած, այսինքն իւրոյ անձին ճշմարիտ ճանաչումն, եւ արհամարհումն; քանզի իւրոյ ինքեան ո՛չինչ համարուեցումն, եւ զայլոց միշտ բարի եւ վեհ զգացումն, մեծ իմաստութիւն է՝ եւ կատարելութիւն: Եթէ տեսանիցես զոք յայտնա-

պէս՝

պէս՝ ի մեղս, կամ թէ անկեալ՝ ի՛
ծանրագոյն ինչ փորձութի՛, ո՛չ
պարտիս զքեզ բարեգոյն քան զնա
վարկել, զի ո՛չ գիտես թէ ո՞ր քան
ժամանակս տեւելոցիցես՝ ի բարու
թէ քում: Ամենեքեան թերեւս
տկարքեմք, բայց դու մի՛ համա
րիցես զոք տկարագոյն քան զքեզ:

## Գլուխ: Երրորդ:

### Յաղագս վարդապետութե̃ ճշմարտութեան:

1. Երջանիկ է նա, որու̃մ
ճշմարտութի̃ն ինք
նին ուսուցանէ, ո՛չ
ձեւակերպութե̃ք եւ
ձայնիւք անցաւորօք, այլ ըստոր

ում են ։ Կարծիք մերք եւ զգայութիւնք ցանկ զմեզ պատրեն, եւ դոյն ինչ՝ տեսանեն ։ Զի՞նչ օգուտ է յաճախ խուզումն զիրաց խորթնեաց եւ զգաղտնեաց, եթէ յաղագս որոց ոչ յանդիմանիցիմք ՚ի դատաստանին թէ տգէտքիցեմք ։ Մեծ իմն անխոհեմութիւն է, մինչ հատուցանեմք զիրօք օգտակարիւք եւ հարկաւորօք, եւ յօժարակամ՝ պարապիմք ՚ի վայելչալուրս, եւ ՚ի վնասակարս, քանզի ակնթեղաչս ունիմք եւ ոչ տեսանեմք ։

2 ։ Եւ որ՝ զի՞նչ փոյթ է մեզ զսեռից եւ զտեսակաց, զի ընդ որում յաւիտենականն բանն խօսի, նա ի բազմաց տարակուսութեց զերծանի, եւ կարէ լինել հաստատուն սրտիւ, եւ առ ած խաղաղարար յարամնալ ։

ձայլ ։ Քանզի 'ի բանէ միոյ բը
նաւն, և մինն խօսի զբնաւն ։ Եւ
այսէ սկիզբն որև խօսի ընդ մեզ ։
Ո՛չ ոք Թարգմանմա կարէ իմանալ,
և կամ ուղղապէս՝ դատել ։ ԺԶուոր
ծմք միեմ, և զբնաւն քարշէ առ
մին, և զմա՛մ 'իմիում տեսանէ ։
Ո՛ վճշմարտութի՛ն ած, միա՛ որեմ
զիս ընդ քեզ սիրով մշտնջենա
ւորիւ ։ Զի ձանձրացուցանեն զիս
զբազում ընթեռնուլն և լսելն ։
Քանզի 'ի քեզ է բնաւն զոր ցան
կամ և փափաքիմ ։ Լռեսցեն ու
րեմն վարդապետք համուրք, կար
կեսցին միանգամայն ստեղծ ու
ածք բնաւք, այլ դու միայն խօս
եաց ընդ իս ։

3. Որքանոք առաւէլ՝ յաւե
լինքեան, և պտի ըստնեբքնոյ մարդ

ոյն,

ոյն, ա՛յնքան գբազումս եւ գնրբա-
գոյնս թարց աշխատանաց իմա-
նալ։ Քանզի ՚ի վերուստ առնու-
գլոյս իմացողութե։ Մաքուր եւ
պարզ եւ հաստատուն հոգի, ՚ի հոգս
բազումս ոչ տարացնդի։ Քանզի
առնէ զբնաւն ՚ի փառս այ, եւ ջա-
նայ ներ յինքեան մերկանալ յամե-
նեցունց որոնմանց յատկականաց։
Ո՞վ է որ զքեզ առաւել արգելու
եւ տագնապէ, եթէ ոչ քոյոյ սրտին
ախտակրութի անմեռ։ Այր բարի
եւ երկիւղած, զառնելիս իւրս նախ
յինքեան կարգաւորէ, զորս ար-
տաքս ՚ի կատարկանել մարթէ։ Ու-
տի ոչ քարշեն զնա առնելիքն ՚ի ցան-
կութիս, եւ ՚ի յօժարութիս մոլէ-
կանս, այլ ինքն սանձահարէ զնոսա
ըստ հաճութէ ուղղի բանի։ Ո՛ր-

ովէ

ճմէ որ քաջապէս պատերազմի ; եթէ ո՛չ ուշանայ զինքն յաղթահարել: Ըս̄ որոյ պիտոյ է, զի այս լինիցի մեր փոյթ, այսինքն յաղթահարել զմեզ, և օրըստօրէ զօրեղագոյնք քան զմեզ լինել, և առ բարեգոյն ինչ յառաջանալ:

4. Ամ̄ կատարելութի̄ այսորիկ կենցաղոյս, զանկատարութի̄ ինչ ինքեան առակցեցեալ ունի: Եւ ամ̄ տեսողութի̄ մեր, 'ի միգէ յիմիքէ ո՛չ զերծանի: Ուստի զինքենէ գիտաւորութի̄ խոնարհ, ապահովագոյն շաւիղ է առ Ած̄. քան զխորին խուզումն գիտութեց: Մ՛չ է խոտելի գիտութի̄, կամ իւրաքանչիւրոյ իրի դուստ ծանօթութի̄, որ բարի է ըստ ինքեան նկատեցեալ, և յԱյ̄ կարգաւորեցեալ:

Բայց

Բայց նախամեծարելիքեն միշտ, խղճմտանքբարիք, եւկեանք առաքինականք։ Եւ քան զի բազումք առաւել Ջանան ուսանիլ, քան բարեւլեն՝ կեալ՝ մն որոյ բազմից՝ մոլորին, եւ Թերեւս զո՛չ ինչ կամ զդոյն ինչ պտուղառնեն։

Ե. ՈՐՀԹԷ զայնքանս զգուշութիւն 'ինկիրարկանէաք առ 'ի յատակել զմոլութիւն եւ 'ի տնկել զառաքինութիւն, զորքանս 'ի կիր արկանեմք 'ի հետազօտութեան միոյ խնդրոյ փիլիսոփայականի, ո՛չ լինէին այնքանք չարութիւնք եւ գայԹակղութիւնք 'ի ժողովրդեան, եւ ո՛չ տարաձայնութիւնք 'ի միաբանս ։ Իրաւի՞ ասեմ, յաւուր դատաստանին ո՛չ խնդրի 'ի մէնջ Թէ զինչ ընԹերցաք, այլ Թէ զինչ արարաք։ ո՛չ

Թէ

թէ բարեպէս՝ խօսեցաք, այլ թէ որպիսեաւ բարեկրօնութ̄բ կեցաք: Ժամ ինձ այժմ, ուրեմն նարդեանս տեարքն այնոքիկ և վարդապետք, զորս ծանեար մինչ կենդանիքն էին, և ուսմամբք ծաղկեէին : Որոց այժմ զընձեռուածս այլք վայելեն, և ո՛չ գիտեմ թէ արդեօք խորհեցին զնոցունց : Ի կեանս իւրեանց գոլ ինչ համարէին, բայց այժմ լռութ̄ի է վ̄ն ն̄ց:

6. ՈՀ թէ ո̂պ̄ վաղվաղակի՝ անցանեն փառք աշխարհի, երանի՛ թէ կեանն նոցին համեմատիւր գիտութեղ նոցին, քանզի յայնժամ բարեպէս՝ ուսանէին և ընթեռնոյին: Ո̂րքան անձինք կորընչին սնոտեաւ գիտութ̄բ աշխարհիս այսորիկ, որք ունին պսակաւինչ՝ փոյթ

զծառայ

զծառայութե̃ն ա̃յ ։ Վ̃ս զի առաւ-
ել ընտրեն զմեծութի̃ն , քան
զխոնարհութի̃ն ։ ուստի նանրանան
'ի խորհուրդս իւրեանց ։ Արդ՝ ճշ-
մարտապէս մեծ է այն, որ ունի զմեծ-
սէր առ ա̃ծ ։ Եւ ճշմարտապէս՝
մեծ է այն , որ յինքեան փոքր է ։
Այլեւ ճշմարտապէս՝ խոհեմ է այն
որ զա̃մ ինչ կենցաղոյս , իբրեւ զկղ-
կղանս համարի , ո̃ր զի զք̃ս շահի-
ցէ ։ Իսկ ճշմարիտ գիտունն է
այն , որ առնէ զկամս ա̃յ ,
և զկամս իւրս 'ի բաց
թողու ։

Գլուխ.

## Գլուխ. Չորրորդ:

### Յաղագս նախապատրաստութե̃, և խոհեմութե̃ ՚ի յառնելիս:

I. ՈՉ ամենեցուն բա-
նից հաւատալ պար-
տիմք, և ո՛չ ներդրդ-
մանց բնականաց,
այլ զգուշութե̃ և երկայնմտութէ
զա̃մ ինչ ըստ Ա̃յ կշռել: Բայց ո՛հ
ցաւո՜յս, զի բազմիցս դիւրաւ չար
ինչ քան թէ բարի ինչ զայլոց,
ասի և հաւատացեալ լինի: Ահա
այսպէս՝ տկարքեմք: Բայց արք
կատարեալք ամենեցուն ճառողաց
դիւրաւ ո՛չ հաւատան; քանզի
գիտեն ըզտըկարութի̃ մարդկային,

զհակումն նորին ՚ի չարն եւ զսա-
հումն նորին ՚ի բարիս :

2. Մեծ իմաստութի է ոչ ըշտապելն ՚ի յառնելիս, եւ ոչ ձգալն կամակորութբ ՚ի կարծիս իւրայատուկս : Նոյնպէս պատշաճի ոչ հաւատալն ասացելոց ամենեցուն մարդկան : եւ ո՛չ ներհեղուլն փութով յականջս այլոց, զայն զոր լուա՛ն, եւ զոր հաւատա՛ցն : Ընդ առն իմաստնոյ եւ երկիւղածի խորհրդակցիր, եւ խնդրեա՛ մանաւանդ ՚ի բարեգունից ներկրթիլ, քան թէ հետեւիլ քոյոց հանճարոց : Կեանք բարիք, առնեն զմարդ իմաստուն ըստ ա̄յ. եւ խելամուտ ՚ի յիրս բազումս : Որքանոք խոնարհագոյն յինքեան եւ հնազանդագոյն ա̄յ, այնքան յա̄մուլ է իմաստնագոյն, եւ խաղաղագոյն : Գլուխ

## Գլուխ : Հինգերորդ :

### Յաղագս ընթերցման գրոց սրբոց :

1. Ճշմարտութիւն է խնդրելի ՚ի գիրս սուրբս, և ոչ գեղեցկութիւն բանից: Այնու հոգւով ընթեռնունիլ պարտի ամ̄ գիրք ս̄ք, որով և է՛ արտադրեցեալ : Մանաւանդ խնդրել պարտիմք զօգտութիւն ՚ի գիրս ս̄բս, քան թէ զնրբութիւն բանից : Նոյնպէս յօժարութեամբ ընթեռնուլ պարտիմք զգիրս հոգևորս և զպարզաբանս, որպէս զնրբահայեցս և զխորինս : Մի՛ գայթակղեցուցանիցէ զքեզ

հեղինակութիւն շարադրողին, թէ դշատ կամ զաւկաւ տեղեկութիւն գրոց ունիցի, այլ զուտ սէր ճշմարտութեան, առքարշիցէ զքեզ ՚ի յընթերցումն; մի՛ խնդրիցես թէ յոր մէիցէ ասացեալ, այլ լուր թէ զինչ ասիցէ:

2. Անցանեն ամէք կենաց մարդկան, իսկ ճշմարտութիւն տեառն մնայ յաւիտեան: Օրինակօք բազմօք, թարց աչառութեան խօսի ընդ մեզ Աստուած: Բայց հետախուզութիւն մեր արգելու զմեզ բազմիցս յընթերցման գրոց սրբոց: Քանզի կամիմք իմանալ և առարկել ուր անցանել պարտէիմք պարզապէս՝: Ուստի թէ կամիս զշահ ինչ գտանել, ընթերցիր խոնարհաբար, պարզաբար, և հաւատարմաբար: Եւ մի՛

կա

կամիր ունել զանուն գիտնոյ. այլ հարց հեզաբար, և ունկնդիր սրբոց լռութբ: Մի՛ անհաճոյք թուիցին քեզ առակք ծերոց, զի թարց պատճառի ո՛չ են ասացեալք :

## Գլուխ : Վեցերորդ :

### Յաղագս տարակարգից զգացմանց :

1. Որքանիցս ոք յիրինչ անկարգապէս՝ առձկտի, այնքանիցս յինքեան անհանգիստ լինի: Ամանորոյ գոռոզք և ագահք ո՛չ երբէք հանգչին, իսկ աղքատք և խոնարհք հոգւով նաւաստում շրջին խաղաղութե: Այր որ ո՛չ է

տակաւին մեռեալ յինքեան, դիւ-
րաւ փորձի և յաղթի ՚ի յիրս փո-
քունս և յունայնս։ իսկ տըկարն հո-
գւով և կերպիւ իւիք դեռևս մար-
մնաւորն, և առաջգայիս հակամի-
տողն, դժուարաւ կարէ զինքն ար-
տաքարշել բոլորովիմբ ՚ի յերկրայ-
նոց ըղձից. ուստի ցանկ ՚ի տրտմու-
թէ կայ մինչ հրաժարի, դիւրաւ
ևս տեղիտայ վշտացնութէ եթէ
ոք նմա ընդդիմանայցէ ։

2. Իսկ եթէ հաւանիցի այնմ
որում ցանկայ, իսկոյն յաղագս
պարտաւորութէ խղճին ծանրա-
նայ ։ Քանզի հետևեցաւ իւրոցն
կրից, որք ո՛չ պատճառեն նմա զխա-
ղաղութիւն զայն զոր խնդրէր ։
Ուստի պատերազմելովք իւրոցն
կրից, գտանէ զճշմարիտ խաղաղու-

թի

թն սրտի, այլ ո՛չ ծառայելով նա-
ցին : Ուրեմն ո՛չ է խաղաղութիւն 'ի սրտի առն մարմնաւորի, եւ ո՛չ առն զգալեաց հետեւողի, այլ միայն ըն սրտի առն ջերմեռանդի բարեպաշտի, եւ հոգեւորի :

## Գլուխ Իեօթներորդ :

### Յաղագս ունայնի յուսոյ, եւ խորշելոյ փքացման :

1. Սնոտի է այրն այն, որ զյոյս իւր դնէ 'ի մարդիկ. կամ 'ի ստեղծուածս : Ելն որոյ մի՛ ամօթ թուիցի քեզ ծառայելն այլոց 'ի սէրն յի քի, կամ երեւիլն իբրեւ զաղքատ նայամիկ աշխարհի:

ւմի՛ ապաւինիր յանձն քո, այլ կայա ցո՛ զյոյս քո առ ած ; Արա՛ զորինչ ՚ի քեզէ , եւ ած օգնական եղիցի քում բարեհաճութե: Մի՛ յուսար ՚ի գիտութիս քոյս, եւ մի՛ ՚ի խորամանկութիս այլոց կենդանեաց , այլ մանաւանդ յուսա՛ ՚ի շնորհս այ , որ օգնական լինի հեզոց, եւ խոնարհեցուցանէ զամբարտաւանս : Մի՛ պարծիր ՚ի յինչս , եթէ ունիցիս , եւ մի՛ ՚ի բարեկամս, թէ հզօրք իցեն, այլ պարծիր յած , որ զբնաւն շնորհէ : Եւ ինքն եւս զինքն տալ կամի : Մի՛ փքանայցես թէ մեծ իցես, կամ թէ զգեղեցկութի մարմնոյ ունիցիս , որ դոյնիւ իւիք ակարութե ապականի , եւ ժահահոտի : Մի՛ տայցես զտեղի ինքնահաւանութե , թէ ուշիմիցես, կամ մտացի,

մի՛

մի՛ գուցէ՝ լինիցիս անհաճոյ ա̄յ ; որոյ է՛ բնաւին զոր ունիս, բնականաբա՛ր :

2. Մի՛ կարծիցես զքեզ բարեգոյն քան զայլս, մի՛ գուցէ առաջի ա̄յ խոտան լինիցիս, որ գիտէ թէ զինչ գոյ ՚ի մարդում : Մի՛ հպարտանայցես վ̄ա բարեաց գործոց, զի այլ է դատաստանն ա̄յ, և այլ է մարդկան : որում բազմիցս որք հաճելիքն են մարդկան, անհաճոյք լինին : Եթէ ունիս դու զբարի գործինչ, հաւատա՛ թէ այլք զբարեգոյնս ունիցին : զի զխոնարհութի̄ պահիցես : Ոչինչ է վնաս, թէ ամենեցուն դու կիջանիցիս ; բայց վնաս մեծ է թէ ՚ի վերայ միոյ հպարտանայցես : Ուստի յար. խաղաղութի̄ մնայ ՚ի խոնարհս ;

իսկ

հոգ նախանձ, եւ փոյթ յաճախ ՚ի սերտս հըպարտաց ։

## Գլուխ Ութերորդ.

### Յաղագս զգուշանալոյ ի յաճախէ ընտանեկութենէ ։

1. Մի՛ ամենայնի մարդոյ յայտներ զսիրտ քո, այլ միայն ընդ իմաստնոյ եւ երկիւղածի յԱյ արա՛ զբան քո ։ Մի՛ լինիր յաճախ ընդ մանկունս եւ ընդ օտարս, եւ մի՛ ընդ արս ազնուականս շողոքորդանիցես, մի՛ եւս առաջի մեծամեծաց յաճախ երեւիր, այլ միայն ընդ խոնարհաց եւ ընդ միամտաց, ընդ առաքինեաց եւ ընդ բարեկրօնից,

նից, լեր ընկերակից, և որք չինու-
թէ առնիթք եմ զայնցանէ յարաձեւ-
նեա՛մ: Մի՛ լինիր ընտանեկից ընդ-
ումեք կնոջ, այլ առհասարակ զբը-
նաւս բարիս կանայս յանձնեա՛ Այ:
Ցանկա՛ զի լինիցիս ընտանեկից
միայնում Այ և հրեշտակաց նորին,
և զծանօթութի մարդկան ՚ի քէն
տարհերքեա՛:

2. Թէպէտ պա՛րտ է մեզ զսէր
ունել առամենեսեան, բայց զըն-
տանեկութի ունել՚ առամենե-
սեան ո՛չ վայելուչ է: Քան զի պա-
տահի երբեմն, զի անծանօթք
ոմանք թէպէտ համբաւովք բա-
րիւք լուսաւորին, բայց ներկայու-
թիւք նոցին զաչս դիտողաց մթա-
ցուցանեն: Համարիմք երբեմն
թէ ընկերակցութե մերով հա-

ծոյա

ծոյանամբ այլոց, բայց մանաւանդ սկսանիմք անհաճոյք լինիլ, յաղագս անկատարութեան բարուցն ՚իմեզ նկատեցելոց:

## Գլուխ. Իններորդ:

## Յաղագս հնազանդութեան և հպատակութեան:

1. Մե՛ծ է յոյժ կալն ՚ի հնազանդութեան, ապրիլն ՚ի ներքոյ հրամանաց առաջնորդին, և ո՛չ գոլն ըստ հաճոյից իւրոց: Ուստի առաւել յանդորրագոյնէ կալն ՚ի հպատակութեան, քան յառաջնորդութեան: Բայց բազումք մանաւանդ կան ՚ի հարկէ ՚ի հնազանդութեան

քան

քան թէ 'ի սիրոյ վ՛ն որոյ այնպիսիք
նեղասրտին, և յարաժամ տրտնջեն,
և զպաղատութի՟ն մտաց ո՛չ գտանեն,
մինչև բոլորով սրտիւ վ՛ն ա՟յ հպա_
տակիցին: Ընթացիր այսր և անդր,
ո՛չ ուրեք գտանիցես զյանդորրու_
թի՟, եթէ ո՛չ ընխոնարհում հպա_
տակութե՟, որէ 'ի ներքոյ կառաւա_
րութե՟ առաջնորդին ; Ուստի
զբաղումս պատրեաց խոկումն
զտեղեաց զանազանից և զփոփոխ_
մանէ :

2. Ստո՛յգ է, թերևս զի իւրա_
քանչ իւրոք դիւրապէս՝ հետևի
իւրոյն կարծեաց, և առաւե՟լ մի_
տէ առայնոսիկ որք նոյնպէս՝ կար_
ծեն, բայց եթէ ա՟ծ է 'ի միջի մե_
րում, պարտիմք թողուլ երբեմն
զմերս կարծիս վ՛ն բարւոյ խա_

ղա—

ղաղութե : Զի ո՛չ ոքէ այնքան ի մասնատուն , որ լրապէս՝ կարիցէ պիտել զմմ , չի ո՛րոյ մի՛ յոյժ հա՛ւանեցիս բոյոցն կարծեաց , այլ լուր ևս դ-իւրապէս՝ զկարծիս այլոց : Իսկ եթէ բարիքեն քոյք կարծիք , մ̄նյ ՚իբաց թող զնոսա , և հետեւիր այլոց , զի առաւե՛լ անստուսա շահեսցիս :

3 . Քան զի լու՛այ բազմիցս՝ , զի ապահովագոյնէ լսելն և հարցանելն զխորհուրդ իմս յայլոց , քան զնոյնն տալն: Եւ թէպէտ պատահի երբեմն , զի իւրաքանչիւրոյ կարծիք բարիքիցեն , բայց որով հետեւ հանճար և բան ուսուցանեն մեզ զի հա՛ւանեցիսք ևս այլոց , ո՛չ հա՛ւանիլն ուրեմն է՛նշան հպարտութե և խստասրտութե :

Գլուխ:

# Գլուխ Տասներորդ.

## Յաղագս զգուշանալոյ յաւելորդ դաբանութէ:

1. Զգուշ լեր 'ի յաղմկէ մարդկան որքան և կարես, զի յոյժ արգելուն զմեզ ընձեռութիք աշխարհայնոց իրակութէց թէև սակին դիտաւորութէ առ աջբերիցին: Քան զի դիւրաւ պղծիմք ունայնութէք և վատթարանամք: Ուստի երանիթէ բազմից լռեալ էի, և 'ի մէջ մարդկան ոչ եղեալ էի; Այլ ընդէ՞ր այնքան յօժարութէ խօսիլ կամիմք ընդ միմեանս, և առակա_

բանել,

բանել , որովհետև հազիւ երբեք
Թարց բծաւորելոյ զխղճմտանս
դառնամք ՚ի լռութի ։ զի խօսակցե-
լով ընդ միմեանս զմխիթարու-
Թի ինչ ՚ի միմեանց խնդրեմք , և
զսիրտս զանազանիւք խոկմամբք
ձանձրացեալս սփոփել կամիմք ։
Եւ այնքան յօժարութբ զայնցա-
նէ իրաց խօսիլ կամիմք, որքան սի-
րեմք զնոյնս և ըղձամք, և կամ զայն-
ցանէ իրաց խօսիմք և խորհիմք ,
զորս մեզհակառակս վարկա-
նիմք ։

2 · Բայց վա՜յ ցաւ՜ոյս , զի բազ-
միցս՝ ընդվայր՝ և ՚ի զուր՝ խօսիմք ,
քանզի արտաքին մխիթարութիս
այս , ներքնայնոյն և ածայնոյն
մխիթարութե , ո՛չ սակաւս առ-
բերէ տուժանս, ուստի հսկել պար-
տիմք

տիմք միշտ և աղօթել, զի մի՛ ժա-
մանակ մեր դատարկութ̅ք անցա-
նիցէ: Եթէ պիտոյիցէ խօսիլ ինչ,
խօսեաց զչինութ̅: Սովորութ̅ի
չար և զանցառութ̅ի մերոյ օգտի,
բազմիցս առիթք լինին անպահ-
պանութ̅ բերանոյ մերոյ: Բայց
նորա հոգև օրաց յառաջքերութ̅իք
առաքինականք, ոչ սակաւ օգնեն
հոգևորականի օգտի, մանաւ̂անդ
ուր հանդէտք հոգ̂ւոյ և մտօք ընդ-
միմեանս ա̅ծ միաբանին:

## Գլուխ մետասան երորդ:

## Յաղագս ստանալոյ զխաղաղութիւն եւ զջերին նախանձ:

1. Զբազում խաղաղութիւն
ստանալ մարթէաք,
եթէ ո՛չ զբաղէաք ՚ի
բանս եւ ՚ի գործս այ
լոց, այլեւ յայնս, որք ո՛չ պատշա
ճին մեզ: Քանզի ո՞րպէս կարէ ոք
զժամանակինչ տեւել ՚ի խաղաղու
թէ, եթէ ՚ի հոգս օտարաց զինքն
ներմուծանիցէ, զպատճառս ար
տաքինս խնդրիցէ, եւ ներքսապէս՝
դոյն ինչ կամ հազիւ երբէք զինքն
ժողովիցէ: Ուստի երանի այնո
ցիկ որք միամտաքնեն, զի ունին զբա
զում

վուամ խաղաղութե՛ն ։

2. Ընդէ՞ր ոմանք ՚ի սրբոց այն քան կատարեալք եւ այնքան ա̃նձա նկանք եղեն, վ̃ զի ջնաւ̃ին զին քեանս մեռուցանել ջանացին ՚ի հա մայնից երկրայնոց ըղձից, ուստի ուղղիւ սրտիւ յա̃ծ յենեալք ՚ի հոգս իւրեանց կարացին պարապիլ ։ Իսկ մեք զբաղիմք յոյժ ՚ի կիրս յատուկս, եւ յաղագս անցականաց սաստիկ՝ վրդովիմք, հազիւ եւ ս զախտ ինչ կատարելապէս՝ յաղթեմք, եւ առ հանապազօրդականն յառաջադի մութիւն ոչ փութամք, վ̃ որոյ մնամք ցրտացեալք եւ գաղջացեալք ։

3. Եթէ էաք կատարելապէս մեռեալք, եւ ոչ իւ՞իք ներքսապէս՝ պղծեցեալք, կարէաք զա̃ծայինս իմանալ, եւ երկնայնոց իւիք համա

նկատմամբք ներհմտանալ: Ուս-
տի առաւելագոյն եւ մեծագոյն ար-
գելուածս մեր այնէ, զի ոչ եմք՝ ի կրից
եւ՝ ի ցանկութեանց ազատք, եւ ո՛չ՝ ի
շաւիղս սրբոց կամիմք մտանել:
Եւս որոյ թէ եւ սակաւ ինչ պատե-
րազմ հանդիպեսցի մեզ, իսկոյն
ստորանկանիմք, եւ դառնամք՝ ի մխի-
թարուիս մարդկայինս:

4. Թէ ջանայաք իբրեւ զայր
հզօրս կալ՝ ի պատերազմի, ապ-
դարեւ տն զօգնութի՝ ի յերկնից
՝ի վր մեր տեսանէաք: Զի նա պատ-
րաստ է օգնել այնոցիկ որք պա-
տերազմին, եւ որք յուսան՝ ի շնորհս
նր: Ուստի զհնար պատերազմե-
լոյ մեզ նախահոգայ, զի կարիցուք
յաղթել: Եթէ միայն՝ ի յարտա-
քինս զգուշութիս հիմնէաք զառա-

Զա

ջադիմութի̃ մերոյ կրօնաւորու-թե̃ , վաղուրեմն առաքինութի̃ մեր սուեալէր զվաղճան : Բայց զտապարն առ արմին դիցուք , զի մաքրեցեալք ՚ի կրից զխաղաղականս ստանայցեմք մտաց :

Է. Եթէ յուրաքանչիւրում ամի զմին ՚ի մերոց վատթարու-թեց արտախլէաք, դիւրաւ լինէաք արք կատարեալք : Բայց այժմ զհակառակն մանաւանդ զգամք , քան զի բարեգոյնս և մաքրագոյնս զմեզ լեալս գոլ գտանեմք յառաջքան զդարձումն մեր առ ա̃ծ , քան թէ յետ ամաց բազմաց զկնի դարձմանն: Զի ջերմեռանդութի̃ մեր և յառաջադիմութի̃, օրըստօրէ պարտէին յաճախել, իսկ այժմ մեծ համարիմք զայն , որ ունի զմասն նախ

կնոյ ջերմեռանդութե: ևՀրդ՝ եթէ ՚ի սկզբան դարձմանն մերոյ սակաւ ինչ ջանիւք աշխատեալք էաք, այժմ զամ ինչ կարեմք առնել դիւրութե և խնդութեամբ :

6. Թէպէտ ծանր է ՚ի բաց ձգել զսովորութիւն, սակայն ծանրագոյն է առնելն ընդդէմ կամաց մերոց առանձնականաց : Ուստի թէ ո՛չ յաղթահարիցես զփոքրագոյնս և զթեթևագոյնս, որպէս՝ յաղթահարիցես զդժուարագոյնս; Եթէ որոյ ընդդէմ կաց ՚ի սկզբանն քոյոց յօժարութեց, և խորշեաց ՚ի սովորութեց չարաց, միգուցէ սակաւ առ սակաւ ՚ի մեծագոյնս առածիցէ զքեզ դժուարութիւն: Ա՜հ թէ զգայիր թէ որքան քեզ զխաղաղութի, և այլոց ուրախութի առ

նէիր

ներ քոյովք կենօք բարեօք, կար-
ծեմ թէ դիւրապէս՝ պարապէիր
'ի հոգեկանս յառաջադիմութիս:

## Գլուխ. Երկոտասաներորդ:

## Յաղագս օգտին ընդդիմամարտու-
## թեան:

1. Բարի է մեզ թէ ունի-
ցիմք երբեմն դժան-
րութիս ոմանս, եւ զըն-
դդիմամարտութիս,
զի բազմիցս նոքօք արհամանամք,
մինչ տեսանեմք զմեզ 'ի յաքսորանս,
եւ զյոյսն մեր ոչ դնեմք 'ի յիրս աշխար-
հականս: Բարի է մեզ եթէ երբեմն
կրիցեմք զպատերազմունս, եւ եթէ
զչարինչ եւ զանկատարութիւն ինչ

զգայցեն զմէնջ, թէ և զքաւորիս գործիցեմք, և զքաւորիս խորհիցեմք, զի այսոքիկ պատճառեն մեզ զխոնարհութ̅ի, և յունայնից փառաց զմեզ զերծուցանեն: Քանզի յայնժամ բարեպէս՝ խնդրեմք զա̅ծ որ է ներքին մեր վկայ, յորժամ արտաքուստ՝ մարդիկ զմեզ առ ոչ ինչ համարին, և բարեպէս՝ ոչ հաւատան մեզ:

2. Այ̅ն որոյ այնպէս՝ մարդպարտի յենուլ յա̅ծ, զի մի հարկաւորիցի խնդրել յաճախապէս՝ զմխիթարութ̅իս մարդկայինս: Ուստի յորժամ այր ոք բարւոյ յօժարութ̅է վշտագնի կամ փորձի, և կամ վատիւք խոկմամբք նեղանայցի, յայնժամ զա̅ծ ինքեան առաւել հարկաւոր իմանայ, և հաւատայ թէ առանց նմա ոչ ոք գործ

բարի

բարի գոլ կարէ։ Յայնժամ ես տխուր հեծէ և աղօթէ սակս թշուառութեանցն զորս կրէ։ Յայնժամ ես ձանձրանայ յերկարապէս՝ կելոյ, և ըղձայ տեսանել զմահ, զի լուծեսցէ ՚ի մարմնոյն լիցի ընդ Քի։ Յայնժամ ես բարեպէս՝ առզգայ թէ կատարեալ աներկևանութեան, և լրացեալ խաղաղութեան յաշխարհի աստ կայանալ ո՛չ կարէ։

## Գլուխ Երեքտասան Երորդ։

### Յաղագս ընդդիմանալոյ փորձութեց ։

1. Որքան կեամք յաշխարհի աստ, Թարց մշտի և փորձութե գոլ ոչ կարեմք ։ Ուստի ասէ Յոբ, Թէ փորձութիւն կեանք մարդոյ ՚ի վր երկրի ։ Վն որոյ իւրաքանչիւրոք ՚իմիք հոգալ պարտի սակս իւրոյն փորձութեց, և հսկել յաղօթս, զի մի գտանիցէ սատանայ զտեղի պատրելոյ, որ ոչ երբէք ննջէ, այլ շրջի խնդրելով Թէ զո կլանիցէ ։ Քանզի ոչ ոք է այնքան կատարեալ և այնքան սուրբ

սուրբ, որ ո՛չ ունիցի երբեմն զփոր-ձութիւնս, զի բոլորովինմք 'ի փորձութեց զգուշանալ ո՛չ կարեմք ։

2. Բայց երբեմն փորձութիւնք յոյժ օգտակարքեն մարդկան, թէև վշտագնիչք իցեն և ծանունք, քան զի մարդ 'ի փորձութիւնս խոնարհի, մաքրի և հմտանայ ։ Ուստի սբք ամենեքեան նեղութբք և փորձութբք անցին և օգտեցան ։ Իսկ որք ո՛չ կարացին տանիլ փորձութեց, խոտեցան և նուաղեցան ։ Զի ո՛չ ուրեք գտանի կրօն ինչ այնքան սբ, և ո՛չ տեղի ինչ այնքան առանձին, ուր ո՛չ իցեն փորձութիւնք կամ պատերազմունք ։

3. Ոչ կարէ մարդ բնաւին հանդուարակիլ 'ի փորձութեց ի կեանս իւրս, զի 'ի մեզ է առիթն որով փորձիմք, ուստի մինչ հեռանայց մինն,

մինն , իմ̄ գայ մուտն , և միշտ ու-
նիմք զփորձութի՛ն ինն առ՛ նկրել ,
քան զի զբարին երջանկութէ մերոյ
կորուսաք : Բազումք կամին փախ-
չիլ ՛ի փորձութէց , բայց առաւ՛ել
անկանին ՛ի նոսա : Աշ̄ որոյ ո՛չ կա-
րեմք յաղթել նոցին փախստեամբ
միայնով , այլ համբերութբ և խո-
նարհութբ քան զհնա՛ւս մերս թշ-
նամիս լինիմք հզօրագոյնք :

4 . Որ արտաքսապէս՝ միայն
խոտորի ՛ի փորձութեց , և ո՛չ արմատ-
խլէ զարմատս նոցին , սակաւ ինչ
օգտի . զի փութանակի՝ դառնան
առ նա փորձութիւնք , և զգայ զնո-
սա չարագոյնս քան զառաջինս :
Ուստի սակաւ առ սակաւ համբե-
րութբ և օգնութբն այ դիւրա-
գոյնս ապէս՝ յաղթիցես , քան թէ խս-
տութբ

տութե և փոքրահոգութե քոյով: Զի որոյ խնդրեմ զխորհուրդ ՚ի փորձութե քում, և ընդ փորձեցե լոց մի վարիր խստութե, այլ մխի-թարեմ զփոսա, ո՛վ եղու կամիս, Թէայլք քեզ զառնիցեն:

5. Սկիզբն ամենեցունց չա-րաց փորձութեանց, է՛ անկայութիւն մտաց, և պակասութիւն յուսոյն առ Ած, զի որպէս նաւ առանց ղեկի աստուստ և անտուստ ՚ի հողմոց քաշի, այսպէս այր անարի, և զիւ-րոց նրաց զփոյթ ո՛չ ունօղն զա-նազանապէս՝ փորձի: Եւ որպէս հուր փորձէ զերկաթ, այսպէս՝ և փորձութիւն զայր արդար: Քանզի բազմիցս ո՛չ գիտեմք թէ զինչ կար եմք, բայց փորձութիւն ցուցանէ մեզ թէ զինչ եմք մեք: Սակայն զդու-

հանալ

շահուալ պատուովք, մանաւանդ՛ 'ի յա
կղեան փորձութեն, զի յայնժամ դիւ
րապէս յաղթի Թշնամին, յորժամ
ո՛չ իւ՛ իք եղանակաւ Թոյլտամք նմա
մտանել ընդ դուռն մտաց, այլ
վաղվաղակի ընդդէմ ելանեմք նմա
մինչ չ բախէ կալով արտաքոյ սեման:
Ուստի ասաց ոմն, 'ի յանկղեանն ընդ
դիմամարտեաց, զի յերեկոյի սպէ
ղանիք պատերազմին: Քան զի նախ
հանդիպի մեզ սոսկ մտածութի,
ապա սաստիկ երեւակայութի, յե
տոյ հեշտութի եւ մախից շար
ժումն, եւ հաւանումն, եւ այսպէս՝
սակաւ առ սակաւ նեղ մտանէ Թշ
նամին վնասակար բոլորովիմբ,
մինչ ո՛չ ընդդիմանամք նմա 'ի յա
կղեանն: Եւ որ քան յուլանայ ոք 'ի
պատերազմել, այնքան օրըստո
րէ

զի յինքեան արկանագոյն լինի , և Թշնամին հակառակօղ հզօրագոյն :

6. Ոմանք ՚ի սկզբան դարձմանն իւրեանց ՚ի տր̄ զծանրագոյնս կրեն փորձութիս , և ոմանք ՚ի վախճանի ; ոմանք ՚ի կեանս իւրեանց բոլորս չարապէս՝ կեան , և ոմանք Թեթևապէս՝ , և այս ըստ ա̄ծայնոյն կարգաւորութեն , իմաստութեն , և արդարութեն , որ զդիրս և զարդիւնս մարդկան կշռէ , և զբնաւս ՚ի կեցութե ընտրեցելոց իւրոց նախայօրինէ :

7. Այս̄ այնորիկ ոչ պարտիմք յուսահատիլ մինչ փորձիմք , այլ մանաւանդ Քերմեռանդապէս՝ աղերսել զա̄ծ , զի նա յժամու վշտի արժանի առնէ զմեզ օգնել մեզ ;

որև

որեւ որպէս՝ ասէ առաքեալն տայ ընդ փորձութեն եւ զշնորհ, զի կարիցուք տանիլ ։ Խոնարհեցուսցուք ուրեմն զմերս միտս ՚ի ներքոյ ձեռին տ̄ն, յամենայնում փորձութե̄ եւ նեղութե̄, զի նա զխոնարհս հոգւով կեցուցանէ եւ բարձրացուցանէ ։

8. ՚Ի փորձութիս եւ ՚ի հաւապանս երեւի ոք թէ որքանօգտեցաւ, եւ անդ արդիւնք մերք մեծագոյնք արտակայանան, եւ առաքինութիւնք բացայայտին ։ Քանզի ոչ է մեծ ինչ, թէ ոք առաքինի իցէ եւ ջերմեռանդ, եթէ ոչ զգայցէ զծանրութի ինչ ։ Բայց թէ ՚ի ժամանակի փորձութե̄ համբերութ̄բ տեւիցէ, անդ յոյս է՛ մեծի օգտութե̄ ։ Եւ թէպէտ ոմանք պահեն զին

քեանս

եանս 'ի փորձութեանց մեծաց, բայց 'ի փոքունց հանապազորդականաց բազմիցս յաղթին, զի խոնարհեցեալք, մի երբեք 'ի մեծամեծս փորձութիւնս ապաւինիցին յինքեանս, որք այնքան 'ի փոքրագոյնս տըկարանան:

## Գլուխ: Չորեքտասաներորդ:

### Յաղագս մերժելոյ զանզգուշ դատումն:

1. Ուղրձո զաչս քոյս 'ի քեզ, և զգուշ լեր 'ի դատելոյ զգործս այլոց, զի մինչ դատէ ոք զայլ ոք, 'ի զուր աշխատի, բազմիցս սխալի և դիւրաւ մեղանչէ: Յանձ

եթէ զինքն դատէ եւ յանդիմանէ , միշտ արդիւնաւորապէս՝ աշխատի: Եւ զի որպէս իրք մերոց սրտիցն , այնպէս յաճախ դատեմք , ուստի զճշմարիտ դատումն , սակս պակասութէ սիրոյն դիւրապէս՝ կորուսանեմք : Քան զի եթէ ա͞ծ էր միշտ պարզ դիտումն մերոյ ըղձի , ո՛չ այնքան դիւրաւ վրդովէաք՝ ՚ի ընդդիմանալն զգայութեց մերոց :

2 . Բայց բազմիցս ծածկի ինչ ՚ի ներքոյ , եւ կամ երեւի արտաքոյ , որ զմեզ եւս նմանապէս՝ առ պատրէ : Զի բազումք ծածկապէս՝ զփառս իւրեանց խնդրեն ՚ի յիրս զորս առնեն , եւ ո՛չ իմանան : Եւ երեւին կալ ՚ի բարւոյ խաղաղութէ . մինչ իրքն ըստ հաճոյից եւ ըստ զգայութեց իւրեանց լինին ;

Բայց

Բայց եթէ այլապէս՝ հանդիպեցին քան թէ ըղձանին, իսկոյն այլագունին եւ աղմկին: Ուստի մ̃ն զանազանութ̃ե դիտաւորութ̃եց եւ կարծեաց, յաճախապէս՝ ծնանին խռովութի̃ք 'ի միջի սիրելեաց, եւ քաղաքակցաց, 'ի միջի կրօնաւորաց եւ առաքինեաց:

3. Սովորութ̃ի հնացեալ դժուարապէս՝ թողանի, եւ անդր̃ք զտեսութ̃ի սեփական ոչ ոք յօժարապէս ածի: Բայց եթէ յընտրութ̃ի քո եւ 'ի հանճար առաւել յենուցուս, քան թէ յառաքինութ̃ին հնազանդական ա̃ն մերոյ Յի քի̃, հայիւ եւ յամր լուսաւորիցիս: Քան զի կամի ա̃ծ, զի կատարելապէս՝ ինքեան հընազանդեսցիմք, եւ զբնաւս ընտրութիւս ջերմութ̃ե

սիրոյն գերազանցիցեմք ։

## Գլուխ Հնգետասան երորդ ։

### Յաղագս գործոց 'ի սիրոյ եղելոց ։

1. Յաղագս ո՛չնչի՛ իրի աշխարհայնոյ, և յաղագս ո՛չ ուրուք մարդկայնոյ սիրոյ, զչար ինչ առնել պարտ է ։ Բայց յաղագս օգտակարութեան կարօտելոյն, զգործ ինչ բարի երբեմն ազատաբար գործելն, և կամ զբարին 'ի բարեգոյն ինչ փոխարկելն, վայելուչ է ։ Քան զի զայս առնելով ոչ խանգարեմք զգործն բարի, այլ 'ի բարեգոյնն զնա փոխարկեմք ։ Բայց սակայն եթէ արտաքին գործն բարի իցէ

եթէ թարց սիրոյ, ո՛չ ինչ օգուտ է, զի որ ինչ ՚ի սիրոյ գործի թէպէտ և սակաւ ինչ եթէ, կամ առ ո՛չ ինչ վարկանելի, ամենևին իմէ արդիւնաւորէ: Այլ̃ զի Ա̃ծ առաւել համարի զեղեալն ՚ի սիրոյ, քան զգործն եղեալ:

2. Ուստի զբազում ինչ գործէ որ յոյժ սիրէ; զբազում ինչ գործէ, որ բարեպէս գործէ; և բարեպէս գործէ որ առաւել հասարակութե̃ քան թէ կամաց իւրոց ծառայէ: Եւ թէպէտ բազմիցս թուի թէ գործն եղեալ է՛ սիրելութ̃ի, բայց մանաւանդ է՛ մարմնաւորութ̃ի: զի յօժարութ̃ի բնական, կամք սեփականք, յոյս հատուցման, և իղձ հեշտութե̃, հազիւ երբեմն ՚ի բաց հեռանան:

3. Որ զճշմարիտ և զկատարեալ սէր ունի, 'ի յոչընչս իւր խնդրէ զիւրն, այլ ըղձայ միայն, զի ա̄մ ինչ լինիցի 'ի փառս ա̄յ: Եւ ո՛չ ունիք նախանձն, զի զո՛չ ինչ խնդութի առանձին սիրէ: Եւ խնդրեալ յանձն իւր ո՛չ կամի, այլ 'ի վեր քան զա̄մ բարութիւն, երանել 'ի տ̄ր փափաքի: Ուստի յո՛չումեքէ զբարութի ինչ լինել վարկանի, այլ յա̄յ միայնոյ, յորմէ աղբերաբար բղխի ա̄մ պարգև: յորում և ս̄րբք ամենեքեան, իբր ընդ վախճանի, զմայլապէս՝ յարահանգչին, ո՛հ, եթէ ունէր ոք զկայծ ինչ ճշմարտի սիրոյ, համարէր թէ բնաւ ք երկրայինք լինէին ունայնութ̄ք :

## Գլուխ Վեշտասաներորդ:

### Յաղագս ըմբերման պակասութեանց այլոց:

1. Որ ո՛չ կարէ ուղղել
զկեանս անձին կամ այ
լոց, համբերութ̄ե
ըմբերել պարտի:
մինչև այլապէս՝ ա̄ծ տնօրինեսցէ:
Ուստի խորհեաց, թէ դուցէ այս
պէս՝ բարւո՛ք իցէ վ̄ն քոյոյ հա՛ւա
տարմութե՛ և համբերութե՛, թարց
որոց ո՛չ այնքան համարելիքեն ար
դիւնք մեր: և աղաչեսցես զա̄ծ վ̄ն այն
պիսեաց արգելմանց, զի զքեզ ար
ժանի առնիցէ օգնել քեզ, և կա
րիցես դիւրապէս՝ տանիլ:

2. Եթէ որ միանգամ եւեթ կնիցս խրատեցեալ 'ի քէն ոչ խաղաղանայ, մի՛ խոտեր զնա, բայց զբը նաւն յանձնեա՛ Այ, զի լինիցին կամք նորին եւ պատիւ 'ի ծառայս իւրս հանուրս, որ բարւո՛ք գիտէ զչարս 'ի բարիս փոխարկել ; եւ ջանա՛ համբերութե̄ ըմբերել պակասութեց այլոց, եւ իւրաքանչ իւրոց տըկարութեց, զի եւ դու զբազումս ունիս, զորս այլք ըմբերեն : Վ̄ որոյ եթէ ոչ կարես առնել զքեզ ոպ̄ եւ կամիս, որպէս կարես առնել զայլս ըստ հաճոյից քոց : եւ ի խոր ժիմք թերեւս, թէ այլք կատարեալք իցեն, բայց զմեզ պակասութ̄իս ոչ կարգաւորեմք :

3. Կամիմք թէ այլք ամէնեւիմբ ուղղիցին, բայց զմեզ ուղղել

ոչ

ոչ կամիմք ։ Ընհաճոյք Թուէին մեզ այլոց ընդարձակուԹիւնք, բայց ոչ կամիմք Թէ արգելուցուն զմեզ այլք յայնմանէ, զոր ախորժիմք ։ Կամիմք ևս Թէ այլք 'ի ներքոյ կանոնաց իցեն, իսկ մեք ամենևին իմէ ոչ տանիմք, Թէ այլք կանոնադիրք իցեն մեզ։ Ուստի յայտ է Թէ հազիւ զմերս մերձաւորս համարիմք իբրև զմեզ։ Ըղորդ՝ եԹէ ամենեքեան էին կատարեալք, զի՞նչ 'ի միմեանց կմ̄ ռոյ, ունէաք 'ի կրել ։

4. Բայց այժմ Ա̄ծ այնպէս կարգաւորեաց զի ուսանիցիմք միմեանց զբեռն բառնալ, քանզի ոչ ոք Թարց պակասուԹե̄, ոչ ոք Թարց բեռան, ոչ ոք բաւական ինքեան ։ ոչ ոք լրապէս՝ կ̄ս ինքեան գիտուն; կ̄ս որոյ պարտիմք տանել միմեանց,

մխի-

միխիթարել զմիմեանս , այսպէս եւ օգնել միմեանց , հմտացուցանել եւ խրատել զմիմեանս : Չի ուրաքանչ իւրոյ թէ որքան ինչ առաքինութի̃ , երեւի 'ի ժամու պատերազմի , քան զի պատերազմունք ո՛չ առնեն զոք տկար , այլ թէ որպէս եւ ինչ յայտնեն :

## Գլուխ եօթնեւտասն երորդ :

## Յաղագս միակեցականին կենցաղավարութե̄ :

1. Եթէ կամիս խաղաղութե̄ եւ միաբանութե̄ կեալ ընդ այլոց , ուսանիլ պարտիս ըզքեզ 'ի յիրս բազում խոնարհեցուցանել :

ցանել: Զի ո՛չ է փոքր ինչ՝ ի միայնարանս և՝ ի ժողովարանս բնակել, և Թարց խռովութե̃ կենցաղավարել՝ այլև մինչև՝ ի մահ հաւատարիմ գտանիլ: Վասն երանելի է որ կեայ անդ բարեպէս, և երջանկաբար կատարէ զընթացս; Ա՛յլ որոյ եթէ կամիս կեալ ըստ արժանոյն, վարկեա զքեզ իբրև աքսորեցեալ, և պանդուխտ՝ ի վ̅ր երկրի. լեր իբրև զյիմար վ̅ն ք̅ն, եթէ կամիս կեալ միանկեցապէս՝:

2. Զգեստուց փոփոխումն և հերաց խուզումն սակաւ ինչ օգնեն, բայց բարուց ուղղումն, և կատարեալ մահացուցումն կրից առնեն զկրօնաւոր բարի: Վասն որ զայլ ինչ խնդրէ և ո՛չ զա̃ծ և հոգւոյն իւրոյ զփրկութ̅ի միայն,

նա

նա ո՛չ այլ ինչ գտանէ եթէ ո՛չ զվիշտս եւ զցաւս: Եւ, որ ոչ ջանայ գոլ փոքրագոյն եւ հլու ամենեցուն, նա ո՛չ կարէ զժամանակ ինչ կեալ ՚ի խաղաղութէ :

3. Քան զի կոչեցար ՚ի ծառայութի՟ եւ ո՛չ յիշխանութի՟, հրաւիրեցար ՚ի համբերութի՟ եւ յաշխատանս, եւ ո՛չ ՚ի յուլութի՟ եւ ՚ի դատարկաբանութի՟ : Աստ աստ փորձին մարդիկ, որպէս ՚ի փորձի ոսկի ի հնոցի; աստ ո՛չ ոք կարէ կեալ, եթէ ո՛չ զինքն կամիցի բոլորով սրտիւ վս՟ այ՟ խոնարհեցուցանել :

## Գլուխ Ութեւտասներորդ.

### Յաղագս օրինակաց սրբոց հարց:

1. Նկատեմ յօրինակս կենդանարարս սրբոց հարց, յորս ճշմարիտ կատարելութի եւ հաճաւոր պայծառացան: Եւ տեսցես թէ որքան նուաղիմք, եւ գոնեա ոչ ինչ է զորմէ առնեմք: Մ՞հ թէ զինչէն կեանք մերք, եթէ համեմատիցին նոցին կենաց: զի էին նքք եւ բարեկամք քի, եւ ծառայեցին տն ըն սովով եւ ըն ծարաւով, ըն ցրտութե եւ ըն մերկութե, 'ի յաշխատանս եւ 'ի վաստակս, ընտքնութե եւ ըն ծոմով, 'ի յաղօթս եւ 'ի

մտա

մտածմունս մ՟եր, 'ի հալածանս եւ 'ի նախատինս բազումս :

2. Վա՜շ թէ որքան բազումս եւ զծանունս նեղութ՟իս կրեցին առաքեալք, մարտիրոսք, խոստո-վանողք, կոյսք, եւ այլք ամենեքեան, որք շաւ՜ղացն ք՟ն կամեցան հետեւիլ: Քան զի ատեցին զանձինս յաշխարհի այսմիկ, զի զկեանս յաւ՜իտենականս ժառանգիցեն ; վա՜շ թէ որչափ զխստակրօնս կեանս հարք մ՟եր յանապատի վարեցին, ո՜րպէս եր-կարից եւ ծանունց փորձութեանց ըմ-բերեցին, ո՜րպէս յաճախ 'ի թշնա-մւոյն վշտագնեցեալք եղեն, որքան զբազումս եւ զջերմեռանդս աղօթս առ ա՟ծ մատուցին, զո՜րքան պահս խիստս պահեցին, ո՜րպէս զմեծ նա-խանձ եւ զջերմութ՟ին յառաջադի-

մու

մութիւն հոգեկանս ունէին, որպէս արիաբար պատերազմեցան առ ՚ի ճնշել զկիրս իւրեանց, որպէս զմաքուր և զուղիղ դիտաւորութիւն ունէին, զտիւս աշխատէին, և զգիշերս պարապէին յաղօթս աստուածայինս, այլև մինչ աշխատէին, յաղօթելոյ մտաւորապէս ո՛չ դադարէին ։

3. Զամենայն ժամանակ օգտութեամբ ծախէին, և պահք ամենեքեան պարապելոյ յաստուածայինս կարճառօտք թուէին ։ Յաղագս մեծի քաղցրութեան համախոհմանն, մտանային զհարկաւորութիւն մարմնականի զօրացուցման ։ Եւ զբնաւս փարթամութիւնս, զարժանաւորութիւնս, զպատիւս, զբարեկամս, և զազգայինս ուրանային ։ Ո՛չ ինչ յաշխարհէ ունել ըղձային ; և հա-

գիւ

դիւ զհարկաւորն կենաց առնոյին :
՚Ի ծառայելն մարմնոյն, թէ և հար
կաւորապէս՝ , ցաւէին : Ուրէմն
էին աղքատք ՚իրօք երկրայնօք, բայց
մեծատունք յոյժ շնորհիւ և առա
քինութբ : Աղքատաց կարօտէին ,
բայց ՚ի ներքոյ շնորհիւ և մխիթա
րութբ ա̅ծայնով զօրանային :

4 : Օտարք էին յաշխարհէ ,
բայց մերձաւորք և ընտանեկիցք
բարեկամք ա̅յ : Ինքեանք ինքեանց
ոչ ինչ թուէէին , և յաշխարհէ աստի
էին խոտեցեալք , բայց յաչս ա̅ծ ազ
նիւք էին և սիրելիք : Ընճշմարտում
խոնարհութե կային , ըն պտում
հնազանդութե ապրէին , ըն սիրոյ
և ըն համբերութե շրջէին : Եւ
վ̅ն այնորիկ օրըստօրէ հոգւով առ
դիւնաւորէին, և զշնորհ մեծ առա

ջի

Զի ոչ ընդունէին: Եղեն օրինակք ամենեցուն կրօնաւորաց, Ուստի առաւել պարտին զմեզ սոքա յորդորել ՚ի բարի յառաջադիմութի, քան թէ թիւ յուլացելոց զմեզ ՚ի թուլութի :

5. Վա̂շթէ որքանն էր ջերմութի կրօնաւորաց ամենեցուն ՚ի սկզբան սորայ կարգաւորութեն: Թէ ո̂րքան իղձ աղօթից, և ո̂րքան նախանձ առաքինութե: Որքան մեծամեծք կրթութիք ճոխացմն, և ո̂րքան պատկառանք և հնազանդութիք կանոնաց վարդապետին, նյնրս քնաւս ծաղկեցան: Այժմեն մեզ դեռևս թողեցեալքն շա̂ւիղք հնոցունց, թէ արք մեք և կատարեալք հզենեղեալք: Որք այնքան քաջապէս զինեալք յաղթեցին աշխարհի :

ջուկ այժմ մեծ-համարին նա , որ ոչ իցէ օրինազանց: և որ կրեացն եթէ համբերութ̃ տանիլ կարիցէ :

6. ԻՏՀ ժամանակին և զայն ցառուութեն կացից մերոց , զի այն քան փաղփաղակի խոտորիմբ ՚ինաև կնոյ ջերմութե̃ , մինչ զի ձանձրանայցեմք կեալ սակս աշխատութե̃ և լքման: Երանի թէ ոչ երբէքնջեր ՚ինքեղ յառաջադիմութե̃ն առաքինութե̃ , որ բազմիցս տեսեր զօրինակս յոքունս առաքինեաց :

Գլուխ. Իննն և տասն երորդ ։

## Յաղագս կրթութեան բարւոյ կրօնաւորի ։

1. Կեանք բարւոյ կրօնաւորի ամենայնիւ առաքինութեամբ զարդարել պարտին, զի լիցի այնպէս՝ ՚ի ներքուստ, որպէս երեւի ի մարդկան արտաքուստ։ Եւ իրաւի առաւել պարտի գոլ ՚ի ներքուստ քան որ տեսանիցի արտաքուստ։ Զի զննիչ մեր Աստուած է, յոր մեծ ըստ կարեաց պատկառել պարտիմք ուր և իցեմք, և իբրև զհրեշտակս մաքուրս առաջի նորա շրջիլ ։ Յամենայնում աւուր նորոգել

պարտիմք զառաջադրութի̅ մեր, եւ ի ջերմեռանդութի̅ զմեզ զարթուցանել : ո՜վ թէ այսօր իցէ առաջին օր դարձման մերոյ՝ ի տ̅ր, եւ ասել, օգնեա՛ ինձ տ̅ր ա̅ծ իմ, ըն բարւոջ ի միում յառաջադրութե̅, եւ ընքում սրբոյ պաշտաման : եւ տուր ինձ կատարելապէս սկսանիլ զի զո՛չ ինչ մինչեւ ցայսվայր գործեցի :

2. Ընթացք յառաջադիմութե̅ մերոյ, ըստ յառաջադրութե̅ մերում : Ուստի զգուշութի̅ս բազում պարտի ունել, որ կամի յառաջադիմել : Քա̅ն զի եթէ հաստատապէս յառաջադրօղն բազմիցս նուա̂ղի, զինչ լինիցի այնմ որ հազի̂ւ երբէք կամ անկայապէս՝ յառաջադրէ զինչ : Եւ որ՝ զանազանիւք կերպիւք հան-

դիպի

դիւրին լքումն ՚ի յառաջադրութե͞ց մերոց : և թեթև ինչ ըստունակա_ նութեամբ վարժման, թարց տուժանի իմիք ո՛չ անցանի : Բայց սրբոցն յառաջադրութի͞ն մանաւանդ ՚ի շնորհացն ա͞յ, քան թէ ՚ի սեփակա_ նէ յիմաստութենէ իւրեանց կախեա յոր յուսան միշտ, մինչ սկսանին զինչ ինչ առնել : զի մարդ յառաջա դրէ, այլ ա͞ծ յօրինէ, և շաւիղ նո_ րին ո՛չ է ըն մարդուն :

3. Եթէ ՚ի պատճառս առա_ քինութե͞ն կամ ՚ի յօգուտ եղբօրն, թողանիցի երբեմն սովորեցեալ կրթութի͞ն, դիւրաւ յետոյ կարե լի է դառնիլն : Բայց եթէ վս͞ն ձանձրութե͞ն սրտի, կամ զանցա_ ռութե͞ն աղագաւ ընդվայրաբար թողանիցի, յոյժ վտանգելի է, և

վնասակար համարելի։ Ջանասցուք ուրեմն որ քան կարեմք, զի եւս փոքրագունակէս՝ տայցեմք տեղի նուազման, եւ մինչդ զենմն ճշգրիտ մեզ յառաջադրիցուք, մանաւանդ ընդդէմ այնոցիկ, որք զմեզ առաւել նեղեն։ Զներքինս մերս եւ զարտաքինս միանգամայն տրոհել եւ կարգաւորել պարտիմք, զի պի երկաքանչիւրն պատկանին յառաջադիմութեան։

4. Եթէ ոչ կարես ժողովել զքեզ յարաժամ, գոնեա՛ ժողովեա՛ զքեզ երբեմն, եւ թերեւս յաւուրն միանգամ, այսինքն յառաւօտու կամ յերեկոյի։ Յառաւօտու յառաջադրեա՛ քեզ, եւ յերեկոյի քննեա՛ զվարս քո, թէ որպէս զայն օր անցուցեր, ի բանս, 'ի գործս, եւ

'ի խոր

նխորհուրդս, միգուցէ մեղուցեալ իցես ընդ դէմ ա̅յ և ընկերին : Որն դեա՛ զմէջ քո արիութ̅բ ընդ դէմ նենգութեանց սատանայի, և սանձեա՛ զորկոր քո, զի զա̃մ յօժարութ̅ի մարմնական դիւրաւ ձնշել մարթիցես : Մի սիրեր զդատարկութ̅ի ամենևին, այլ կամ ընթերցիր, կամ գրեա՛, կամ աղօթեա՛, կամ խորհեաց, և կամ յաղագս հասարակաց օգտութ̅ե աշխատեաց, բայց զմարմնականն կիրառութիս ընտրել պարտիմք, և ո՛չ զամենեսեան հաւասարապէս առնել:

Ե. Որք ո՛չ են հասարակաց մի ցուցանեն արտաքոյ՝ է̅ զի երբն յատուկք առանձնակի դիւրաւ գործին : Բայց զգուշանալ պարտիս մի գուցէ ծուլանայցես յիրաց հա

սարակաց, և արխանայցես 'ի նոսա
առանձնականս: Եղիր յօժամ կա
տարեցես լրացես՝ և հաւատար
մաքառ զաղարտս և զքածինս, և
թէ իցէ դեռևս պարապորդ ժա_
մանակ, արա և զքոյս ըստ ըղձից
քոց: և զի ամենեքեան ոչ կարեմք
ունել զմի և զնոյն կիրառութի,
այլ այլոմն այսմիկ, և այլոմն այն
միկ առաւել պիտոյանայ: Եղիցի
ըստ պատշաճի ժամու կիրառու-
թիք զանազանք հաճոյք թուին:
զի գոն որք պատշաճին աւուրց
տօնախմբութեանց, և գոն որք ա_
ւուրց լրոց: Ոմանք պիտոյանան
յաւուրս փորձութեանց, և ոմանք
յաւուրս խաղաղութեան և յանդոր
րութեան: ոմանք մինչ տրտմիմք,
և ոմանք մինչ ուրախեմք 'ի տէր:

6. Յաւուրս հանդիսաւորս նորոգել պարտիմք զհերասուութիւն բարիս ։ և զօգնութիւն սրբոց ջերմեռանդապէս մաղթել ։ ՚ի տօնէ ՚ի տօն զնոր ինչ մեզ յառաջադրել , որպ թէ յայնժամ յաշխարհէ աստի չուելոց իցեմք , և ՚ի տօնն մշտնջենաւոր ժամանելոց ։ Այլ որոց զգուշապէս զմեզ պատրաստել պարտիմք , ՚ի ժամանակս շնորհաւորս , և առաքինապէս վարել ; և զամ հետազօտութիւն բարեպէս պահել , որպ թէ զկնի սակաւուց զվարձս յամ առնելոց իցեմք ։

7. Իսկ եթէ այլապէս դիպիցի , պարտիմք հաւատալ թէ ոչ իցեմք զմեզ բարեպէս պատրաստեալք ։ այլև թէ ոչ իցեմք արժանիք դեռևս այնքանեաց փա-

ռաց ;

ուաց, որք յայտնելիք են մեզ 'ի ժամանակի նախաշաւղծանեցելում, և Ջանասցուք զմեզ բարեպունասպէս՝ պատրաստել 'ի մահ, զի ասէ տէրն, Երանի է ծառային այնմիկ զոր եկեալ տէրն գտանիցէ արթուն, ամէն ասեմ ձեզ 'ի վր̄ ամենեցուն ընչից իւրոց կացուսցէ զնա ։

## Գլուխ. Քսան երորդ ։

## Յաղագս սիրոյ առանձնութեան և լռութեան ։

I. Խնդրեա՛ պատշաճ ժամանակ պարապման, և խորհեաց յաճախապէս՝ զբարերարութեանց այ̄ ։ Թող զանօգուտս, և ընթերցիր զայնպիսիս որք յարուցա-

նիցեն

նոցին 'ի քեզ մանաւանդ զխիղճ մտանս, ՟Բ Թէ զաշխատանս: Եթէ խոստովեցիս յաւելորդաբանութէ և 'ի դատարկաբանութէ, այլ և 'ի լսելոյ զլուրս նորագոյնս, և զհամբաւս, գտցես զբաւականս և զպատշաճ ժամանակս պարապելոյ 'ի խոկս մտունս բարիս: Զի որք գերազանցքն էին 'ի մէջ սրբոց յընկերակցութէ մըրկան որքան կարէր հրաժարէին, և զառանձնականս պաշտօնս ընտրէին:

2. Ուսանի ասացող ոմն, որքան իցս եղէ 'ի մէջ մարդկան դարձայ մարդ փոքրագոյն: Եւ զայս բազմիցս տեսանեմք, մինչ զժամ ինչ դատարկաբանեմք: Այն որոյ դիւրագոյն է ամենեւին լռելն, քան չչափաւորապէս խօսիլն. դիւրագոյն է զաղիլն 'ի տան, ՟Բ արտաքոյ զինքն բաւականապէս

պէս՝ պահելն ։ Ուրեմն որ ըղձայ առ ներքինս և առ հոգևորս ժամանել, պարտի ընդ քի̄ յամբոխէ խոտորիլ ։ Ձի ո՛չ ոք աներկևան զինքն ցուցանէ, եթէ ո՛չ այն որ յօժարապէս թաքչի ։ Եւ ո՛չ ոք աներկևանապէս խօսի, եթէ ո՛չ այն որ յօժարապէս լռէ ։ Ո՛չ ոք աներկևանապէս առաջնորդէ, եթէ ո՛չ այն որ յօժարապէս զինքն ստորարկանէ ։ և ո՛չ ոք աներկևանապէս հրամայէ, եթէ ո՛չ այն որ յօժարապէս հնազանդի ։

3. Ո՛չ ոք աներկևանապէս խնդայ, եթէ ո՛չ այն որ բարեաց խղճմտանաց վկայութի̄ւն յինքեան ունի ։ Այլ՝ սրբոց աներկևանութի̄ւն միշտ լի երկիւղիւն Այ̄ արտաւկայացաւ․ և ո՛չ երբէք թուլացան

ցան յաշխատանաց, և կամ նուաղե
ցան ՚ի խոնարհութե, վասնայնոր զի
առաքինութեք բազմօք և շնորհօք
պայծառացեալք էին: Իսկ վատիցն
աներկևանութի ՚ի հպարտութե
և ՚ի սնապարծութե ծնեանի, և ՚ի
վախճանի պատրեցեալք զինքեանս
գտանեն: Ուստի ոչ երբեք խոս
տացիր քեզ զաներկևանութի յայս
մին աշխարհի, թէև իցես կրօնա_
ւոր և միակեաց առաքինի:

4. Բազմիցս որք բարեգոյնք
կարծին ՚ի մարդկանէ, անկանին ՚ի
փորձութիս ծանրագոյնս վն ինք
նահաւանութե, ուստի օգուտէ
բազմաց թէ ոչ իցեն ամենևիմք
թարց փորձութեց, այլ թէ եր
բեմն զփորձութի կրիցեն; և մի իցեն
բնաւին աներկևանք, զի մի գուցէ

Ծայարտանայցեն , եւ մի ՚ի մխիթա_
րութիւն արտաքինս ընդարձակա_
պէս մտանիցեն ։ Ո՜հ եթէ ոք ո՛չ
խնդրէր զմխիթարութիւն անցա_
ւորս երբէք , եւ ո՛չ զբաղէր ՚յիրս
աշխարհի , զորպիսիս բարիս ունե_
լոցէր խղճմտանս ։ Ո՜հ եթէ ոք
զա̃մ զպէաղումն ունայն ՚ի բաց հա_
տանէր , եւ միայն զկենսականաց եւ
զա̃ծայնոց խորհէր , այլեւ զյոյս իւր
ա̃մ յա̃ծ դնէր , ո՜ր քան զմեծ խա_
ղաղութի̃ եւ զյանդորրութի̃ ընդու_
նելոցէր ։

5. Ո՛չ ոք արժանի է երկնա_
նոյ մխիթարութե̃ , եթէ ո՛չ որ
զգուշապէս կրթիցէ զինքն սրբա_
զանիւ ներխայթեցմամբ սրտի ։
Ուստի եթէ կամիս փղձկիլ սրտիւ_
մուտ ՚ի սենեակըս , եւ արտաքսեա՛

զա̃մ

զմտմ վրդովլ աշխարհային, սպ̄ և.
գրեցեալէ յանկողինս ձեր զզջա_
ցարուք : Ք̄ զի 'ի սենեկիքում գտա
նես, զոր արտաքս կորուսեր : Ալ̄
զի եԹէ ոք յարատեւիցէ 'ի սենեկի,
զգայ զքաղցրուԹի̄, իսկ որ ո́չ պա
հէ զսենեակ իւր, ծնանի նմա զձան
ձրուԹի̄ : Ալ̄ որոյ եԹէ 'ի սկզբան
դարձման քոյ 'ի տո̄ պաշտեալ, և
պահեալ էիր զսենեակ քո, լեալ էր
քեզ յետայնորիկ սիրելի և բարե_
կամ և սփոփուԹիւն քաղցրագունեղ:

6. 'Ի լռուԹԷ և յանդորրու
ԹԷ, օգտի հոգի առաքինասէր,
և ուսանի զխորհուրդս գրոց, անդ
գտանէ զհեղուԹիւն արտասուաց,
որովք յիւրաքանչիւրում գիշերի
լուանայ զինքն և մաքրէ : Ք̄ զի ըս
տեղծողին իւրում այնքան ընտանեա
նայ,

նայ , որքան հեռանայ յաշխարհայ
նոց վրդովմանց : Ուստի որ ոք
հրաժարի 'ի ծանօթից և 'ի բարե-
կամաց իւրոց , մերձենայ նմա ած-
ընդ հրեշտակաց իւրոց սրբոց : Լո
որոյ բարեգոյն է թաքչիլն , և ու-
նելն զփոյթ զինքենէ, ք̄ թէ անփոյթ
եղեալ զանձնէ , զհրաշս գործել : Գո
վլութիւն է կրօնաւորի եթէ հա-
զիւ երբեմն ելանիցէ արտաքս ,
և եթէ փախչիցի զի մի տեսանիցի:
այլև եթէ ո՛չ կամիցի տեսանել
զմարդիկ :

7. Ընդէ՞ր կամիս տեսանել
զայն, զոր ո՛չ է պարտ քեզ ստանալ,
զի անցանէ աշխարհ և ցանկութիւն
նորին : Եւ թէպէտ քարշէ զքեզ
յօժարութիւն զգայականութեան առ
'ի յագեցուցանել , բայց յորժամ
էանց

ձանց ժամ ըղձին, զինչ, եթէ ոչ զծանրութ̄ի խղճմտանաց և զտարապրումն սրտի գտանես: Զի քաղմից խնդալից եղումն 'ի սենեկէ, զտխրալից դարձումն ծնանի: և զո՛ւարճ հոգւումն երեկոյի, զտրտմալից առաւ՛օտ բերէ, այսպէս ամ̄ խնդութ̄ի մարմնական, համոզելով թէպէտ մտանէ, բայց 'ի վախճանի խայթէ և սպանանէ: Ուստի զինչ կամիս այլուրեք տեսանել' որ ոչ տեսանես 'ի քում սենեկի: ահա երկինք և երկիր, և ամենեքեան տարերք. դ̄ զի 'ի սոցանէ են հանուրքն եղեալք:

8. Զինչ կարես այլուրեք տեսանել, որ տեւել մարթիցի 'ի ներքոյ արեգականն: Հա՛ւատաս զքեզ յարդեցուցանել, բայց ոչ կարես

այնմ առժամանել: Քանզի եթէ
տեսանէիր եւ զընա՛ս ներկայո-
րէն, զինչ էր, եթէ ո՛չ ունայն տե-
սութի̄ : Համբարձ ուրեմն զաչս
քոյս 'ի բարձունս, եւ աղաչեա՛ զա̄ծ
վս̄ մեղաց քոց եւ յանցանաց : Թող
զսնոտիս սնոտեաց, եւ ունկնդիր
այնոցիկ զորս հրամայեաց քեզ ա̄ծ:
փակեա՛ զդուռն քո առաջի երե-
սաց քոց, եւ հրաւէ՛ր իրեա առ քեզ զյի
սուս զսիրելին քո, կաց ընդ նմա
'ի խցենեկի քում, զի այլուրեք ո՛չ գտա-
ցես զայնքան խաղաղութի̄ : Քանզի
եթէ ո՛չ էիր ելեալ 'ի խցենեկէ քումմէ,
ո՛չ էիր լուէ՛ալ զվրդով ինչ, եւ բարե-
գունապէս ընխաղաղութե̄ մնաց-
եալ էիր: զի յորմէ հաճիս լսել երբեմն
զնոր ինչ համբաւ, յայնմանէ պար-
տէ քեզ զշփոթութիւն սրտի կրել :

Գլուխ.

## Գլուխ. Քսանեւմի երորդ :

### Յաղագս համախայթման սրտի :

1. ԵԹէ կերպիւ իւիք օգտիլ կամիս, պահեա՛ ՚ի քեզ զերկիւղն ա՛յ : եւ մի լինիր այնքան ընդարձակ, այլ ՚ի ներքոյ սանձահարութե՛, ճնշեա՛ զբնաւ՝ս զգայութիս : Մի՛ մատներ զքեզ անհամեստից խնդութեց, այլ տուր զքեզ ՚ի խղճմտանս : զի գտանիցես զպառաւքինութի : Զի խղճմտանք զբարիս բազումս գտանեն, բայց տարալուծումն սովորէ վաղվաղակի զնոսա կորուսանել : Զարմանք են թէ որպէս կարէ ոք երբէք կա-

տարեկալեալեմ՝ յաշխարհի այսմիկ խնդալ, եթէ զաքսորանս իւրս, եւ զայնքանս կասկածանս հոգւոյ իւրոյ դիտիցէ եւ մտածիցէ:

2. Յաղագս անհոգութե՟ սրտի մերոյ եւ զանցառութե՟ մերոց պակասութե՟ց, ոչ զգամք զցաւս հոգւոյն մերոյ: զի բազմիցս՝ ունայնաբար՝ ծիծաղիմք մինչ իրաւի լալ պարտիմք: Քանզի ոչ ուրեք գտանի ճշմարիտ ազատութի՟ եւ ճշմարիտ խնդութի՟, եթէ ոչ յերկիւղի ա՟յ համդերձ խղճմտանօք բարեօք: Ուստի երանի որ կարէ ՚ի բաց ձգել զա՟մ արգելուածս զբաղականս, եւ ժողովէ զինքն ՚ի միութի՟ սրբազանի համախոհութեան: Երանի որ յինքենէ ՚ի բաց հերքէ զա՟մ ինչ, որ կարէ բծաւորել եւ ծան

րա

բացուցանել զխղճմտանս : Օրհնեմ ուրեմն արիաբար՝, զի սովորութիւն սովորութ̄է յաղթի : Եւ ո̄պ դու գիտես թողուլ զայլս , այսպէս՝ եւ այլք թողցեն զքեզ առնել զքոյս առնելիս :

3. Մի՛ զստացուածս օտարաց ՚ի քեզ առաքարշեր, եւ մի ՚ի բանս մեծագունից զքեզ ներխառներ , այլ դարձո՛նախ զաչս քոյս ՚ի քեզ ; եւ առաւադրեա՛ քեզ յատկապէս՝ մանաւանդ ք̄ թէ ա̄մից քոյոց սիրելեաց : Եւ եթէ անխնամ իցես դու ՚ի մարդկանէ , մի տրտմիր ընդ այն , այլ տրտմիր ընդ այն միայն , զի եթէ ո՛չ վարիցիս բարեպէս եւ զգուշապէս՝ , ո̄պ վայելէ՛ ծառայիցն ա̄յ , եւ առաքինեաց կրօնաւորացն վարիլ : Յուսալի օգուտ յոյժ զի ո՛չ

ունիցի որ զմխիթարութիւնս բա_
ղումն յաշխարհի այսմիկ, և մա_
նաւանդ ըստ մարմնոյ, այլ եթէ
ոչ ունիցիմք զաստուածայինս մխիթա_
րութիւնս, պատժապարտք եմք, զի
ոչ խնդրեմք զխղճմտանս, և զմնո_
տիս և զպարտաւքինս իմէնջ ամենև
ինմէ 'ի բաց ոչ տարհերքեմք :

4. Վարկեա՛ զքեզ գոլ անար
ժան աստուածայնոց մխիթարութեանց,
և արժանի բազմաց նեղութեանց :
Յորժամ ոք կատարելապէս՝ յին
քեան ներփղձկի, յայնժամ ծանր
և դառն թուի նմա բոլոր աշխարհ :
Մասնի այր բարի գտանէ զբաւա
կան նիւթ ցաւելոյ և լալոյ, եթէ
յինքն նկատեսցէ, և եթէ զմերձա_
ւորէն խորհեսցի : զի գիտել կարէ
թէ ոչ ոք է աստ թարց նեղութեան :

Եւ

Եւ որքան բարեպէս յինքն նկա_
տէ, այնքան առաւել ցաւի։ Զրդ
նիւթք ճշմարտի ցաւոյ, ենէրք
նայնոյ խղճահարութե̃ն, են մեղք
մերք եւ յանցանք, որովք այնպէս
կամք պատուրեցեալք, մինչ զի հա
զիւ զերկնայնոց խորհել մար
թիցիմք։

Է : Եթէ առաւել խորհէիր
զմահուանէ քումէ, քան թէ զեր
կարից քոյոց կենաց, ո՛չ էր երկբայ
էլի թէ ո՛չ զգաստացուցանէիր
զքեզ ջերմագունապէս։ Իսկ եթէ
զտանջանս ապառնիս դժոխոց եւ
զվիշտս քաւարանին՝ իմիտ ածէիր,
հաւատամ թէ յօժարաբար տա_
նէիր աշխատանաց եւ ցաւոց, եւ
յո՛չընչէ խստութե̃ Երկնչէիր։
Բայց ք̅ զի ո՛չ թափանցեն այսոքիկ

՚իսկերոտ մերս, եւ տիրեմք դեռեւս զհամբերութն մարմնոյ, մին որոյ ճամբ ցրտացեալք եւ յուլացեալք։

6. Բազում անգամ սխալիմք սակս աղքատութե մերոց մտաց, եւ դատապարտեմք զողորմելի մարմինն. աղօթեմ ուրեմն առ տր խոնարհաբար, զի տայցէ քեզ զհոգի խղճմտանաց, եւ սա ընդ մարգարէին, Ջամբեամ ինձ տր զհաց արտասուաց, եւ արբո՛ ինձ տր զարտասուս չափով։

## Գլուխ. Քսան և երկու երորդ։

## Յաղագս համանկատման մարդկային թշուառութեան։

1. Ուր և իցես յո՛ և գնայ
ցես ողորմելի ես եթէ
ո՛չ առ ած զքեզ դար
ձուցանիցես ; ընդէ՞ր
վրդովիս մինչ ո՛չ յաջողի քեզ որպ
կամիս և ցանկաս, զի ո՞վ է որ ունի
ցի զա՛մ ինչ ըստ հաճոյից իւրոց ։
Ո՛չ ես, ո՛չ դու, և ո՛չ այլոք, ՚ի վ̅ր
երկրի ։ Քանզի ո՛չ ոք է յաշխարհի
այսմիկ թարց իմիք վշտի և նեղու
թե, ո՛չ թագաւոր, և ո՛չ քահա_
նայապետ։ Ուրմն ո՞վ է նա որ բարւոր
ադէս կեայ, եթէ ո՛չ այն որ վն ածյ

տանջի

տանի փորձութեանց :

2. Բազումք ՚ի տկարաց և ՚ի հիւանդաց ասեն մինչ տեսանեն զոք, ահա այր ոմն, որ որքան ըզ կեանս բարիս ունի, որքան փարթամէ, որքան մեծատունէ, որքան կարողէ, որքան գերազանցէ. բայց նայեաց ՚ի բարութիւնս երկնայինս, և տեսանիցես թէ այնոքիկ ամենեքեան ժամանակաւորք ոչինչ են : այլ յոյժ անհաւաստիք ևս առաւել ծանրացուցիչք : զի ոչ երբէք ստանանին թարց վրդովման և երկիւղի : Եւ զի ոչ է առն երջանկութիւն ունելն առատապէս՝ զժամանակաւորս, այլ բաւականէ թէ ունիցի ոք չափաւորապէս: Ալ̄ս ստոյգ իսկապէս՝ թշուառութիւն է կեալն ՚ի վ̄ր երկրի, զի որքան ոք կամի

կամի գոլ հոգևորագոյն, այնքան կեանք ներկայականք չինին նմա դառնագոյնք, ք̅ զի զգայ բարեպէս և տեսանէ պարզապէս զպակասութիւն մարդկայնոյ թշուառութեան, ուստի ուտելն, ըմպելն, հոկելն, ննջելն, հանգչիլն, աշխատիլն, և այլոց կարեաց բնութեան ՚ի ներքոյ գոլն, թշուառութիւն է մեծ. և տառապանք առն առաքինւոյ, որ յօժարապէս կամի գոլ ընդարձակ, և ազատ յամենեցունց մեղաց:

3. Քան զի յոյժ ծանրանայ ներքինն մեր մարդ կարիւք մարմնականօք յաշխարհի աստմիկ, ուստի մարգարէն զի ՚ի նոցանէ զերծանիցի ջերմեռանդապէս աղօթէ ասելով, ՚ի կշտաց իմոց հան զիս տր̅: Բայց վա՛յ ո՛չ ճանաչողաց զթշուա-

ռու

ռութիս իւրեանց, և առաւե̂լ զա̂յ այնոցիկ որք սիրեն զկեանս ապականացուս, և զողորմելիս: Եւ̄ զի ոմանք այնպէս փարին զսոքօք, թէ և հազիւ մարթիցեն հոգալ զհարկա̂ւորս աշխատանօք և ողորմութե̄ այլոց, մինչզի եթէ կարէին կեալ աստ, զարքայութե̄ն ա̄յ զո՛չ ինչ փոյթ ունէին:

4. Ո̂վ յիմարք և թերահաւ̂ատք, որք այնքան ախորժակօք 'ի յերկրի անկեալք կան, մինչ զի ո՛չ ինչ զայլմէ, խմբէ, եթէ ո՛չ զմարմնականայ խորհիցին: Բայց են եղկելիք զի 'ի վախճանի զգալոցք են թէ զոր աղխսն ունայն ինչ սիրեցին: Իսկ սէ̄րն ա̄յ որք ամենեքեան են առաքինիք և բարեկամք քո̄, ո՛չ երբէք հեռանեցան այնոցիկ որք հաճելիք

են

նն մարմնոյ , և ոչ ծաղկեցան ըն
կենցաղում այսմիկ: Բայց բոլոր
յոյս նց և դիտաւորութի ձկտէր
առ մշտնջենաւորն բարութին , և
իղձ նց տարիւր առ յարամնացա_
կանս և յանտեսանելիս , զի մի պա-
ցէ սիրով երևելեացս տարաքարշի
ցին 'ի սնոտիայինս: Ուստի դու եղ
բայր մի վհատիր 'ի յառաջելոյ 'ի_
հոգևորս , զի դեռևս ունիս զժամ
նեղժամանակ:

5. Ընդէր ձգես 'ի վաղիւն
զառաջնորդեալքդ ,արի և վաղվաղակի
սկսեալ առնել , ահա ժամանակ առ
նելոյ , ահա ժամանակ ընդ դիմա_
մարտելոյ , և ահա ժամանակ ըն
դունակ զգաստանալոյ: Իսկ եթէ
'ի նեղութէ իցես աստ , ահա ժամա
նակ արդիւնանալոյ , զի պատրաստէ

քեզ անցանել ընդ հուր և ընդ ջուր յառաջքան թէ հասանիցես ՚ի զովացումն, քանզի եթէ ոչ աշխատիցիս, յաղթահարել զվատթարութիս ոչ կարասցես, զի որքան եմք ընդ տըկարութեամբ այսմիկ մարմնի, թարց մեղաց կալ ոչ կարեմք, և ոչ կեալ թարց ձանձրութե̄ և ցաւոյ: Եւ թէպէտ յօժարիմք ունիլ զյանդորրութի̄ յամենից թշուառութեց, բայց ք̄ զի կորուսաք մեղօք զանմեղութի̄ մեր, և զերջանկութի̄ մեր ճշմարիտ, վ̄ս որոյ համբերել պարտիմք, և սպասել ողորմութեն ա̄յ, մինչև անցցէ անօրէնութիս այս, և ջնջեսցի մահկանացութիս այս ՚ի կենաց:

6. ՈՒՀ թէ որ քան է տըկարութի̄ մարդկայի̄ն, զի ձկտի միշտ

՚ի վատ

՚ի վատթարութիւս: ԻԶ յսօր խոստո-
վանիս զմեղս քոյս, և ՚ի վաղիւն
վերստին գործես զխոստովանեց-
եալն: ԻԶ յժմ յառաջադրես քեզ
զգուշանալ, և զկնի միոյ ժամու
դարձեալ գործես, ոպ̃ թէ զո՛չ ինչ
էիր յառաջեդեալ: ԻԼ̃ որոյ ըստ
իրաւանց կարեմք զմեզ խոնարհե-
ցուցանել, և ո՛չ կարծել զմենջ զմեծ
ինչ. որով հետև այնքան տրկարք
և անհաստատք եմք: Զի զանցա-
ռութ̄ մերով վաղվաղակի կորու-
սանեմք, զոր աշխատանօք բազմօք
՚ի ձեռն շնորհաց հազիւ երբեք
ստացեալ եմք:

7. Զի՞նչ դիպելոց է մեզ ՚ի
վախճանի, որք այնքան կանխա-
պէս՝ թարշամիմք: վա՜յ մեզ եթէ
այսպէս՝ կամիցիմք խոտորիլ ՚ի յան

դորրու

դորրութի՛, ո՛պ թէ իյեմք ըն խա
ղաղութէ և յաներկև անութէ, որք
և ո՛չ գշա՛խող ուքութէ ըն կենցա
ղավարութէ մերում տեսաք ։
Քան պի բարեգոյն էր թէ թերևս
կրթեէաք իբրև զնորավարժս
վարուց բարեօք, զի գտնեմ
ունէաք զյոյս ապաունւոյ
զգաստութէ, և մեծա
գունի յառաջադի
մութէ հոգե
կանի ։

Գլուխ.

## Գլուխ. քսան և երեք երորդ:

### Յաղագս խոկման մահու:

1. Յոյժ փաղփաղակի հասանէ քեզ օր մահու, տես Թէ զինչ առնե լուցիցես, քանզի այսօր է՛ ոք և 'ի վաղիւն ո՛չ երևի; և մինչ հեռանայ ոք յաչաց, բառնի և ս յիշատակ նորին 'ի մտաց: Ո՜հ Թմրութե՜ և խստութե՜ սրտի մարդկայնոյ, որ միայն զներկայից խորհի և զապառնիսն առաւել ո՛չ նկատէ: Օի պարտէիր զքեզ յամ ում գործում և 'ի յն խոկման այն պէս ունել, որպ Թէ այսօր մեռանելոցիցէիր, քան զի եԹէ զբարիս ու-

նեցեալէիր խղճմտանս, ոչ այնքան ՚ի մահուանէ երկնչէիր, զի բարե-գոյնէ զգուշանալն ՚ի մեղաց, քան զփախչելն ՚ի մահուանէ, եւ եթէ այսօր ոչ ես պատրաստ, ո̄պ երկիցիս ՚ի վաղիւն, զի վաղիւն է օր անհա-ւաստի, եւ ո՞պ̄ գիտես թէ տեսա-նելոցիցես զվաղիւն :

2. Զինչ օգուտ մեզ կեալն եր-կարօրէն, որովհետեւ հազիւ երբէք զգաստանամք ; Ո՜հ, զի կեանք եր-կարք ոչ միշտ զգաստացուցանեն, այլ մանաւանդ յաւելուն զյանցանս Ուստի երանիթէ գոնեա զմի օր բարեպէս կեցեալք էաք յաշխարհի այսմիկ ; Եւ թերեւս բազումք թուեն զամս դարձմանն իւրեանց առ այ̄, բայց զսակաւս գտանեն ՚ի նմա պտուղս զգաստութէ̄ : Եւ

եթէ

եԹէ զարհուրելի է մահ, գուցէ ահաբեկագոյնիցէ երկարապէս կեալն ։ Այլ արդ երանի այնմ որ զժամ մահուան իւրոյ ունի հանապազ առաջի աչաց իւրոց։ Եւ ՚ի մահ հանապազօրդ զինքն պատրաստէ։ Օ՛ն եԹէ տեսեր երբեմն ուրումն զմահ, խորհեաց զի և դու ընդ այն ճանապարհ անցանելոց ես ։

3. Յորժամ առաւօտ լինի, վարկեաց Թէ ո՛չ ես ժամանելոց յերեկոյ։ Եւ յերեկոյն մի խոստանար քեզ զժամ առաւօտուն ։ Եւ միշտ այսպէս պատրաստեա՛ զքեզ, և կենցաղավարեաց այսպէս՝, զի մի երբէք անպատրաստ մահ զքեզ գտանիցէ։ Քանզի բազումք վաղվաղակի՝ և յանկարծ մեռանին, վ̄ զի ՚ի ժամուն

յիշում ո՛չ կարծեմք գայ որդին մարդոյ, և յայնժամ այլապէս զգալոցք եմք զկեանս մեր զանցեալս բոլորս, և ցաւելոցք եմք; զի այնքան զանց արարաք և թուլացաք:

4. Որքան երջանիկ է նա և իմաստուն, որ ջանայ այժմ այնպէս կեալ, ո̃պ ըղձայ գտանիլ ՚ի ժամու մահուան: Զի տայ զմեծ համարձակութի̃ երջանկապէս մեռանելոյ, կատարեալ խոտումն կենցաղոյս, ջերմեռանդն սէր յառաջանալոյ յառաքինութի̃ս, իղձ կրթման անձին, աշխատանք ապաշխարութե̃, յօժարութի̃ հնազանդութե̃, ուրացումն անձին, ըմբերումն փորձութե̃ց վ̃ս սիրոյն քի̃: Մինչ առողջես զբաղումս գործես բարիս, այլ մինչ տկարես, ո՛չ

գիտեմ

գիտեմ զինչ առնելոցիցես, զի սա կամք 'ի տըկարութե̄ բարեգոյնանան, և հազիւ որք յաճախ՝ տըկարանան, արդարանան:

Ե. Մի՛ յուսար 'ի բարեկամս և 'ի մերձաւորս, և մի՛ ձգեր յապանիս զքոյդ կեցութի̄, քան զի վաղ վաղագոյն՝ մոռանալոցքեն զքեզ մարդիկ, քան Թէ կարծես: Լ̄ւ որոյ՝ բարեգոյնէ այժմ 'ի պատշաճում ժամանակի նախատեսանել, և զբարի ինչ յառաջառաքել քան Թէ յուսալ 'ի յօգնութի̄ս այլոց, զի եթէ դու ո՛չ հոգաս այժմ վ̄ն քոյ, ո՞վ ի վախճանի վ̄ն քոյ հոգալոցէ բարեգոյն՝ ք̄ զքեզ: Այժմ յոյժ ազնիւ է ժամանակ, այժմ է՛ օր փրկուԹե̄, այժմ է՛ ժամ ընդունելի: Բայց ո՜հ ցաւոյս, զի օգտակարապէս

՚ինկեր ո՛չ արկանես զայն , նորում
արդիւնաւորիլ կարես , որովև յա
ւիտենականապէս կեցցես : Բայց
եկեսցէ ժամանակ , յորում զմի օր
կամ զմի ժամ զգաստանալոյ ցան
կասցես ունել , եւ ո՛չ գիտեմ թէ
գտանիցես :

6. Աղէ՛ ուրեմն ո՛վ սիրելի , զի 'ի
Բազմաց փորձութեանց զքեզ ազա
տիցես , եւ 'ի մեծէ յերկիւղէ զքեզ
փրկիցես , եթէ երկնչիցիս միշտ 'ի մա
հուանէ եւ զարհուրիցիս : Ջանա՛
այժմ այնպէս կեալ , զի 'ի ժամու մա
հուան մանաւանդ խնդասցես քան
թէ արտասցիս , ուսի՛ր այժմ մեռա
նիլ յաշխարհի , զի 'ի քս̃ կենդանանայ
ցես , ուսի՛ր այժմ խոտել զա̃մ , զի
յայնժամ ազատապէս կարիցես
փութալ առ քս̃ , ճնշեա՛ այժմ զմար

մին քո

մինչ քո ապաշխարութե̅, զի յայն ժամ ունիցիս զյոյս ճշմարիտ:

7. Ո՞վ յիմար, ընդէ՞ր խորհիս զերկարից կենայց, որով հետեւ ո՛չ զօր մի ունիս հաւաստի: Որքան բազումք այդպէս պատրեցան եւ յուսահատեցեալք ելին 'ի մարմնոյ: Որքանիցս լուար յասողաց, Թէ ոմն անկաւ 'ի սրոյ, եւ ոմն 'ի ծով ընկղմեցաւ, մինն 'ի բարձանց քարավէժ եղեալ եհերձ զգագաթիւր, եւ միւսն մինչ ուտէր կարկամեցաւ; միոմն մինչ զբօսնոյր վախճանեցաւ, եւ այլումն հրով կիզեցաւ, մինն սրով, միւսն մահուամբ, եւ այլումն աւազակութե̅ կորեաւ; եւ այսպէս ամենեցուն վախճան է՛ մահ, եւ աւուրք նոցին ոպ̅ հովանի անցանին:

8. Ո՞վ յիշելոցէ զքեզ զկնի
մահուան , եւ ո՞վ աղօթելոց վ͞ն
քո ; արի՛ այժմ արի՛ սիրելի , եւ
գործեա՛ զոր ինչ գործելոցես , զի
ո՛չ գիտես թէ ե՞րբ ես մեռանելոց ,
այլ եւ ո՛չ գիտես թէ զի՞նչ դիպե
լոց քեզ զկնի մահուան : Ուստի
մինչ ժամանակն ՚ի ձեռին քոյէ , ժո
ղովեա՛ քեզ զգանձ անմահական ,
եւ բաց ՚ի փրկութ͞է քումէ զո՛չինչ
հոգայցես , այլ զայնմանէ միայն ,
որ ա͞յնէ զփոյթ ունիցիս : Արա՛ր քեզ
այժմ զբարեկամս պատուելով ըզ
ս͞բս ա͞յ , եւ հետեւելով ն͞ցին շաւղաց ,
զի մինչ նուաղիցիս յայսմիկ կեն
ցաղում , ընկալցին զքեզ ՚ի յարկան
յաւիտենականս :

9. Պահեա՛ զքեզ ՚իբրեւ զպան
դուխտ եւ օտար ՚ի վ͞ր երկրի , որում

ոչ ինչ է՛ փոյթ զիրաց աշխարհի, և զանիրտ քո ազատ, և տուամծվէր ուղղեցեալ, զի ոչ ունիս աստ քաղաք մնացական, առնա զաղօթս և զհառաչանս արտասուալիրս առուղղեա՛ հանապազ, զի հոգի քո արդիւնաւորեսցի երևիլ երջանիկ առաջի տն̅ զկնի մահուան:

## Գլուխ. Քսան և չորս երորդ:

## Յաղագս դատաստանին և պատժոց մեղաւորաց:

1. ՄԵՂ մենայնում մերին նկատեմ զվախճանն, և թէ ոռ̃ կալոցեցես առաջի անաչառի դատաւորին, յորմէ ոչ ինչ ծածկի,

որ

որ ընծայիւք ո՛չ հաւանողի, եւ զպատ
ճառանս ո՛չ ընդունի, այլ միայն
ըստ իրաւանց դատէ ; ո՞վ յիմար
եւ ողորմելի մեղաւոր, զինչ պա-
տասխանի տալոցես այնմիկ, որ
գիտէ զքոյս բնաւ չարութիս; եր
կնչիս ակնարկել յերեսս առն բար
կացելոյ, ընդէ՞ր ո՛չ պատրաստես
զքեզ վն̄ աւուր դատաստանի, յո
րում ո՛չ ոք այլով միջնորդիլ կա-
րէ, կամ ջատագովել, այլ իւրա-
քանչ իւրոք է՛ բեռն բաւական
ինքեան ։ Այժմ արդիւնաւորք են
քոյք աշխատանք, ընդունելիք են
քոյք արտասուք, լսելիք են քոյք
հեծութիք, հատիչք եւ մաքրիչք
մեղաց են քոյքն ցաւք ։

2\. Մեծ եւ զգաստողջարար
ապաշխարութի ունի այրն, որ
համ

համբերէ փորձութեանց, և որ ընդ
կալեալ զանիրաւութիս, առա_
ւել ցաւէ ի մն չարութէ գործո_
ղին, եւ մն անիրաւութեանցն զորս ըն
կալաւ: Որ յաղագս ընդդիմա_
կաց իւրոց յօժարութե աղօթէ,
և՚ իւրոյոյն սրտէ նոցին ներէ, որ
՚ի խնդրելոյ զթողութի յայլմէ ոչ
յուլանայ, և որ դ իւրայքն գթայ
եւ թէ բարկանայ: որ զանձն իւրյա
ծախսապէս մշտապնդէ, և զմարմինն
հոգւոյն իւրում ջանայ հնազանդ_
առնել: Բարեգոյնէ այժմ մաքրել
զմերս մեղս, եւ թողուլ զնա մինչև
՚ի վախճան, զի ճշմարտապէս պատ
րեմք զմեզ սակս անկարգի սիրոյն
զոր ունիմք առ մարմինս մերս:

3. Զինչ կլանելոցէ հուրն
այն, եթէ ոչ զմեղս քոյս, ուստի

որքան

որքան աւա՛ղել անխայես այժմ
՚ի քեզ, և հետևիս մարմնոյ քում,
այնքան սաստկապէս յապա պատ
ժեսցիս, զի զմեծագոյն նիւթ հրոյն
կիզման ժողովեսցես: Քան զի որով
ոք մեղանչէ, նովիմբ կարծրա_
պէս տանջի, զի ՚ի դժոխս ժանտք,
խայթոցիւք հրացելովք կիզեսցին,
և որկրամոլք ծարա՛ւով ահագնով
և սովով տագնապեսցին, անդ եղ
ջախոհք և հեշտութեանց սիրօղք,
ընկաթսայս եռացուցեալս կպրով
և ծծըմբով պարշահոտիւ մաշես
ցին, և նախանձոտք իբրև դշուն
կատաղիս սակս ցա՛ւոց իւրեանց
կոծեսցին :

4. Ո՛չ են յանցանք որք զպա
տիժս իւրս յատուկս ո՛չ ունիցին;
զի անդ գոռոզք ցնդմամբ մեծաւ

հաբէ

հաբեկեսցին, և ազատք թշուա_
ռիւ կարօտութ̄ե վշտանկեսցին ;
անդ ծանրագոյն է կալն զժամ մի
ընդպատժում, ք̄ սաստ զամս հա_
րիւրս ՚ի մէջ ծանունց ապաշխարու-
թ̄եց ; անդ ո՛չ ոք է հանգիստ, և
ոչ ոք միխիթարութ̄ի դատապար
տեցելոց : Թէ և սաստ երբեմն հանգ.
չիլ կարիցէ ոք յաշխատանաց, և
կամ սփոփիլ միխիթարութ̄ե ՚ի_
բարեկամաց։ Սակս որոյ զգուշլեր
սաստ, և ցաւիր սակս քոյոց մեղաց,
զի յաւուր դատաստանին լինիցիս
աներկեւան ընդ արդարոց : Քան
զի յայնժամ կացցեն արդարքն մե
ծաւ համարձակութ̄ե յանդիման
այնոցիկ որք վշտապնեցին զնոսա,
և տառապեցուցին, յայնժամ ո՛չ
դատեսցին այնոքիկ, որք սաստ դա

տո_

տողութ̄եց մարդկան խոնարհա_
բար գլինըեանս ստորարկեցին; յայն
ժամ զմեծ համարձակութ̄ի ունի
ցի աղքատն և խոնարհն, և ահաբեկ
լինի յամենայնէ կողմանէ հալածան:

5. Յայնժամ համարեցին նա
իմաստնապէս կեցեալ յաշխարհի
այսմիկ, որ ուսեալ է լինել յիմար
և խոտելի վ̄ս ք̄ի: յայնժամ համբո
թուեսցի ա̄մ նեղութ̄ի համբերու
թ̄ք կրեցեալ, և ա̄մ անօրէն խցցէ
զբերան իւր: յայնժամ խնդասցէ
ա̄մ բարեպաշտ, և տխրեսցի ա̄մ
ամպարիշտ; յայնժամ առաւել
զուարճասցի մարմին պշտագնե_
ցեալ, քանզի մարմին յար հեշտու
թ̄ք սնուցեալ: յայնժամ փայլես
ցին հանդերձք խոտելիք, և խա_
ւարեսցին հանդերձք ազնիւք: յայն
ժամ

ժամ առաւել գովեսցի տուն ինչ աղքատաշէն, քանզպալատ ինչ ոսկէնկար: յայնժամ առաւել օգնեսցէ հաստատ համբերութի̅, ք̅ զա̅մ աշխարհի զօրութի̅, յայնժամ առաւել բարձրասցի դուռ հնազանդութի̅, ք̅ զա̅մ աշխարհինրբահայեցութի̅:

6. Յայնժամ առաւել համարեսցին խղճմտանք մաքուրք, ք̅ զհմուտ փիլիսոփայութի̅: յայնժամ առաւել վարկեսցի խոստումն փարթամութե̅ց, ք̅ ըղձնաւս գանձս երկրաւնեայց: յայնժամ առաւել մխիթարեսցիս վ̅ն քոյոց ջերմեռանդից աղօթից, ք̅ վ̅ն քոյոց նրբից ուտելակերութե̅ց: յայնժամ առաւել խնդասցես վ̅ն քոյոց լռապահութե̅ց, ք̅ վ̅ն քոյոց երկարից

առաս

առաւապելաբանութեց : յայնժամ առաւել արժեացին գործք մէք, ք̅ զբանս բազումս և գեղեցիկս : յայնժամ առաւել հաճոյ թուես ցի խստակրօնութի և կարծր ապաշխարութի, ք̅ զա̅մ հեշտութի երկրայինս : Ուսի՛ր ուրեմն կրել այժմ զդոյզն ինչ նեղութի, զի յայնժամ 'ի մեծագունից կարիցես զերծիլ: աստ փորձեա՛ զքեզ թէ զինչ կարիցես յետոյ առնել: Եթէ այժմ զսակաւ ինչ փորձութի ո՛չ կարես կրել, ո՞պ մարթեսցիս կրել զմշտնջենաւորս պատիժս : Եթէ այժմ սակաւ ինչ կիր զանհամբերութի բերէ, զինչ առբերելոցէ են քեզ յայնժամ դժոխք: Ճշմարև՝ ասեմ, ո՛չ կարես ունել միանգամայն զերկուս խնդութիս, այսինքն, զզուար-

ճանալս

Ճանապարհն յաշխարհի այսմիկ, և զԹա-գաւորեն անդէն ընդ քի:

7. ԵԹէ մինչև ցայսօր միշտ պատուո՛ւէք և հեշտուԹէք կեցեալ էիր, զինչ օգուտ լինէր քեզ այժմ, Թէ հանդիպէր քեզ մահ: ուստի ամ ինչ ունայնուԹի է, բաց 'ի սի-րոյն այ և 'ի ծառայուԹէ նորին: Քանզի որ զած յամէ սրտէ իւրմէ սիրէ, նա ոչ 'ի մահուանէ, ոչ 'ի տանջանաց, ոչ 'ի դատաստանէ, և ոչ 'ի դժոխոց երկնչի: զի սէր կա-տարեալ զամենեկեան մատչուցա-նէ առ ած մեզ շնորհէ: Իսկ որ դե-ռևս մեղօք հեշտանայ ոչ է զար-մանք Թէ երկնչիցի 'ի մահուանէ և 'ի դատաստանէ: Սակայն բարի է, զի եԹէ ոչ սիրով ոչ հեռանայ 'ի չարէ, երկիւղիւ գոնեա՛ դժո-

խոց ղօպիցի : Ա̃որոյ որ զերկիւղն ա̃յ ո՛չ այնքան համարէ, 'ի բարիս տեւել ո՛չ կարէ, այլ վաղ վաղակի՝ անկանի յորոգայթս սատանայի :

## Գլուխ. Քսան և հինգ երորդ :

## Յաղագս ջերմեռանդն ուղղման բոլորից մերոց վարուց :

1. Լե՛ր զգաստ և զգոյշ 'ի պաշտաման ա̃ն, և խորհեաց յաճախապէս՝ թէ առ ի՞նչ կոչեցար, և թէ ընդէ՞ր թողեր զաշխարհ, ո՛չ ապաքէն վա̃ այնր, զի ա̃յ կեցցես, և այր հոգեւոր լինիցիս : Ուրեմն փութա՛ նջոյդ յա

առ

ռաջադիմութի̅ն զի կվարձս, աշխա-
տանաց քոց փութով ես ընդունե-
լոց։ Եւ յայնժամ ո՛չ եղիցի երկիւղ,
եւ ո՛չ ցաւ ՚ի սահմանս քոյս։ Եւ թէ
պէտ փոքր ինչ այժմ աշխատիս,
բայց յետոյ զմեծ հանգիստ և
զմշտնջենաւոր խնդութի̅ն գտցես։
Քանզի եթէ դու մնասցես հաւ-
ւատարիմ և անվհատ ՚ի յառնելիս,
Թարց ումէք կարծեաց եղիցի եւս
ա̅ծ հաւ̂ատարիմ և ճոխ ՚ի հատուց-
մունս։ Ուստի զյոյս բարի ունիլ
պարտիս թէ ընդունելոցիցես զյաղ-
թանակն, բայց զաներկիւղու-
թի̅ն ո՛չ է պարտ ունել, մի՛ դուցէ
յուլանայցես կամ փքանայցես։

2. Մինչ ոմն նեղութե̅ ՚ի
մէջ երկիւղի եւ յուսոյ յածախա-
պէս աշէկոծ էր, և երբեմն տխրու-

թէ խոնջեալ յեկեղեցւոջն առաջի սրբոյ սեղանոյն ուրուք, անկեալ 'ի վե՛ր երեսաց իւրոց կայր յաղօթս, եւ զայս 'ի միտ իւրում խորհէր ասելով, վա՜չ թէ գիտէի թէ յարատեւելոցիցեմ, յանկարծակի՝ լուա զձա՛յնին ներքնքեան պատասխանի, որպէսզի, եթէ գիտէիր զայդ զինչ կամէիր առնել, արա՛ այժմ, զոր յայնժամ կամէիր առնել, եւ եղիցիս աներկեւան: Ուստի սփոփեցեալ եւ արիացեալ յանձնեաց զինքն կամացն այ, եւ հանդարտեաւ 'ի տառասպչէ անտի ալէկոծմանէ: Եւ ո՛չ կամէցաւ հետաքրքրութէ խուզել թէ զի՞նչ իցէ դիպելոց նմա 'ի հանդերձելումն, այլ մանաւանդ ջանայր խնդրել թէ զինչ իցէ կամք այն բարեհաճելին եւ կատարեալն,

տարեալն , առ 'ի սկսանել և կա-
տարել պ̃մ գործ բարի:

3. Յուսա՛ 'ի տ̃ր և արա՛ զբա-
րի բնակեաց յերկրի , և հովուես-
ցիս 'ի մեծութ̃է նր̃ , ասէ մարգա-
րէն : Մի ինչ է որ զբազում 'ի յա-
ռաջադիմութ̃է , և 'ի ջերմեռանդե
զգաստութ̃է տարաքարշէ , այս
ինքն , երկիւղ դժուարութ̃է , կամ
աշխատանք պատերազմաց : Այլ
սակայն՝ այնոքիկ առաւել ք̃ զայլ
'ի յառաքինութիս յառաջանան ;
որք առաւել ծանուանք և հակա-
ռակք թուին , վ̃ն օգտութ̃է յաղ-
թել ջանան : Քան զի անդ ուր ա-
ռաւել շահի և արդիւնաւորի շնոր-
հիւ մեծաւ , ուր զինքն առաւել
յաղթէ և հոգևորապէս ճնշէ :

4. Եւ թէպէտ ո՛չ ամենեք

եան ունին զյաղթելիս հաւաստարս եւ զճնշելիս, սակայն հետազօտն նախանձաւոր հզօրագոյն է առ ՚ի յառաջել, թէ եւ զբաղումս ունիցի զփորձութիւն, ք զբարեկրօն ոք, որ ոչինչ ջերմեռանդ ՚ի յառաջինութիւս: Ուստի երկու են որք տեսակաբար օգնեն մեծի զդաստութե, այսինքն, ստորաքարշել զինքն բռամբ յայնմանէ, առ որ ընութին մատթարայէս հակէ, եւ քաջայէս պատերազմիլ, սակս բարւոյն, որում առաւել ոչ կարօտի: Ուստի յայնցանէ պարտիս զգուշանալ եւ զայնպիսիս յաղթել, որք քեզ անհաճելիք յաճախագէս թուին:

§. Չմուրէք զօգտութիւնս խնդրիցես, եւ ուր զօրինակս բա_

րիս

րիս դիտիցես, կամ լսիցես, համահետեւիլ նոցին ջանայցես: Բայց եթէ զպարսաւելի ինչ տեսանիցես զգուշ լեր, մի՛ զնոյն առնիցես ; Իսկ եթէ գործեալիցես երբեմն, փաղփաղակի ուղղել զքեզ ջանասցես քան զի ոչ տեսանես զայլս, այսպէս եւ տեսանիս յայլոց : Ա՞շ թէ ոչ վայելուչ է եւ քաղցր տեսանել զջերմեռանդս եւ զառաքինիս եղբարս բարեկրօնս, եւ զկրթեցեալս, եւ ոչ արտմալի է եւ ծանր տեսանել զշրջօղս անկարգապէս՝, որք զայնոսիկ առորս են կոչեցեալք, ՚ի կիր ո՛չ արկանեն ; զի վնասակար իմն է զանցառութիւն զառաջադրութե կոչման իւրոյ, եւ առ յո՛չ հրամայեցեալն զզգայութի իւր ձկտեցուցանելն :

6. Լե՛ր յիշող առնելոյն ի քէն յառաջադրութե̄, եւ դի՛ր առաջի աչաց քոց զխաչեցելոյն սպասկեր, եւ յոյժ պատկառեսցիս տեսանելով զվարս Յի̄ Քի̄, զի չեւ եւս զքեզ ՚նմին համակերպել ջանացեր, թէ եւ զբազում ժամանակս շրջեցար ՚ի շնո̂րհս Այ̄ : Այն որոյ կրօնաւո̂ր որ կրթէ զինքն զգուշապէս եւ ջերմապէս ՚ի վարս սրբազանս եւ ՚ի չարչարանսն տն̄ մերոյ յի̄ քի̄, զա̄մ ինչ օգտակար եւ պիտանի որ ինքեան առատապէս գտանէ: Եւ ո՛չ է հարկ, թէ խնդրիցէ զինչ բարեգոյն քան ՚ի քէ̄ : Ո՛հ թէ խաչեցեալն յս̄ բնակէր ՚ի սրտի մերում, ո̂րքան փութով եւ բաւականապէս լինէաք հմուտք :

7. Կրօնաւո̂ր ջերմեռանդն

բարե-

բարեպէս կրէ և առնէ զա̃մ ինչ պատուիրեցեալ նմա ; կրօնաւոր յոյլ և Թոյլ , ունի զկիշատ ՚ի վր̅ վշ- տաց , և յա̃մէ կողմանէ կրէ զնեղու- Թիս , զի ո՛չ ունի զներքին մխիթա- րուԹ̅ի , և ՚ի խնդրելոյ զարտաքինն արգելմանն : կրօնաւոր որ կեայ ար- տաքոյ ներկրԹուԹ̅ե , արտադրէ զինքն մեծի զլորման , զի որ զԹու- լադոյնս և զհեշտագոյնս խնդրէ , կայ միշտ ՚ի նեղուԹ̅ե , ք̅ զի մինն կամ միւսն անհաճոյ Թուի նմա :

8. Որպէս կարեն տանիլ այլք կրօնաւորք , որք այնքան խա- ռուԹ̅ք կան ՚ի ներքոյ վանականի կառավարուԹ̅ե , զի հազի՛ւ երբէք ելանեն ՚ի դուրս , բնապանցապէս՝ կեան , աղքատապէս՝ ուտեն , խոշո- րապէս՝ զգենուն , շատ աշխատին ,

սակաւ խօսին, երկարայէս՝ հա կեն, կանխայէս՝ յառնեն, զաղօթս երկարեն, յաճախայէս՝ ընթեռնուն, և զինքեանս բնաւ ինչ ներկրթութե̄ք պահպանեն: Հայեա՛ց ՚ի քարթուզիանոսս, և ՚ի չիսթերցիանոսս, և յայլս միակեացս և ՚ի կուսանս զանազանից կրօնից, թէ ո̄պ յա̄մուս գիշերի յառնեն՝ ի սաղմոսել ա̄ծ; ուստի անպատեհ իմնէ թէ դու ՚ի այնքան սրբազանն գործոյ ծուլանայցես, որով այնքան բազմութ̄ի կրօնաւորաց սկսանին առ ա̄ծ հրճուիլ:

9. Ո̄հ, եթէ ոչ բոլորով սրտիւ և բերանով, պարապիւր ՚ի գովութ̄ի ա̄ն ա̄յ; և ո՛չ յայլ ինչ; Ո̄հ թէ ոչ ո՛չ երբէք կարօտէր ուտել, կամ ըմպել, և կամ ննջել,

կա

կարօղէր միշտ գովել զնա, և՛ի յիւր հոգևորս միայն՝ պարապել ։ Եւ յայնժամ առաւել երջանկագոյն լինէր է այժմ, զի այժմ սակս իւրաքանչիւրոց կարեաց ծառայէ մարմնոյ ։ Ուստի երանի թէ ո՛չէին այսոքիկ կարիք, այլ միայն անձին հոգևորականքն մնուց մունք, զորս սակայն հազիւ երբէք ճաշակեմք ։

10. Յորժամ ոք առժամանէ յայն աստիճան, զի ո՛չ խնդրիցէ ի յստեղծուածոյ ուրեք զմխիթարութիւն, յայնժամ նմա ած նախնապէս և կատարելապէս սկսանի քաղցրանալ. յայնժամ և ս գոհունակ զամենեցունց դիպուածոց լինի, յայնժամ ո՛չ յաղագս մեծի իրի ուրուք խնդայ, և ո՛չ յաղագս փո_

քու

քու իցի ուրուք արտաքս , այլ դնել զյոյս իւր բոլորովին և Հաւա_տարմապէս 'ի յԱծ, որ է ամ յամենում որում ո՛չինչ կորնչի և ո՛չինչ մեռանի, այլ ընդա՛ւքն 'ինմա կեան, և 'ինչ մարթէլն նորին , Թարց ումեք ներ խուզութե ծառայեն նմին :

11. Լե՛ր միշտ յիշող քոյոյ վախճանի , և այնորիկ , Թէ ժամա_նակն կորուսեցեալ անդրէն ո՛չ դառնայ ; Թարց ումէք հետայօ_տութե և զգուշութե ո՛չ երբէք ստանիցն առաքինութիք : Եւ եԹէ սկսանիցիս Թուլանալ սկսանիս և ս չարանկրապէս լինել : Իսկ եԹէ տայցես զքեզ 'իՋերմեռանդութի, գտանես զխաղաղութի սակս շնոր_հացն այ և սիրոյն առաքինութե: Քան զի այր Ջերմեռանդ և զգուշ

պատ

պատրաստ է առ իմ : Մեծագոյն աշխատանքէ ընդդիմամարտելն վատթարութեանց և ախտից , քան մարմնականօք աշխատութեամբ քրտնելն : Որ զպակասութիւնս փոքունս ոչ 'ի բաց ձգէ , օրըստօրէ 'ի մեծագոյնս սահի: Ուրախացի՛ր յերեկոյի եթէ արդեամբք զտիւն անցուցեր : Զգաստացո զքեզ , զարթո՛ զքեզ , առաղդեա՛ քեզ , և զորինչ զայլոց առնիցի: Մի՛ կանցառներ սակայն զքեւ : զի այնքան յառաջադիմեսցես որքան ջանայցես ;

ԼԵՐ Դ.

## Թովմայի Գեմբեացւոյ։
## Յաղագս համահետեւմանն քի;

### Գիրք Երկրորդ։
### Հրաւագդեցութիւք քարոզք առ ներքնայինս։

### Գլուխ. Առաջին։
### Յաղագս ներքնայնոյ կենցաղավարութէ։

1. Արքայութիւն այ ՚ի ներքս ՚ի ձեզ է, ասէ տէրն։ Դարձիր առ տր ՚ի բոլոր սրտէ քումէ, եւ թող զաշխարհս ողորմելի, եւ

գտցէ

գտցէ հոգի քո զհանգիստ, ՈՒսի՛ր
խոտել զիրս արտաքինս և պարա
պել ՚ի ներքնայինս, և տեսցես զալ
՚ի քեզ զարքայութիւն այ; քանզի ար
քայութիւն այ է՛ խաղաղութիւն և
խնդութիւն ՚ի հոգին սբ, որ ո՛չ շնոր
հի երբէք ամբարշտաց: Եկեսցէ
ուրեմն առ քեզ քս ցուցանելով քեզ
զիւրն մխիթարութիւն, եթէ զար
ժանաւորն բնակութիւն նմին ներ
քսապէս պատրաստեսցես; Նորին
փառք և վայելչութիւնք են ներք
նայինք, և անդ համահաճի ինքեան;
Նորին յաճախ այցելութիւն է ընդ
մարդոյն ներքնոյ, քաղցր խօսակցու
թիւն, դիւրազգած սփոփութիւն, բա
զում խաղաղութիւն, և զարմանա
գոյն ընտելութիւն:

2. Աղէ՛ ուրեմն ո՛վ դու հոգի

հա

հաւատարիմ, պատրաստեա՛ այս
մին փեսայի զսիրտ քո, զի արժա
նացուցանիցէ զքեզ գալ եւ բնակիլ
՚ի քեզ: Քան զի ասէ, եթէ ոք սիրէ
զիս, զբանն իմ պահեսցէ, եւ առնա
եկեսցուք, եւ օթեւանս առնմա ա
րասցուք: Տուր ուրեմն զտեղի
քո, եւ այլոց ամենեցուն փակեա՛
զմուտ, եւ մինչ զՔս ունիցիս փար
թամ իսկ ես, եւ բաւական քեզ,
զի ինքն նախատեսուչ քո լինիցի,
եւ հաւատարիմ հոգաբարձու յամ
ում, եւ ո՛չ երբէք կարօտիցիս յու
սալ ՚ի մարդիկ: Քան զի մարդիկ
վաղվաղակի փոփոխին, եւ փութա
պէս նուաղին, իսկ Քս մնայ ՚ի յա
ւիտեան, եւ կայ քեզ մերձ հաստա
տապէս մինչեւ ՚ի վախճան:

3. Ո՛չ է պարտ դնել զյոյս

մեծ

մեծ խոնարհութեամբ ուսեալ ծածկանել
ւում և մեծահանճարութեամբ, թէ և
օգտակար է ծածկեալ լինել, և ոչ է
վայելուչ ասխոսել այնքան, թէ և
դարձցի նորեկն և ընդդիմամարտ
ոխցի: Զի թէ պէտ այսօր ընդ
քեզ է, սակայն վաղիւն կարէ դառ
նալ 'ի քէն, և հակառակորդել, քաղ
միցս խորհ. զօր. կրկնափոխել: Դի՛ր
ուրեմն զբոլոր յոյս քո ընդ յաստու
ծում, և նա եղիցի երկիւղ քո և սէր:
Նա պատասխանեսցէ վ̄ն քոյ, և արա
րասցէ բարեպէս, զի բարեգոյն լիցի:
Զի ոչ ունիս աստ զքաղաք մնա
ցական, այլուր և եղես օտարես և
պանդուխտ, և ոչ երբեք գտցես
զհանգիստ, եթէ ոչ ընդ Քի հա
րազատապէս միաւորեսցիս:

Դ. Ընդէ՞ր ակնարկես այսր

և անդր, որով հետև ո՛չ է այս տեղի քոյոյ յանդորրութե, այլ ՚ի յերկինս է քոյդ բնակութի, և իբր անցաւոր միայն պարտիս նկատել զբնաւս ։ Ընդդեմն են բնաւք կամք, և դու ընդ նոսին, զգուշ լեր մի՛ առ յեննուցուս ՚ինոսա, զի մի՛ և դու ընդ նոսին ըմբռնիցիս և կորնչիցիս ։ Քոյք խորհուրդք առ Ած միշտ վերացցին, և աղերսանք առ քս անդադարապէս ուղղիցին, եթէ ո՛չ կարես նկատել զվեհագոյնս և զերկնայինս, հանգիր ՚ի չարչարանս քի, և ՚ի խոցս նորին սրբազանս յօժարութե բնակեաց, զի եթէ ՚ի խոցս և ՚ի պատիս ազնիւս յիսուսի Քեր մեռանդապէս ապաւինիցիս, զմեծ մխիթարութի գտցես ՚ի մէջ նեղութե, և ո՛չ այնքան զփոյթ ունի-

ցիս

ցիս զարհամարհանսն մարդկայ-
նոյ, և զիւրաւպէս մարթեսցին տա-
նիլ զբանս պարսաւականս ։

Ե. Քրիստոս ևս մինչ էր յաշ-
խարհի, պարսաւեալ էր 'ի մարդկանէ,
և ընդ հարկաւորում ժամուն 'ի ծա-
նօթից և 'ի բարեկամաց իւրոց թո-
ղանիւր 'ի մէջ նախատանաց։ Քրիս-
տոս կամեցաւ չարչարիլ և խոտիլ,
և դու զի՞ քոյ լինիս վրէժխնդիր ։
Քրիստոս ունէր զհակառակս և
և զընդդիմամարտս, և դու կամիս
զի բնաւ լիցին քեզ բարեկամք և
բարերարք ։ Ո՞րպէս ուրեմն կա-
միս արդիւնաւորել առնս քոյ
համբերութեան, եթէ ո՛չինչ ընդդի-
մամարտութիւն քեզ առդիպեսցի ։
Զի՞րդ լինիցիս բարեկամ Քն, եթէ
ո՛չ կամիս տանել հակառակաց քոց։

Ք͞ն որոյ ըմբերեան ընդ քե͞ն կամի քե͞ն, եթէ կամիս Թագաւորել ընդ նմին ։

6. Եթէ միանգամ կատարելապէս մտեալ էիր ՚ի խորս Յի՛, և սակաւինչ ՚ի սիրոյ նորին բոցականէ ճաշակեալ էիր, ո՛չինչ զփոյթ ունէիր զնախատանաց, զյանդորրութեանց և զանյանդորրութեանց, այլ մանաւանդ խնդայիր սակս պարսաւանաց քեզ առ դիպեցելոց. զի սէրն Յի՛ առնէ զմարդ քամահօղ ինքեան, և սէրն Յի՛ և ճշմարտութեն առնէ զմարդ խոկայես ներքին, և ազատ յամենեցուն կրից անկարգից ; և որ ունի զնա, կարէ ազատապէս դառնալ առ ա͞ծ, և վերանալ հոգւով ՚ի վեր ք͞ զինքն, և զմայլապէս յարահանգիլ ։

Մի

7. Որ համարէ զքնաւս ըստ այնմ որ են, և ո՛չ ըստ այնմ որասին, կամ վարկեցեալք լինին, նա՛ է ճշմարիտ իմաստուն, և ուսուցեալ մանաւ̂անդ յԱ̂յ, ք̄ ՚ի մարդկանէ; և որ ներքսապէս գիտէ զբօսնուլ, և զիւրս արտաքինս իբր զդոյզն ինչ վարկանել, նա ո՛չ խնդրէ զտեղի, և ո՛չ սպասէ ժամանակաց, առ ՚ի առնել զհոգևոր ներկրթութի̄, զի այր ներքին վաղվաղակի՝ զինքն ժողովէ, ք̄ զի ո՛չ երբէք հեղանի բոլորապէս՝ առ արտաքինս, և ո՛չ արգելուն զնա աշխատանք կամ պարապմունք առժամանակ ինչ հարկաւորք, այլ ըստ իրաց եկելոց զինքն պատրաստէ; և որ ըստ ներքնոյն բարեպէս է յօրինեցեալ, և կարգադրեցեալ, ո՛չ հոգայ զզարմա

նմանեալ առից մարդկայնոց, զի
այնքան մարդ արգելանի և տառապայն
գի, որքան զիս արտաքինս առ
ճնշեն քարշէ :

8. Թէ ներքնապէս ուղղեց
եայլէիր և բարեպէս մաքրեցեալ,
ա̃մ ինչ աջողիւր քեզ բարեպէս,
և արդիւնաւորապէս, ուստի վ̃ն
այն բազում ինչ քեզ անհաճոյ լի
նի, զի դեռեւս ո՛չես կատարելա
պէս ներ՚ի քեզ մեռեալ, և ո՛չ որո
շեցեալ յիրաց երկրայնոց : Եւ զի
ո՛չինչ այնքան բծաւորէ և վրդովէ
զսիրտ մարդկան, որքան սէր ան
մաքուր ստեղծուածոց, ևեթէ
ո՛չ հրաժարիցես ՚ի մխիթարութ̃է
արտաքնոյ, ո՛չ կարես նկատել զիրս
երկնայինս, և յաճախապէս հրճուել
ներքնապէս :

Գլուխ.

## Գլուխ. Երկրորդ։

### Յաղագս խոնարհականն զիջմանն։

1. Մի՛ համարիցիս մեծ ինչ, եթէ ունիցիս զոք բարեկամ քեզ, և կամ ընդ դէմ քեզ, սակայն ջանա՛ և հոգա՛ զի իցէ ա̃ծ ընդ քեզ յա̃մում զոր առնես, և ունիցիս զխղճմտանս բարիս, և նա բարեպէս՝ ջատագովեսցէ վ̃ս քո։ Քանզի ուրում ա̃ծ օգնել կամի, նմին ո՛չ ուրուք թիւրութի̃ վնասել կարէ։ Ուստի եթէ գիտիցես լռել և համբերել, տեսցես աներկբայապէս տ̃ն օգնութ̃ի, զի նա գիտէ զժամանակն և զեղանակն զքեզ ա-

զատելոյ: Լամնորոյ պարտիս զքեզ նմին աւանդել, քան զի նորին է օգնելն, և յամէ շփոթմանէ զմեզ ազատելն: Բազմիցս՝ յոյժ օգտակար է մեզ առ՚ի պահել զմեծ խոնարհութիւն, մինչ այլք իմանան զմերս պակասութիւնս և յանդիմանեն զմեզ:

2. Յորժամ ոք վն պակասութեանց իւրոց խոնարհի, դիւրապէս զայլս հաճեցուցանէ, և թեթևապէս՝ զիջուցանէ զցասումն նախատաչաց իւրոց: Զի զխոնարհս պահէ ած և ազատէ, զխոնարհս սիրէ և մխիթարէ, առ խոնարհս միտէ, խոնարհաց ընձեռէ զմեծամեծս շնորհս, և զկնի նուաստութեան բարձրացուցանէ զնոսա ՚ի փառս: Խոնարհաց յայտնէ զխորհուրդ իւր, և առ ինքն քաղցրապէս քարշէ և հրա-

հրաւիրէ : ուստի խոնարհն մինչ ընդունի զվիշտս, և՛ 'ի խաղաղութէ, զի կայ յաստուածում և ոչ յաշխարհի: ուրեմն մի՛ կարծիցես զքեզ յառաջադիմել կերպիւ իւիք, եթէ ոչ ստորնագոյն գոլ քան զամենեսեան զքեզ զգայցես :

## Գլուխ. Երրորդ :

### Յաղագս առն բարեւոյ և խաղաղարարի :

1. Խաղաղացի՛ նախ դու զքեզ, և ապա կարասցես զայլս խաղաղացուցանել: Ք զի օգտակարագոյն է այր խաղաղարար Ք զայր հմուտ ; և ոմն այր ախտաւոր զբա-

րին

րին 'ի չարն առքարշէ, և դիւրա_
պէս հաստատայ չարին, այսպէս
այլ բարի և խաղաղարար զմիմ ինչ
դարձուցանէ 'ի բարին, ուստի որ
բարեպէս կայ 'ի խաղաղութեան, յոչ_
ումեք բամբասի, իսկ որ դժգոհու_
նակն է և վրդովեցեալ, զանազա_
նիւք բամբասանօք տարաբերի,
վ̃ն որոյ ո՛չ ինքն հանգչի, և ո՛չ զայլս
հանգուցանէ: Բազմիցս արտա_
բերէ զայն, զոր ո՛չ պարտի արտա
բերել, և զանցառնէ զայնմանէ,
որ առաւել նմա վայելէ: Նշմա_
րէ թէ զինչ առնել պարտին այլք,
և լսատունկանէ զայնմանէ, զոր ինքն
պարտի առնել: Նախանձեա՛ց ուր
եմն զբարի նախանձն վ̃ն քոյ նախ,
և ապա իրաւ̂ապէս նախանձիլ կա
րասցես պահս ուղղութեան մերձա_
ւորին: Բար

2. Բարւոք՝ գիտես զարարմունս քոյս արտաբերել եւ կերպաւորել, բայց ո՛չ կամիս ընդունիլ զպատճառանս այլոց: Ուստի արդիւնաւորագոյն լինէր, թէ ամբաստանէիր զանձնէ, եւ պատճառէիր զարարմունս եղբօրն: Քան զի եթէ կամիցիս թէ այլք ներիցեն քեզ, ներեա՛ եւ դու այլոց: Եւ տես թէ որպէս հեռի իցես 'ի սիրոյ եւ 'ի խոնարհութէ՟ որո՛չ գիտէ երբէք ցասնուլ կամ զայրանալ, եթէ ո՛չ ինքեան: Ա՟յն որոյ՝ ո՛չ է մեծ ինչ ընդարս բարիս եւ ընդ հեզս կենցաղավարել, զի այսմիկ բնականա՟բար՝ ամենեքեան հաճին. եւ իւրաքանչիւր ոք յօժարապէս կամի զխաղաղութի, եւ զհամաձայնօղս ինքեան սիրէ: Բայց ընդ խստից եւ

ընդ

ընդ մոլորեցելոց, կամ ընդ բրտից և կամ ընդ հակառակաց մերոց, խաղաղութե՛ կեալն մեծ իմն շնոր-հէ, և գործ իմն գովելի և օգտակար:

3. Են ոմանք որքեն միշտ ՚ի խաղաղութե՛, և ընդդայլս ունին զխաղաղութի, և են որք ո՛չ ինքեանք ունին զխաղաղութի և ո՛չ թողուն զայլս կալ ՚ի խաղաղութե՛: և թէպէտ այլոց են ծանունք, սակայն ինքեանց են ծանրագոյնք: Են և ոմանք որք զինքեանս ունին ՚ի խաղաղութե՛, և ջանան զայլս և ս ա-ածել անդր: Բայց յայսմիկ աշխարհի ողորմելուում, զբոլոր խաղաղութիւն մեր պարտիմք դնել ընդ խոնարհականում համբերութե՛, ք̄ թէ ընդ հակառակում; ուստի որ բարելես գիտէ համբերել, ունի

զմեծ

զմեծ խաղաղութի̄ն, եւ յաղթօղ ինքեան լ̄ուր աշխարհն, բարեկամ քն̄, եւ ժառանգորդ երկնից ։

## Գլուխ. Չորրորդ ։

### Յաղագս մաքրամտութե̄ եւ պարզամտութե̄ ։

1. ԵՐկու են թեւք; որովք վերանալ կարէ ոք յերկրայնոց, այսինքն, պարզութի̄ եւ մաքրութի̄. պարզութի̄ն գոլ պարտի ընդ դիտաւորութե̄, եւ մաքրութի̄ն 'ի յիղձս; Զի պարզութի̄ն նկատէ զա̄ծ, եւ մաքրութի̄ն ըմբռնէ եւ ճաշակէ: Ուստի ո՛չ ոք գործ բարի կարէ զքեզ արգելուլ, եթէ իցես ազատ

ազատ ՚ներքսապէս ՚ի ղձից ապա-
կարգից։ Քանզի եթէ զո՛չ այլինչ
այլ միայն զհաճոյս ՟քո եւ զօգտու-
թի՟ւն ընկերոյն կամիցիս եւ խնդրիցես,
ներքնայնով ազատութ՟է զմայլիլ
կարես։ Վ՟ն որոյ եթէ ուղիղ էիր
սրտիւ, զ՟ամ ստեղծո՛ւած իբրեւ
հայելի կենաց, եւ գիրք սրբազանի
վարդապետութ՟ե համարէիր, զի
ո՛չ ոք է ստեղծո՛ւած այնքան խո-
տան, որ ո՛չ յարացո՛ւցանիցէ զբա-
րութ՟ին ՟քո։

2. Եթէ էիր ներքսապէս բա-
րի եւ մաքուր, զ՟ամ ինչ Թարց ար-
գելման տեսանէիր եւ իմանայիր,
՟Ք զի սիրտ մաքուր Թափանցէ
՚յերկինս եւ ՚յանդունդս, եւ ո՟ւր
ոք է ՚ներքուստ, այնպէս դատէ
յարտաքուստ։ Ուստի եթէ գտա-

նոցին խնդութ՟ին ինչ յաշխարհին այս մինչ, վայելէ զնա այր, որ մէ է սր տիւ: Եւ եթէ գոյ ուրեք վիշտ եւ նե ղութ՟ի ճանաչէ զնա բարեպէս՝ այր անխղճմտանք: Այլ ո՛րոց ում երկաթ արկեցեալ ՚ի հուր, կորուսանէ ըղ ժանկահարութ՟ին, եւ բոլորովիմբ ջեռուցեալ լինի, այսպէս այր որ դարձուցանէ զինքն ամենեւիմբ առ ած, ՚ի թմրութ՟է մերկանայ, եւ ՚ի նոր մարդ փոխարկի:

3. Յորժամոք սկսանի դան դաղջիլ, երկնչի ՚ի յաշխատանաց եւ յօժարութ՟է ընդունի զարտաքին մխիթարութ՟ի: Բայց յորժամոք սկսանի կատարելապէս յաղթա հարել զինքն: եւ քաջապէս շրջիլ ՚ի շաւ՟իղս ած, յայնժամ առ ո՛չ ինչ վարկանի զայնոսիկ, զորս յառա

ջագոյն

Քաղցրոյն գոլ ծանուցն հաւատայր :

## Գլուխ. Հինգերորդ.

## Յաղագս նկատման անձին :

1. Ո՛չ պարտիմք հաւատալ
մեզ յոյժ, զի բազմիցս
նուաղիմք 'ի շնորհաց
և ի իմացողութենէ: Քան
զի գծոյզն ինչ լոյս ունիմք իմեզ,
և զայն և ս ըստուռնկանմամբ մերով
կորուսանեմք : ուստի բազմիցս՝
սակս ներքնայնոյ կուրութե ո՛չ ըզ
գուշանամք, և բազմիցս զչար ինչ
առնեմք, և չարագունայես պատ
ճառեմք ; Երբեմն շարժիմք յաղ
Թից մերոց, և կարծեմք Թէ իցէ
'ի բարւոյ նախանձէ ; և սակս սո

կա

կամ՟ուց պակասութեանց յանդի_
մանեմք զայլս, իսկ զմերովք մեծա
մեծօք սխալանօք զանցառնեմք։
Յոյժ փաղփաղանկի՝ զգամք, թէ
զինչ կրեմք յայլոց; Բայց թէ ո՞ր
քան այլք կրիցեն ՚ի մէնջ, ո՛չ մտա
ծեմք։ Վ̄ս որոյ եթէ ոք կշռէր զայն
զոր ինքն առնէր, ո՛չ այնքան ծան
րապէս դատէր զայլս։

2. Այր ներքին առաւե՟լ հա
մարի զհոգս անձին, ք̄ զհոգս բնաւս
այլոց իրաց, և որ զգուշապէս նկա
տէ զինքն, դիւրապէս լռէ զայլոց
իրաց։ Քան զի ո՛չ երբէք եղիցիս
այր ներքին և առաքինի, եթէ ո՛չ
լռիցես զիրաց օտարաց, և՚ի քեզ
տեսականաբար՝ անկնարկիցես։ Եւ
եթէ ՚ի քեզ և յա̄ծ բոլորապէս դի
տիցես, փոքրինչ՝ կարիցեն զքեզ

շարժել իրքն զորս արտաքուստ ըմբռնես ։ Բայց առա՛ ինձ ո՜ւրեմ յայնժամ, մինչ ո՛չես ընդ քեզ, և զինչ օգտիս մինչ զանցառնելով զքէն խորհիս զբնաւից իրաց։ Եթէ պարտիս ունել զխաղաղութի̅ և զմիաւորութի̅ ճշմարիտ, արժա՛նէ, զի զա̃մ ինչ սոցին ստորադրիցես, և զքեզ միայն առաջի աչաց քոց ունիցիս ։

3. Զարդիւնս բաղում ունիցիս, եթէ զքեզ ազատ ՚ի բնաւից ժամանակականաց հոգոց պահիցես ։ Եւ յոյժ նուաղիցիս, եթէ զկենցաղականս իրինչ վարկանիցես ։ Ուստի ոչինչ քեզ մեծ, ոչինչ բարձր, ոչինչ դիւրաղգած, և ոչինչ ընդունելի թուեցի, եթէ ոչ պարզ ա̃ծ է որ յաստուածուստ է։

Եւ

Եւ թէ դիպիցի քեզ մխիթարու-
թե̅ն յումեքէ ստեղծուածոյ,
զա̅մն ունայնութի̅ վարկիցես զի
հոգի, որ սիրէ զա̅ծ, արհամարհէ
զա̅մ ինչ որ է արտաքոյ ա̅յ: վա̅ն
զի նա միայն է յաւիտենական,
անչափ, լցուցիչ զա̅մ, մխիթա-
րութի̅ անձին, և ճշմարիտ խնդու-
թի̅ սրտի:

## Գլուխ. Վեցերորդ:

### Յաղագս խնդութե̅ բարւոյ խղճի մտաց:

1. Փառք առն բարւոյ, է՛ վկայութի̅ բարւոյ խղճի մտաց, վասնորոյ ստացիր զբարի

մտաց , զի ունիցիս միշտ զուրա-
խութի̅ն , քան զի բարի խիղճ մտաց
տանի բազմաց իրաց , և յոյժ ու-
րախ լինի ՚ի մէջ ընդդիմութեանց ;
իսկ չար խիղճ մտաց միշտ է երկիւ-
ղալից և անյանդորր; Ուստի քաղց-
րապէս յարահանգիցես, եթէ սիրտ
քո զքեզ ո՛չ ըստադատանիցէ ; Մի՛ ու-
րեմն խնդայցես, եթէ ո՛չ մինչ զբա-
րիս գործես , զի չարք ո՛չ երբէք
ունին զճշմարիտ խնդութի̅ն , և ո՛չ
զգան զուրախութի̅ն ներքնական:
քան զի ո՛չ գոյ խաղաղութի̅ն ամբարշ-
տաց ասէ տե̅ր ; Եւ եթէ ասիցեն
թէ եմք ՚ի խաղաղութեա̅ն , և ո՛չ եկեսց-
ցեն ՚ի վե̅ր մեր չարիք , և ո՞վ է որ մե-
ղանչել կարիցէ մեզ , մի հաւատայ-
ցես նոցին , վ̅ս զի յանկարծակի՝
յառնէ բարկութի̅ն ա̅յ , և յո՛չ ինչ

վո-

փոխարկին նոցին ներգործութիւնքն
և խորհուրդք նոցին կոչին :

2. Պարծելն 'ի նեղութե̃ ոչ է
ծանր առն Քրիստոնէայի, քան զի
այսպէս պարծելն, է՛ պարծել 'ի
խաչն Տն: Ուստի սուրբքն փառք
որք 'ի մարդկանէ ընձեռին և առ-
նանին, զի աշխարհայնոց փառաց
միշտ ուղղեկցի տրտմութի̃: Այլ̃
որոյ պարծանք բարեաց են 'ի խղճ
մտանս նոցին, և ոչ 'ի բերանս մարդ-
կան, և խնդութի̃ արդարոց է՛ յաս
տուածուստ և ներ յաստուածում.
իսկ ուրախութի̃ նոցին է՛ վմ̃ ճշմար
տութե̃, զի որ ցանկայ ճշմարտից
և յարամնայից փառաց, զժամա-
նակաւորաց պիտոյթ ոչ առնէ: և
որ զժամանակաւոր սոյս խնդրէ փառս
կամ 'ի սրտէ ընտաս ոչ խօսէ, ցու



[library stamp]

ցանէ թէ զերկնայինս սակաւ ինչ սէրէ : Ուստի որ զգովութեանց եւ զպարսաւանաց զփոյթ ոչ առնէ , ունի նա՛ ՚ի սրտի իւրում զմեծ յանդորրութիւն :

3. Ուխուրաւ՝ լինի որք գոհունակ եւ խաղաղ , եթէ խղճմտանքն նորին իցեն մաքուրք : Քանզի ոչ լինիս սրբագոյն եթէ գովիցիս , եւ ոչ խոտելի եթէ պարսաւիցիս ; զի ես դու , զոր ինչ եսդ , եւ ոչ կարես ասիլ մեծագոյն քան զայն , զոր ած զքեն գիտէ : Եթէ նկատիցես ներքսապէս թէ զինչ իցես դու ՚ի քեզ , ոչ հոգասցես թէ զինչ խօսին զքեն մարդիկ : Զի մարդն նկատէ յերեսս , իսկ ած ՚ի սիրտս . մարդ համարիտէ զաւս , իսկ ած նայի ՚ի դիտաւորութիւնս ; Միշտ զբարիս գործ էլն

և զդոյն ինչ զինքեան կարծեցին , է՛ անձին խոնարհի դատողութ̃ին ։ Իսկ ո՛չ կամիցին սիրելի յումեքէ ստեղծուածոյ , է՛ նշան մեծ ի մաքրութե՛ ներքնայնոյ համարձակութե՛ ։

4. Որ զոչ ինչ զկայութ̃ին արտաքին , զմ̃ ինքեան խնդրէ , նշա՛նէ թէ բոլորովին զինքն տ̃յէ յանձնեալ ։ Քան զի ո՛չ որ զանձն ընծայեցուցանէ նա է կատարեալ , այլ զոր տ̃ծ ընտրէ ։ Ասէ երանելին Պօղոս ։ Ուստի շրջին ընդ տ̃յ ներքսապէս՝ , և զգածմամբ իւիք ո՛չ պարաւանդին արտաքսապէս , է՛ կացութ̃ի ներքնայնոյ մարդոյն ։

## Գլուխ. Եօթն երորդ:

### Յաղագս սիրոյն յի̅ ՚ի վեր քան զա̅մ:

1. Երանի որ իմանայ թէ զինչ իցէ սիրելն զյիսուս, եւ խոտել զանձն վս̅ յի̅: Պարտէ թողուլ զըղձալին վս̅ ըղձալւո̂յ, ք̅ զի կամի յս̅ միայն սիրել իվեր ք̅ զա̅մ: Սէր ստեղծուածոյ սուտ է եւ անկայ, իսկ սէրն յի̅ հաւատարիմ է եւ յարատեւ: Ուստի որ առ յենու ՚ի ստեղծուա̂ծս, գլորեսցի ընդ սահականաց, իսկ որ փարի զյիսուսիւ հաստատեսցի ՚յաւ̂իտեան: Զնա սիրեա՛ եւ կալ քեզ բարեկամ, որ ՚ի հեռանալն ամենեցուն ո՛չ թողու

զքեզ,

զքեզ, և ո՛չ թոյլտայ, զի կորնչիցիս ՚ի վախճանին : Պարտէ քեզ յամենեցունց երբեմն բաժանիլ, եթէ կամիցիս, և եթէ ո՛չ կամիցիս :

2. Կա՛լ զքեզ մերձ յի̅ կելով իբր զմեռեալ, և հաւատարմութե̅ նորին առ յանձնեա՛ զքեզ, որ ՚ի նուաղիլն ամենեցուն կարէ քեզ միայնակ օգնել; Ըղձալւո՛յն քոյ այսպիսիք են բարք, որ ո՛չ հաճի թէ ձգիցէս առ այլինչ զսէրդ, այլ կամի ինքն միայն ունել զսիրտ քո, և որ̅պ արքայ ՚ի գահի իւրում սեփականի բազմիլ ՚ի նմին; եթէ կարէիր զքեզ դատարկել բարեպէս՝ յամե̅ է ստեղծուածոյ, իրաւի յիսուս յօժարապէս ընդ քեզ բնակէր, և գտանէիր զկորուսեալն քո բնաւ, զոր արտաքոյ յի̅ ՚ի մարդիկս եդիր

՚ի պահ

'ի պահեստ ; մի՛ յուսայցես և մի՛ յենուցուս 'ի վերայ եղեգան հողմակոծի, զի ամ մարմին խոտ է, և համայնք նորին փառք իբրև զծաղիկ խոտոյ անկանին :

3. Փութով խափեսցիս, եթէ նկատիցես միայն 'ի յարտաքին երևոյթ մարդկան ։ Քան զի եթէ խնդրես 'ի յայլս զքոյդ մխիթարութի և շահ, զգայցես բազմիցս զտուժանս ; և եթէ խնդրիցես նմանում զՅիսուս, գտցես արդարև 'զՅիսուս; իսկ եթէ խնդրիցես զքեզ, գտցես և ս զքեզ, բայց 'ի կորուստ քո. զի առաւել մեղանչէ այր ինքեան, որ ոչ խնդրէ զՅն, քան թէ բոլոր աշխարհ, և ընաւք իւրքն հակառակք :

Գլուխ.

## Գլուխ. Ութերորդ ։

### Յաղագս ընտանեկանի սիրելութեն Յիսուսի ։

1. Մինչ մերձ է Յս, ամենայն բարի է, և ոչ ինչ դժուարին թուի։ իսկ յորժամ ոչ է մերձ Յս, ամենայն խիստ է ։ Մինչ Յս ի ներքուստ ոչ խօսի, մխիթարութիւն է անարգ. իսկ եթէ Յս զբան մի և եթ խօսեսցի, մեծ ի մեզ մխիթարութիւն իմանի ։ Ո՞չ ապաքէն Մարիամ Մագդաղենացին յարեաւ վաղվաղակի ի տեղւոջէն յորում լայր, մինչ ասաց նմա Մարթա թէ վարդապետն եկեալ է և կոչէ զքեզ։ Երանի էր

Ժամն

Ջանիցէ ժամն յորում յն̅ առնիցէ զմեզ յարտասուաց 'ի խնդութ̅ի հոգեկան ; Ա՜լ ա՜շթէ ո՜ղ ցամաքի և կարծրանայ որ թարց յիսուսի, և որքան յիմարի և ունայնանայ որ մինչ ըղձայ զինչ բաց 'ի յիսուսէ։ ո՛չ ապաքէն առաւել է այս տուժան, ք̅ թէ կորուսանիցէ որ զբոլոր աշխարհ ։

2. Զինչ կարէ քեզ շնորհել աշխարհ թարց յի̅, զի գոլն թարց յի̅, դժոխք դժուարին ; և գոլն ընդ յի̅, արքայութ̅ի է ըղձալի ։ Քանզի եթէ իցէ ընդ քեզ յն̅, ո՛չ որ թշնամի կարէ քեզ մեղանչել ; ուստի որ գտանէ զյիսուս, գտանէ զգանձ բարի ։ մանաւանդ զբարի գերքան զբարի ։ և որ կորուսանէ զյն̅, յոյժ առաւել կորուսանէ, և

գեր

դէ ըքան զբնաւ աշխարհ: Աղքա_
տացուցեղ ոքէ նա, որ կեայ Թարց
յի̄, և փարթամացուցեղէ նա որ բա
րւո́քէ ընդ յիսուսի :

3. Մեծ արհեստէ գիտելն
ընդ յի̄ զկենցաղավարիլն, և գիտելն
ունիլ զյիսուս մեծաւ խոհեմու
թե̄ : Ուստի լեր խոնարհ և խա_
ղաղարար, և եղիցի ընդ քեզ յս̄ :
լեր Ջերմեռանդ և յանդորր, և բնա
կեսցէ ընդ քեզ յս̄ : Իսկ եթէ կա
միցիս միտել առարտաքինս, փու
թով փախուցանես զյս̄, և զշնորհս
նորին կորուսանես. և եթէ զնա
փախուցանիցես, և կորուսանի_
ցես, առ ո՞ գնասցես, և զո՛ խնդրես
ցես քեզ սիրելի : զի Թարց սիրել
ւո̂յ, ո՛չ կարես կեալ բարեպէս, և
եթէ յս̄ ո՛չ եղիցի քեզ գեր ք̄ զբնաւս

սիրե_

սիրելիս, եղիցիս յոյժ սրտատուժ եւ անօգնական ։ ուրեմն զխնամարութ̃ն գործես, եթէ 'ի յայլինչ յուսանայցես, կամ այլում իւիք խնդրայցես ։ ընտրելի՛ է մանաւանդ զբոլոր աշխարհս ունել ընդդէմ, ք̃ զյ̃ն զայրացուցանել ։ ապա առաւել ք̃ ըզ բնաւս տուփալիս, եղիցի քեզ միայն սեփական սիրելի յս̃ ։

4. Սիրեսցին այլք բնաւք յաղագս յս̃, բայց յս̃ միայն վ̃ն ինքեան; զի միայն յս̃ քս̃, է եզականապէս սիրելի; եւ նա միայն գտանի բարի եւ հաւատարիմ 'ի մէջ սիրելեաց ։ Ուստի վ̃ն նորա եւ նովաւ թէ բարեկամք եւ թէ թշնամիք լիցին քեզ սիրելիք ։ եւ յաղագս նոցին բնաւից աղերսել պարտիս զյս̃, զի ամենեքեան լիցին արժանիք ճանաչել զնա,

եւ սիր

և սիրել: Մի՛ ըղձայցես երբէք առանձնապէս սիրել, կամ գովել, զի այս է՛ միայնոյ այ̃, որ զնման ինքեան ոչ ունի: Մի՛ կամիցիս թէ ոք 'ի սրտէ քև զմայլեսցի: և մի՛ և ս դու զգածիցիս այլայլնով սիրով: այլ միայն յս̃ իցէ ընդ քեզ, և ամենայնում անձին բարւում:

5. Լեր ներքսապէս մաքուր և ազատ, թարց ումեք ստեղծուածոյ ներշաղկապման: Քանզի եթէ կամիս պ̃ապիլ և տեսանել թէ ո̃ք քաղցր է տր̃, պարտէ քեզ զմերկ և զզուտ սիրտ առ այ̃ծ կրել: և իրաւի ոչ մրթեսցիս առայս ժամանել, եթէ ոչ շնորհօք նորին նպաստաւորիցիս և ներքարշիցիս: զի յամենեցունց դատարկացեալ և ազատեցեալ, միայնդ ընդ միայնում միաւորի

ւորեցիս; վասն զի մինչ շնորհ տեառն գայ առ մարդիս, լինիմ կարօղք առ ամենայն ինչ, եւ մինչ հեռանայ 'ի նոցունց, լինիմ աղքատք եւ անզօրք, որպէս թէ թողեցեալք իցեմ 'ի պատիժս: Սակայն յայնպիսիս ո՛չ պարտի վհատիլ ոք, եւ յուսահատիլ, այլ խնդութեամբ կալ ըստ հաճութեան տեառն; եւ զբնաւս պատահմունս կրել 'ի գովութիւն Յիսուսի Քրիստոսի: Է զի զկնի ձմեռան հետեւի ամառն, եւ զկնի գիշերոյն լինի վերստին օր, եւ զկնի ամպոց, լինի մեծ պարզութիւն:

Գլուխ.

## Գլուխ. Հինգերորդ :

### Յաղագս նուազման բնաւի մխիթարման :

Ի. Ո Չակէտ ոչէ ծանր ինչ
խոտել զմխիթարութիւն
մարդկային, մինչ ու-
նի ոք զա̄ծայինն, մե-
ծէ սակայն յոյժ ոչ ունելն զմարդ-
կային և զա̄ծային մխիթարութի̄ն,
և վ̄ս փառացն ա̄յ տանելն աքսոր
ման սրտի. այլ և ոչ խնդրելն զիւրն
նորում ումեք, և ոչ նկատելն՝ յար
դիւնս յատուկս: Աղաշթէ ո՞չ մե
ծէ գոլն զուարթ և Ջերմեռանդ
՚ի գալն շնորհաց, զի ըղձալի՛ է այս
ժամ բնաւից անձանց: Աղ̄ ոլոյ՝

յոյժ դիւրապէս ձիաւորի, զոր շնորհն ա̃յ առեալ տանի, և ո՛չ է զարմանս, թէ ո՛չ զգայցէ զբեռն ինչ այնպիսին, որ տարեալ լինի յամենակարողէ. Եւ ածի 'ի վէհէ առաջնորդէ :

2. Յօժարաբար կամիմք ունել զինչ վ̃ն մերոյ մխիթարութե̃, և դժուարաւ մերկանայ մարդ 'յինքենէ : Յաղթեաց ս̃բն Լօրէնցիոս հանդերձ իւրով քահանայիւ, զի զա̃մ ինչ որ հրճուելի տեսանիւր ընկենցաղում այսմիկ, արհամարհեաց. և զբարձուա̃ծ 'յինքենէ մեծի քահանային ա̃յ Սիքստոսի զոր յոյժ սիրէր, վ̃ն սիրոյն քի̃ հեզաբար կրեաց: ուրեմն սիրով ստեղծողին զսէր մարդկային յաղթահարեաց, և առաւել ք̃ զմարդկային

սփոփումն, զա͞ծային բարեհաճու-
թ͞են ընտրեաց : Ուսի՛ր այսպէս
և դու թողուլ զքոյս հարկաւորս
և զբղձալիս բարեկամս, վ͞ս սիրոյն
͞այ, և մի դժուարին թուեսցի քեզ
թողանելն ՚ի բարեկամաց, գիտելով
զայն, թէ պարտ է մեզ ամենեցուն
բաժանել երբեմն ՚ի միմեանց :

3. Բազմիցս՝ և երկարապէս՝
պարտի որ ընդ ինքեան պատե-
րազմիլ նախքան թէ գիտիցէ զինքն
բոլորովին մէ յաղթահարել, և զիղձս
բնաւս առ ա͞ծ ուղղել ; Յորժամ
որ ապաւ՛ինի ՚ի յինքն, դիւրաւ առ
սահի ՚ի սփոփմունս մարդկայինս,
իսկ ճշմարիտ սիրողն ք͞ի, և հոգու-
նակ հետևողն առաքինութ͞եց,
ո՛չ դիմէ ՚ի մխիթարութիւնս, և ո՛չ
խնդրէ զզգայականս քաղցրութիւնս,

այլ խնդրէ մանաւանդ զնեղկրթ-
մունս ծանունս , եւ զաշխատանս
խիստս վս̅ քրիստոսի կրել :

4. Մինչ շնորհն քեզ յաստու-
ծուստ հոգեկան մխիթարութի-
ինչ ընկալ զնա մատուցմամբ գոհու-
թեց , եւ վարկեա՛ զնա ձիր այ̅ , եւ ո՛չ
պտուղ քոյոց արդեանց ; Ուստի
մի՛ փքանար , մի՛ առաւել ք̅ պչալին
խնդար , եւ մի՛ ունայնաբար մեծա-
բաներ , այլ մանաւանդ լեր խո-
նարհագոյն ձիրուն այնու , զգուշա-
գոյն եւ երկիւղածագոյն նաեւս քոյս
բնաւս , զի անցանէ ժամն այն, եւ
հետեւ ի փորձութի̅; Ալ̅ որոյ մինչ
բառնի ՚ի քէն մխիթարութի̅ն , մի՛
իսկոյն յուսահատիր , այլ խոնար
հութբ̅ եւ համբերութբ̅ սպասեա՛
երկնայնոյ այցելութե̅ , ք̅ զի կարօ

ղէ

զէ Ած զառաւելագոյն մխիթա_
րութի քեզ վերաշնորհել ; զի ո՛չէ
այս նոր ինչ, և ո՛չ այլանդականինչ
ծանաչողաց զծանապարհս Այ, վս
զի մեծամեծաց և ս սրբոց և հնոց
մարգարէից դիպեցաւ բազմիցս
այսպիսի այլայլութե եղանակ :

5. Ուստի ումեմն մինչ դեռ
կայէր շնորհ առէր . Ես ասացի ՚ի
բարեկենդանութե իմում թէ ո՛չ
սասանեցայց ՚ի յաւիտեան, և մինչ
էր ՚ի բացեայ, թէ զինչիցէ յինքեան
զգացեալ, առաւրէ ասելով, դարձ
ձուցեր զերես քո յինէն, և ես եղէ
խռովեցեալ : Բայց սակայն ՚այսու
ոնկ ո՛չ երբեք յուսահատի այլ արիա
բար զՏր աղերսէ ասելով : Առ քեզ
Տր կարդացի ես Ած իմ աղաղա
կեցի, և յետոյ զպտուղս աղօթից

իւրոց առաքելոց , եւ զնոյն ընկալ
եալս գոլ վկայէ ասելով , լուսաւ
քինձ տր̅ եւ ողորմեցաւ եւ տր̅ եղեւ ինձ
օգնական , բայց նորո̅ւմ արդեօք ,
դարձոյց ասէ տր̅ զսուգիմ յուրա
խութի̅ , եհերց յինէն զքուրց , եւ
շուրջ պատեաց զիս ուրախութբ̅ :
Արդ եթէ այսպէս դիպիցի եւ սր
բոց մեծաց , ո՛չ պարտիմք յուսա
հատիլ մեք տկարքս եւ աղքատքս ,
թէ եւ իցեմք երբեմն ընջերմեռան
դութբ̅ եւ երբեմն ընցրտութբ̅ ,
զի հոգին սբ̅ մերձենայ եւ տարա-
մերձի ըստ բարեհաճութբ̅ կա-
մաց իւրոց : Ուստի երանելին
Յոբ ասէ , ակնարկեա՛ ինա յառա
ւօտու եւ ինկոյն փորձես զնա :

6. Յո՞ ուրեմն յուսալ կարեմ,
կամ յո՞ արդեօք ապաւինիլ , եթէ

ո՛չ

ո՛չ միայն 'ի մեծ ողորմութ̃ն ա̃յ,
և միայն 'ի յոյսն շնորհին Երկնայնոյ;
ք̃ զի թէ և ունիցիմ զարս, կամ զեղ
բարս առաքինիս, զբարեկամս
հաւատարիմս, կամ զգիրս սրբա
զանս, զընձեռուածս գեղեցիկս,
և զդասնձս կամ զերգս քաղցունս,
սակայն ամենեքեան այսոքիկ սա_
կաւինչ օգնեն, և դոյնինչ համա_
րին, եթէ իցեմ զրկեցեալ 'ի շնոր
հաց, և մնայցեմ տնանկա_ցին նիմում
ներփականում աղքատութ̃ե; Ուս
տի յայնժամ ո՛չ է այլինչ դեղ լա_
ւագոյն ք̃ պհամբերութ̃ն և զխո
տումն անձին ըստ հաճութ̃ն ա̃յ:

7. Ո՛չ գտի զոք երբէք այն
քան առաքինի և Ջերմեռանդ որ ո՛չ
իցէր կրեալ երբեմն զամփոփումն
շնորհաց, և կամ ո՛չ իցէր զգացեալ

զնուազութիւն ջերմութեց : Ո՛չ որ ՚ի սրբոց այնքան բարձրացեալ յափշտակեցաւ եւ վսեմացաւ , որ ՚ի յսկզբան կամ ՚ի վախճանի ո՛չ փորձեցաւ , քանզի որ ո՛չ է կրեալ զփորձութիւն ինչ վ̄ն ա̄յ , նա ո՛չ է արժանի համանկատմանն ա̄յ , զի փորձութ̄իւն նախնթաց , է՛ նշան հետեւելոյ սփոփման , վ̄ն որոյ փորձութ̄եք ընթեցելոց , երկնայինն խոստանանի մխիթարութ̄ի : Ուստի ասէ , որ յաղթէ , տաց նմա ուտել ՚ի փայտէն կենաց :

8. Տրի ուրեմն ա̄ծային մխիթարութ̄ի մարդոյ , զի իցէ հզօրագոյն ՚ի կրելն զպատերազմունս , հետեւի եւս փորձութ̄ի , զի մի սակս բարւոյն հպարտանայցէ : Քանզի ո՛չ ննջէ սատանայ , եւ ո՛չ մարմինն

դեռեւս

դեռեւս է՛ մեռեալ, վ̅ն որոյ մի՛ դա
դարիր 'ի պատրաստելոյ զքեզ ի
պատերազմ, զի յաջմէ և յահեկէ
Թշնամիք ոչ երբէք դադարին:

## Գլուխ. Տասներորդ:

### Յաղագս երախտագիտութե̅ ըն̅ վ̅ն շնորհացն Ա̅յ:

1. Ընդէ՞ր խնդրես զհանգս
տութի̅ն, որովհետեւ
ծնեցեալ ես 'ի յաշխա
տութի̅ն, պատրաս
տեա՛ ուրեմն զքեզ մանաւա՞նդ 'ի
համբերութի̅ն, քան թէ 'ի մխիթարու
թի̅ն, 'ի բառնալ զխաչն ա̅ռ, քան թէ
'գտանել զխնդութի̅ն: Քանզի ո՞վ ոք
յաշխարհայնոց յօժարաբար ո՛չ ըն
դունի

դունի զմխիթարութի՟ն եւ զխնդու-
թի՟ն հոգեկան, եթէ միշտ գտանել
զնա մարթիցի, զի մխիթարութի՟ք
հոգեկանք գերազանցեն զհեշտու-
թի՟ս աշխարհիքնաւս, եւ զփափկու-
թի՟ս մարմնոյ ; վ՟ զի համայնք հեշ
տութի՟ք աշխարհի կամ ունայնք
են կամ տըգեղք, այլ հոգեկանք
զուարճութի՟ք, են միայնակք վայ
ելուչք եւ համեստք, նախածնից
եալք յառաքինութե՟ց, եւ յաստու-
ծուստ ՚ի միտս մաքուրս ներհեղա
նեցեալք, բայց սակայն այսոքիւք
ա՟ծայնօք մխիթարութե՟ք ո՛չ ոք
միշտ ըստ ըղձից իւրոց վայելել
կարէ, զի ժամանակ փորձութե՟
ո՛չ այնքան լռէ :

2. Յոյժ մարտնչի ընդ՟ վեր
նայնոյ այցելութե՟ պատրողական

ազա

աղքատութի հոգւոյն, և ապաւ̂ի_
նութի անձին: Քանզի մ̅ծ բառ
ւոք՝ առնէ, մինչ տայ զշնորհս մխի
թարութէ, իսկ մարդին չարապէս՝
վարին, մինչ զբնաւն ա̅յ ընդ շնոր
հակալութէ ոչ առընձեռեն:
Լ. Ղմորոյ հեղանիլ ՚ի մէզ ոչ կարեն
ձիրք շնորհաց, քանզի ապերախտ
նամք առաջի հեղինակին, և զբո_
լորն ոչ առ հեղումք ՚ի ծագն աղ
բիւրականն; զի այնմիկ պատշաճի
շնորհն, որ արժանապէս շնորհա
կալ լինի, և բառնի ՚ի փքացելոյն,
այն որ տրիլ սովորէ առն խոնարհի:

3. Ո՛չ խնդրեմ ես զայնպի_
սի մխիթարութի, որ բերէ ինձ
զխղճմտանս, և ո՛չ ըղձամ այնպի_
սւոյ համանկատման, որ ածէ զիս
՚ի մնապարծութի: Քանզի ո՛չ ա̅մ

բար

բարձրութի̅ է սրբազան , և ո՛չ ա̅մ քաղցրութի̅ բարի , ո՛չ ա̅մ իղձ է՛ մաքուր , և ո՛չ ա̅մ ցանկութի̅ հաճելի ա̅յ , Կ̅մ որոյ յօժարաբար ընդունիմ զայնպիսի շնորհ , որով կարիցեմ խոնարհիլ և երկիւղածլինել , և առաւել խոտելցիս պատրաստ դառնալ , զի հմուտն սակս ձրոյն շնորհաց , և ներկրթեցեալն ՚ի պատաժառս պատժոյ ամփոփման , ո՛չ իշխէ զբարի ինչ ինքեան առընձեռել այլ մանաւանդ աղքատ և մերկ գոլ զինքն խոստովանի : Ուստի տուր զաստուծոյն ա̅յ , և կալ զքոյն ՚ի քեզ , և այսէ առ ընձեռելն ա̅յ զշնորհս փոխանակ շնորհաց , իսկ քեզ միայնում զյանցանս և արժանի պատիժս յաղագս յանցանաց , ըմբռն գոլ վարկեա՛ :

Կա՛լ

4. Կա՛լ զքեզ ընտանեղուոջ խոր-
նարհում, զի շնորհիցն քեզ տեղի
բարձրագոյն, ք̅ զի Թարց ստորնոյն
ո՛չ կայանայ վերինն, ուստի ս̀բք
որք վեհագոյնք են առաջի ա̅յ, են
նուաստագոյնք ՚ի յինքեանս, և որ
քան առաւ փառաւորագոյնք, այն
քան սաստ խոնարհագոյնք, լըց
եալք ճշմարտութ̅ք և փառօք երկ
նայնօք, սնոտեաց փառաց ո՛չ եր
բէք ցանկան, հիմնեցեալք յա̅ծ և
հաստատեցեալք ՚ի նմին,
բնաւ՝ ո՛չ կարեն փքանալ, զորինչ
բարի ընդունէին առ ա̅ծ վերաբե
րեն, զփառս ՚ի միմեանց ո՛չ խնդրեն,
այլ զփառս որ յաստուծուստ կա
մին, և ցանկան, զի ա̅ծ ՚ի յինքեանս,
և ՚ի բնաւս ս̅բս գովիցի, և այսպէս
յար ՚ի յայս փութան:

Լե՛ր

5\. Լե՛ր ուրեմն հաւատարիմ ըն փոքում, զի արժանի լինիցիս ընդունել զմեծագոյնն, և փոքրագոյնն ձիր եղիցի քեզ իբր մեծագոյն, և միշտ խոտեա՛ պարուա՛ելն, սակս տեսակա՛ւորի ուրուք շնորհի: Քանզի եթէ արժանաւորութի տուողին նկատիցի, ոչ ոք ձիր է՛ նուա՛ազ և կամ խոտելի, զի ո՛չ է փոքր ինչ որ ՚ի բարձրելոյն ա͞յ ընձեռի, ուստի թէ և զպատիժս և զկոփմունս տայցէ, հաճելի թուել պարտի, վ͞ն զի միշտ սակս կեցութե՛ մերոյ առնէ, մինչ ներէ, զի իրինչ մեզ առդիպիցի; Ե͞լ որոյ որ ըղձայ պահել զշնորհն ա͞յ, լիցի երախտապէտ շնորհացն ա͞յ ինքեան ընձեռեցելոյ, և համբերող վ͞ն ՚ի բաց բարձեցելոյն, և աղօթիցէ,

զի վերստին տացի , կկուչ հաւ լիցի
և խոնարհ , զի մի՛ կորուսանիցէ
զտրեցեալն :

Գլուխ. Վեշտասան երորդ. :

## Յաղագս սակաւութե՛ սիրողաց խաչին յիսուսի :

1. Ունի թերևս յս̃ զոր֊
կունս սիրօղս արքայ֊
ութե̃ իւրոյ երկնայ֊
նոյ , բայց զսակաւս
բարձօղս խաչին իւրոյ : ունի զբա֊
զումս ցանկացօղս մխիթարութե̃ ,
բայց զսակաւս կրօղս նեղութե̃ ,
գտանէ զյոգունս սեղանակիցս ,
բայց զսակաւս պահօղս ; ամենեք֊
եան ըղձան ընդ նմին խնդակցել ,

բայց

բայց սակաւք կամին զն̄ նր̄ կ. չել զգժուարութի̄ն ինչ: բազումք հետեւ ին քն̄ մինչեւ ՚ի բեկումն հացին, բայց սակաւք մինչեւ ՚ի յըմպումն բաժակին չարչարանաց: յոգունք զհրաշս նորա պատուեն, բայց սակաւք նախատանաց խաչին հետեւին, բազումք զյն̄ սիրեն մինչդեռ ընդդիմութի̄ն ինչ ոչ դիպի նոցին: բազումք գովեն զնա եւ բարեբանեն, մինչդեռ զսփոփումն ինչ ինմանէ ընդունին, բայց թէ յն̄ զինքն թաքուցանիցէ, եւ դոյն ինչ վնոցունց անփոյթ առնիցէ կամ անկանին ՚ի տրտնջմունս, եւ կամ ի վհատութիւն մեծամեծս:

2. Իսկ որք զյն̄ վն̄ յն̄ եւ ոչ վն̄ իւրայնոց սեփականաց մխիթարութեց սիրեն, զնա յամենայնում

դժո-

դժուարութեան և նեղաստութեան իբր ընմխիթարութեան մեծի բարե բանեն ; այլև թէ և ո՛չ երբէք տայցէ զմխիթարութիւն ինչ նոցին , սակայն զնա միշտ գովեն , և զնմանէ շնորհակալք լինին :

3. Վա՜շ թէ որքան կարօղէ մաքուր սէրն յի̃ , մինչ ո՛չ է խառնեցեալ օգտութեան մխիթարականաւ կամ սիրով սեփականաւ ; Ո՛չապաքէն վարձկանք են առձայնելիք ամենեքեան այնոքիկ , որք միշտ խնդրեն զմխիթարութիւն : Ո՛չ ապաքէն սիրօղք ինքեանց մանաւանդ՝ երևին այնոքիկ ք̄ թէ քի, որք խնդրեն միշտ զօգտութեան և զշահից իւրեանց ; Ո՞ւր գտանի այնպիսի ոք որ կամիցի ձրի ծառայել այ :

4. Հազիւ երբէք գտանի ոք

2. Թէև ունէիր զբնաւս ստեղծականս բարիս, ո՛չ վ̄ն այնոցիկ կարէիր լինել երջանիկ և երանելի ;

նելի, զի ա՟մ երանութ՟ի եւ երջան
կութ՟ի կայանայ յաստուծում որ
է ստեղծօղ բնաւ՛ից բարեաց։ Ո՛չ
այնպիսի երանութ՟ի որ թու՛ի եւ
կամ գովի՝ 'ի յիմարաց սիրողաց կեն
ցաղոյս, այլ այնպիսի, որում սպա
սեն առք բարիք հաւ՛ատացեալք
ք՟ի, եւ մերթ նախաճաշակեն զնա
առք հոգեւորք եւ ս՟բք սրտիւք, որոց
կենցաղավարութ՟իւն յերկինս է՛։
Ունայն եւ փոքրոգի է՛ ա՟մ մխիթա
րութ՟ի մարդկային, երանելի եւ
ճշմարիտ է մխիթարութ՟իւն որ 'ի
ներքս 'ի ճշմարտութ՟է վերըմբռնի։
Այր առաքինի յա՟մուրեք ընդ իւ
քեան տանի զմխիթարիչն իւր յս՟,
եւ ասէ ցնա, օգնեա՛ ինձ տր՟ յիսուս
ամենայնում տեղւ՛ոջ եւ ժամանա
կում։ Եւ եղիցի ինձ այս 'ի մխիթա

րութ՟ի,

ութ̅ի, զի յօժարութէ կամեցիմ զրկել ՚ի բնաւից մխիթարութեց մարդկայնոց ։ Իսկ եթէ պակասի ցի ՚ի յիս քոյդ մխիթարութ̅ի, եղիցի ինձ քոյդ հաճութ̅ի, և արդար զննութ̅ի ՚ի տեղի սփոփման ծայրագունեղի ։ Քանզի ո՛չ ՚ի յաւիտեան բարկանաս դու, և ո՛չ ՚ի յաւիտեան պահես զոխս ։

## Գլուխ. Եօթնև տասներորդ ։

### Թէ ամենայնք հոգք ընկենլ լիցին յԱծ ։

I. Որդեակ թո՛ղ ինձ առնել ընդ քեզ զոր կամիմ ։ Քանզի գիտեմ ես թէ զինչ իցէ քեզ պիտոյ,

պիտոյ, զի դու խորհիս իբրեւ ըզ մարդ, եւ կարծես զիրս բազում ըստ ախմ, ըստորում համոզէ քեզ իղձ մարդկային:

2. Տէր իմ իրաւի է զոր հրամայես, զի առաւել է քոյդ հոգացողութիւն իմ, քան զբնաւս հոգս զորս տանիլ կարեմ ես յաղագս իմ: Քանզի յոյժ անհաստատապէս՝ կայ նա, որ ո՛չ ընկենու զհոգս իւրս բնաւս ՚ի քեզ: Մւսատի տ՟ր իմ, մի այն թէ կամ իմ ուղղապէս՝ եւ հաստատապէս՝ ՚ի քեզ յարամնայցէ, արա ընդ իս զորինչ քեզ հաճոյ թուեսցի: Այո՛ զի զոր ինչ առնիցես ընդ իս բարի է: Եթէ կամիցիս թէ իցեմ ընդ խաւարի, եղիցի անուն քո բարեբանեցեալ: Իսկ եթէ հաճիս թէ իցեմ ընդ լուսով, լիցի դար

ձեալ

ձեալ անուն քո բարեբանեցեալ : Եթէ արժանի համարիցես զիս մխիթարել, եղիցի անուն քո բարեբանեցեալ: Իսկ եթէ հաճիցիս թէ վշտագնիցիմ, լիցի նմանապէս անուն քո միշտ բարեբանեցեալ :

3. Որդեակ՝ եթէ ըղձաս ընդ իս շրջիլ, պարտէ քեզ զի այսպէս՝ գնասցես. լե՛ր այնքան յօժար առ՛ի համբերել, որքան յօժար ես առ՛ի խնդալ: Ընկալ այնքան հաճոյապէս՝ զչքաւորութիւն և զաղքատութիւն, որքան հաճոյապէս՝ ընդունիս զլիութիւն և զփարթամութիւն :

4. Տէր իմ կամաւորապէս՝ կրեցից վա̃ քոյ զորինչ և կամիցիս թէ պայցէ՛ ինձ իմ : Քանզի կամիմ զբարին և զչարն, զքաղցրն և զդառն, զխնդալին և զտրտմալին,

անզանազանապէս ՚ի ձեռաց քոց առ-
ընդունել : և մի բնաւ ինչ իմոց դի-
պուածոց շնորհակալ լինել : Ուս-
տի պահեա՛ զիս յամենից մեղաց,
զի մի երկնչիցիմ ՚ի մահուանէ և
՚ի դժոխոց : Եւ միայն թէ զիս մի
մերժիցես ՚ի յաւիտեան, և մի ջնջի-
ցես զանունիմ ՚ի գրոյն կենաց, զոր
ինչ վիշտ և գայցէ ՚ի վր̄ իմ, ինձ ո՛չ
վնասեսցէ :

## Գլուխ. ՈւԹեւտասներորդ:

### Թէ թշուառութիւնք կենցաղականք ըստ օրինակին Քի լռջմբ տարեալ են տանելիք:

1.  Որդեակ, իջի ես յերկնից վն քոյոյ կեցութե, ընկալայ զքոյս թշուառութիս, ոչ ՚ի հարկէ, այլ ՚ի սիրոյ քարշողէ, զի դու ուսանիցիս զհամբերութի, և ժամանակաւորաց թշուառութեց մի՛ զայրացաբար տանիցես, քզի ՚ի ժամէ ծննդեան իմոյ մինչև ցվախճանն իմ ՚ի խաչին, ոչ պակասեաց ինձ կրումն ցաւոց, զի իրաց ժամանակաւորաց պակասութեցն

սութեցն ըմբերեցի զվիճմունս յա-
քունս յաճախաբար՝ զինէն լռեայ.
խռովութեց եւ նախատանաց հե-
զաբար՝ տարայ. փոխանակ բարե-
րարութեցն զապերախտութի ըն-
կալայ . վս սքանչելեացս զհայ-
հոյութիս . եւ սակս վարդապետու-
թես զարհամարհանս ։

2. ՈՐԴ̃ իմ զի դու համբե-
րօղ եղեր ըն կենի քում , յայսմիկ
մանաւանդ ընկալ զպատուիրան
հօր քոյ . ՇՆորհանէ ուրեմն զի ես
տրուպս եւ մեղաւոր ըստ հաճոյ
կց քոց համբերաբար զիս զսպե-
ցեմ, եւ մինչեւ ցերբ կամիցիս , ըղ-
բեռն ապականացու ի կենիս բառ-
նայցեմ: Վ̃ զի թէեւ ծանրագոյն
զգայցի ներկայ կենացս , սակայն
այժմ շնորհիւ քով յոյժ արդիւնա-

ւորէ,

ւարէ, այլ և քոյով օրինակաւ, և քոյոց սրբոց շաւղիւ, տկարաց տա նելագոյնէ. իսկ և յաւէտ մխիթա րականէ, քան 'ի նախնումն ըն հնոյ օրինումներն, մինչ դուռն երկնից փակեցեալ յարամնայր, և մթագոյն և ճանապարհ երևիւր առ յեր կինս, մինչ այնքան սակաւք զար քայութին երկնից հոգային խնդ րել: Այլ և ոչ որք յայնժամ ար դարքն էին և կեցուցանելիք, յա ռաջ քանզքոյդ չարչարան, և սր բազանի մահուան քո պատկանա ւորութի յարքայութին երկնից կա րէին մտանել:

3. ՈՀ ԹԷ զորքանս չնորհա կալութիս քեզ պարտաւանդիմ վե րաբերել, զի զճանապարհ ուղիղ և զբարի արժանի վարկար ինձ,

եւ ընաւ՛իւց հաւ՛աստացելոց առ յա՛է իտենական արքայութին քո ցուցանել : Քանզի կենցաղավարութին քո ճանապարհ մեզ , եւ սրբազանիւ համբերութ՜ ընթանամք առ քեզ , զի դու ես պսակ մեր : Տէր՝ եթէ դու ո՛չ առաջնորդեալէիր եւ ո՛չ ուսուցեալէիր զմեզ , ո՞վ արդեօք հողայր հետեւիլ քեզ : Վա՛չ թէ որքանք՝ իբացեալ և յետ մնային , եթէ ո՛չ՝ իբրոյս պերճափայլս յառաջոյոյս՝ նկատէին : Զի ահաւասիկ դեռեւս դանդաղիմք տեսանելով զքոյս՝ նշանս եւ զվարդապետութիս , զինչ լինելոց էր , եթէ զայս քան լոյս առ՝ ի հետեւիլ քեզ ոչունէաք :

Գլուխ.

## Գլուխ. Իննևտասն երորդ։

Յաղագս տանելութե՛ անիրաւ՜ու
թե՛ց, և թէորք ճշմարիտ համ
բերող իցէ, փորձիցի։

1։ Զինչ է զոր խօսիս, որ
դեակ։ Դադարեա՛ց
՚ի տրտնջելոյ, նկա_
տելով զիմս և սրբոց
այլոց զչարչարանս, զի ո՛չ տակա
՜ւին մինչև ցարիւն յարատևեցեր։
Ո՛չապաքէն դուն ինչ է զորկրեսդ,
՚ի բաղդատութե՛ այնոցիկ, որք ըզ
այնքանս մեծամեծս կրեալք են,
այնքան զօրեղապէս՝ փորձեցեալք,
այնքան ծանրապէս՝ վտանգե_
ցեալք, և այնքան բազմապատկա

պէս՝ զննեցեալք, եւ վարժեցեալք : Պարտէ ուրեմն քեզ զծանրագոյնս այլոց 'ի միտս քոյս վերաբերել, զի զքոյս դժուարապէս՝ տանիցես նուաստագութիւնս : Զոր եթէ քեզ նուաստագութիւնքդ քոյ ոչ թուիցին, զգուշլեր մի՛ գուցէ եւ զայդ քոյդ առնիցէ անհամբերութի̃, վն̃ որոյ թէ մեծամեծք իցեն թէ փոքունք, հոգա ընդունիցս համբերապէս՝ ըմբերել :

2. Որքան բարեգունապէս՝ 'ի համբերութի̃ զքեզ տրամադրիցես, այնքան իմաստնագոյնապէս՝ զքեզ կառավարեսցես, եւ առաւել արդինաւորեսցես : Առարցես եւս թեթեւագոյնապէս՝, յօժարութբ̃ եւ սովորութբ̃, առայս ոչ յուլապէս՝ պատրաստեցելովք : Մի՛ ու

րեմն

րենն առնիցես, Թէ ո՛չ կարեմ զայ-
տանիկ, յառնէ այսպիսոյ կրել, կամ
Թէ այսպիսիք յինէն ո՛չ են ըմբերե-
լիք, զի ես ինձ զմեծ իմն տուժան,
Եւ նախատէ զիս յայնպիսիսն, զորս
ո՛չ երբեք ածեալ էմ 'ի միտ: Սա-
կայն յայլմէ լրջմտաբար կրեցից,
ըստ որում տեսից կրելիս զօլ ըղ-
ձասա: Յիմարէ այնպիսի մտա-
ծութիւն, որ զզօրութի կրելոյ ո՛չ
յարատեւեան: Եւ ո՛չ զայն յորմէ պսա-
կելի է: Ա՛յլ մանա՛ւանդ զամենեսին,
Եւ զվիշտս ինքեան ներբերեցեալս
մերակշռէ:

3. Ո՛չ է ճշմարիտ կրօղ, որ ո՛չ
կամի կրել, եթէ ո՛չ որքան բարւոք
Թուի ինքեան, եւ յորմէ հաճոյ Թուի
ինքեան: Զի ճշմարիտ կրօղն ո՛չ
նկատէ Թէ յորմէ մարդոյ, արդեօք

յառաջ

յառաջնորդէ, կամ 'ի հանգիստ նը-
մին, և կամ ստորնագոյնէ, արդեօք
յառնէ սրբոյ և բարւոյ, և կամ 'ի
խեղաթիւրէ և յանարժանէ ար-
տագործիցի: Այլ անտարբերա-
բար յիմէ ստեղծուածոյ որչափ
և որքանիցս իրինչ ընդէմ ինքեան
պատահիցի զբոլորն իբր 'ի ձեռաց
այ̃ գոհունակապէս՝ ընդունի, և
զնոյնն շահ իմն մեծ վարկանի:
Քանզի ոչինչ առաջի այ̃ որքան
և իցէ փոքրագոյն, միայն թէ ըն-
նիցի վ̃ն սիրոյ նորին կրեցեալ, կա-
րէ առանց արդիւնաւորութե̃ ան-
ցանել:

4. Լե՛ր ուրեմն պատրաստ 'ի
պատերազմ, եթէ կամիցիս ու-
նել յաղթութի̃: Քանզի առանց
խաղմի ո՛չ կարես ժամանել 'ի պսակն

համ

համբերութեան, իսկ եթէ համբե_
րել ոչ կամիս, հրաժարես ՚ի պսակ
մանէ: Այլ եթէ ըղձաս պսակիլ,
մարտիր՛ արիաբար, եւ տար համ
բերաբար: Վն̄ զի առանց աշխա
տանաց ոչ ոք կարէ դիմել առ հան
գիստն, եւ առանց մարտի ոչ ոք
ժամանէ ՚ի յաղթութիւն:

5. Եղիցի ինձ կարելի ա̄ծ իմ
՚ի ձեռն շնորհաց քոց, որ տեսանի
ինձ անկարելի ՚ի ձեռն բնութեան:
Քանզի դու գիտես որչափ ինչ
կարեմ համբերել, եւ ՚ի յառնելն ըն
դիմութեանց փութով ենթաձգիմ:
Արտագործիցի ինձ իւրաքանչ
իւր կիրառութիւն մշտակրութեան, որ
վ̄ն անուան քոյ քաղցրէ յոյժ եւ բաղ
ձալի: Վն̄ զի տանջս քոյ կրելն եւ չար
չարիլս, է առողջութիւն հոգւոյ ի_
մոյ:                    Գլուխ.

## Գլուխ. քսան երորդ:

### Յաղագս խոստովանութե սեփականի տկարութե, և կենցաղոյս այսորիկ թշուառութե:

1. Խոստովանիմ ընդդէմ ինձ զանիրաւութի իմ, խոստովանիմ քեզ տր զտկարութի իմ: Քանզի բազմիցս դոյն ինչ, զիս ստորանկէ, և տխրեցուցանէ: Յառաջադրեմ ինձ զի հզօրապէս՝ գործիցեմ, բայց մինչ դայ սակաւ ինչ փորձութի, մեծ անձկութի ինձ տիրէ: Ա՛ն զի երբեմն յոյժ անարգ է իրն, յորմէ յառաջանայ ծանր

փոր

փորձութ͞ն: Եւ մինչ համարիմ զիս
կերպիւ իւիք յանդորր, մինչ զոչինչ
զգամ, պատահեմ զիս տանկաւ՜ին
մերձ ՚ի յաղթահարիլ ՚ի փոքրահո-
գւոյ կացութե͞ն :

2. Տե՛ս ուրեմն տ͞ր, զխո-
նարհութ͞ին իմ, և զբեկանաւորու-
թ͞ին իմ, որ յայտնի է քեզ յամենից
կողմանց : Եւ ողորմեա՛ց և փրկեա՛
զիս ՚ի տղմոյ, զի մի ընկլուզեցայց,
և մի յարամնայցեմ սատորանկե-
ցեալ մինչև իսպառ : Ահա՛ այսէ
որ յարաձաղէ զիս յաճախապէս՝
և առաջի քոյ յամօթառնէ զիս, ք͞
զի եմ յոյժ սահական, և տկար
առի ընդդիմանալ ընդդէմ փորձու-
թեց, զի թէև ամենևին ո՛չ հա-
ճանիցիմ, նոցին : Սակայն նեղու-
թ͞ին է ինձ և ծանրութ͞ին ներհետև-

ութ͞ին

ութութի նոցին եւ ձանձրանամ կենալ
միշտ այսպէս՝՝ իպատերազմի: Ուս
տի յայտնապէս՝ երեւի ինձ տկա-
րութի իմ, զի առաւել դիւրա-
պէս՝ յառնեն իվր իմ ապականե-
լիք կրք ախտայութիք, քան թէ
տարամերժին :

3. Երանի թէ յարանկատէիր
ծառայի քո զաշխատանս եւ զցաւս
ո՛վ Հզօրագոյնեղ տր̅ իսրայէլի,
եւ նախանձայոյզ հոգւոց հաւա-
տացելոց, եւ օգնէիր նմա յմ̄ուլ,
յո՛ր է ընթանայր: Զօրացուցեա՛ զիս
ի երկնայնով կարողութ̄, զի մի՛ հին
մարդն, այսինքն մարմինն, դեռեւս
հոգւոյն լինալ ո՛չ հպատակե-
ցեալ յանդգնիցի տիրել, ընդդէմ
որում զինի պիտոյ եղիցի պատե-
րազմիլ, որքան ապրեսցուք յայս

մի՛կ

մինկ կենում ողորմելագունեղի ։ Ւլա՞շ թէ որպիսի է կեանս այս , Նորում ո՛չ երբէք պակասինեղութիք և թշուառութիք , և նորում չիէ ամինչ որոգայթիւք և թշնամեօք ։ Քան զի 'ի հեռանալ մերոյ անձկութե և փորձութե , մերձենայ մեռանս . և մինչ դեռ տանկաջին տևէ հարուած առաջնոյն ։ Եւ յլք բազումք յանկարծակի 'ի մէ յառնեն ։

4. Եւ որպէս կարէ սիրել տայապիսի կեանս , որ ունի զայսքան դառնութի , և է սորանկեցեալ այսքանից թշուառութեց և խղճութեց , կամ որպէս կարէ յորջորջիլ կեանս , այն որ ծնանի զմահս և դժնդատ ։ Բայց սակայն տանկաջին 'ի բազմաց սիրի , և յոքունք

խնդրեն

խնդրեն հրճուիլ 'ի նմա ; Յանդիմանի յաճախապէս՝ աշխարհ , իբր Թէ իցէ սուտ և ընդունայն : Այլ սակայն ո՛չ դիւրապէս՝ Թողանի 'ի բաց , զի յոյժ տիրեն ցանկութիւնք մարմնոյ : Եւ զի այլքեն որք ուքարշեն 'ի սիրել զնա , և այլք , որք 'ի քամահել : Առքարշեն 'ինչք աշխարհի , ցանկութիւն մարմնոյ , ցանկութիւն աչաց , և հպարտութիւն կենցաղոյս , բայց պատիժք և Թշուառութիւնք , որք արդարապէս՝ հետևին նոցին , ծնանին զատելութիւն աշխարհի և զձանձրութիւն :

5. Բայց ո՛հ ցաւոյս , զի յաղԹահարէ մախիզն զուարճութի զմիտս նուիրեցելոյս աշխարհի , և համարին զոլ 'ի ներքոյ տատասկաց զզեօսանս : Զի ո՛չ տեսին և

ո՛չ

ո՛չ ճաշակեցին երբէք զքաղցրու-
թի͞ն ա͞յ , և զներքին ապահովու-
թի զօրութե͞ : Իսկ որք կատա-
րելապէս՝ քամահեն զաշխարհ ,
և կեալ ըստ ա͞յ ՚ի ներքոյ սրբազանի
ջանան խրատու : ա՜հ յորքին զքաղ
ցրութի͞ն ա͞յ ճշմարտից հրաժարո-
ղաց ՚ի բաց գոլ խոստացեալ ո՛չ ան-
գիտանան : Եւ թէ որքան ծան-
րապէս՝ սխալիցի աշխարհ , և զա-
նազանապէս խաբիցի , յայտնա-
պէս տեսանեն :

## Գլուխ. քսան եւ մէկ երորդ. :

### Յաղագս Թէ յաստուծում 'ի վեր քան զա̃մ բարի, եւ պարգեւ յարահանգչելի է :

1. 'Ի վեր ք̄ զա̃մ եւ յա̃մում
յարահանգեաց ո՜վ հո
գի իմ 'ի տր̄ : Քանզի
նա է հանգիստ յաւ՜ի
տենական ամենից սրբոց: Տուր՛
ինձ ո՜վ քաղցրագունեղ, եւ սիրելա
գունեղ յս̃, 'ի վեր քան զա̃մ ստեղ
ծու՜ածս 'ի քեզ յարահանգչել, այս
ինքն, 'ի վեր քան զա̃մ կեցութ̅ի,
եւ գեղեցկութ̅ի, 'ի վեր քան զա̃մ
փառս, եւ պատիւ, 'ի վեր քան զա̃մ
իշխանութ̅ի եւ արժանաւ՜որութ̅ի,

'ի վեր

՚ի վեր քան զամ գիտութի, և նր
բութի, ՚ի վեր է զամս փարթա_
մութիս և արհեստս, ՚ի վեր է զամ
խնդութի և հրճուութի, ՚ի վեր քան
զամ համբաւ և գովութի, ՚ի վեր
քան զամ քաղցրութի և մխիթա_
րութի, ՚ի վեր քան զամ յոյս, և
խոստումն, ՚ի վեր է զամ արդիւն
և խնդս, ՚ի վեր է զամս պարգևս և
զձիրս, զորս կարես տալ և ներհե_
ղուլ, ՚ի վեր է զամ ուրախութի և
ցուարճութի, զոր կարէ ըմբռնել
միտ և զգալ: Եւ ևս ՚ի վեր է զհրեշ
տակս և հրեշտակապետս, և ՚ի վեր
է զամս զօրս երկնից, ՚ի վեր է զամս
երևելիս և աներևոյթս, և ՚ի վեր է
զամ, որ ոչ ես դու ած իմ:

2. Քանզի դու տէր իմ և ած
իմ ՚ի վեր ք զէնտաս բարեգունեղես

դու միայն բարձրագունեղ, դու միայն հզօրագունեղ, դու միայն բաւականագունեղ, և լիագունեղ, դու միայն քաղցրագունեղ և սփոփողագունեղ, դու միայն գեղեցկագունեղ և սիրելագունեղ, դու միայն պատուականագունեղ և փառաւորագունեղ՝ իվեր ք̅ զա̃մս: Յորում բնաւք իմիասին և կատարելապէս՝ գոն, և միշտ եղեն, և եղիցին: Ուստի փոքր ինչ է և անբաւական զոր ինչ բաց ՚ի քէն շնորհես ինձ, կամ զքէն բացայայտես, կամ խոստանաս, սակս որոյ և Թարց տեսանելոյ զքեզ լիապէս՝ ոչ շահիմ, որովհետև ոչ կարէ սիրտ իմ իրաւապէս՝ յարահանգչիլ, և ոչ բոլորապէս՝ գոհունակիլ, եթէ ոչ ՚ի քեզ յարահանգչիցի, և

զբնաւս պարգևս, զբնաւս իսկ ստեղ-
ծուածս գերազանցիցէ :

3. Ո՜վ սիրելագունեղ փե-
սայդ իմ յս̄ քս̄, սիրողդ մաքրագու-
նեղ, տիրողդ համօրից ստեղծուա-
ծոց: Ո՜ տայր ինձ զթևս ճշմար-
տի ազատութեան 'ի թռչիլ, և
դադարել 'ի քեզ: Ո՜ թէ ե՞րբ տրե-
ցի ինձ, լիապէս՝ պարապել և տե-
սանել թէ ո̃րք քաղցրես տր̄ իմ և
ած̄ իմ, կամ ե՞րբ լիապէս՝ ժողովե-
ցից զիս 'ի քեզ, զի վն̄ սիրոյ քո ո՛չ
զգայցեմ զիս, այլ զքեզ միայն 'ի վեր
ք̄ զամ̄ զգայութի̄ և զեղանակ, եղա-
նակաւ անծանօթիւ բազմաց:
Զի այժմ յաճախապէս՝, հեծեմ,
և զաներջանկութի̄ իմ ընդ ցաւոյ
տանիմ: Քանզի չարիք բազումք
'յայսմիկ ձորոյ թշուառութե̄ հան

դիպլին , որք բազմիցս զիս խռո_ վեն , տխրեցուցանեն , և աղմկեն , բազմիցս արգելուն, տարաքարշեն, շողոքորթեն , և շփոթեն , զի մի՛ դադար մատչումն ունիցիմ առ քեզ, և մի՛ վայելչօք զմայլեցիմ փառ սամբք , միշտ ընդ հոգւոյ երանե լեաց : Շարժեսցէ զքեզ ուրեմն հառաչանն իմ, և որբութի իմ բազ մապատիկ ՚ի յերկրի :

4. Ո՜վ յն ծառայութ միա_ ւթին յա՛ւիտենականի , սփոփումն պանդխտի հոգւոյ , առ քեզ է բո ւան իմ թարց բարբառոյ , և լռու թի իմ խօսի ընդ քեզ : Մինչև ցե՞րբ յամէ տր իմ ՚ի գալ , եկեսցէ առ իս յաղքատին իւր , և ուրախա_ ցուսցէ զնա : Զգեսցէ զձեռն իւր, և փրկեսցէ զիս զթշուառս յամենե

ղու

ղութե̃ : Ե՞կ, Եկ, զի առանց քեզ
ոչըէ օր կամ ժամ խնդութե̃ ,
քանզի դու ես խնդութի̃ իմ, և
Թարց քեզ Թափուրէ սեղանն իմ:
Ողբ̃ զի եսեմ ողորմելի և կերպիւ
իւիք բանտարգեցեալ ոտնակա_
պօք ծանրերէք, մինչև լուսով ներ
կայութե̃ քո զիս սփոփիցես , և
ազատութե̃ տայցես , զերեսս քո
իսկ սիրական ինձ ցուցանիցես :

5. Խնդրեսցեն այլք փոխա_
նակ քեզ զր̃ և կամիցին , իսկ ինձ
ո՛չ այլ ինչ հաճոյանայ և ո՛չ հա_
ճոյասցի , եթէ ո՛չ դու ա̃ծ իմ , յոյս
իմ , և կեցութի̃ յաւ̂իտենական :
Ուստի ո՛չ լռեցից և ո՛չ դադա_
րեցայց 'ի մաղթելոյ , մինչև շնորհ
քո մը̃ դարձցի առ իս , և խօսիցիս
ընդ իս դու 'ի ներքուստ :

6. Ահա՛ւասիկ՝ մերձեմ, ահա՛ւասիկ՝ առ քեզ եմ, վ̃ն զի ներկոչեցեր զիս: Արտասուք քոյք, և ցանկութի̃ հոգւոյ քոյ, խոնարհութի̃ քո, և զղջումն սրտի քոյ մերձեցին զիս, և ածին առ քեզ:

7. Եւ ասացի, ո՞ր եմ կոչեցի զքեզ և ցանկացայ քեւ զմայլիլ, պատրաստեմ վ̃ն քոյ արհամարհել զա̃մ ինչ: Վ̃ն զի դու նախ զարթուցեր զիս առ՚ի խնդրել զքեզ: Եղիցի անուն քո ուրեմն օրհնեցեալ, որ արարեր զայսպիսի բարութի̃ ընդ ծառայի քում, ըստ բազմութե̃ քոյոյ գթութե̃: Զի՞նչ ունի ա՛ւելի ծառայ քո առ՚ի ասել քեզ, եթէ ո՛չ զի խոնարհեցուցանիցէ զինքն առաջի քո յոյժ, յիշելով միշտ զանօրէնութի̃ իւր

յատուկ,

յատուկ, և շնորհարգութիւն ։ Քանզի ոչ ոք է նման քեզ ընկալաւ զարմանալիս երկնի և երկրի ։ Զի գործք քոյ բարիք են յոյժ, դատողութիւնք քոյ ճշմարիտք, և նախատեսութիւն քո կառավարէ զհանուրս ։ Փառք ուրեմն և գովութիւն քեզ, որ իմաստութիւն հօր, գովիցէ՛ զքեզ և բարեբանեսցէ՛ բերան իմ, և հոգի իմ, իմաստն՝ ընդ հանուրց ստեղծուածոց ։

Գլուխ.

Գլուխ. Քսան և երկու երորդ:

Յաղագս յիշման բազմապատկաց բարերարութեցն ա̃յ:

1. Բւծ՛ց որ՞ պսիրտիմ յօրինեի քում, և ուսո՛ ինձ շրջիլ 'ի պատուո՞ն ի բանս քոյս: Մղու՛ր ինձ իմանալ զկամս քո, և մեծապատկառանս, և հոգունակայարադիտմամբ թէ ըստ սեռին, և թէ ըստ տեսակին յիշատակել զբարերարութի̃ն քո, զի արժանապէս կարիցեմ այսուհետև զշնորհ հակալութի̃ս վերընծայել քեզ, թէպէտ գիտեմ և խոստովանիմ, զի և ո՛չ զ̃ն փոքրագունեղի ուրուք կիտի.

կեանս, մարթիմ զարժանաւորս շը
նորհակալութեց գովութիս քեզ
մատուցանել: Քան զի փոքրագոյն
եմ ես քան զբնաւս բարիս ինձ
պարգեւեցեալս, եւ մինչ զքոյդ պա
տուականութինչմարեմ, նուաղի
հոգի իմ ՚ի խնդութէ:

2. Զի զամ ինչ զորունիմք
ըն հոգոյ, եւ ըն մարմնում, եւ զոր
ինչ արտաքսապէս՝ եւ ներքսապէս՝,
բնականաբար կամ գերբնաբար
ստացեալ ունիմք, քոյքեն բարե_
րարութիք, եւ զքեզ բարի եւ գթած
բարերար գոլ հռչակեն, յորմէ
զհանուրս բարիս ընկալեալք եմք:
Եւ թէպէտ ոմանք զբազումս,
եւ այլք զսակաւս ընկալեալք են,
սակայն քո է՝ ամ: Առանց որ զմե
ծամեծս ընկալեալ է, ոչ կարէ պար

ծել

ծիլ յարդիւնիւր, և ոչ գոռոզա-
նալ 'ի վ̄ր այլոց, այլ և ո՛չ յառնել
'ի վ̄ր փոքրագունին: Քան զի նա՛ է
մեծագոյն և բարձրագոյն, որ ինքեան
զսակաւագոյնն առաւագրէ և 'ի շնոր-
հակալութ̄իս խոնարհագոյնէ և
ջերմեռանդագոյն: Եւ որ յա̄մում
զինքն անարգագոյն համարէ, և
անարժանագոյն գոլ դատէ, յար-
մարագոյնէ առ 'ի ընդունելոյ զմե-
ծագոյնս:

3. Իսկ որ զսակաւագոյնս
ընկալեալէ, ո՛չ պարտի տրտմիլ,
և ո՛չ զայրանալ: Այլ և ո՛չ զչարա-
նալ ընդդէմ այնմ, որ հարստագոյն է:
Այլ միայն զքեզ նշմարել, և զքոյդ
բարութ̄ի մանաւանդ գովել, որ
այնչափ առատապէս՝, այնքան ձրա-
պէս՝, և այնքան աղատապէս՝ ա-

ռանց

ւանց աչառութե՟, շնորհես զքոյս պարգևս: Եւ զի ընտաքնեն ՚իքէն: Ուստի յա՟մում ես դու գովելի: Դու գիտես, թէ ինչ իւրաքանչ իւրումեք ըմբռնիցէ շնորհել, և թէ ընդէ՞ր այս սակաւ, և այն առաւել ունիցի, այս ա՟մ ո՛չ մեզ այլքեզ է՛ զննելի, առ որ իւրաքանչիւրոց սահմանեցեալէ արդիւն:

4. Ուստի տէ՟ր իմ և ա՟ծ իմ, ես զոչ ունելն զբազումս, մեծ-ին բարերարութե՟ն վարկանիմ, յորմէ արտաքնայինս՝ և ըստ մարդ-կան գովութե՟ն և փառք երևին, մինչ զի նկատելով իւրաքանչիւր ոք զաղքատութի՟ն իւր, և զանարգութի՟ն իւրոյ անձին, ո՛չ եթէ ըզ ծանրութի՟ն, կամ զտրտմութի՟ն, և կամ զքամահումն տեսանիցէ, այլ

զմխի

զմխիթարութի̄ւ եւ զմեծագործութիւ-
թի̄ւ : Քանզի դու տ̄ր իմ զաղքատս,
եւ զխոնարհս, այլ եւ զխոտանս այսո-
րիկ աշխարհի ընտրեցեր քեզ բարե-
կամս եւ ընտանիս : Վկայք են ինքե-
անք իսկ քոյք առաքեալք, զորս իշ-
խանս ընդ̄ ամ̄ի երկիր հաստատե-
ցեր : Որք կենցաղավարեցան ՚ի այս-
միկ աշխարհի թարց ումեք կագի,
գոլով խոնարհք եւ միամիտք, եւ
առանց զչարութե̄ եւ նենգութե̄,
մինչ զի ՚ի կրել նախատինս վ̄ս
անուան քո խնդային, եւ փարէին
ընձիւ մեծաւ զայնոքիւք, զորոց
խորշի աշխարհ :

5. Ո՛չինչ ուրեմն այնքան ըզ-
սիրօղս քոյս, եւ զճանաչօղս քոյոց
բարերարութե̄ց ուրախացուցա-
նել պարտի, որքան կամք քո ՚ի նոսա,

եւ բարե-

եւ բարեհաճութն յաւիտենականի տրամադրութն քո, զորմէ միայն պարտին գոհանալ, եւ մխիթարիլ; եւ այնպէս՝ յօժարաբար պարտին գոլ փոքրագունեղք; որպէս ոչ ըղձա լինիլ մեծագունեղ, այնպէս՝ խաղաղարարք, եւ գոհունակք ՚ի յետնոց, որպ ըն տեղւոջ նախնում: Եւ այնպէս՝ յօժարաբար պարտին հաճիլ գոլ պարսաւելիք, եւ անարգելիք, անանունք, եւ անհամբաւք, որպ հասարակապէս՝ մարդիք հաճին լինիլ պատուաւորագոյն եւ մեծագոյնք յաշխարհի: Ար զի կամ քո, եւ սէր պատուոյ քոյ, զամ ինչ գերազանցել պարտի, եւ առաւել մխիթարել պարտի զնոսա, եւ հաճոյանալ նոցա, քան թէ ընաւք բարերարութիւնք նոցին տրեցեալք եւ տուելիք:

Գլուխ.

## Գլուխ. Քսան և երեք երորդ:

## Յաղագս Զօրից ներքներողաց զմեծ խաղաղութն:

1. Որդեակ, այժմ ուսուցից քեզ զճանապարհ խաղաղութե, և ճշմարտին ազատութե:

2. Ասա՛ տր̄ զոր̄ հրամայես, ք̄ զի հաճոյ է ինձ լսել զայդ;

3. Ջանա՛ որդեակ, առնել մանաւանդ զկամս այլոց ք̄ զքոյն, ընտրեա՛ միշտ ունել պակաս ք̄ զբազում: Խնդրեա՛ միշտ զյետնագոյն տեղին, և ամենեցուն լեր հպատակ: Ըղձա՛ միշտ և աղօթեա՛ զի կամն տն̄ ամբողջապէս՝ ՚ի քեզ լիցի:

հցի ։ սղկա՛ այսպիսի մարդն հասա
նէ ՚ի վախճան խաղաղութեան և յան
դորրութեան ։

4. ՍՈՒԼ̃ իմ բան քո համա
ռօտ ; զկատարելութիւն բազում
պարունակէ յինքեան , յանելն
մտքի երևի, բայց լի՛ է իմաստամբք,
և ծննէ պտղովք ։ Քանզի եթէ կա
րէր համատարմաբար՝ յինէն պա
հել, ո՛չ պարտէր այնքան դիւրա
բար՝ ծնանիլ ՚ի յիս ամբոխութիւն ։
Ո՛վ որքանիցս՝ անխաղաղացեալ
զիս զգամ և ծանրացեալ այնքա
նիցս՝ յայսմանէ վարդապետութէ
հեռացեալ զիս գտանեմ ; Բայց
դու որ զա̃մ ինչ կարես , և հոգւոյ
իմոյ զյառաջութիւն միշտ կամիս ,
յաւ̂ել ինձ զմեծագոյն շնորհ , զի
կարիցեմ լնուլ զբան քո պ̃է, և կա

տարբել զփրկութի իմ ։

Աղօթ. ընդդէմ խորհրդոց չարաց։

5. Աստուած իմ և ամենիմ մի' հեռա նար յինէն ։ Աստուած իմ յօգնել ինձ նայեաց ։ Քանզի յարեան ի վր իմ խորհուրդք զանազանք, և երկիւղք մեծամեծք, որք վշտանկեն զհոգի իմ ։ Ո՞րպէս կարացից անցանել անվնաս, կամ զիարդ ներքեւ կեցից զնոսա ։

6. Եւ ասէ երթայց առաջի քո, և զփառաւորս երկրի խոնարհեցուցից ։ Բացից զդրունս բանտից, և զծածուկս խորհրդոց յայտնեցից քեզ ։

7. Արա Տր իմ, որպ և խօսիս, և փախիցեն յերեսաց քոց համայնք

խոկմունք անզգամք : Ոհ ա՛յսէ
միակ յոյս իմ, և մխիթարութի̄ իմ,
այսինքն, ըն̃ բնաւս նեղութի̄ս դի-
մել առ քեզ, ՚ի քեզ յուսալ, կքեզ
՚ի խորոց սրտէ ներկոչել, և համբե-
րութե̃ զմխիթարութի̄ իմ ՚ի քէն
սպասել :

ԱՂօթ, վն̄ լուսաւորութե̃ մտի :

8. Պայծառացո՛ զիս ո՛վ Բա-
րի յն̄, պայծառութե̃ լուսոյն ներ-
քնայնոյ, և ելուզեա՛ ՚ի խանձնէկէ սրտի
իմոյ զխաւ̂արս համայնս, համար
կել զցնդմունս բազումս, և ընկեա՛ ՚ի
բաց զբանաւ̂որս պատերազմունս:
Սաստեաց զօրեղապէս՝ վն̄ իմ, և
հանկարծենաց ընդդէմ գազանաց
չարաց, այսինքն ընդդէմ տուփու

թեց անապատեհից, զի լինիցի խաղաղութիւն ՚ի զօրութենէ քում, եւ առատութիւն գովութեան քոյ վերահնչեսցի ընդ գաւ՛իթս սուրբս, այսինքն ՚ի խղճմտանս մաքուրս: Հրամայեա՛ հողմոց. եւ մրրկաց, ասա՛ ծովու, դադարեա՛ց, եւ հիւսիսոյ, մի՛ հնչիցես. եւ եղիցի հանդարտութիւն մեծ:

9. Առաքեա՛ զլոյս քո եւ զճշմարտութիւն քո, զի ծագեսցեն ՚ի վերայ երկրի, զանզի երկիր եմ ես ունայն եւ թափուր, մինչեւ լուսաւորեսցես զիս: Արտահեղեա՛ զշնորհ քո ՚ի վերուստ, եւ զեղ՚ ՚ի սիրտ իմ զցօղ երկնային, տեղեա՛ զջուրս ջերմեռանդութեան, եւ ոռոգեա՛ զերեսս երկրի, առ ՚ի յառաջածել զպտուղս բարիս, եւ զբարեպտուղս. վերացո՛ ըզ

միտս

միտս տագնապեցեալս ՚ի բազմութէ մեղաց, և առ երկնային զբօլոր իղձ իմ ուղղեա՛, զի ճաշակելով զքաղցրութիւն վերնոյ երջանկութեան, զզուեսցի ՚ի խորհելոյ զստորնայինս:

10. Յափշտակեա՛ զիս, և զերծո՛ ՚ի բնաւից ստեղծուածոց անտանելեաց սփոփմանց, քան զի ոչինչ ստեղծական զբաղձանս իմս լիապէս՝ հանգուցանել, և լցուցանել կարէ: Զուակցեա՛ զիս ընդ քեզ անբաժանելեաւ սիրոյ կապանաւ: Քան զի դու միայն բաւական ես քում սիրողիդ, և առանց քեզ ձրիք են հանուրք:

## Գլուխ. Քսան եւ չորս երորդ։

### Յաղագս խոտելոյ հոքունակիններ խուզման վարուց այլոց։

1. Որդեակ՝ մի՛ լինիր հետաքրքիր, եւ մի՛ սիրեր զզբաղմունս դատարկս։ Զի՞նչ փոյթ է քեզ զայսմանէ կամ զայնմանէ, դու միայն հետեւեա՛ց ինձ։ Քան զի զի՞նչ փոյթ է քեզ թէ ոք այսպէս իցէ կամ այնպէս։ Եւ թէ ոք խօսիցի, կամ առնիցէ, այսպէս կամ այնպէս։ Որովհետեւ ո՛չ է քեզ հարկ, զի վն̄ այլոյ պատասխանիցես, այլ հա՛րկ է քեզ զի վն̄ քոյ զհամարս տայցես, ընդէ՞ր ուրեմն պատաղիս։

զիս : Ահաւասիկ ես զբնաւս ճանաչեմ, և զհամայնս որք լինին ՚ի ներքոյ արեգական տեսանեմ: Եւ գիտեմ թէ զինչ իւրաքանչիւրոք իցէ, զինչ խորհիցի, զինչ կամիցի, և առ ո՞ր վախճան դիտաւորութի նորին ձգտիցի, իսկ ուրեմն յանձնելիք են հանուրքն, իսկ դու պահեա զքեզ ընդ բարւոյ խաղաղութե, և թո՛յլ տուր շարժողին շարժել որքան և կամիցի: Եւ եկեսցէ ՚ի վե՛ր նր՛ զորինչ և առնիցէ և ասիցէ: Քանզի խաբել զիս ո՛չ կարէ:

2. Մի՛ եղիցի քեզ փոյթ պշքոյ անուան մեծի, մի՛ զընտելութե բազմաց, և մի՛ գյուտոյ սիրելութե մարդկան: Քանզի յայսցանէ ծնանին ցնդմունք, և մթութիւնք մեծամեծք ՚ի սրտի: Յօժարապէս՝

խօսէի ընդ քեզ զբանս իմս, եւ յայտ-
նէի քեզ զգաղտնիս, եթէ իմում
գալստեան զգուշապէս սպասէիր,
եւ ինձ զդուռն սրտի քոյոյ բա-
նայիր. չե՛ր ուրեմն նախատեսուչ,
եւ հսկեա՛լ յաղօթս, խո՛նարհեցո՛ իսկ
զքեզ նամենայնում:

## Գլուխ. Քսան եւ հինգ երորդ:

### Յորում արդեօք հաստատուն խաղա- ղութ̄ն եւ ճշմարիտ շահաւէ- տութ̄ն կայանայցէ:

1. Որդեակ՚ ես խօսեցայ,
թէ զխաղաղութ̄ն թո-
ղում ձեզ, զխաղաղու-
թ̄ն իմ տամ ձեզ, ո՛չ
որպէս աշխարհս տայ, տամ ես ձեզ,

ամ

ա̄մ ոք ցանկայ խաղաղութե̄, բայց ո՛չ ա̄մ ոք հոգայ զայն որ պատշաճի առ ճշմարիտ խաղաղութի̄: Խաղաղութի̄ իմ է՛ ընդ խոնարհս և ընդ հեզս սրտիւ: Խաղաղութի̄ քո եղիցի ՚ի համբերութիս բազումս: Եթէ լուիցես ինձ, և հետևիցիս ձայնի իմում, կարասցես զբազում ինչ խաղաղութե̄ վայելել:

2. Զինչ արարից ուրեմն:

3. Յամենայնում զգոյշ լեր ՚ի քեզ, թէ զինչ առնիցես, կամ զինչ խօսիցես, և զբոլոր դիտաւորութի̄ քո ուղղեա՛ առ այն, զի ինձ միայնում հաճոյանայցես, և բաց յինէն զոչ այլինչ ըղձայցես կամ խնդրիցես: Այլ և զասացուածս կամ զգործս այլոց մի՛ անզգուշաբար դատիցես,

և՛ ի

և՚ խիղս ոչ յանձնեցեալս քեզ մի՛
պատաղիցիս, եւ այսպէս՝ մարթ-
եղիցի քեզ, զի սակաւ ինչ կամ նո-
ւազապէս՝ վրդովիցիս: Քան զի
ոչ զգայցես երբէք զվրդովումն ինչ,
եւ ոչ կրեսցես զվշտանկութի ինչ սր-
տի կամ մարմնոյ, ո՛չ է ներկայի կեն-
ցաղոյս, այլ կացութեն յաւիտե-
նականի յանդորրութե: Մի՛ ու-
րեմն վարկանիցես, թէ գտեալիցես
զճշմարիտ խաղաղութի, եթէ ոչ
զգայցես դժարութի ինչ: Եւ մի՛
յայնժամ համարիցես զբոլորն գոլ
բարի, մինչ զոչ ինչ կրես զընդդի-
մութի: Մի՛ վարկանիցես զայն
ինչ գոլ կատարեալ, եթէ բնաւքն
լինիցին ըստ քոյոց ըղձից: Եւ մի՛
յայնժամ կարծիցես գոլ զքեզ մեծ-
ոմն, կամ սիրելի այ, եթէ ըն
մեծի

մեծի իցես ջերմեռանդութե՟ և
քաղցրութե՟ ։ Քանզի յայսպիսիս
ո՛չ ճանաչի ճշմարիտ սէր առաքի-
նութե՟ , և ո՛չ կայանայ յայսպիսիս
շահաւէտութի՟ և յառաջադիմու-
թի՟ մարդոյ ։

4. Նորո՛ւմ ուրեմն տր̄ ։

5. ՚Յյանձնեսն զքեզ ՚ի քոյս,
ըստ սրտէ քումէ կամացն ա̄ծայնոց,
ո՛չ խնդրելով զքոյն, ո՛չ ըն փոքունս,
և ո՛չ ըն մեծամեծս, ո՛չ ՚ի ժամա-
նակի, և ո՛չ ՚ի յա̂ւիտենականութե՟,
մինչ զի միով և հանգիտիւ դիմա-
՚ի շնորհակալութի՟ս յարամնայցես
՚ի մէջ աջողութեց և անաջողութեց
զա̄մ ինչ թաթիւ հա̂ստատիւ կշ-
ռելով, և եթէ լինիցիս այնքան հզօր
և երկայնամիտ յուսով, մինչ զի ՚ի
նո̂ւազիլն ներքնայնոյ մխիթարու-

թե՟

թէ, առ՚ի ըմբերել եւ ս կարծրագու-
նից զսիրտ քո պատրաստիցես, եւ ո՛չ
արդարացուցանիցես զքեզ, ո՛չ թէ
զայսպիսիս եւ զայսքանս ո՛չ էր ըմ-
բռն քեզ կրել, այլ զիսնամենայնս
տրամադրութիս արդարացուցանի-
ցես, եւ զանուն իմ սէ՛ր գովիցես, յայն
ժամ ըն ճշմարտուամ եւ նուաղուամ ճա-
նապարհով խաղաղութեան շրջեսցիս,
եւ եղիցի քեզ յոյժ անտարակուսե-
լի, թէ մերուստին հրճուանօք զերես
իմ տեսանելոց իցես, իսկ եթէ առ-
կատարեալ քամահութիւն քոյոյ ան-
ձին ժամանիցես, գիտեմ զի յայն
ժամ առատութեամբ խաղաղութեան
զմայլեսցիս, ըստ կարողութեան քո-
յոյ պանդխտութեան:

Գլուխ.

## Գլուխ. քսան և վեցերորդ։

### Յաղագս գերազանցութեան ազատական մտի, զոր մանաւանդ աղօթն թախանձական, քան թէ ընթերցուածն արդիւնաւորի։

1. Տէր իմ, այսէ գործ առն կատարելոյ, ոչ երբէք ՚ի դիտմանէ երկնայնոց թուլացուցանել զմիտս, և ՚ի մէջ բազմաց հոգոց կենցաղավարիլ իբր անհոգ, ոչ ըստ սովորութեան ընդարմացելոյ, այլ մանաւանդ առանձնականութեամբ իւիք ազատականի մտի, ոչուրեք ստեղծուածոյ ապականդիւ ըղ-

գած

զածմամբ առյենլով :

2. Աղերսեմ 'ի քէն ով ամենաբարեգութ տէրիմ, նախապահեա զիս 'ի հոգոց այսորիկ կենցաղոյս, զի մի յաճախ պատաղեսցեն զիս : Ի բազմաց կարեաց մարմնոյ, զի մի 'ի փափկութէց, ըմբռնեցիմ; և 'ի բնաւից ընդդիմակայից հոգւոյս, զի մի 'ի վշտանկութէց բեկեցեալ ստորանկիցեմ : Ո՛չ ասեմ յիրաց այնցանէ, զորովք պարի բոլորով ըղձիւ աշխարհական ունայնութի: Այլ յայնցանէ թշուառութէց, որք զմիտ ծառայի քոյ հասարականին անիծիւ մահկանացութէ պատժականապէս ծանրացուցանեն և յամեցուցանեն, զի մի 'ի յազատութի հոգւոյս որքանիցս և ըմբռոնիցէ մտանել կարողանայցէ :

Ով

3. Ո՛վ տէր իմ՝ և քաղցրութիւն անճառելի, փոխարկեա՛ ինձ ՚ի դառնութիւն, զհանուր մխիթարութիւն մարմնոյ, որ ՚ի խնդրոյն մշտնջենաւորականաց զիս ՚ի բաց քարշէ, և նկատմամբ ուրուք ներկայի բարւոյ բերկրականի, առ ինքն չարաալէ՝ համոզէ: Մի՛ տար իմ մի՛ յաղթահարիցէ զիս մարմին և արիւն: Մի՛ պատրեսցէ զիս աշխարհ, և փառն նորա հակիրճ, և մի՛ սատորանկիցէ զիս սատանայ և խորամանկութիւն նորին: Տո՛ւր ինձ զարիութիւն ընդդիմադրելոյ, զհամբերութիւն տանելոյ, և զհաստատութիւն յարատեւելոյ: Տո՛ւր ինձ փոխանակ հանուրց աշխարհին սփոփմանց, զօծումն քաղցրաշունչ քոյոյ Հոգւոյ, և փոխանակ մարմնականն սիրոյ ՚նեց

հեղ՚լցիս զսէր քոյոյ անուա՛ն:

4. Ահա՛ւասիկ կերակուր, ըմպելի, հանդերձ, եւ այլք կիրառկանելիք, որք պատշաճին ՚ի պահպանութ͞ի մարմնոյն, են ՚ի ծանրութ͞ի հոգւոյն ջեռմեռանդի: Շնորհեա՛ ուրեմն զայսպիսիս դարմանս բարեխառնապէս՝ ՚ի կիր արկանել, եւ ոչ ՚ի նոսին կարօտութ͞ե սաստկագունիւ պատաղիլ: ՚Ի բաց ձգել զա͞մ ինչ անպատեհ իմնէ քան զի բնութ͞ին պահպանիլ պարտի, իսկ բաղձալին աւելորդաց իրաց, եւ այնոցիկ որք առա՛ւել բերկրեցուցանեն, յօրինաց սրբոց արգելանի, քան զի այլապէս՝ մարմինն ընդդէմ հոգւոյն անզգամի: Ուստի աղաչեմ, ՚ի մէջ սոցա ձեռն քո զիս ուղղիցէ, եւ ուսուցանիցէ, զի մի՛ իր

ինչ

որինչ աւելորդագոյն լինիցի ։

## Գլուխ. Քսան և Եօթն երորդ։

### Թէ սէրն առանձնական յամեցուցանէ յոյժ 'ի ծայրագոյնէ բարւոյ ։

1. Որդեակ՝ պարտիս զքեզ բոլորովիմբ տալ փոխանակ բոլորին, և 'ի քեզ, ինքեան ոչ ինչ գոլ։ Եւ գիտեա՛ զի սէր քոյոյ անձին առաւել վնասէ քեզ, քան թէ այլ ինչ աշխարհի։ Քանզի ըստ սիրոյ և ըստ ըղձին զոր 'ի կիր արկանես, իւրաքանչիւր իր առա̂ւել՝ կամ նուա̂զ՝ քեզ առյենու ։ Եւ եթէ եղիցի սէր քո զուտ և

պարզ, և բարւոք կարգաւորե-
ցեալ, եղիցիս Թարց գերութ՟է ի
բացուղորդ՝ մի՛ ցանկանայցես այնմ,
զորոչէ պատեհ քեզ ունել, և մի՛
ունիցիս զայն, որ կարէ արգելուլ
զքեզ, և զրկել յազատութ՟է ներք
նայնոյ: Զարմանք են, որ ո՛չ ՚ի բո
լորէ հիմանէ սրտի քոյ զքեզ ինձ
յանձնես համդերձ ընաւ՞իւք որոց
ցանկալ կարես կամ ունել:

2. Ընդէ՛ր մաշիս ունայնիւ
տխրութ՟բ, և ընդէ՛ր աշխատիս հո
գովք անօգուտիւք: Կա՛ց ըստ բարե
հաճութ՟է իմում, և ոչ կրեսցես եր
բէք զաուժանս: Եթէ խնդրիցես
զայս ինչ կամ զայն, և կամիցիս գոլ
աստ կամ անդ, վ՟ն քոյոյ հանդար
տութ՟է, և առ՚ի զտանել մանա-
ւանդապէն՝ զքոյդ առանձնական

հա-

հաճութե̄ն, ոչ երբեք հանդիցիս, եւ ոչ ազատեսցիս ՚ի զբաղմանէ: Քան զի նմանմամբ դատարկիցն իմն պա-կասութե̄ն, եւ յա̄մբ տեղւոջ եղի-ցի ոք, որ ընդդիմանայցէ:

3. Օգնէ ուրեմն ոչ իւրա-քանչիւր ինչ առաստացեալ, կամ բազմապատկեցեալ արտաքա-քար`, այլ մանաւանդ քամահե-ցեալ եւ հատեցեալ ՚ի սպառ արմա-տաքար`, զորոց միայն զհաշուէ արծաթոյ եւ զփարթամութեանց, այլեւ զփարմանէ պատուոյ, եւ զըղ-ձէ ունայնի գովութե̄ իմանայցես, որք ամենեքեան անցանեն ընդ աշ-խարհն: Ոչ այն ինչ նպաստ տալ կարէ տեղի, եթէ նուաղեսցէ իղձ ջերմեռանդութե̄, եւ ոչ է յարամնա-լոց խաղաղութե̄ն արտաքուստ ներ

խնդրեցեալ, եթէ թափուր իցէ 'ի ճշմարտէ հիմանէ կացութի՟ սր տի, այսինքն եթէ ո՛չ իցէ հաստա տեցեալ 'ի յիս: Քանզի թեպէտ փոփոխել զքեզ կարես, այլ ոչ բարե գոյնացուցանել, զի 'ի ծածկելն եւ յառաջանիլն տուրին, գտանիցես յորմէ փախեար, եւ մանաւանդ զա ռաւելագոյնն:

Աղօթ վ՟ս մաքրութե՟ սրտի, եւ եր կնայնոյ իմաստութե՟ն:

4. Համատեա՛ զիս ա՟ծ իմ շնոր հիւ հոգւոյն սրբոյ. եւ տուր՛ ինձ զզօրութի՟ քաջալերութե՟ ըստ ներ քին մարդոյն: Զի զսիրտ իմ դա տարկիցեմ 'ի բնաւ իղ անօգտից ըղ բաղմանց եւ անձկութեց, եւ մի՛ քաշ

չի—

չիցէմ 'ի զանազանից ըղձից հեռա_
ցանչիւրոյ իրի, թէ խոստանի և թէ
մեծագնի, այլ զբնաւսն նշմար_
ցեմ իբրև զանցաւորս, և զիս նմա
նապէս՝ ընդ նոսին գոլ անցանե_
լոց: Քանզի ոչինչ յարամնայուն
'ի ներքոյ արեգական, ուր ա̃մ ինչ
ունայնութի̃ է, և տառապութիւն
մտաց; ո՜հ թէ որպէս իմաստուն է
այն, որ զայսպիսիս յարանկատէ:

5. Տուր ինձ տ̃ր զիմաստու
թի̃ երկնային, զի ուսանիցիմ զքեզ
գեր քան զա̃մ ինչ խնդրել և գտա
նել, գեր քան զա̃մ ինձ իմանալ և
սիրել, և զայլս ըստ կարգադրու
թե̃ քոյոյ իմաստութե̃, ըստ որում
են, իմանալ: Տուր ինձ խոհե_
մապէս՝ խոյս տալ յառնէ շողոքոր
թողէ, և համբերաբար՝ տանիլ ընդ

դիմամարտին: Քան զի այս է մեծ-իմաստութիւն, ոչ շարժիլն յամէ հողմոյ բանից, եւ ո՛չ լինիլ ունկնդիր չարապէս՝ համոզողին սիրենայի, զի այսպէս՝ սկսանելով զճանապարհ, ձեպեմք առաջահովապէս:

## Գլուխ. Քսան եւ ութ երորդ:

## Ընդդէմ լեզուաց բամբասողաց:

1. Որդեակ՝ մի՛ վշտանայցես, եթէ ոմանք զքէն զգայցեն չարապէս՝ եւ ասիցեն, թէ ո՛չ լուիցես ազատաբար, զի դու զչարագոյնս զգալ պարտիս զքէն, եւ զոչոք համարել քան զքեզ տկարագոյն: Եթէ շրջիցիս ներքսապէս՝,

պէս՝, մի՛ այնքան կշռիցես զբանս Թուուցեալս։ Քանզի ո՛չ է դոյն ինչ իմաստութի լսելն 'ի ժամանակի չարի, և 'ի ներքուստ դատանալն առ իս, և ո՛չ մարդկայնով աղմկիլն դատողութէ :

2. Մի՛ լինիցի խաղաղութի քո 'ի բերանս մարդկան : Քանզի Թէ բարեպէս՝ և Թէ չարապէս՝ մի կնիցեն զանս քոյս, ո՛չ վասն այնորին եղիցիս այլ իմն մարդ : Ո՛ւր է ճշմարիտ խաղաղութի, և ճշմարիտ փառք, ո՛չ ապաքէն 'ի յիս : Ուստի որոյ բաղձայ հաճոյանալ մարդկան, և որ ո՛չ երկնչի յանհաճոյանալոյ, մեծաւ զմայլեսցի խաղաղութէ: Զի 'ի սիրոյ անկարգէ, և յերկիւղէ ունայնոյ ծնանի ամ անհանգստութի սրտի, և տարացրդութին ըզգայութեց:

## Գլուխ. Քսան եւ ինն երորդ :

### Որպիսաբար 'ի մէջ վշտագնութեան կարդալ պարտէ առ տ̃ծ, եւ բարեբանել :

1. Եղիցի անուն քո տ̃ր բարեբանեցեալ 'իյաւիտեան, որ թոյլ ետ տուր այսմիկ փորձութեան, եւ վշտագնութեան գալ իվ̃ր իմ, ոչ է ինձ մարթ փախչել 'ի սմանէ, այլ հարկէ, զի դիմեցեմ առ քեզ, ոռ̃ զի օգնիցես ինձ, եւ 'ի բարին ըզ նոյնն դարձուցանիցես : ՏՐ̃ իմ նարդեանս եմ 'ի վշտագնութեան, եւ ոչ է ըստ սրտի իմում : Քան զի յոյժ տագնապիմ 'ի ներկայէ յայսմանէ :

նէ ։ Ո՜ինչ տառապիմ այժմ ո՜վ հայր իմ սիրելի, ըմբռնեցայ 'ի մէջ նեղութեց, կեցո՛ զիս 'ի ժամու այսմիկ ։ Եւ վա՛ այնորիկ ժամանեցի 'ի ժամս այս զի դու փառաւորեսցիս , և մինչ յաւէտ խոնարհիցիմ , 'ի ձեռն քո ազատիցիմ ։ Հաճեսցի՛ց ուրեմն տէր զերծուցանել զիս ։ Քանզի ես աղքատ գոլով զինչ կարեմ առնել , և յո՞ կարեմ ընթանալ առանց քեզ ։ Առո՛ւր ինձ տէր իմ եւս յայսմ նուագի զհամբերութի , և օգնեա՛ ինձ տէ՛ր իմ , զի որ քանիցս ծարանայցեմ մի երկնչիցիմ ։

2. Եւ այժմ ի մէջ այսոցիկ զինչ ասացից , եթէ ո՛չ զայս տէր իմ , եղիցի կամք քո ։ Քանզի բարեպէս՝ արժանաւորեցայ ես վշտանկիլ և ծանրանալ ։ Պարտէ ուրեմն

զի

զի տանիցեմ, եւ երանի թէ համբե-րութբ, մինչեւ անցանիցէ մրրիկս այս, եւ բարեգոյն լինիցի։ Բայց հզօ՛րէ ամենակարող ձեռն քո, առ ՚ի բառնալ յինէն եւս զայս փորձու-թի, եւ առ ՚ի մեղմել զթափանորեն, զի մի՛ բնաւ՛ին յորսայսիցիմ, ըստ որում ՚ի նախնումն բազմիցս արա-րեր ընդ իս։ Ողծիմ եւ գթութի իմ։ Եւ որքան է ինձ այս դժուա՛րա-գոյն, այնքան է քեզ դիւրագոյն։ Քան զի այսէ նորոգումն աջոյն բարձրելոյ։

Գլուխ.

## Գլուխ. Երեսներորդ. :

Յաղագս խնդրելոյ զօգնութիւն ածային, և յուսոյ վերստին առման շնորհին :

1. Որդեակ՛, ես եմ տ̃ր քաջալերօղ յաւուր նեղութե̃: Ե՛կ առ իս մինչ ո՛չ բարեպէս՝ ա ջողիցի քեզ: Քան զի այս է որ մա_ նաւ̂անդապէս՝ արգելու զմխիթարութիւն երկնային, զի յամրապէս՝ դարձուցանես զքեզ առ աղօթս: Եւ յառաջքանթէ զգուշապէս՝ աղերսիցես զիս, խնդրես նախ այլ բազում զմխիթարութի̃, և սփո_փես զքեզ իրօք արտաքնօք, վ̃

որոյ

որոյ բնաւքն պակաս ինչ օգնեն, մինչեւ խնլամոյցին: Քանզի ես եմ որ փրկեմ զյուսացեալս 'ի յիս, և ոչ է արտաքոյ իմ հզօրագոյն օգնութիւն, ո՛չ օգտակար խորհուրդ, և ո՛չ դեղ հաստատուն: Բայց այժմ առեցելով հոգւով զկնի մրրկին, զօրացի՛ր իմէջ լուսոյ ողորմութեանց իմոց: Քանզի մե՛րձեմ ասէ տր̄ առ 'ի կազդուրել զբնաւս, ո՛չ միայն ամբողջապէս՝ այլ և առատապէս՝ և կուտակօրէն՝:

2. Միթէ իցէ՞ ինձ իրինչ դժուարին, կամ թէ նմանիցե՞մ ես ասողի, և ոչ առնողի, ո՞ւր է հաւատքո, կա՛ց հաստատապէս՝ և յարատեւապէս՝ լե՛ր երկայնամիտ, և այր զօրութեան: Քանզի եկեսցէ քեզ մխիթարութիւն 'ի ժամանակի իւրում:

Սպ

Սպասեա՛ ինձ, սպասեա՛, զի ես
եկից և հոգացից զքեզ, փորձութ̃ի
է որ զքեզ վշտանկէ, և մնոտի եր
կիւղ, որ զքեզ ահաբեկէ : Օ՜ինչ
օգուտէ զբաղումն զիրաց հանդեր
ձելոց ներդիպականաց, եթէ ըզ
տրտմութի իմ̃ տրտմութ̃ե ունի
ցիս : Հա՛տէ ա՞ւուրն չար իւր :
՚Իզո՛ւրէ, և անօգուտ ինչ վ̃ն ա_
պառնեաց աղմկիլ կամ խայտալ,
որք գուցէ՝ թէ ո՛չ երբէք աջո_
ղիցին :

3. Զպաքէն՝ մարդկային ինչ
է այդպիսիւք խոկմամբք կատա_
կել, և է նշան փոքրահոգութ̃ե այդ_
քան թեթևաբար քարշիլն ՚ի հա_
մօզմանց թշնամւոյն : Քան զի ոչ է
նմա փոյթ, թէ ո՞րդեօք հա՞ւատ
տիւք և կամ խափէութ̃եք ծիծա_

ղիցէ

ղինցի զքեւ եւ պատուիցէ, ո՜րդեակ սի
րով ներկայից կամ՝ երկնուղիւ ա_
պաւունեաց սորոմանկիցէ զքեզ: Մի՛
ուրեմն խռովիցի սիրտ քո, եւ մի՛
զանգիտիցէ: Այլ հաստատո՛ յիս,
եւ յուսա յողորմութ͞ի իմ: Քան
զի մինչ վարկանիս զքեզ հեռաց
եալ յինէն, մե՛րձեմ ես բազմիցս՝:
Եւ մինչ համարիս, թէ կորուսեալ
ինչես զբոլորն, յայնժամ մերձէ
շահավէտութ͞ի մեծ արդիւնա_
ւորման: Զի ոչ է կորուսեցեալ
բոլորն, մինչ հանդիպի ինչ ներ
հակութ͞ի: Ուստի ոչ պարտիս
դատել ըստ ներկայի զգացման,
եւ ոչ ներյենուլ եւ ընդունել զծան
րութ͞ի ինչ յիւրաքանչիւրմէ ուս
տեքէ առեկեալ, իբր թէ 'ի բաց
բարձեցեալ իցէ բոլոր յոյս արտա
ղերծման: Մի՛

4. Մի՛ կարծիցես զքեզ ընդ ւ՜ին 'ի բաց թողլեցեալ, թէ և զժամանակ ինչ առաքինցեմ առ քեզ զվշտագնութի, և կամ 'ի բաց բառնայցեմ զցանկալին մխիթարութի : Քանզի այսպէս՝ պա՛րտ է ճեպել առարքայութին երկնից : Եւ այս Թարց երկբայութե յա՜ւէտ վայելուչէ քեզ, և այլոց իմոց ծառայից, զի զարթուցանիցիք յընդդիմադարձութեց , քան թէ զա՛մ ինչ ըստ հաճոյից ձերոց ունիցիք : Ես ծանեա՛ զխորհուրդս գաղտնիս , որ յայժ՝ հարկա՜որէ վ՜ն կեցութե քոյ, զի երբեմն թողանիցիս առանց քաղցրութե , մի՛ գուցէ փքանայցես յաջողմունս բարիս , և զքեզ ինքեան հաճոյանալ կամիցիս յայնմնկ որ ո՛չ ես : Քանզի զոր տու

ւեա

Հեալեմ կարեմ 'ի քէաց բառնալ, և զնորին վերստին շնորհել, մինչ հաճոյ թուիցի ինձ:

5. Մինչ տայցեմ, իմէ. և մինչ 'ի քէաց բառնամ, ոչ զքոյդ բառնամ: Քանզի իմէ ամ̃ տուր բարի, և ամ̃ պարգև կատարեալ: Եթէ յղիցեմ առ քեզ զծանրութի̃ իմ, կամ զընդդիմամարտութի̃, մի՛ խռովիցիս, և մի՛ բեկանիցի սիրտ քո, զի ես փութով զնոյնն փորատել կարեմ, և փոխարկել զամ̃ ծանրութի̃ 'ի խնդութի̃: Բայց սակայն արդար եմ ես, և յոյժ գովաբանելի մինչ այսպէս՝ առնեմ ընդ քեզ:

6. Եթէ ուղղապէս՝ իմանայցես, և ճշմարտութ̃է նշմարիցես, ոչ պարտիս երբէք սակս ընդդիմա-

դար

դարձուցեց այսքան մհաստատապէս՝ տխրիլ, այլ յառաջէտ խնդալ և գոհանալ, և մանաւանդ զայն քեզ միայնակ վարկանել խնդութի, որ 'ի կշտամբելն զքեզ ցաւօք ոչ անխայիցեմ քեզ : Որպ սիրեաց զիս Հայր, և ես սիրեմ զձեզ, ասացի սիրեցելոց իմոց աշակերտաց : Զորս նրա՛նի ոչ առաքեցի առ խնդութի կենցաղականս, այլ առ մեծամեծս մենամարտութիս, ոչ առ պատիւս, այլ առ քամահանս, ոչ առ դատարկութիս, այլ առ աշխատանս, ոչ առ հանգստութի, այլ 'ի յա՛ռէտ պտղաբերութի ըն համբերութէ, յիշեա որդեակ զայսոսիկ բանս :

## Գլուխ. Երեսուն և մէկ երորդ:

### Յաղագս խստունկանման ընաւ՞ից ստեղծուածոց, զի ստեղծօղն կարիցէ գտանել:

I. Տէ՛ր իմ իրաւ՞ի կարօտիմ ես մեծագունի շնորհի, եթէ պարտ իցէ ինձ առ այն ժամանել, ու՛ր ոչ ոք յստեղծու՞ածոց կարասցէ զիս արգելուլ: Քանզի որքանիցս արգելանիմ յիրէ իմեքէ, ո՛չ կարեմ ազատաբար առ քեզ սլանալ, բաղձայր ընդարձակապէս՝ առ քեզ սլանալ այն որ ասէր, Ո՞վ տացէ ինձ զթեւս իբրեւ զաղաւնոյ, և թռեայց, և յարահանգեայց:

գեւսյք: Զի՞նչ է յանդորրագոյն քան զանխս մաքուր, եւ զի՞նչ ապաստանագոյն քան զայն որ ո՛չ բաղձայ իմիք իմն երկրի: Պա՛րտ է ուրեմն գերադանցել զստեղծականս բնաւս, եւ լքել զանձն իւր կատարելապէս՝ եւ յափշութենէ մտաց կալ եւ տեսանել զքեզ զկերտողդ համայնից զոչինչ նմանութի՟ ունել ընդ ստեղծուածոց: Եւ թէ ոք ո՛չ իցէ ՚ի բնաւից ստեղծուածոց ապաքերծեցեալ, ո՛չ կարէ արձանակապէս՝ նկատել առ ա՟ծայինս: Եւ վ՟ս այնորիկ սակաւք գտանին վերանկատիչք, զի սակաւք են որք գիտեն զինքեանս ՚ի կորստականաց, եւ ստեղծականաց գոլ լիապէս՝ ներգրաւեցեալս:

2. Աղուայս խնդրի մեծ իմն ձգրէ, որ ամբառնայցէ զմիտս,

և ՚ի վե՛ր ինքեան յափշտակիցէ ։ Քան
զի եթէ որ ո՛չ իցէ վերացեալ մտօք,
և ազատեցեալ ՚ի բնաւից ստեղծո-
ւածոց , միաւորեցեալ իսկ ընդ
այ , զորինչ և գիտիցէ , զորինչ և
ունիցի , ո՛չ է համարելի մեծ ինչ ։
Զժամանակս բազումս նուաստ
եղիցի, և յոլովայնեցեալ կայցէ, այն,
որ համարի զու զայլինչ մեծա-
գոյն , ք զմի միայն զանչափ , և զյա-
ւիտենական բարին ։ Քանզի որ
ինչ ո՛չ է այ , է՛ ո՛չ ինչ , և առ ո՛չ
ինչ համարելի է ։ Մե՛ծ է զանա-
զանութի ՚ի մէջ իմաստութե առն
լուսաւորեցելոյ և ջերմեռանդի ,
և ՚ի մէջ գիտութե եկեղեցականի
դպրոց աշակերտի , և ուսումնասի-
րի ։ Օն պատուականագոյնէ վար-
դապետութին , որ ՚ի վերուստ յա՛ծ

այնոյ

այնոյ ներհեղմանէ տեղանի, է̃ զայն որ մարդկայնով ուշիմութե̃ աշխատապէս՝ առատանի:

3. Գտանին բազումք, որք բաղձան վերանկատման, բայց զայնս որք պիտոյանան առ այն, ո՛չ փութան ինքն արկանել: Եւ գոյ արգելումն մեծ, զի ՚ինչանս և յիրս զգալիս զկայ առնումք, և զկատարելոյ մահացուցմանէ ախտից սակաւինչ հոգամք; Ո՛չ գիտեմք թէ զինչ իցէ, կամ յորմէ հոգւոյ առաջնորդիցիմք, և թէ առ ինչ դիմիցեմք մեք, որք հոգևորք գոլ առասիմք, զի զայնքանս աշխատանս, և զառատապոյնս հոգաբարձութիս սակս անցաւորաց և խոտելեաց ՚ինկնարկանէմք, և զներքնայնոց մերոց հազիւ երբէք

լինայես՝ ժողովեցելով զգայութե͞ ներխորհիմք :

4. Ո͞հ ցաւոյս, վաղվաղա-կի զննի փոքու վերաժողովման արտաքս պայթուցանիմք, եւ վասն մերս նորբաւ ատրատայննութե͞ ընաւ ո՛չ կշռեմք : Թէ ուր արդեօք ձգի-ցին մերքն զգածմունք, ո՛չ տեղե-կանամք, եւ թէ ոմխուն ազեղք ի-ցեն, ո՛չ երբէք ողբամք : Քան զի ա͞մ մսեղի ապականեալէր զճանա-պարհիւր, եւ վ͞ս այնորիկ հետեւ իւր հեղեղն ջուրց մեծ : Եւ որովհե-տեւ իղձն մեր ներքին ապականե-ցեալ է, հարկէ, զի եւ ներգործու-թիւն հետեւեցեալ, որէ նշան չքա-ւորութե͞ ներքնայնոյ կարողութե͞ ապականեցի : զի ՚ի սուրբ մաքրոյ յառաջածի պտուղ բարւոյ կենի :

Որքան

Զ. Որքան որ արարեալիցէ, խնդրի: Բայց թէ որքանիւ առաքինութբ առնիցէ ոչ այնքան՝ հոգաբարձապէս՝ մտածի: Եթէ որ իցէ պօրեղ, փարթամ, գեղեցիկ, ուշիմ, բարի գրեչ, և բարի երգիչ հետազօտի, բայց թէ որքան ողքատ իցէ հոգւով, որքան համբերող, և հեզ, և որքան առաքինի և ներքսադիտակ, ՚ի բազմաց լուի: Ընութին առ արտաքինս մարդոյն վերանկատէ, իսկ շնորհն առ ներքինս զինքն դարձուցանէ: Նա յաճախապէս՝ պարտի, իսկ սա յուսայ յոյժ զի մի խափիցի:

Գլուխ. Երեսուն և Եօթն երորդ։

Յաղագս բացուրացման անձին, և բացհրաժարման ՚ի բնա_ ւից տուփութեց ։

1. Որդեակ՝ ոչ կարես ըն-
տանալ զկատարեալ
ազատութի եթէ ոչ
բոլորովիմբ ուրանաս
ցես զքեզ ։ Օի կապանաւորեցն
այլ են բնաւք ինքնահաճք, և ան-
ձնասէրք, տուփոտք, հետաքրքիրք
վատաբանողիք խնդրօղք միշտ փափ-
կութեց և ոչ այնր որ ըստ յի̃ քի̃ է,
որք թէ և բազմիցս ձեւոյն կեղծի_
ցեն և շարադրիցեն, սակայն ոչ
կայցէ հաստատուն ։ Քան զի կոր

իցէ

եղէ ընտա՛ն որ ո՛չ յա̄յ ծնա՛նս ։
Ահա՛ կալ քեզ զայս հակիրճ և
զհամառօտեցեալ բանս, Թո՛ղ զա̄մս,
և գտցես զհամայն, լքեա՛ զտռ-
փութս, և գտցես զյարահանգուստս,
զայս մտօք քովք առձեռեա՛, և
մինչ լցուցանիցես, զբնաւն իմա-
նայցես ։

2. ՈՐԴ̄ իմ այդ ո՛չ է գործ-
միոյ ա՛ւուր, և ո՛չ կատակ փոքր-
կանց ։ Քան զի նայդ միկ համառօ-
տութե̄ ներպարունակի ա̄մ կա-
տարելութի̄ կրօնաւորաց ։

3. Որդեակ՝ ո՛չ պարտիս ըն-
դոստնուլ, և ո՛չ վհատիլ, լսելով
զշաւիղն կատարելոց, այլ առ վսե-
մագոյնս առածիլ, և տակա՛ւ տա-
կա՛ւ ըստ ըղձից քոց առաջնոսնիկ
փութալ ։ Ալա՛չթէ քեզ լեալէր
այդ,

այս, եւ առ այս էիր ժամանեալ, մինչ զի ոչ գոյիր անձնասէր, այլ ըստ նշմարման իմում զատուցեալ՝ կենցաղավարէիր, եւ ըստ ակնարկութեան հօր իմոյ, զոր քեզ յառաջադրեցի, յայնժամ ինձ յոյժ հաճոյանայիր, եւ բոլոր կեանն քո ըն խնդութեան եւ ըն խաղաղութեան անցանէր: Որդեակս զբազում ինչ ունիս առ ի քէն թողուլ, զոր եթէ ոչ ամբողջապէս՝ ինձ վերնշանիցես, ոչ ստանայցես, որում բաղձաս: Համոզեմ քեզ գնել յինէն զոսկի հրացեալ, զի ճոխանայցես, այսինքն, զերկնային իմաստութիւն, որ զբնաւս ստորնայինս առ ոտս արկանէ, յետադրեալ զերկրային իմաստութիւն, եւ զբնաւս մարդկայինս եւ զանձնական հաճոյութիւնս:

4. Աղաւցի կարեւոր գոլ ընդ գնել զիրս խոստմանս, փոխանակ այդ նուէից եւ գերազանցից 'ի յիրս մարդ-կայինս : Քանզի յոյժ բամահեցեալ, եւ նուաստ, մոռացման ինկ աւանդեցեալ տեսանի, ճշմարիտ իմաստութիւն երկնային : Մ'չէ ի մաստուն, որ զմեհագոյնս խորհի զինքենէ, եւ ո՞չ է արժանի մեծայարգութեան որ զնոյն իմաստութիւն խնդրէ 'ի յերկրի : Բազումք են որ զնոյնն ընթանով բարոզեն, բայց վարուք հեռաւպէս' տարաձայնին : Իսկ ինքն իմաստութիւնէ մեծագին իմն մարգարիտ թաքուցեալ 'ի բազմաց :

Գլուխ. Երեսուն և երեք երրորդ:

## Յաղագս անհաստատութե սր տի և ուղղմտաւորութե վասն վախճանականի ունելոյ առ Ած:

1. Որդեակ՝ մի հաւատայցես քում ներգործութե ներկայականի, զի վաղվաղակի՝ փոխարկիլ կարէ ՚ի այլ: Քանզի որքան և ապրեսցիս, թէ և ակամայ՝, ենթակայ ես փոփոխութեց, մինչ զի երբեմն ուրախ, երբեմն տրտում, երբեմն խաղաղ, և երբեմն վրդովեցեալ, մերթ առաջինի; մերթ վատթար, մերթ ուսումնասէր,

սէր, մերթ աղմկեցեալ, մերթ ծանր, և մերթ թեթև գտանիցիս: Բայց հաստատուն մնայ ի վեր այսուցիկ իմաստունն, և բարեպէս՝ հմուտն հոգւոյ, ոչ դիտելով թէ զինչ ըզգայցէ յինքեան, կամ թէ յորմէ կողմանէ շնչիցէ հողմն անհաստատութեան, այլ թէ բոլոր դիտաւորութիւն նորին մտաց առ պարտաւորն, և առ ըղձալին ժամանիցէ վախճան: Քանզի այսպէս՝ կարասցէ ոք միապէս՝, և նոյնապէս՝ անդրդուելի իսկ յարամնալ զըտիւ ակամբ դիտաւորութեան: ի մէջ այնքանեաց զանազանից դիպուածոց առանց լքանելոյ ունելով ըզ նոյնն առիս ուղղեցեալ:

2. Բայց որքան զտագոյնէ ակն դիտաւորութեան, այնքան անդը

դու՛ տայցես՝ ընթանալ ՚ի մէջ աղջամղ
ջից ; Սակայն ընբազումս մթա_
նայ եւս ակն զըստի դիտաւորութե
առդիտելով հակոյն՝ յիրս զու՛ար
ճալիս հանդիպեցելոյ ։ Քան զի
հազիւ գտանի որ բոլորովին՝ ա_
զատ, սակս էծի առանձնականի
արտախուզման ; եւ յսպէս հրէայք
երբեմն եկեալքերն ՚ի բեթանիայ, ոչ
միայն վ՜ն յի, այլ զի եւ զղազար տե
սանիցեն ։ Մաքրելի է ուրեմն ակն
դիտաւորութե, զի իցէ պարզ եւ
ուղիղ, եւ բաց յայլոց բնաւ՛ից զա_
նազանից միջնորդաց, առ իս ուղ
ղելի ։

## Գլուխ. Երեսուն և չորս երորդ :

Թէ սիրողն զած ճանաչէ զնա զոր
՚ի վեր քան զամս, և նա-
մենեսեան :

1. Ահաւասիկ՝ Ած իմ, և ամ ինչ : զինչ առաւել կամիմ, և զինչ երջանկագոյնս այս՝ բաղձալ կարեմ: Ո՜ համեղ, և քաղցր բանդ; բայց սիրողիդ բան այլ ո՛չ զաշխարհ, և ոչ զայնս որք յաշխարհի են: Ահաւասիկ՝ Ած իմ և ամն ինչ. իմացողին բաւականասցէ՝ ասացեալէ, և վայելուչ է սիրողին սաէս՝ կրկնել զսոյն ; Եւ իբրու ի մինչ ներկայ ես դու, վայելուչ են ամք,

բայց

բայց մինչ 'ի բացեայ ես, զզուե-
լիք են համայնք: Դու տաս որ-
տի զհանդարտութի̅, և զխաղա-
ղութի̅ մեծ, զխնդութի̅ իսկ բեր-
կրողական; Դու առնես զի զգայ-
ցեմք բարւոք զհամայնից, և գո-
վաբանիցեմք զքեզ ըստ ա̅մի; Ո՞չ
ինչ է որ կարիցէ զժամանակ ինչ
Թարգ քեզ հաճոյանալ: բայց Թէ
պիտոյանայցէ, զի իր ինչ իցէ ա-
խորժելի, և բարեհամ, պարտէ
զի քոյդ շնորհ առգուցէ, և հա-
մեմիւ քոյոյ իմաստութե̅ համե-
միցի:

2. Որ զքեզ ճանաչէ, զի՞նչ է,
զոր ո՛չ ճանաչիցէ ուղղապէս՝; Եւ
որ զքեզ ո՛չ ճանաչէ, զի՞նչ է որ նմա
վայելուչ գոլ կարիցէ: Բայց նո-
ւաղին յիմաստութե̅ քում իմաս-

տունք

տունք այսոքիկ աշխարհի, և որք ըստ մարմնոյ իմանան : Քան զի անդ ունայնութի բազում, իսկ աստ մահ գտանի : Բայց որ քեզ քամահեմամբ կենցաղականաց, և մահացուցմամբ մարմնոյ հետևին իրաւ ի իմաստունք գոլ ճանաչին: Քան զի յունայնութե առ ճշմարտութիւն, ՚ի մարմնականութե առ հոգեկանութիւն անդրաբերին : Այսոքիկ են, որք ճանաչեն զմծ, և որինչ բարւոյ ՚ի ստեղծուածս գտանի, զբոլորն վերաբերեն ՚ի գովութի կերտողին զնոյնս; Զննմանս է սակայն, և յոյժ աննման համեղութի ստեղծողին, և ստեղծականաց, յաւ ի տեսանականութեն, և ժամանակականի, լուսոյն անստեղծի, և լուսոյն լուսաւորեցելոյ:

3. Ո՛վ լոյս մշտնջենաւո՛ր, գերազանցող բնաւի՛ց ստեղծականաց լուսոց, փայլեա՛ զփայլատակունս քոյս 'ի վերուստ, զթափանցողս ընդ բնա՛ւս խորս սրտի իմոյ: Մաքրեա՛, ուրախացո՛, պայծառացո՛ և կենդանացո՛ զհոգի իմ, զօրութե̄նոցին, առ 'ի ներյենուլ քեզ 'ի հրճուա՛կան ափշութի̄ս: Ո՛հ թէ յորժամ եկեսցէ ժամն այն երանելի, և տենչալի: զի քոյով յագեցուցանիցես զիս ներկայութ̄է, և լինիցիս ինձ ա̄մ յամենայնում: Քանզի մինչ տակա՛ւին այս ոչ է տրեցեալ, խնդութ̄ի իմ ոչ է լիացեալ: Ո՛հ ցա՛ւոյս, զի դեռ ևս հին մարդն կենդանի է ներյիս, և ո՛չ է բոլորն խաչեցեալ, ո՛չ և ս կատարելապէս՝ մեռեալ, զի դեռ ևս ցան-

կայ

կայ ուժգնապէս՝ ընդդէմ հոգւոյս, շարժելով զպատերազմ անդադա-կան։ Եւ ո՛չ է հանդարտութիւն յիշխանութեան հոգւոյ իմում։

4՝ Բայց դու որ տիրես զօրութեան ծովու, և զշարժումն ալեաց նորա ցածուցանես։ Արի՛ և օգնեա՛ ինձ; ցրուեա՛ զհեթանոսս որք կամին զպատերազմ, և խորտակեա՛ զնոսա զօրութեամբ քով։ Ցո՛յց ինձ, մաղթեմ՝ ՚ի քէն զմեծամեծս քոյս, և փառաւորեսցի աջ քո։ Քանզի ո՛չ է ինձ այլ իմն յոյս, և ո՛չ տեղի ապաւինի բայց ՚ի քէն, տէր իմ և Ած իմ։

## Գլուխ. Երեսուն և հինգ երորդ։

### Թէ ո՛չ իցէ ապահովութի՛ւն 'ի փոր ձութեանց ըն կենցաղում այսմիկ ։

I. Որդեակ՝, ո՛չ երբեք գտցես զապահովու թի̃ն այսմիկ կենցաղում, այլ որքան՝ ապրեսցիս, զզէնս հոգեւորս ունել պարտիս ։ զի շրջիս 'ի մէջ Թշնամեաց, որք յաջմէ եւ յահեկէ մարտնչին ընդ քեզ ։ Արդ՝ եթէ ոչ 'ի կիր արկանիցես յամենից կողմանց զվահանն համբերութե̃, ո՛չ մնայցես ընդերկար ժամանակ Թարց ուրեք վիրօ ։ Աւելի, եթէ ո՛չ դնիցես

զսիրտ

զանիրաւ քո սեւեռապէս՝ 'յիս, զըստի-
նուէր հաճոյութե, կրելով զբնաւս
յաղագս իմ, ո՛չ կարասցես ըմբե-
րել, խորշանկի այամին, եւ ո՛չ ժա-
մանեսցես 'ի պսակս երանեցելոց։
Պարտէ ուրեմն քեզ անցանել քա-
ջապէս՝ ընդ ամ ինչ, եւ հզօրիւ-
ձեռամբ զինիլ համառան՝ ընդդի-
մամարտից։ Քան զի յաղթողին
շնորհի մանանայ, եւ թմբեցելոյն
թողանի թշուառութի մեծ։

2. Եթէ խնդրես նայամին կեն-
ցաղում զհանգստութի, որպէս՝
ժամանեսցես յայնժամ առ մշտն-
ջենաւորն յարահանգստութի։
Մի՛ գնիցես զքեզ ուրեմն առ առա-
ւել հանգստութի, բայց առ առա-
ւել համբերութի։ Խնդրեա՛ զճշ-
մարիտ խաղաղութի, ո՛չ յերկրի,

այլ 'ի յերկինս, ո՛չ 'ի մարդիկ, կամ նայելս ստեղծուա՛ծս, այլ ընդ միայնում աստուծում: Ուստի վ̃ն սիրոյն ա̃յ պարտիս զքեզ բնաւ՛ից յօժարապէս՝ ենթարկանել, այսինքն աշխատանաց, և ցաւ՛ոց: փորձութե̃ց, և վշտակրութե̃ց, նեղութե̃ց կարևորութե̃ց, և հի՛ւանդութե̃ց զրպարտութե̃ց, ընդդիմախօսութե̃ց, և յանդիմանութե̃ց: խոնարհութե̃ց, և պատկառութե̃ց; նախատանաց, և քամահանաց:

Ոհ այսոքիկ են որք օգնեն առ առաքինութ̃ին: այսոքիկ են որք զդեռավարժս փորձեն ծառայս ք̃ո: և այսոքիկ են որք յօրինեն զերկնային պսակն: Եւ ես հատուցից զվարձ յա՛ւիտենականս փոխանակ կարճատեւի աշխատման; և զանզրա՛ւս

փառս,

փառս , փոխանակ անցաւորաց պատկառանաց :

3. Կարծես դու թէ ունիցիս միշտ ըստ քոյոյ հաճոյութէ զմխիթարութիս հոգեկանս , քայց ծառայքն իմ ոչ գտին զայսպիսիս, այլ զբազում ծանրութիս , և զզանազանս փորձութիս , զմեծամեծս ևս անմխիթարութիս : Համբերութբ էնթակրեցին զինքեանս նամենայնում , և առաւել յուսացան յած , ք թէ յինքեանս ; գիտելով , զի ոչ են համարժանիք չարչարանք այսորիկ ժամանակի , առ ՚ի յարդիւնաւորութի հանդերձելոցն փառաց : Կամիս փութանակի ունել զայն , զոր բազումք զկնի բազմաց արտասուաց , և մեծամեծաց աշխատանաց , հազիւ

ուսատացան : Համբե՛ր տն, քաջալերեաց, եւ զօրացի՛ր ; մի՛ յուսահատիր, եւ մի՛ լքանիր : Այլ զհոգի եւ զմարմին քո պատարագեա՛ յարաճաբար՛ վս փառացն իմոյ : Եւ ես հատուցից քեզ լիապէս՝, եւ եղեց ընդ քեզ ըն համայնս նեղութիւնս :

Գլուխ. Երեսուն եւ վեց երորդ :

Ընդդէմ ունայնից դատողութեանց մարդկան :

1. Որդեակ՝, ընկեա՛ զսիրտ քո հաստատապէս՝ ի տէր, եւ ի մարդկային դատողութէ մի՛ զանգիտիցես, ուր՝ խիղճ մտաց քոց վերատուրք քեզ զբարեկրօնու-

թի

թն եւ զանմեղութն : Զի բարւոք է եւ երանաւէտ ըստ այսմ կենցաղավարել : Եւ այս ոչ եղիցի ծանր այնմիկ, որ խոնարհեալ է սրտիւ, եւ ոչ այնմ, որ մանաւանդ ոք, քան թէ ինքեան յուսայ : Բազումք զբազում ինչ խօսին, ուսանի դոյն ինչ նոյնն հաւատալ պարտին : այլեւ ընաւէից բաւական գոլն, ոչ է կարելի : Եւ թէպէտ ոքէն Փողոս ջանաց ամենեցուն հաճոյանալ ՚ի տր̄, եւ գոլ ամ̄ ընդ ամենեսեան, սակայն եւս փորձադունել ինչ վարկաւ, թէ դատիւր յօրէ մարդկայնոյ :

2. Աղչխատեցաւ բաւականնայքն՝ սակս այլոց շինութե̄, եւ կեցութե̄, որքանէր յինքեան, եւ որ քան կարէր : Բայց Ոչ կարաց

արգե,

արդեօք, զի մի՛ յայլոց երբեմն դատիւր, եւ կամ արհամարհիւր: Ուստի յանձնեաց յած զբոլորն, որ ճանաչնեալէր զբոլորն: Եւ համ բերութէ, խոնարհութէ իսկ, ընդ դէմ բերանոց խօսողաց զան գքամութի, եւ ընդդէմ խորհողաց զունայնութի, եւ պխարդախութի, ընդդէմ իսկ այնոցիկ, որք ըստ հա ճութէ իւրեանց ամուրեք մնա_ պարծէին, զինքն Ջատագովեալ: Սակայն ետ երբեմն եւ ս զպատաս խանի, զի մի՛ տկարաց լռութեն իւրով ծնանէր զգայթակղութի:

3. Ո՞վ դու, հի՛մ երկնչես ՚ի մարդոյ մահկանացուէ որ այսօր է, եւ ՚ի վաղիւն ո՛չ երեւի: Երկիր դու յայ, եւ ՚ի մարդկայնոց զարհու րանաց մի՛ ահաբեկիր: Զի՞նչ կա

րէ

րէ որ առնել քեզ բանիւք , կամ
զրպարտութ̄ք , ո՛չ ապաքէն ին
քեան մանաւանդ , քան թէ քեզ
վնասէ : զի ո՞վ որ և իցէ նա՛ , ո՛չ կա
րասցէ զերծանել ՚ի դատաստանէն
Ա̄յ : Այլ դու միշտ առաջի աչաց
քոց զԱ̄ծ , և մի՛ կամիր խստանալ
բանիւք վիճաբանօք : Իսկ եթէ
տեսանիցես զքեզ ներկայապես՝ ըն
կճեցեալ , և վրդովեցեալ յայնս ,
նորա ո՛չ արդիւնաւորեիր , մի՛ զայ
րանայցես , և մի՛ անհամբերութ̄ք
քով նուաղեցուցանիցես զպսակս
քո : Այլ մանաւանդ ակնարկեա՛
յիս ՚ի յերկինս , որ կարօղ եմ զերծու
ցանել զքեզ ՚ի բնաւից խռովութ̄ց
և զրպարտութ̄ց : և հատուցանել
իւրաքանչիւրում ումեք ըստ գոր
ծոց նոցա :

Գլուխ.

Գլուխ. Երեսուն և եօթն երորդ։

Յաղագս դատի և ամբողջի յանձնա
ռութէ անձին առ տծ, զի
ստանալոյ զազատու
Թի սրտի ։

1. Որդեակ՝, Թող զքեզ. և գտանիցես զիս: կաց առանց ընտրութէ, և Թարց ընաւ՜ից յատկութէց, և շահեսցիս զիս ։ Քան զի յաւ՜ելցի քեզ իսկոյն առատագոյն շնորհ, մինչ յանձնիցես զքեզ առ տծ, առանց ստրջանալոյ ։

2. Տ՜ր իմ, որքանիցս յանձնեցից զիս քեզ, և ուր՜ս Թողիցզիս։

3. Միշտ, և յա՜մ ժամու։

որքան

որքան ըն փոքունս, այնքան ըն մե-
ծամեծս; Ոչինչ առնում 'ի քէայ,
այլ ընձենաւ̂ս զքեզ մերկացեալ կա-
միմ գտանել : Ապա թէ ոչ, որ-
պէս՝ կարասցես գոլ իմ, և ես քո,
զի եթէ 'ի քէնաւ̂իդ առանձնակա-
նաց քոյոց համճութեց 'ինքրուստ,
և յարտաքուստ ոչ մերկանայցես :
Աղրդ՝ որքան վաղվաղակէս՝ զայս
առնիցես, այնքան բարեգունա-
պէս ունիցիս զքեզ: Եւ որքան լիա-
պէս՝ և պարզապէս՝, այնքան ինձ
հաճոյասցիս, և առաւ̂ել շահեսցիս:

4. Ոմանք զինքեանս յանձ-
նեն առ̄ծ, բայց հանդերձ իւիք
բացառութե̄ : Քան զի ոչ լիա-
պէս՝ յուսան յ̄ծ, վ̄ որոյ զին
քեանս ինքեանց նախատեսանելոյ
բաւ̂ականս կարծեն; Իսկ ոմանք

թէ

Թէպէտ 'ի սկզբան բոլորովիմբ զինս քեանս վերընծայեն Տ̃ր : Սակայն յետոյ բախեցեալք 'ի փորձութեանց, դառնան վերստին առ առաջինսն, վասն որոյ հազի՛ւ երբէք յառաջանան 'ի զօրութիւն : Եւ յայի միք սրտի մաքրոյ զճշմարիտ ազատութիւն, եւ վայելչի ընտանեկութեան իմոյ զշնորհն, ոչ երբէք վերաշօշափեն, եթէ ոչ նախ ամբողջապէս՝ յանձնիցեն ինձ զինքեանս, եւ հանապազորդապէս՝ վերընծայիցեն : Քան զի թարց սմա, ո՛չ կայանայ, եւ ո՛չ կայասցի զմայլողական միաւորութիւն :

5, Բազմիցս տասցի քեզ, եւ այժմ զնոյնն կրկնեմ: Թողինձ զքեզ, եւ յանձնեա՛ ինձ զքեզ, եւ զմայլեսցիս մեծաւ խաղաղութեամբ ներքնայնով :

նով ; Սէուր բոլոր զքեզ, փոխա_
նակ բոլորին : Մի՛ ինչ արտասուա
հանջիցես, և մի՛ ինչ վերակրկնի_
ցես : Կա՛ց մաքրապէս՝ և Թարց
յողդողդութե՛ ՚նոյս, և գտցես զիս:
և եղիցիս ազատ սրտիւ, և խաւ՛ արք
ոչ պաշարեսցեն զքեզ : Տանա՛ տա
կաւին առ այն, մաղթեա՛, և բաղ
ձա՛, զի կարիցես մերկանալ ՚ի քնա
՛ւից յատկութեէց, և մերկապէս՝
հետևիլ յիսուսի մերկի : Մեռա_
նիլ քեզ, և ինձ մշտնջենապէս՝ կեն
դանանալ: Եւ յայնժամ նու՛ա_
զեսցին ընաւք ցնորմունք ընդու
նայնք, վրդովմունք անիրաւք, և
հոգք ա՛ւելորդականք : Յայնժամ
և ս հեռասցի ՚ի քէն երկիւղն ան
բարեխառն, և մեռցի ՚ի քեզ սէրն
անկարգա՛ւոր :

Գլուխ.

## Գլուխ. Երեսուն և ութն երորդ:

### Յաղագս բարւոյ կառավարութե՛ ՚ի իրս արտաքինս, և յա- պաւինման առ Ած ՚ի կասկածանս:

I. Որդեակ՝, առայն սէր ունակալեալ՝ ձգտիլ պարտիս, զի յամենայնում տեղւոջ և ներգործութե, և յամենայնում արտաքսականում պարապման իցես ներքսապէս՝ ազատ, և ՚ի քեզ ինքեան կարող: Եղիցին բնաւք ՚ի ներքոյ քո, և դու ո՛չ ՚ի ներքոյ նոցա: որպ̄ զի իցես առնից քոց տր̄, և ուղղիչ: Ո՛չ ծառայ, և ո՛չ գնո

ւածոյ,

ւածոյ, այլ յաւէտ ազատ, և ճշ-
մարիտ էբրայեցի : Ժառանգորդ-
վիճակի և ազատութե որդւոցն այ:
որք կան 'ի վր ներկայականաց, և
նշմարեն զմշտնջենաւորս : որք ա-
նցաւորս ձախիւ ակամբ, և առ
երկնայինս աջով նկատեն: զորս կեն-
ցաղականք ո՛չ քարշեն յինքեանս առ
'ի ներյենուլ, այլ մանաւանդ ին-
քեանք քարշեն զնոսա առ 'ի բարե-
պէս 'ի նկրտականել : ըստորում
կարգաւորեցեալք են յայ, և սահ-
մանեցեալք 'ի վեհագունէ ճարտա-
րապետէ, որ զոչինչ եթող անկար-
գաւոր 'ի ստեղծուածս իւրս :

2. Իսկ եթէ ես ըն համայ-
նս դիպուածս կայցես հաստա-
տուն, և ո՛չ արտաքնով աչերևոյ
Թիւ կամ ակամբ մարմնականաւ

նշմարիցես զտեսեցեալս կամ զլսե-
ցեալս, այլ յաղագս իւրաքանչիւ-
րոյ ուրուք պատճառի մտանիցես
առժամայն ընդ Սօղոմոնի ՚ի տա-
ղաւարն առ ՚ի խորատիլ ՚ի տ̃նէ լուի-
ցես մերթ զա̃ծայինն պատասխա-
նին, և դարձցիս ներկրթեցեալ
զիրաց բազմաց զներկայից և զա-
պառնեաց: Քան զի միշտ Սօղոմոն
ունեաց զվերադիմութն առ տաղա-
ւարն, սակս տարակուսութեց և
խնդրոց լուծանելեաց: Փութա-
ցաւ ևս ՚ի յօգնութ̃իս աղօթից,
սակս կասկածանաց, և ամբաշ-
տութեց մարդկան ՚ի բաց բառ-
նալեաց: Աղ յապէս՝ և դու ձեպել
պարտիս առ ա̃ծայինն խորհրդա-
ծուն քոյոյ սրտի, ստէպ՝ մաղթե-
լով ՚ի նմանէ զօժանդակութ̃ի: Զի

Կ̃ն

վ՟ս այնորիկ Յեսու, և որչափ Իսրայելի խաբեցան 'ի Գաբաւ՟ոնացւ՟ոց : Քան զի նախապէս՝ ոչ կամեցան զբերան ա՟ն հարցանել : Այլ կարեայէն՝ հաւ՟ատալով քաղցերց նոցին բանից, պատրողական առաքինութե՟ նոցին, եղեն նշաւ՟ակեցեալք :

## Գլուխ. Երեսուն և հինգ երորդ :

### Թէ ոչ իցէ ապատ առն գոլ վաղ վաղուտ 'ի յաւուծելիս :

1. Որդեակ, յանձնեա՛ ինձ միշտ զպատաճառու- քո, և ես բարեայէն՝ տրամադրեցից զնա 'ի ժամանակի իւրում ; Սպասեա՛

կարգաւորութեան իմում, եւ զգայ-
ցես անտուստ զաջողութիւն :

2. ԱՐԴ իմ յոյժ կամաւո-
րապէս՝ յանձնեմ քեզ զբնաւս ; զի
ոչինչ պտղաբերիլ կարեն խոր-
հուրդք իմք : Եւ վաշթէ ո՛չ այն
քան առ յենուլ ի դիպուածոց հան-
դերձելոց, այլ զիս քում բարեհա-
ճութեան թարց որոնման վերջն
ծայրի :

3. Որդեա՛կ՝, բազմիցս ոք
զիր իմն ուժգնապէս՝ շարժէ, քան
թէ բաղձայ ; եւ մինչ առ այն ժամա-
նէ, սկսանի ընմանէ այլապէս՝ ըզ-
գալ : Քան զի իղձք նորին շուրջ ըզ
նովաւ ո՛չ են մնայունք, այլ մա-
նաւանդ նեղդրդոցք 'ի միոյն առ
միւսն : Ո՛չ է ուրեմն փոքրա-
գունեղ իմն, եթէ ոք զինքն եւս

ըն փոքրագունեղս Թողուցու :

4. Ճշմարիտ արդիւնաւո-րութի առնէ, ուրացումն իւրոյ անձին : Քան զի որ ուրանայ զինքն, է՛ ազատ յոյժ և ապահով : Բայց վասն զի հնացեալ Թշնամին, հակառակն ընաւէից բարեաց, ո՛չ դադարի, այլ 'ի տուընջեան և 'ի գիշերի հնարէ՛ զծանունս դաւաճանութիս, զի փարթա՛ 'ի յորոգայթս խափէութէ գահավիժել կարիցէ զմնզգուշս : Ուստի ասէ տէրն մեր, հսկեցէք և աղօթեցէք, զի մի մտանիցէք 'ի փորձութի :

## Գլուխ. Քառասուն երորդ ։

### Թէ մարդ յինքենէ զոչինչ բարւոյ ունիցի, եւ թէ առ ոչինչ պարծել կարիցէ ։

1. Տէր իմ զինչ է մարդ, զի յիշիցես զնա, կամ որդի մարդոյ, զի այց առնիցես նմա ։ Քան զի զինչ արդիւնաւորեցաւ մարդ, զի տայիր նմա զքոյդ շնորհ ։ Եւ հաւաստիկ ես Տէր իմ, զուամէ՞ կարեմ գանգատել, եթէ զիս 'ի բաց ընկեցես, կամ առ ի՛նչ ըստ իրաւանց նկրտել, եթէ զոր խնդրեմս ոչ առնիցես ։ Ուրեմն հաւաստապէս' խորհել կարեմ, եւ ասել; Տէր իմ,

նմ, ո՛չ ինչեմ, զոչինչ կարեմ, և
զոչինչ բարւոյ ունիմ ես յինէն,
այլ յամենայնում նուաղիմ, և
ձգտիմ միշտ առ ոչինչ: Եւ եթէ
ո՛չ ՚ի քէն նպաստաւորիցիմ, և ներ
քսապէս՝ ներհմտանայցեմ, լինե-
լոց եմ բոլորովիմբ գաղջ, և լքա-
նելոց:

2. Տէրդ դու տէր իմ միշտնոյն
ինքնես, և միշտ բարի, արդար,
և սբ, յարամնաս ՚ի յաւիտեան;
Բարեպէս, արդարապէս, և սրբա
պէս՝ ներգործելով և տրամադրե-
լով զամ ըստ քում իմաստութե:
Բայց ես որ ՚ի նուաղութն մանա-
ւանդ քան թէ ՚ի յառաջադիմու-
թին հակամիտեմ: Ո՛չ եմ միշտ
ըն միում կացութե յարամնայուն;
Քան զի եօթն ժամանակք փոփո-

խնձն ի վ̅ր̅ իմ ։ Սակայն եթէ քեզ հաճոյ թուիցի, զի կառկառիցես առ իս զբազում քո հզօր, նախոյն բարեգործութեան ; զի դու միայն թարց ումեք մ̅դ̅կայնոյ օժանդակութէ կարես ինձ օգնել ; Եւ այն քան կազդուրել զիս , մինչ զի երես իմ ոչ դարձցի միւսանգամ յիւս տարբերս, այլ առ քեզ միայն վերափոխիցի սիրտ իմ , եւ ՚ի քեզ յարահանգիցէ ։

3. Ուսայի թէ բարեկէս՝ զի առնի զա̅մ̅ մխիթարութե մարդկան ՚ի բաց հերքել , յաղագս առաւանագոյն ջերմեռանդութէ , կամ յաղագս հարկաւորութէ , զի ստիպիմ խնդրել զքեզ , եւ զի ոչ ՚ի մարդկանէ կարէ սփոփել զիս ։ Յայնժամ մարթէր ինձ ըստ իրա-

ւանց

ւանց յուսալ 'ի շնորհս քոյս, և հը֊
ճուել սակս պարգևի նորոյ մխի֊
թարութե:

4. Արդ՝ գոհանամ զքեն, յորմէ յառաջանայ բոլորն, որքա֊նիցս՝ բարեպէս՝ ինձ յաջողի: Իսկ ես եմ ունայնութի, և ո՛չ ինչ առա֊ջի քոյ, այր անկայուն, և անհաս֊տատ: Աւ ինչ ուրեմն պարծիլ կարեմ, կամ զմէ բաղձամ մեծա֊համբաւե՞լ; Ո՞չ ապաքէն յոչնչէ եմ որ է ունայնապունենեղ իմն: Եւ ի֊րաւի, քանզի է հնանիր փառաւո֊րութի, և մախից ժամանաւորութի և մեծագունեղ ընդունայնութի: զի զրկէ զիս 'ի ճշմարտէ փառաւոր֊մանէ, և մերկացուցանէ յերկնայ֊նոյ շնորհէ: Քանզի մինչ ոք հա֊ճոյանայ ինքեան, անհաճոյանայ

քեզ,

քեզ, եւ մինչ բաղձայ գովութեանց մարդկայնոց, զերկնի 'ի զօրութեանց ճշմարտից:

5. Է՛ ուրեմն ճշմարիտ փառ, եւ ցնծութի մէ, փառաւո՛րիլն 'ի քեզ, եւ ոչ 'ի յինքեան; Խնդալն յանուն քո, եւ ո՛չ 'ի զօրութիւն յատուկս: եւ յլ եւ ո՛չ բերկրիլն 'ի ստեղծո՛ւածում ումեք, եթէ ո՛չ 'ի քոյ: Ուստի գովեսցի քոյդ անուն, եւ ո՛չ իմ; փառաւո՛րեսցի քոյդ գործ, եւ ոչ իմ: Օրհնեսցի անուն քո մէ, եւ ինձ ոչինչ առ ընծեռեսցի 'ի գովութեանց մարդկայնոց: Քան զի դու ես փառն իմ, դու ես ցնծութի սրտի իմոյ: Ի քեզ պարծեցայց զօրամ, իսկ վ̃ս իմ ոչինչ, եթէ ոչ 'ի տըկարութիւնս իմս պարծեցայց:

6. Խնդրեսցեն հրէայք ըզ

փառս

փառս ՚ի միմեանց, եւ եւս խնդրեցեք զայն, որ ՚ի միայնոյ ա͞յ է։ Ո՜չ զի ա͞մ փառս մարդկան, ա͞մ պատիւ կենցաղականն ; եւ ա͞մ վսեմութի͞ն աշխարհականն, բաղդատեցեալ յաւիտենականաց քոյոց փառաց, է՛ ընդունայնութի͞ն եւ յիմարութի͞ն ։ Ո՜վ ճշմարտութի͞ն իմ. Ո՜վ ողորմութի͞ն իմ, եւ ա͞ծ իմ ։ Ո՜վ երրորդութի͞ն մէ, քեզ գովութի͞ն, պատիւ, զօրութի͞ն, եւ փառք,

ընդ անհունս յաւի-
տենից յաւի-
տեանս ։

## Գլուխ. Քառասուն և մէկ երորդ։

### Յաղագս քամահման բնաւից պատուոց ժամանակաւորաց։

1. Որդեակ, մի՛ քեզ առ քարշիցես, եթէ տեսանիցես զայլս պատուիլ և բարձրանալ, և զքեզ քամահիլ, և խոնարհիլ։ Այլ ուղղեա՛ առ իս զսիրտ քո յերկինս, և ո՛չ տխրեցուսցէ զքեզ քամահումն մարդկան 'ի յերկրի։

2. Տէ՛ր ի մըն կուրութեան կեմք, և յընդունայնութեանց փութով պատրիմք; Ո՛չ եթէ ուղղապէս՝ 'ի յիս

ակնար

ակնարկիցեմ, ո՛չ երբէք գտանեմ զանիրաւութ̅ի ինչ յումեքէ ստեղծուածոյ առ իս եղեալ գոլ; Ուստի ո՛չ ըստ իրաւանց տրտնջամ ընդդէմ քեզ: Բայց քան զի յաճախապէս՝ և ծանրապէս մեղայ քեզ, վ̅ն որոյ արժանապէս՝ զինի ընդդէմ ինձ համայն ստեղծուած: Ինձ ուրեմն արդարապէս՝ վայելէ ամօթ և պարսաւանս: Իսկ քեզ, գովութ̅ի, պատիւ, և փառք: Եւ եթէ ո՛չ առ այն զիս նախապատրաստիցեմ, զի յօժարիցիմ հաճոյաբար՝ ՚ի բնաւից ստեղծուածոց քամահել, և թողունել, և իբր ոչինչ համար տեսանել, ո՛չ կարեմ ներքսապէս՝ խաղաղանալ, և հանդարտիլ, ո՛չ հոգևորապէս՝ լուսաւորիլ, և ո՛չ լիապէս՝ ընդ քեզ միաւորիլ:

Գլուխ.

## Գլուխ. քառասուն և երկու-երորդ ։

### Թէ խաղաղութիւն ոչ իցէ դնելի ՚ի մարդիկ ։

1. Որդեակ՝ եթէ դնիցես զխաղաղութ͞ի քո ընդ ումեք անձին, վ͞ս քոյոց զգացմանց, և կենցաղավարութ͞ե, եղիցես անկայուն, և պարուրեցեալ ։ Այլ թէ ունիցես զվերադիմումն առ մշտակենայ, և յարամնայ ճշմարտութ͞ին, ոչ տխրեցուսցէ զքեզ քոյդ բարեկամ, հեռացեալ ՚ի քէն կամ մեռեալ ։ Քան զի ՚ի յիս պարտի կայանալ սէր բարեկամին ; և վ͞ս իմ սիրելի է այն, որ

քեզ

քեզ բարւոք թուեցեալ է, եւ յա-
ւէտ նաղելի նայսմիկ կենցաղում:
Ուստի ոչինչ արժէ, եւ ոչ մնաս-
ցէ Թարց ինձ սիրելութի ինչ: Զայլ
եւ ոչ է ճշմարիտ եւ զուտ սիրելու-
թի, զոր ոչ շարադրուցեմ ես: Մ͞ի
որոյ այնպէս մեռանիլ պարտիս
նմանիւք զգածմամբք սիրելեաց
մարդկան, մինչ զի որքան 'ի քեզ է',
բաղձայցես գոլ առանց մարդկայ-
նոյ ընկերակցութե: Քանզի այն-
քան յաւէտ մերձենայ մարդ առ
ա͞ծ, որքան յամենից երկրայնոց
սփոփմանց 'ի բաց հեռանայ: Եւ
այնքան բարձրագունայէս առ
ա͞ծ սլանայ, որքան խոնարհագունա-
յէս 'ի յինքեան զիջանէ, եւ առա-
ւելագունայէս յինքենէ խոտի:

2. Իսկ որ ինքեան զբարութ͞ի

ինչ

ինչ առընձեռէ, զգալուստ շնոր
հացն ո՞յ առինքն արգելու։ Քան
զի շնորհ հոգւ՛ոյն սրբոյ, միշտ խն
դրէ զսիրտ խոնարհ: Ուստի եթէ
գիտէիր զքեզ կատարելապէս՝ ու
նայնացուցանել, և յամէ ստեղծ ա
կանէ սիրոյ դատարկել, յայնժամ
ձահէր ինձ հանդերձ մեծաւ շնոր
հիւ 'ի քեզ արտաբղխել: Ոչ մինչ
անկնարկես առ ստեղծուածս, նո
չ՛ազեցուցանես 'ի քեզ զանկնարկու
թի ստեղծողին:ու սիր ուրեմն յամ
ում յաղթել զքեզ սանկս ստեղծո
ղին, և յայնժամ կարասցես ժամա
նել առձանաչուլմս ածային: Ըլ̄
զի թէ և դոյն իցէ իրն սիրեցեալ
եթէ անկարգապէս՝ սիրեցի, և անկ
նարկիցի, յամեցուցանէ 'ի ծայրա
գունէ բարուոյն, և բծաւորէ:

Գլուխ.

## Գլուխ. քառասուն և երեք երորդ :

### Ընդդէմ ընդունայնի գիտութե կենցաղականի :

1. Որդեակ, մի՛ շարժեսցեն զքեզ գեղեցկութիւք և նրբութիւք ասացուածոց մարդկան : Քանզի արքայութին հմ ոչ կայանայ ՚ի բանս, այլ ՚ի զօրութիս: Ունկն դիր բանից իմոց, որք ըզսիրտս բորբոքեն, և զմիտս լուսաւորեն, ներածեն զխայթահարութիս, և զզանազանս ներքերեն միսիթարութիս : Ի կմ որոյ մի երբէք ընթեռնուցուս զբանս, զի հմտա

գոյն եւ իմաստնագոյն գոլ տեսանիցիս , այլ ջանա՛ զի մահացուցանիցես զմոլութիւնս : Օի քեզ առաւել եղիցի այս օգտակար , քան թէ ծանօթութիւն բազմաց դժուարիմացից խնդրոց :

2. Մինչ զբազումս ընթեռնուցուս եւ ճանաչիցես , պարտ է քեզ միշտ առ մի սկիզբն վերաչւել : Քան զի ես եմ որ ուսուցանեմ մարդկան զգիտութիւն , եւ շնորհեմ փոքրկանց զպարզագոյն իմացողութիւն , զոր ո՛չ ոք ՚ի մարդկանէ կարէ ուսուցանել , կի ընդ որում խօսիմ ես , իսկոյն իմաստնանայ , եւ հոգւով պտղաբերի : Վա՜յ այնոցիկ որք զբազումս վայելչալուրս խնդիրս ՚ի մարդկանէ պահանջեն , եւ զճանապարհէ ծառայելոյ ինձ

դոյն ևս հուպան : Ենկեայէ ժամա նակ, յորում երևեցայց վարդա_ պետս վարդապետաց քո̃, և ոտ̃ս հրեշտակաց, առ 'ի լսել զհամարս, այսինքն առ 'ի զննել իւրաքանչիւ րոց զխղճմտանս, և յայնժամ հան դերձ Ջահիւք որոնեցից զԵրուսա ղէմ, և յայտնեսցին գաղտնիք խա ւարին, լռեսցեն իսկ առարկու թի̃ք լեզուաց :

3. Ես եմ որ զմիտս խոնարհա ըն կիտում, բարձրացուցանեմ, զի զբազմադոյնս յաւ՛իտենականին ճշմարտութե̃ իմանայցէ զբանս, քանզայն որ ամօք տասամբ կրթի 'ի վարժարանս : Ես եմ որ ուսուցա նեմ առանց շշնչման բառից : ա_ ռանց շփոթման կարծեաց, առանց քամահման պատուոյ, և Թարց ըն

դիմամարտութե՟ առաքինութե՟ց:
Եսեմ որ ուսուցանեմ խոտել զեր
կրայինս, զզուել 'ի ներկայականաց,
խնդրել զմշտնջենաւորս, ատեանալ
զա՟ ժամանականս, փախչել 'ի պատուո
՟ւոց, ըմբերել պայթանկութե՟ց,
դնել 'ի յիս զյոյսն բոլոր, բաց յինէն
ոչ իմիք բաղձալ, եւ սիրել զիս եռան
դապէս՝ 'ի վեր քան զամենայն:

4. Քանզի ոմն սիրելով զիս
'ի սրտէ, ուսաւ զա՟ծայինս, եւ խօ
սեր զզարմանալիս; Աւ՟ զի առաւ
՟ել շահի ոք թողլով զա՟մ, քան
թէ ուսանելով զիրս նրբահայէ
ացս: Բայց ընդ ոմանց խօսիմ զի
րաց հասարակաց, եւ ընդ ոմանց զի
րաց տեսակաւորաց: Ոմանց նշա
նիւք եւ ձեւովք քաղցրաբար երեւիմ,
եւ ոմանց մեծաւ լուսով յայտնեմ

զխոր

զխորհուրդս ։ Եւ Թէպէտ մի է՛ ձայն դրոց, բայց ո՛չ զամենեսեան հանդիտապէս՝ ներանկերպէ ։ Զի ես եմ իմէջ նոցա, վարդապետս ճշմարտուԹէ, քննօղս սրտից, իմացօղս խորհրդոց, յառաջացուցիչս գործոց, և բաշխօղս իւրաքանչիւրոց, ըստ որում արժան դոյ ենԹադատեմ ։

## Գլուխ. Քառասուն և չորս երորդ ։

### Յաղագս ո՛չ քարշելոյ առ ինքն զիրս արտաքինս ։

1. Որդեակ՝ պարտ է քեզ դոլ ըն բազումս իեր տգէտ, և համարիլ զքեզ իբր մեռեալ իմէ

երկրի , որում ոչ թէ բոլոր աշխարհ խաչեցեալիցէ : Քանզի պիտոյէ քեզ զբազմօք խլիւ ունկամբ զանցանել, և խորհիլ մանաւանդ զայնցանէ , որք խաղաղութեան քում պատկանին : Զի օգտակարագոյն է դարձուցանել զաչս յիրաց անհաճոյից , և թողուլ իւրաքանչիւրում ումեք զիւրն դատողութի , քան թէ զխօսս վիճողականս՝ ի կիր արկանել : Եթէ կացցես բարւոք ընդ այ , և՝ ի դատաստանն նորին առնկատիցես, դիւրաւես՝ յաղթահարեցեալ զքեզ գտանիցես :

2. Ո՞վ տր̄ իմ , մինչև յո՛ ժամանեցաք ; աՂհաւ՛ ասին՝ ողբացեալ լինի վնասն կենդանական : Զի վաղորդ օգտի աշխատիմք , և ընթանամք, և զառուժուն հոգեկան՝ ի մո

ռա

ուայուծս արկանեմք, և հաշիւ եր
բեք ՚ի միտ ածեմք: Եւ զուայն որ
դոյն ինչ, կամ ոչ ինչ օգուտ զգու
շանամք, և զայնու որ ծայրագու
նապէս հարկաւորէ, զանց առ
նեմք խոտունկանաբար: Քան զի
ամ մարդ առ արտաքինս տարա_
միտէ, և եթէ ոչ փաղփաղանկն
ապաշաւ իցէ, կամաւո_
րապէս ՚ի յարտաքինս
անկեալ կայ
ցէ:

## Գլուխ. քառասուն և հինգ երորդ :

### Թէ ոչ է հաւատալի ամենեցուն : Եւ յաղագս դիւրնոյ սահեցման բանից :

I. Տուր ինձ օգնութիւն տր̅ իմ՚ ի նեղութեան, զի ընդունայն է կեցութիւն մարդոյ : Քան զի ուր քանիցս ոչ գտի յայնմիկ զհաւատարմութիւն, նորուն զնոյնն ունել զիս վարկանէի : Եւ որքանիցս գտի յայնմիկ զնոյնն, նորուն սակաւ գուշակեա՝ նախադիտեցի : Ընդունայն է ուրեմն դնել զյոյս իւր ի մարդս ; Իսկ կեցութիւն արդարոց

նոց 'ի քեզ ա̄ծ իմ: լե՛ր բարեբանե-
ցեալ տ̄ր իմ և ա̄ծ իմ ամենայնում
որ պատահին մեզ: Ոի տկարք եմք,
և անկայունք, և վաղվաղակի պատ-
րիմք և փոփոխիմք:

2, Ո՞վ է մարդ, որ այնքան
զգուշացեալ և շրջահայեցաբար յա-
մենայնում զինքն պահպանել մար-
թիցի, զի երբեմն 'ի խաբէութ̄ի
ինչ, կամ 'ի տարակուսանս ինչ ոչ ան-
կանիցի: Այլ որ 'ի քեզ ապաւինի
տ̄ր իմ, և մաքրութ̄բ սրտի խնդրէ
զքեզ, ոչ այնքան դիւրապէս սա-
հի: Եւ եթէ անկանիցի 'ի նեղու-
թի ինչ, նորում իւիւիք և իցէ պա-
րուրեցեալ, վաղվաղակի քև զեր-
ծանի, և քև սփոփի: Զի դու ոչ
թողուս զյուսացեալս 'ի քեզ մինչև
իսպառ: Եւ թէպէտ հազիւ գտա-

նի

նի բարեկամ ոք, զի ըն բնաւս տառապանս իւրոյ բարեկամակցին յարատեւիցէ, բայց դու տր̅ իմ, դու միայն ես հաւատարմագունեղ ըն բնաւս: Եւ բաց ՚ի քէն, ո՛չ գոյ այլոք քեզ հանգոյն:

3. Ո՛Հ ԹԷ ո՞րպէս իմաստնացաւ հոգին այն մ̅ք, որ ասաց՝ Հաստատեցեալէ միտ իմ, և ՚ի քս̅ հիմնեցեալ; աղրդ՝ ԵԹԷ և ինձ այսպէս՝ հանդերձիւր, ո՛չ այնքան դիւրանի՝ վրդովէր զիս երկիւղ մարդկային, և ո՛չ շարժէին զիս սլաք մունք բանից: Եւ ո՞վէ որ զա̅մ նախատեսանիցէ, կամ ո՞վէ որ յամենից ապառնեաց չարեաց նախազգուշանալ բաւիցէ, եԹէ ևս զնախատեսեցեալս բազմիցս եղծիցեն: Եւ զինչիցեն ո՛չ նախատեսեցեալք,

ծղնալք, եթէ ոչ այնոք որք ծանրա-
պէս՝ զմեզ հարուածեն: ԶՂ յլ արդ՝
ընդէր ինձ ողորմելոյս բարեպէս՝
ո՛չ նախատեսի; և զմէ այնքան դժու-
րաբար հաճոյացի այլոց: Եւ
քանզի եմք մարդիկ, և ո՛չ այլ ինչ,
եթէ ո՛չ բեկանելիք մարդիկ:
Թէև ՚ի բազմաց համարիցիմք հրեշ-
տակք և առաքինիցիմք: ԶՂրդ՝ ում
հաճոյացից տ͞ր իմ, եթէ ո՛չ քեզ:
Զի ճշմարտութ͞ի ես, որ ո՛չ խա-
բես, և ո՛չ խաբիլ կարես, և հակա
դարձեալ: Իսկ ա͞մ մարդ է՝ սուտ,
անհաստատ, անկայուն, և ստահա-
կան, մանաւանդ ՚ի բանս, մինչ զի
հազիւ երբէք հաւատալ պարտի
ցէ այնմիկ, որ առ երեսս ուղիղ
տեսանի:

4. Ո՜ Թէ որպէս խոհեմաբար՝

նա

նախազդեցեր մեզ, զգուշանալ ՚ի մարդկանէ, բայց քանզի թշնամիք առն ընտանիք իւր, վ̃ն որոյ ո՛չ է հաւատալի եթէ ոք ասիցէ: Ահաւասիկ է, կամ ահաւանիկ: Հմտացեալ եմ վնասու իմում, և երանի լինէր ինձ այս թէ ՚ի մեծագոյն զգուշութ̃ի, և ո՛չ ՚ի յիմարութ̃ի: Ասաց ինձ ոմն զգուշ լեր, զգուշ լե՛ր, և պահեա՛ զբանս թագուցեալ, ինքն ո՛չ կարաց լռել զայն, զոր յինէն լուիլ խնդրեաց, այլ վաղվաղակի՝ մատնեաց զիս և զինքն, և գնաց: Արդ՝ յայսպիսեաց առասպելեաց, և անզգուշից պահպանեա՛ զիս Տ̃ր, զի մի՛ անկանիցիմ ՚ի ձեռս նոցին: և մի՛ երբէք այսպիսեօք անցանորիցիմ: Զբան ճշմարիտ և կայուն տուր ՚ի բերան իմ: Եւ զլեզու նեն

գա

ւոր՚ ինչաց արած յինէն : Ոչ որում ո՛չ կարեմ հանդուրժել , այնմանէ զզուշանալ պարտիմ :

Ե. ՈՒ Թէ որքան բարի է և խաղաղարար լուելն զայլոց , և ո՛չ հաւատալն անտարբերաբար ամենեցուն , ո՛չ բարբառոյն աւելորդաբար զիրաց դիւրադունից , և վերայայտնելն զինքն սակաւուց միայն : Խնդրելն միշտ զքեզ ներնկատօղ սրտից , և ո՛չ պարաւէրելն յա՛մէ հողմոյ բանից , այլ բաղձալն կատարել զա՛մ ինչ ներքին և արտաքին ըստ հաճութե քոյոց կամաց : ՈՒ Թէ որքան ապահովագոյն է սակս պահպանութե երկնային շնորհի, փախչելն յաւերևութե մարդկան , և ո՛չ տենչալն այնոցիկ, որք առ արտաքս զզարմա

ցումն

ցումն իմն ընծայել Թո՛ւյն : Եւ յլ
հետեւ իւն բոլորիւ հանճարով այնո
ցիկ, որք տան ղղսպումն վարուց
եւ զջերմեռանդութի : Ո՞րքանից
ձխասեաց զօրութին յայտնեցեալ,
եւ յաւէտ գովեցեալ : Եւ որքա_
նից եղեւ օգտակար ըն լռոթե
պահեցեալն շնորհ, նայամիկ
բեկանաւէ որի կենցաղում,
որոյ բոլորն փորձու
թի է եպատե
բաղմ :

Գ. լուխ.

## Գլուխ. Քառասուն և վեցերորդ:

### Յաղագս ապաւինելութեան առ ա͞ծ, մինչ վերադիմէն սլաք մունք բանից:

1. Որդեակ՝ կաց հաստատապէս՝, և յուսա՛ 'ի յիս: Քանզի զինչ են բանք, եթէ ո՛չ լոկ խօսք, որք ընդ օդս ցնդին, և քարանց ո՛չինչ վնասեն: Եթէ պատճապա՛րտիցես, խորհեաց թէ ո՞րպէս զսպել զքեզ կարիցես: Եւ եթէ սիրտ քո ո՛չ ըստգտանիցէ զքեզ, մտածեա՛ յօժարաբար կրել զնոսա յաղագս ա͞յ: Եւ զի դոյն ինչէ, եթէ երբեմն համբերիցես այլոցն բանից,

նից, որով հետեւ ո՛չ կարես տանիլ դեռ եւս զանից կարծրագունից: Եւ ընդէ՞ր այնքան սակաւ ինչ Թափանցէ 'ի սիրտ քո, վ՞ն զի տակաւ՞ին մարմնաւ՞որ ես: Եւ առաւ՞ել քան զպատշաճն լսես մարդկան: Քան զի երկնչիս 'ի քամահանաց, Եւ սակս սխալանաց ո՛չ կամիս յանդիմանիլ, խնդրես իսկ պատուերս պատճառանաց:

2. Բայց քար՞ոզ նկատեա՛ 'ի քեզ, եւ ճանաչեսցես, զի դեռ եւս 'ի քեզ կենդանի է աշխարհ, եւ ունանիր ցանկութի հաճոյանալոյ մարդկան: Քան զի մինչ փախչիս 'ի զիջմանէ, եւ 'ի պատկառմանէ սակս քոյոց պակասութեանց, ցուցանես իրաւ՞ի թէ ոչիցես ճշմարիտ խոնարհ: Եւ թէ ոչիցես ճշմարտա

պէս

պէս՝ մեռեալ աշխարհի, և ո՛չ ես աշխարհ քեզ խաչեցեալ իցէ: Բայց լուր բանից իմոց, և անփոյթ լեր զատան հաղարաց բանից մարդկան: Ա՜յն զի եթէ ոչ զբնաւս բանս կարելիս չարապէս՝ նկուղելոյ, ասէր ընդդէմ քեզ, զինչ վնասէին քեզ եթէ թոյլ տայիր նոցին անցանել, թաց համարելոյ զնոսա առաւել քան զշիւղ իմս: Մինթէ կարէին զհեր իմս՝ ի գլխոյ քումէ՝ ի բաց քարշել:

3. Բայց որ ոչ ունի զսիրտ յինքեան, և ոչ ունի զԱծ առաջի աչաց, դիւրաւ բաց շարժի՝ ի բանից պարսաւականաց: Իսկ որ առ իս է ինի՝ յիս, և ո՛չ բաղձայ կալ նաւանձնականի իւրում դատողութե, ժամանցէ առանց պարհուպ-

նաց մարդկայնոց ։ Քան զի եսեմ դատաւոր, և ճանաչօղ համայնից խորհրդոց ; Եւ գիտեմ թէ ո̂րպի սաբար իրն գործեցեալիցէ ։ Եւ ճանաչեմ զհայհոյիչս, և զհամբե րօղս ։ Յինէն ել բանս այս, և իմով թոյլտուութէ այս դիպեցաւ, կի յայտնիցին 'ի բազմաց սրտից խոր հուրդք ; Եւ զպատժապարտս, և զանմեղս դատեցից, զորս յառաջ իմով ծածկադատողութէ փոր ձել կամեցայ ։

4· Ակայութիք մարդկան բազմիցս պատրեն ։ Իսկ դատո_ ղութի իմ ճշմարիտէ, կայցէ, և ո̂չ կործանեսցի ։ Թագչի բազում անգամ, և սակաւուց առ իւրա_ քանչիւրս երևի ։ Սակայն ոչ եր բէք սխալէ՛, և ո̂չ սխալիլ կարէ ։

Թէ

Թէ եւ յաչս անխմաստից ոչ գոլ ու-
ղիղ տեսանիցի ։ Աղուհս ուրեմն դի-
մերն է նամենայնում դատողուԹե
եւ ոչէ յենլն յատկականն հաճոյու-
Թե ։ Քան զի արդարն ոչ աղմկի,
որինչ եւ յայս նմին դժպհիցի ; Եւ
եԹէ բանինչ ընդդէմ նմին արտա-
բերիցի, ոչ այնքան զխոյԹ առնէ ։
Այլ եւ ոչ հրճուէն ընդ վճայր, եԹէ
յայլոց բանաւորապէս՝ արտաքսա-
տիցի ։ Քան զի յուշածէ, Թէ ես
իցեմ, որ զննեմ զսիրտս, և զերիկա-
մունս ։ Եւ ոչ դատեմ ըստ դիմաց ;
եւ ըստ մարդկայնոյ առերեւուԹե ։
Քանզի բազմիցս առ այս խմս գտա-
նեն յանցաւորք, որք ըստ մարդ-
կայնոյ դատողուԹե երեւին զո-
վելիք ։

Ն. ՍՈՎՐ մծ, դատաւոր աբ-

դար, հզօր եւ երկայնամիտ, որ ճա
նաչես զմարդկան բեկանելութի,
եւ զվատթարութի, լեր կարողու
թի իմ, եւ բնաւ քաջալերութի իմ։
քանզի ոչ է ինձ բաւական խիղճ
մտաց իմոց։ Զի ճանաչես դու
զայն զորս ճանաչեմ ես։ Եւ վա
այսորիկ յամենայնում յանդիմա_
նութէ, պարտական եմ ես խոնար
հեցուցանել զիս, եւ հեզաբար ըմ
բերել։ Արդ՝ ներեա ինձ ով քա
ջիս իմ, եթէ երբեմն սոյնպէս ոչ
արարի։ Եւ շնորհեա ինձ վերստին
զձիր մեծի համբերութէ։ Քան
զի բարեգոյնէ ինձ ողորմութի քո
առ ի՝ ստանալ զներողու
թի, քան զարդարութի իմ կար
ծեցեալ, սակս Ջատագովութէ
թագուցելոյ խղճի մտաց։ Եւ եթէ

ոչինչ զինէն ըստ գիտիցեմ, ոչ վասն
այնորիկ արդարանալ կարեմ ։
Զի ՚ի հեռանալ քոյոյ ողորմութե̅
ոչ արդարանայ առաջի քո ամ̅
կենդանի ։

## Գլուխ: Քառասուն և եօթն երորդ ։

Թէ ամ̅ք ծանունք բառնալիք եցեն սակս կենին յաւի-տենականի ։

I. Որդեակ՛ մի՛ ընկճանի ցես զքեզ աշխատանօք զորս յանձն առեր վա̅ իմ ։ և մի՛ տտրանկի ցես զքեզնեղութիւնք մինչև ի սպառ ւՁյլ յա̅մուն դիպուածոյ կարո

ղաջուսցէ զքեզ խոստումն իմ և սփոփեսցէ ։ Քան զի բաւական եմ ես առ՚ի հատուցանել ՚ի վեր քան զա̃մ եղանակ և չափ ։ Ո՛չ աշխատեսցիս աստ ընդ երկար ժամանակ, և ո՛չ միշտ ծանրասցիս ցաւօք ; Ուստի համբերեա՛ սակաւինկմի, և տեսցես զչարեաց արագահասն վախճան ։ Քան զի եկեսցէ իմն ժամ, յորում դադարեսցի ա̃մ աշխատութի̃, և խռովութի̃ ։ զի ա̃մ ինչ որ անցանէ ընդ ժամանակի, դոյնինչէ և համառօտ ։

2. Ջրիա՛ զոր առնելոցես, և հաւատարմապէս աշխատասիրեա՛ յայգւոջ իմում։ Զի ես եղէց վարձ քո ; Ջրոդ՝ գրեա՛, ընթերցիր, երգեա՛, հեծեա՛, լռեա՛, աղօթեա՛, համբերեա՛ արիաբար հակառակաց ։

կաց ։ Քանզի արժանէ այսոցիկ ամենեցուն, և ևս մեծամեծաց պատերազմաց, կեանն աւ՛իտէնական ։ Եկեսցէ խաղաղութի յաւ՛ուր միում, որ է յայտնի տն, նորում ոչ եղիցի տիւ, և ոչ գիշեր, այլ լոյս մշտնջենաւ՛որ, անզրաւպայծառութի, հաստատուն խաղաղութի, և ապահով հանդստութի ։ Եւ յայնժամ ոչ ասասցես, Թէ ո՞ ազատեսցէ զիս 'ի մարմնոյ յայսմանէ մահկանացու ։ Եւ ոչ աղաղակեսցես, Թէ վա՜յ ինձ, զի ընդերկար եղև պանդխտութի իմ ։ Քանզի ընկճեսցի մահ, և եղիցի կեցութի աննուա՛ղելի, անձկութի ոչ իմն, վայելչութի երանական, և ընկերակցութի քաղցր և զու՛արճալի ։

3. Ո՞հ Թէ տեսանայէիր 'ի յերկինս զպսակս սրբոյ մշտնջենաւորս, և Թէ որքան այժմ հրճուեցին 'ի փառս, այնոքիկ, որք երբեմն քամահեալք էին աշխարհի այսմիկ, և անարժանք համարեէին կենին այնմիկ, արդարև խոնարհեցուցանէին զքեզ մինչև յերկիր, և բաղձայիր մանաւանդ հպատակիլ ամենեցուն, քան Թէ նախադոլ միում: Այլ և ո՛չ տենչայիր աւուրց խնդուԹէ այսորիկ կենցաղոյս, այլ մանաւանդ ցնծայիր վշտանկիլ յաղագս այ: Եւ պատուոյ ինչ համարէին 'ի մէջ մարդկան, մեծ իմն շահաւէտուԹն վարկանէին:

4. Ո՞հ Թէ այսոքիկ քեզ յուշ լինէին, և խորապակէս 'ի սիրտ քո Թափանցէին, զի ա՛րդ կարէիր երբեք

տրտմ

տրտմնջալ ։ Մ՛չապաքէն ընա՞ք աշ-
խատալիրք բառնալիք են սակս կե-
նին աւիտենականին ։ Քան զի ո՛չ է
դոյն ինչ կորուսանելն կամ շա-
հելն զարքայութիւն երկնից ։ Համ-
բա՛րձ ուրեմն զերես քո յերկինս ։
Զի ահա՛ւասիկ եմ , և ամք մեք եմ
ընդ իս , որք ընկենցաղում այսմիկ
կրեցին զմեծամեծս պատերազ-
մունս , այժմ ցնծան , այժմ մխի-
թարին, այժմ են ապահովք, այժմ
յարահանգչին, և անզրաւապես ընդ
իս յարքայութեան հօր իմոյ յա-
բասմայցեն ։

## Գլուխ. Քառասուն եւ ութ երորդ :

### Յաղագս աւուր յաւիտենականի, եւ անձկութեց այսորիկ կենցաղոյս :

I. Ո՜վ ամեներանեցեալ բնակութի քաղաքին վերնոյ : Ո՜ ամենապայծառ օր աւիտենականութե, զորոյշոք գիշեր մթացուցանել կարէ, զի վերհագոյն ճշմարտութին ՚ի քեզ միշտ ճառագայթէ : Ո՜ օր խնդութե յարակայի, միշտ աներկիւան, որոչ երբէք ըզ կացութի քո փոխարկես ՚ի հակառակն : Ո՜ թէ օրն այն ծագեալ էր

գլոյս

զլոյս իւր, և բնաւք կենցաղականք առեալէին զվախճան: Որ թէպէտ ծագի առ մեզ մշտնջենականաւ պայծառութբ առփայլեցեալ: Սակայն հեռապէս՝ 'ի ձեռն հայելւոյ միայն առ պանդխտեցեալս 'ի յերկրի:

2. Ճանաչեն երկնաքաղաքացիքն զնա, թէ որպէս խնդալից իցէ; հեծեն աքսորեցեալք որդիք Եւայի զսա, թէ որպէս դառն և ձանձրալի իցէ: Զի աւուրք այսորիկ կենցաղոյս փոքունք են, և չարք, լիք են ցաւովք և անձկութբք, ուր մարդիկ մեղօք բազմօք աղտեղանան, և որսանին 'ի յախտից բազմաց; բազմօք երկիւղիւք ճմլին, և բազմօք հոգովք տարաձկտին; բազմօք հետաքրքրութբք տա-

բացնդին, եւ բազմօք ունայնութեամբք պատաղին : բազմօք մոլորութեամբք շրջաբերին, եւ բազմօք աշխատանօք հաշին : 'ի փորձութեանց ծանրանան, 'ի հեշտութեանց մեղկանան, եւ 'ի կարօտութեան տագնապին :

3. Ո՜հ թէ ե՞րբ եղիցի վախճան այսոցիկ չարեաց, կամ ե՞րբ ազատեցայց յողորմելւոյ ծառայութեան ախտից : Ե՞րբ յիշեցից զքեզ միայն տէր իմ, կամ ե՞րբ ուրախացայց լիապէս 'ի քեզ : Ե՞րբ եղէց թարց ումեք արգելման ընծայմար տուն ազատութեան, կամ առանց ամենայնի ծանրութեան մտաց եւ մարմնոյ : Ե՞րբ եղիցի խաղաղութի հաստատուն, խաղաղութի անդրդուելի, եւ ապահով : Խաղաղութի 'ներքին եւ արտաքին : եւ խաղաղութի

ղութե̄ն յամենից կողմանց ամրա_
ցեալ: Ե՞րբ կայցից առ՚ի տեսանել
զքեզ ով բարի յս̄ ; Ե՞րբ յարանկա
տեցից զշնորհս արքայութե̄ քո:
Եւ ե՞րբ եղիցիս ինձ ա̄մ յամենայ
նում: Ո՞հ թէ երբ եղէց ընդքեզ
յարքայութե̄ քում, զոր պատրաս
տեցեր յա̂ւիտենից քոյոց սիրե_
լեաց: Զի մնացեալեմ աղքատ եւ
վտարանդի յերկրի թշնամականի,
նորում են պատերազմունք հանա
պազորդականք, եւ տարաբաստու
թիւք մեծամեծք:

4. Մխիթարեա՛ զպանդխտութի̄ իմ, եւ
զիջո՛ ըղձացուիմ, զի առքեզ հառաչէ
ա̄մ իղձիմ: Քանզի բեռն է ինձ ըն
նաւն, զոր՚ի մխիթարս իմ նու̂իրէ ինձ
աշխարհ: Ուստի ցանկի̄մ ամենեւին
քեւ զմայլիլ, բայց ո՛չ կարեմ առըմ
բռնել:

՚բռնել:Բաղձամ ներյենուլ երկնայ-
նոց, բայց ընկճեն զիս իրք ժամա-
նակաւորք, և ախտք ոչ մահացուց-
եալք: Մտօք քան զա̃մ իր ՚ի վեր
գոլ կամիմ, բայց մարմնով ակամայ
ենթ գոլ ստիպիմ: Եւ այսպէս՝
թշուառս ընդիս հակամարտիմ,
և ձանրացեալեմ ինձ ինքեան, մինչ
հոգի ՚ի վեր և մարմին ՚ի վայր գոլ
խնդրէ:

Ե. Ո՜հ Թէ զինչ կրեմ ՚ի ներ-
քուստ: Մինչ առձեռնեմ մտօք
զիրս երկնայինս, իսկոյն ամբոխք
մարմնականք ինձ առհանդիպին:
Վասնորոյ ա̃ծ իմ մի՛ հեռանար
յինէն, և մի՛ խոտորիր բարկութե̄
՚ի ծառայէ քումէ: փայլեա՛ զփայ-
լատակունս քոյս և ցրուեա՛ զնո-
սա: Արձակեա՛ զնետս քոյս և խռո-

վեա՛

զնա՛ զա̄մ երեւոյթս թշնամոյն ։ Վերաժողովեա՛ առ քեզ զմիտս ըզգայութիս, և մոռացիր ինձ զբնաւս իրս աշխարհականս ։ Տուր ինձ փութով ՚ի բաց մերժել և քամահել զցնորմունս մոլութեց ։ Հա՛ս ինձ ՚ի թիկունս ով ճշմարտութի աւ̂ի-տենական, զի մի՛ շարժիցէ զիս ունայնութի ինչ ։ Մատի՛ր առ իս ով երկնային քաղցրութի, և փախիցէ յերեսաց քոց ա̄մ անմաքրութի ։ Խնայեա՛ յիս, և ողորմութե քով ներեա՛, որքանիցս յաղօթելն իմ բաց ՚ի քէն, զայլմէ խոկամ ։ Քանզի խոստովանիմ իրաւ̂ի, թէ սովորեալ իցեմ յոյժ տարացնդապէս զիս ունել ։ Զի բազմիցս անդ ո՛չ եմ, ուր մարմնապէս՝ կամ, և զետեղիմ ։ Այլ յաւ̂էտ անդ, յո̀ բերիմ

՚ի խոր

՚ի խորհրդոց ։ Անդ եմ ես ուրէ խորհուրդիմ, ուր է՛ այն, զոր սիրեմն ։ Այն է ուրեմն որ հակոյն հանդիպի ինձ, որև բնականաբար բերկրեցուցանէ, կամ ՚ի սովորութ̃է հաճոյթուի ։

6. Ուստի դու ով ճշմարտութ̃ի յայտնապէս՝ ասացեր, թէ ուր գանձ ձեր է, անդ և սիրտ ձեր եղիցի ։ Զի եթէ սիրեմ զերկինս, յօժարապէս՝ զերկնայնոց խորհիմ ։ Եւ եթէ սիրեմ զաշխարհ, խնդակցիմ երջանկութ̃եց աշխարհի, և տրտմիմ սակս նորին ընդդիմադարձութ̃եց ։ Եթէ սիրեմ զմարմին, զորինչ մարմնոյն է բազմիցս երևակայեմ ։ Եւ եթէ սիրեմ զհոգի, զհոգևորաց խորհելն զուարճանամ ։ Քանզի զորինչ և սիրեմ,

զնո

զննողութեանց խօսիմ յօժարապէս, և լսեմ, իսկ և զպատկերս նոցին ածեմ ընդմիս ՚ի մտուն իմ: Բայց երանի մարդոյն այնմիկ, որ վասն քոյ բնաւէից ստեղծուածոց զբարեաւմայ շնորհէ, զբնութիւն ի բուռն ածէ, և զցանկութիւնս մարմնոյ իւրոյ ջերմեռանդութեամբ հոգւոյն նուաճէ: զի պարզեցեալ խղճիւ մտաց, զաղօթս մաքուրս քեզ վերընծայիցէ: և արժանի լինիցի գտանիլ ՚ի միջ հրեշտակայնոց խմբից, գոլով ներքսապէս՝ և արտաքսապէս՝ ՚ի բնաւէից երկրայնոց ՚իբաց մեկնեցեալ:

## Գլուխ. Քառասուն և ինն երորդ :

### Յաղագս փափաքման կենին աւ̂ի տենականի ; և Թէ որքանք իցեն բարիքն խոստացեալք պատերազմողաց :

1. Որդեակ՝, մինչ ՚ի քեզ զտռփումն աւ̂իտենականի երանութե ՚ի վերուստ զգաս հեղանիլ, և բաղձաս ելանել ՚ի սենեկէ քոյոյ մարմնոյ, զի զպայծառութի̄ իմ առանց փոփոխման ստուե̂ր համանկատել կարիցես ; Ընդարձակեա՛ զսիրտ քո, և ա̃միւ ըղձիւ

զմներջնչումն զայն որ վերընկալ ։
Եւ մատո զատուածադրոյն շնորհակա
լութիւն վերնոյն բարութե, որ ընդ
քեզ այսպէս՝ հաճի ներգործել ։
Գթածաբար այց առնել, ջեր
մապէս՝ զարթուցանել, և կարողա
պէս՝ նպաստել, զի մի յատկակա
նաւ քոյով ծանրութե սահիցիս
առ երկրայինս ։ Բայց իմն զի
ոչ ընդունելիս զնա քոյովդ-խոնկմամբ
և Ջանիւ, այլ միայնով արժանա
ւորութե վերնայնոյ շնորհի, և
ամծայնոյ վերանկատման ։ զի ՚ի զօ
րութիւն և ՚ի խոնարհութիւն մեծա
մեծս յառաջանայցես, և առ հան
դերձէալն մարտ զքեզ նախապատ
րաստիցես, ՚ի յիս իսկ բոլորիւ քղ
ձիւ սրտի առյենուցուս, և ջերմե
ռանդիւ հաճոյութե ծառայել մու
թայցես ։

2. Որդեակ՝ բազմիցս հուրն բորբոքի, բայց առանց ծխոյ ո՛չ բա̅ձրանայ բոցն նորա: Այսպէս՝ բազումք են, որոց ցանկութի̅քն բորբոքին առերկնայինս, սակայն իղձք նոցին ո՛չ են ազատք ՚ի խորձութե̅ց մարմնականաց: Վ̅ն որոյ ո՛չ կարեն աշխատիլ բոլորովիմբ զտապես՝ վ̅ն փառացն ա̅յ: զոր այնքան բաղձանօք ՚ի նմանէ հայցեն: Այսպէս է՛ բազմիցս և քոյդ ցանկութի̅, զոր մէ վիպեցեր զոլ անտանելի: Քանզի ո՛չ է՛ զուտ ՚ի կատարեալ, որ սեփականաւ հեշտութե̅ է ներախտացեալ:

3. Հայցեա՛, ո՛չ զայն որքեղէ անէնչալի, այլ զայն, որ ինձ է ընդունելի: Զի եթէ ուղղապես՝ դատիցես առաւե̂լ յարգել պատ

տիւ

տիս զհրամաննիմ , քան զքոյդ ցան
կութի , և քան զէնաւեւ քոյս ցան
կալիս , և նմին հետևել : Քան զի
ծանուցեմ ես զքոյդ ցանկութի , և
լսեմ զհառաչանս քոյս յաճախս ,
զիարդ էն կամիս զոլ նաղատութե
փառաց որդւոցն այ : ԵՂ յժմ ըեր
կրեցուցանէ զքեզ տուէն աւ՛խտե
նականս , և երկնային հայրենի ,
որ է լի խնդութէ , բայց ոչ դե-
ռևս հասեալէ ժամն : զի զոյ տա
կաւ՛ մին այլ իմն ժամանակ , այսինքն
ժամանակ պատերազմի , ժամա-
նակ աշխատանաց և փորձութե :
Բաղձաս թերևս՝ մերալնանիլ մե-
հագունիւ բարեաւ , բայց ոչ կա
րես այժմ ստանալ զնոյնն : Ոն ես
ինքնեմ : Սպասեա՛ ինձ ուրեմն
մինչև եկեսցէ արքայութին իմ :

4. Փորձիլ պարտիս տանկա-
ճին, և ներկրթիլ 'ի յերկրի, նորում
տրեսցի քեզ երբեմն սփոփումն,
այլ ո՛չ շնորհեսցի քեզ առատ լիու-
թի: Քաջալերեա՛ց ուրեմն, և լեր
այր զօրութե, այնքան 'ի յառնե-
լիս, որքան 'ի կրելիս զհակառակսն
բնութե: Ուսանի պարտէ քեզ զգե-
նուլ զնոր մարդն, և փոխարկել
զքեզ 'ի յայլ իմն մարդ: Պարտէ
քեզ բազմիցս առնել զայն զոր ո՛չ
կամիս, և թողուլ զայն զոր կա-
միս: Յառաջանայ այն որ այլոց է
հաճոյ, իսկ որ քեզդ հաճոյ, ո՛չ ա-
ջողեսցի: լուիցի այն զոր այլք ա-
սեն, իսկ այն, զոր դու ասես առ
ո՛չինչ համարեսցի: Խնդրեսցեն
այլք, և առնուցուն, իսկ զոր դու
խնդրես, ո՛չ ընդունեսցես:

Եղի

Ե. Եղիցին այլք մեծահամ-
բաւեցեալք 'ի բերանս մարդկան,
իսկ զքէն լռեսցի ։ Այլոց այսինչ,
կամ այնինչ յանձնեսցի, իսկ դու-
առ ոչինչ օգտակար գոլ դատես-
ցիս ։ Այլոց այսօրինակ երբեմն բնու-
թ̄ի քո տխրեսցի ։ Եւ մեծ իմն է եթէ
լռաբար ըմբերիցես ։ Քանզի նայս-
պիսիս և 'ի բաղձումս սոցին նմանս,
հաւատարիմք տն̄ ծառայք սովո-
րեն փորձիլ, թէ ո̄րպիսաբար ու-
րանալ զինքեանս, և յա̄մում զիջա-
նիլ կարիցեն ։ Զի ոչ է այնպիսի
իմն, նորում որք այնքան մեռանե-
լոյ կարօտանայցէ, որքան ըն տե-
սանելում, և ըն կրելում զայնոսիկ,
որք կամաց քոց են հակառակք ։
Մանաւանդ մինչ հրամայի քեզ
առնել զայնպիսիս, որք անպատեհք

տեսանեն քեզ, և անօգուտք։ Եւ զի ո՛չ իշխես ընդդիմամարտիլ քաջ ձրապունեղի զօրութէ, գոլով՝ ի ներքոյ տէրութէ, վ՛ն որոյ կարծր ինչ թուի քեզ շրջիլ ըստանշմարմանս այլոյ ուրուք, և թողուլ զքոյդ սեփական զգացողութի։

6. Բայց խորհեաց որդեակ, զպտղոյ այսոցիկ աշխատանաց, զարագահատէ վախճանն սոցին, և զվարձուց յոյժ մեծամեծաց։ և ո՛չ ունիցիս անտուստ զծանրութի։ այլ գոնեա՛ քոյոյ համբերութէ զմխիթարութի։ Քան զի եւ յաղագս փոքու հաճութէ, զոր այժմ յօժարաբար ՚ի բաց ընկենուս, ունիցիս միշտ զհաճութի քոյերկինս։ Զի անդ գտցես զա՛մ զոր կամիս, և զա՛մ զոր բաղձալ կարես։ Անդ

ունի-

ունիցիս զիշխանութիւն բոլորից բա-
րեաց, Թարց երկնաւորի կորուսանե-
լոյ: Ընդ եղիցի կամ քո միշտ մի՛
ընդ իս: Ո՛չ տուժիցէ իմիք ար-
տաքնոյ, կամ առանձնականին:
Ընդ ո՛չ որ հակառակեսցի քեզ:
Ո՛չ որ տրտնջեսցէ զքէն: Ո՛չ որ
արգելուցու զքեզ: և ո՛չ ինչ ընդդի-
մասցի քեզ: Այլ բնաւք բաղձա-
լիք միահաղոյն եղիցին քեզ ներ-
կայք, և զբոլոր իղձ քո զովացու-
ցեն, և լուցուսցեն մինչև իսպառ:
Ընդ հատուցից զփառս փոխա-
նակ նախատանաց: Զհանդերձս
գովութեան փոխանակ տխրութեան:
Զգահոյս արքայութեան յաւի-
տեան, փոխանակ յետնոյն տեղ-
ւոյ: Ընդ երևեսցի պտուղ հնա-
զանդութեան; Խնդասցէ աշխա-
տութիւն

տութեան ապաշխարութեան ։ Եւ փառաւորապէս՝ պսակեսցի հպատակութեան խոնարհ ։

7. Այժմ ուրեմն խոնա՛րհապէս՝ լեր հպատակ 'ի ներքոյ ձեռաց ամենեցուն ։ Եւ մի՛ եղիցի քեզ փոյթ թէ ո՛ զայս ինչ ասաց, կամ հրամայեաց ։ Այլ մեծաւ ջանիւ հոգա՛, զի եթէ նախամեծար ոք, թէ մանկագոյն ոք, և թէ հաւասարակից ոք, խնդրիցէ ինչ 'ի քէն, կամ հրամայիցէ, զբոլորն փոխանակ բարւոյ ընդունիցիս, և միամտութեամբ փութայցես կատարել ։ Խնդրեսցէ ոմն զայս, և այլ ոմն զայն ։ Փառաւորեսցի ոք նայսմիկ, և այլոք նայնմիկ, և գովեսցի հազարիցս հազար անգամ ։ Բայց դու ո՛չ նայսմիկ, և ո՛չ նայնմիկ ։ Այլ 'ի յար

հա_

համարձակ քոյս, և՛ ի բարեհա_ ճութեն և՛ ի պատուի իմ միայն խնա դա՛: Այս երկոցն քեզ բաղձալի, զի Թէ կենօք, և Թէ մահուամբ, փառաւորեցի՛ ի քեզ միշտ Ա̃ծ:

## Գլուխ. Յիսներորդ:

### Թէ որպիսաբա՛ր լեցեալ ոք պարտի մատուցանել զինքն ՚ի_ ձեռս աստուծոյ:

1. Տ̃Ր Ա̃ծ և հայր Ս̃բ, լե՛ր այժմ և յաւիտեան բարեբանեցեալ, զի որպէս կամիս, այն պէս լինի, և զոր առնես, բարի է: Խնդասցէ՛ ՚ի քեզ ծառայ քո, ո՛չ յանձին, և ո՛չ յիր ինչ այլ: Զի

դու

դու ես միայն խնդութիւն ճշմարիտ, դու յոյս իմ, եւ պսակ պարծանաց, դու ցնծութիւն իմ եւ պատիւ իմ տէր: Զինչ ունի ծառայ քո զոր ո՛չ իցէ ընկալեալ 'ի քէն, թէպէտ եւ առանց արդեան: Քոյք են ամ՟ք զորս շնորհեցեր ինձ, եւ զորս արարեր ընդ իս: Քանզի տնանկ եւ վաստակաւոր եմ ես 'ի մանկութենէ իմմէ: զի տխրի հոգի իմ երբեմն մինչեւ յարտասուս, եւ երբեմն վրդովի յինքեան յաղագս ախտից յարուցելոց ի վերայ իմ:

2. Փափագեմ խաղաղականին խնդութեան, եւ ժտեմ զխաղաղութիւն որդւոց քոց, որք լուսով մխիթարութեան ի քէն սնուցանին: Արդ՝ եթէ շնորհիցես ինձ զխաղաղութիւն եւ հեղուցուս 'ի յիս զխնդութիւն քո,

լցցի հոգի ծառային քո օրհնաբա նութ̅ք, և ջերմեռանդացի ՚ի գո վութիս քոյս : Իսկ եթէ հեռա նայցես յինէն, ըստ որում բազ միցս առնես, ո՛չ կարասցէ ընթա նալ զճանապարհս պատուիրա նաց քոց : Այլ յաւէտ առ ի գեր ծել զկուրծ իւր, ծունկք նորին կո րանան : Զի ո՛չ եղիցի նմա որպէս երէկն և եռանդն, մինչ ճրագ քո մէ ճառագայթէր ի վ̅ր գլխոյ նորա: և ընդհովանեաւ Թևոց քոց նա խախնամութր ՚ի փորձութեց վերա խունեցելոց :

3. Հայր արդար, և միշտ գո վելի : Ահա հասեալ է ժամ, զի փորձիցի ծառայ քո : Հայր սիրե լի, արժանէ զի ծառայ քո ՚ի ժա մուս յայսմիկ կրիցէ ինչ վ̅ն քո :

Հայր

Հայր մշտնջենաւորդ · պատուելիդ
Անհաս ժամու, զոր յաւ̂իտենից նա-
խատեսեր գոլ հանդերձեալ, զի
զդոյն ինչ ժամանակ սորանկեցի
ախտաւորքս ծառայ քո, բայց կեցցէ
միշտ 'ի ներքս առ քեզ: Դոյն ինչ
քոտին վարկեցի, խոնարհեցի,
եւ նուաղեցի առաջի մարդկան,
'ի յաղթից եւ 'ի ցաւոց նուաճեցի,
զի վերստին ընդ քեզ ընդ արշա-
լոյս նորոյ ծագմանն յարիցէ: Եւ 'ի
յերկնային փառաւորեսցի: Հայր
որ դու այսպէս հրամայեցեր եւ
այսպէս կամեցար, եւ եղև այնպէս՝
ոմ̄ պատուիրեցեր:

4. Քանզի այսպէս շնորհ քում
բարեկամի, զի չարչարեցի եւ վշտան-
կեցի վ̄ն սիրոյ քո յաշխարհի այս-
միկ, որքանիցս, եւ յորոց դու հա-
ճեցիս:

ձիցիս ։ Վա՜ զի թարց խորհրդոյ քում, և նախատեսութեան, և թարց պատճառի ո՛չ ինչ լինի ի վ͞ր երկրի։ Արդ՝ բարի է ինձ տ͞ր, զի խոնարհեցուցեր զիս, ո͞պ զի ուսայց զարդարութիւնս քո, և ՚ի բաց ընկեցից զա͞մս զոռոզութիւնս և զինքնահաւանութիւնս ; Օգտակար է ինձ, զի ծածկեաց ամօթ զերեսս իմ, ո͞պ զի մանաւանդ զքեզ քան թէ զմարդիկ ՚ի մխիթարութ͞ի ինձ խնդրիցեմ։ Ուսայց և ես աստուստ զարհուրիլ ՚ի քումն անքննելոյ դատաստանէ, որ վշտանկես զարդարն ընդ ամբարշտի, բայց ո՛չ առանց պատեհութ͞ե, և արդարութ͞ե ։

Ե. Շնորհակալեմ զքեզ, զի ո՛չ ներեցեր չարեաց իմոց, այլ հարեր զիս գանիւք դառնագունիւք,

սև

սեւեռելով ՚ի յիս զցաւս, և յղելով առ իս զնեղութիւնս ներքինս և արտաքինս: Ո՛չ ոք է ՚ի բնաւից որք են ՚ի ներքոյ երկնից, որ կարիցէ մխիթարել զիս, եթէ ո՛չ դու Տէր Աստուած իմ, երկնաւո՛ր բժիշկ հոգեաց: որ հարկանես և բժշկես ստորածես ՚ի դժոխս և վերածես: Եղիցի խրատ քո ի վերայ իմ, և գաւազան քո ուսուսցէ զիս:

6. Ահաւասիկ հայր սիրելի ՚ի ձեռին քում եմ ես, և ՚ի ներքոյ գաւազանի ուղղութեան քո խոնարհեցուցանեմ զիս: Հա՛ր զթիկունս իմ և զպարանոց իմ, զի կորացուցանիցեմ զխեղաթիւրութիւն իմ ըստ հաճոյից քոց: Արա՛ զիս աշակերտ բարեպաշտօն, և խոնարհ, ըստ որում բարւոք սովորես առնել,

նել, զի շրջեցայց ըստ քում ա͞ծի
նշմարութ͞ե : Յանձնեմ քեզ զիս
և զիմայինս առ՚ի ուղղել, զի բարե-
գոյնէ աստ յանդիմանիլ, քան թէ
՚ի հանդերձելում : Դու գիտես
զբնաւս և զիւրաքանչիւրս, և ոչ
ինչ կարէ թաքչիլ ՚ի քէն ըն մարդ-
կային ըստ գիտութ͞ե : Յառաջ
քան թէ լինիցին, ճանաչին ՚ի քէն
հանդերձեալք : Եւ ոչ է քեզ պի-
տոյ, թէ այլք ուսուցանիցեն քեզ,
կամ ազդիցեն քեզ զայնոսիկ, որք
ներգործին ՚ի վ͞ր երկրի : Դու գի-
տես թէ զինչ իցէ ինձ պատկան
առ յառաջադիմութ͞ի իմ, և թէ
որքան պիտոյ իցէ ինձ վշտագնու-
թ͞ի, առ ՚ի մաքրել զկնճիռս մոլու-
թ͞եց : Արա ընդ իս զբարեհաճու-
թ͞ի քո կանխալի, և մի արհամար

հիցես զմեղսամած կեանն իմ, որ
ո՛չ ուժեք այնքան բարեպէս՝ եւ յա
յտնապէս՝ ծանօթէ, որքան քեզ
միայնում:

7. Տո՛ւր ինձ տ՟ր գիտել զայն
որ գիտելի է: Սիրել զայն, որսի
րելի է: Գովել զայն, որ քեզ ծայ
րագոյն հաճոյ է: Պատուել զայն
որ քեզ ազնուագոյն տեսանի: Եւ
պարսաւել զայն, որ աղտեղի է
յաչս քոյ: Մի՛ թողուցուս ինձ
ըստ տեսութե՟ աչաց արտաքնոց
դատել, եւ մի՛ ըստ լրոյ ականջաց
արանց անհմտից դատակնքել:
Այլ տուր ինձ դատողութե՟ ճշ
մարտիւ զերեւելեաց, եւ զհոգեկա
նաց տրամազննել, եւ՛ ի վերքան զա՟մ
ինչ, զկամս բարեհաճութե՟ քո
միշտ խնդրել:

8. Խաւարեալին բազմիցս 'ի դատելն, զգայութիւք մարդկան : Եւ խափին սիրօղք կենցաղոյս զերեւելիս միայն տեսելով : Զինչէ մարդ, կամ բարեգոյն քան զինչ, զի համարիցի մեծագոյն 'ի մարդկանէ : Ո՛չ չապայաքէն խափեփիայ ըզ խափեփիայ, անոտի զանոտի, կոյր զկոյր, և հիւանդ զհիւանդ պատրէ, մինչ զնա բարձրացուցանէ, կամ ընդ վայր գովաբանէ : Քանզի որքան է իւրաքանչ իւրոք յաչս քոյս, այնքան է, և ո՛չ առաւել : Ասաց խոնարհիկ Սէն Փրանչիսկոս :

Գլուխ. Յիսուն և մէկ երորդ:

Թէ 'ի գործս խոնարհս ներկայանալի է, մինչ նուաղիմք 'ի վեհ հագուանից:

1. Որդեակ՛, ոչ կարես կալ միշտ ջերմեռանդագունիւ ըղձիւ առաքինութեց, և ոչ կարես համապետեղիլ ըն բարձրագունում աստիճանի համանկատման: Այլ հարկ քեզ, զի երբեմն սակս սկզբնականի ապականութե առ ստորնագոյնս իջանիցես: և բարձցես զբեռն ապականացուի այսորիկ կենցաղոյս, թէև ակամայ, և ընդ ձանձրութե: Քան զի

ցոր

ցորքան ժամանակ զմահկանացուդ
այդ մարմին ի քեզ կրեսցես, զգաս
ցես զձանձրութի̃ն, և զծանրութի̃ն
սրտի: Պարտէ ուրեմն բազմիցս
՚ի մարմնի գոլով, սգալ զբեռն մար.
մնոյ: զի ո՛չ կարես անդադարա-
պէս ներյենուլ ՚ի հոգեկանս կրթու-
թիս, և յա̃ծայինս համանկատ
մունս:

I. Այժմ ուրեմն վայելուչէ
քեզ համադիմել առ խոնարհս,
և առ արտաքինս գործս, և սփոփել
զքեզ ՚ի յարուս բարիս: Ապասել հաս
տատնով յուսով իմում գալստեան
և վերնոյ այցելութե̃: Եւ համբե-
րաբար՝ տանել քում պանդխտու
թե̃, և կարծրութե̃ սրտի քում:
Մինչև վերստին այցարարից քեզ,
և ազատեցից զքեզ ՚ի բնաւ̂ից անձ

կութեց : Քան զի տաց քեզ մու_
ւանալ զաշխատանս , եւնեբընայ
նով հանդորթութէ զմայլիլ : Սփա
րածեցեց աւաջի քոյ զանդաստանս
զրոց սրբոց, պի լայնացելով սրտիւ
սկսանիցիս ընթանալ զճանա_
պարհս պատուիրանաց իմոց :
Եւ ասիցես : Ո՛չեն համարժա_
նիք չարչարանք այսորիկ ժամա_
նակի, հանդերձելոցն փա_
ռաց , որք յայտնես
ցին 'իմեզ :

## Գլուխ. Յիսուն և երկու երորդ։

### Թէ ո՛չ ոք համարեսցի զինքն արժանի մխիթարութե՛, այլ յաւէտ պատժապարտ գանից։

1. Տէ՛ր ո՛չ եմ արժանի քում մխիթարութե՛, և ո՛չ հոգեկանի իմիք այցելութե՛։ Ա՛ն որոյ արդարապէս՝ առնես ընդ իս, մինչ զիս զտնանկս և զանտէրունջս՝ ի բաց թողուս։ Քան զի թէև համ գոյն ծովու զարտասուս հեղուլ կարիցեմ, տակաւին քում մխիթարութե՛ ո՛չ եմ արժանի։ Ուստի ո՛չ իմիք արժանի եմ, եթէ ո՛չ

 ձաղու,

ձաղու , եւ պատժոյ , զի ծանրա_
պէս՝ բազմիցս վշտացուցի զքեզ
եւ ըն՛ բազում կարի յանցեա՛յ :
Ուրեմն ըստ ճշմարտի խոկման
բանի , եւ ո՛չ փոքրագունեղի իմիք
արժանի եմ մխիթարութեան : Բայց
դու բարեգութ եւ ողորմած ած ,
որ ո՛չ կամիս զկորուստ ստեղծո_
ւածոց քոց , առ ՚ի ցուցանել զմեծ_
ութիւն բարութեան քոյ յանօթս ո_
ղորմութեան , եւ առանց սեփակա
նի իմիք արդեան ; մխիթարես ըզ
ծառայ քո , ՚ի վեր քան զեղանակ
մարդկային : Քանզի քոյք մխի_
թութիւնք , ո՛չ են իբրեւ զառասպե_
լաբանութիւնս մարդկայինս :

2. Զինչ բարւոյ գործեցի
տէր իմ , զի շնորհիցես ինձ զմխի_
թարութիւն ինչ երկնային : Ես ո՛չ

ինչ

ինչ կերպիւ ենթադատեմ զիս , թէ զբարի ինչ գործեալիցեմ : այլ թէ միշտ ՚ի մոլութիւն յօժար լեալիցեմ, և ՚ի ճնշումն նոցին յոյլ եղեալ իցեմ : Եւ այս ճշմարիտ է , զի ոչ կարեմ ՚ի բաց ուրանալ : Քան զի եթէ բացատէի զնոյնն , ընդդիմամարտէիր դու ընդ իս , և ո՛չ ոք կար էր Ջատագովել զիս : Արդ՝ զինչ արդիւնաւորեցայ վասն մեղաց իմոց ; եթէ ո՛չ զդժոխս , և զհուրն աւիտենական : Ճշմարտութեամբ խոստովանիմ , զի արժանի եմ համայնից կատականաց , և քամահանաց : Եւ ո՛չ է վայել , թէ համայնիշիցիմ ՚ի մէջ քոյոց պաշտօնէից : Եւ թէ պէտ զայս դառն է ինձ լսել : Սակայն ընդդէմ ինձ ինքեան , սակս ճշմարտութեան յանդիմանեմ զմեղս

իմս ,

ենս, զի դիւրապէս՝ արդիւնաւո֊
րեցից զողորմութիւն քո առստանալ:

3. Զի՞նչ ասացից պատժա֊
պարտս, և լցեցեալս համայնիւնք
պատկառանօք : Զի ոչ ունիմ զէն
բան խօսելոյ զայլինչ բան, բայց
յայսմանէ : Մեղայ՝, տր̄ մեղայ՝ :
Ողորմեա՛ց ինձ, և ներեա՛ ինձ :
Թո՛յլ տուր սակաւ ինձ՝, զի ող֊
բացից զցաւ իմ, յառաջ քան թէ
երթայցեմ յերկիր խաւարային,
և ծածկեցեալ մգաւ մահու :
Զինչ այնքան՝ յաւէտ պահանջես
՚ի պատժապարտէ, և ՚ի թշուառա֊
ցելոյ իմեքէ մեղաւորէ, ո՛չ ապա֊
քէն, զի ապաշաւիցէ, և խոնարհե֊
ցի սակս յանցանաց իւրոց : Քան
զի ՚ի ճշմարտէ ապաշաւմանէ, և
՚ի խոնարհմանէ սրտի, ծնանի յոյս

Թողու

թողութ՟ե : համազգային աղմկե-
ցեալն ըստգիտութ՟ի ; մերյօրինին
կորուսեցեալն շնորհ : Պաշտպա-
նի մարդ յապառնւոյ բարկութ՟է :
և հանդիպին միմեանց փոփոխա-
կի՝ ընծ և ապաշխարողն հոգի՝ ի-
համբոյր սրբութ՟է :

4. Ապաշաւութ՟ս մեղա՛ւո-
րաց , քեզ պատարագ ընդունելի է
տր , որ առա՛ւել բուրէ զանուշա
հոտութ՟ի իւր առաջի քո , քան զզ
տաշխ և խունկն: Այս է օծանելին
այն ազնիւ , զոր ոտից քոյ սրբազա
նից ներհեղանիլ կամեցար : Զի զզ
սիրտ փղձկեալ և խոնարհ , ոչ եր
բէք արհամարհես : Քան զի այնէ
տեղի ապա՛ւինի յերեսաց բարկու-
թ՟է Թշնամոյն : Եւ անդ զայն և լու
՛անի , որինչ այլուստ քաղցի, և աղ
տեղանայ : Գլուխ.

## Գլուխ. Յիսուն և երեք երորդ :

### Թէ շնորհն Տ՟ր ոչ խառնի ընդ երկրասէրս :

1. Որդեակ՝ ազնիւ իմնէ շնորհն իմ, և ո՛չ կարէ տևել, ուր խառնիցի ընդ իրաց արտաքնոց, կամ մխիթարութ՟եց երկրայնոց : Պա՛րտէ քեզ ուրեմն 'ի բաց ձգել զբնաւս արգելմունս շնորհաց, եթէ բաղձաս զնոցին զեղումն վերընդունիլ : Խնդրեա՛ քեզ զառանձնութիւն, և բնակեա՛ միայնակ ընդ քեզ: և մի՛ յուզեր զառասպելաբանութիւն ուրուք : Այլ մանաւանդ հեղ առաջի Ա՟յ,

զմաղ

զմաղթանս քոյս ջերմեռանդս, զի պահիցես զմիտ քո խղճահար, եւ զ ըստգիտութի՟ն քո մաքուր : ւՉո ո՛չ ինչ վարկեա՛ զբոլոր աշխարհ : Եւ զկոչումն ա՟ծային ընտա՟ իջ ի բաց արտաքնոց նախադրեա՛ : Քանզի ո՛չ կարես պարապիլ՝ լյիս, եւ միանգամայն իրօք անցա՟ւ որօք զու՟ արձանալ : Պարտ է քեզ՝ ի ծանօթից եւ՝ ի սիրելեաց հեռանալ, եւ ՝ի բնաւից ժամանակականաց մխիթարութեց զմիտս դատարկել, ըստ որում աղերսէ ո՟ք առաքեալն Պետրոս, թէ համայնք հաւատարիմք քն՟ իբրեւ զնշդեհս եւ զպանդուխտս ունիցին զինքեանս յայս միկ աշխարհի :

2. Ո՟Ն թէ որքան համարձակութի՟ն եղիցի առն, որ մերձէ՝ ի մե

ռանիլ,

ւանիլ , զոր ո՛չ ուրուք իւրի իղձ ար
գելու յաշխարհի ։ Այլ զունէլն
այսպէս՝ զսիրտ իւր մեկնեցեալ յա
մենից իրաց , ո՛չ իմանայ տակա_
ւ՞ին տկարամիտ ոք , եւ ո՛չ շնչաւ՞որ
ոք ճանաչէ զներքնոյն մարդոյ զա_
զատութ̅ի ։ Բայց սակայն եթէ կա
միցի ոք լինիլ հոգեւոր , պարտի ու
րանալ զհեռաւ՞որս եւ զմերձաւորս ։
Եւ յոչումեքէ այնքան զգուշա_
նայցէ , որքան յինքենէ ։ Քան զի
եթէ զինքն կատարելապէս՝ յաղ
թահարիցէ , զմնացեալս դիւրա
ենթալծեսցէ ։ Օն կատարեալ յաղ
թութ̅ի է զինքենէ հրճուանակել ։
Վ̅ն զի որ զինքն հպատակեցեալ
ունի ինքեան , զի զգայութ̅ի բա_
նականութ̅ե իւրում , եւ բանակա_
նութ̅ի ըն բնաւս ինձ հնազանդի
ցի ,

ցի, նա ճշմարիտ յաղթող է ինքեան, և ամ՟ աշխարհի ։

3. Եթէ առայս ծայրութ՟ի վերամբառնալ տենչաս, պա՛րտէ քեզ քաջայէս՝ սկսանիլ, և զառապարն առ֊արմին դնել, զի խլիցես և հատա֊նիցես զծածուկս, և զանկարգս ներմիտմունս, ի քեզ, և առ՟մ մա֊խիզ, ևնիւթաւոր բարի ։ Զի յայսմանէ մոլութ՟է, որով ոք զանձն իւր կարի անկարգապէս՝ սիրէ, կա֊խի զոնեամ ընաւն որ յաղթահա֊րելի է արմատաբար ։ Զայսպիսի չարն եթէ յաղթահարիցեմք, և ստոր՟նկիցեմք, եղիցի խաղաղութ՟ի մեծ, և հանդարտութ՟ի յարաժամայ։ Բայց զի սակա՛ւ քեն, որք ինքեանց կատարելապէս՝ Ջանան մեռանիլ, կամ ձկտիլ արտաքոյ ինքեանց, վ՟

որոյ

որոյ միայն պարուրեցեալք՝ ՚յին
քեանս, և ոչ կարեն ՚ի վեր քան զին
քեանս վերանալ հոգւով: Իսկ որ
ազատապէս՝ ընդ Իս շրջել կամի,
հարկէ, զի զհամայնս մախիզս,
Եւ զանկարգս զգածմունս իւրս,
մեռուցանիցէ: Եւ ոչ ումեք ստեղ
ծուածոյ առանձնականաւ սիրով
տռփապէս՝ առյենուցու:

## Գլուխ. Յիսուն և չորս երորդ:

## Յաղագս զանազանից շարժմանց բնութեան և շնորհաց:

1\. Որդեակ՝ զգուշապէս՝ առդիտեա՛ զշարժմունս բնութեան և շնոր հաց: զի կարի՝ հակա ռակք

ռանկք են միմեանց եւնորէապէս շար-
ժին : Եւ հաստիւ ՚ի հոգւն որայց, եւ
՚ի ներքսապէս՝ լուսաւորեցելոց ա-
րանց տրամադրնին: Եւ զի ա̅մ որք
ախորժէ զբարին, եւ վերադիտէ ՚ի
բանս եւ ՚ի գործս իւրս ՚ի բարի ինչ,
վ̅ս որոյ բազումք են որք խաբին
ներքոյ պատրուակի բարւոյ:

2. Բնութիւն նենգաւորէ, եւ
զբազումս քարշէ առինքն, որսայ,
եւ պատրէ, իսկ շնորհն պարզապէս
շրջի, եւ խոտորի յամենից տեսա-
կաց չարեաց: ո՛չ դնէ առխափէ-
ութիս, եւ զա̅մ ինչ առնէ զտա-
պէս՝ յաղագս ա̅յ: Նորուն եւ էզէրա-
պէս՝ յարահանգչի:

3. Բնութիւն ակամայ մեռա-
նել կամի, ո՛չ խոնարհէ յաղթահա-
րել, ո՛չ ենթակայել, եւ ո՛չ ստորաւ

ծել: Իսկ շնորհն ջանայ սակս մա
հացուցման յատկականին: ընդդէ_
մանկայանայ զգայականութե: խն
դրէ հպատակել, ախորժէ յաղթա
հարել, և ո՛չ կամի զսեփական ազա
տութի իւր՚ինքն արկել: ցանկայ
լինել՚ինքերքոյ խրատուց: և ո՛չ բաղ
ձայ տիրել ումեք: այլ կեալ միշտ
՚ի ներքոյ կամացն այ, մնալ, և գոլ:
Եւ եւս վն այ ընծա՛յից ստեղծու՛ա
ծոց մարդկան, պատրաստ է, խո
նարհաբար հնազանդել:

4. Բնութիւն յաղագս իւրոյ
հեշտութեն ջանայ և հոգայ պշտհն
որ յայլուստ ինքեան յառաջա_
գայի: Իսկ շնորհն ո՛չ զայն որ օգ
տակար և հեշտալի է ինքեան, այլ
զայն որ բազմաց շահաւ՛ետէ յա
ւ՛էտ վերանկատէ:

5. Բնութիւն յօժարաբար, զպատիւս, և զմեծարանս վերընդունի ։ Իսկ շնորհն զամ պատիւ, և զփառս, հաւատարմաբար Այ առընծայէ ։

6. Բնութիւն երկնչի ՚ի պատկառանաց, և ՚ի քամահանաց ։ Իսկ շնորհն խնդայ վն անուանն յի զքամահանս կրել ։

7. Բնութիւն սիրէ զդատարկութի, և զհանգիստ մարմնական, իսկ շնորհն դատարկ գոլ ոչ կարէ ։ այլ յօժարաբար փարի զաշխատանօք ։

8. Բնութիւն խնդրէ ունել զվայելուչս, և զգեղեցիկս, և խորշի ՚ի խոտելեաց, և ՚ի խոշորից ։ Իսկ շնորհն զուարճանայ ՚ի միամիտս; և ՚ի խոնարհս, զխոշորս ոչ արհա-

մարհէ, և ո՛չ փախչի 'ի զգենլոյ զ հանդերձս հնացեալս :

9. Բնութիւն նայի 'ի ժամանակաւորս, և խնդայ 'ի շահս երկրայինս, տրտմի զկորստենէ, զայրանայ թեթև իւք բանիւք անիրաւութե : Իսկ շնորհն դիմէ առ մշտնջենաւորս, և ո՛չ ներյենու ժամանակաւորաց ; ո՛չ տրտմի զկորստենէ իրաց, և ո՛չ ցասնու 'ի բանս խիստս : Քանզի զգանձ իւր, և զխնդութի 'յերկինս, ուր ո՛չ ինչ կորնչի, կայացուցանէ :

10. Բնութիւն տռփոտէ, և յօժարագոյնս առնու, քան թէ շնորհէ : սիրէ զյատուկս, և զառանձնականս : Իսկ շնորհն առաքինի է՛, և հասարակ, խորշի յառանձնականաց : Բաւականանայ

սա

ստակաւուք : Երանագոյն դատէ ըզ տալն, քան զառնուլն :

11. Բնութիւն կորացուցանէ առ ստեղծուածս, առ յատուկ մարմինն, առ ունայնութիւն և առ տրամընթացութիւն : Իսկ շնորհն քարշէ առ Ած, և առ զօրութիւն, հրաժարի յըստեղծուածոց, փախչի յաշխարհէ, ատէ զցանկութիւն մարմնոյ, ճնշէ զվտարանդութիւն, պատկառի երևիլ 'ի հրապարակս:

12. Բնութիւն յօժարի ունել զմխիթարութիւն ինչ արտաքին, զի 'ի նմին զուարճանայցէ ըստ զգայութէ : Իսկ շնորհն խնդրէ ըն միայնում աստուծում մխիթարիլ, և ընդ վեհագունում բարւոյ, 'ի վեր քան զբնաւս երևելիս զուարճանալ :

13. Բնութիւն առնէ զա̃մ ինչ վս̃ շահու, եւ վս̃ յատկականի յանդորրութեն: Ոչինչ կարէ առնել ձրի, այլ կամ առ հանդէսն, կամ առ բարեգոյնն, կամ առ գովութեն, կամ առ խնամ ինչ սակս բարեգործութեց յուսայ ժամանել: Եւ բաղձայ զի առք, եւ ձիրք, իւրք մեծա յարգեցին: Իսկ շնորհն զոչինչ ժամանակաւոր խնդրէ, եւ ո՛չ ըզ վարձ ինչ: Այլ հայցէ զա̃ծ միայն սակս վարձու իւրոյ: Եւ այնքան կարօտի ժամանակաւորաց կարեաց, որքան պիտոյք իցեն ինքեան՝ ի ժամանումն իրաց աւիտենականաց:

14. Բնութի խնդայ՝ ի բարեկամս, եւ՝ ի մեծարաւորս, պարծի՝ ի նըշանաւոր տեղիս իւր, եւ ի ծագումն

առն

տոհմին, ծիծաղի զհզօրիւք, շողոքորդէ զփարթամս, ծափս հարկանէ նմանեաց իւրեանց : Իսկ շնորհն սիրէ և զթշնամիս, և ո՛չ փքանայ ի հոյլս բարեկամաց իւրոց, ո՛չ վարկանի ինչ զտեղին, ո՛չ զծագումն ծնողաց, եթէ ո՛չ զօրութի̄ն իմն մեծ անդ եղեալ իցէ : Օգնէ մանաւա̂նդ աղքատին, քան թէ փարթամին : Ցաւակցի առաւ̂ել անմեղին, քան թէ հզօրին : Խնդակցի ընդ ճշմարտասիրին, և ո՛չ ընդ խաբեբային : Յորդորէ միշտ զբարիս նախանձիլ շնորհաց բարեգունից : Եւ որդւոյն ա̄յ զօրութե̄ք համանմանիլ :

15. Բնութի̄ն յաղագս պակասութե̄ն ուրուք, և մշտագնութե̄, փութով տրտնջայ, իսկ շնորհն եր

կայնամտաբար տանի չքաւորու-
թե :

16. Բնութի զամ ինչ առ
ինքն թեքէ , մարտնչի վս ինքեան ,
և յանդիմանէ : Իսկ շնորհն առ
Ած զամ ինչ վերածէ : յորմէ ել
քեն ծագումնաբար : զոչինչ բարի
առընձեռն ինքեան , և ոչ պարծի
յանդգնաբար : Ոչ խստանայ , և
ոչ զկարծիս իւր առաւել մեծա-
րէ , քան զայլոց : այլ ընդ ընսաս
կարծիս , և յիմացուածս , առ յաւի-
տենականն իմաստութե , և ածայ-
նոյ ընտրութե զինքն ենթարկէ :
Բնութին բաղձայ գիտել զխոր-
հուրդս , և լսել զհամբաւս , կամի
երևիլ արտաքուստ , և ներհմա-
նալ իրիս բազումս ի ձեռն զգայու-
թեց : ցանկայ ճանաչիլ , և առնել
զայն ,

ղայն, յորմէ ծնանի ինքեան գո-
վութի և սքանչումն : Իսկ շնորհն
ոչ հոգայ իմանալ զհամբաւս և ս
զիրս վայելչութեանս : Քան զի այս
ամ ծածկեցեալք ՚ի հնութէ ապա-
կանութէ : ուղղմեալս ոչինչ է
կայուն ՚ի մեր երկրի : Ուսուցանէ
ուրեմն ճնշել զզգայութիս, ՚ի բաց
ձգել զընդունակայն համահաճութի,
և զպարծութի : ծածկել խոնար
հաբար զգովելիս, և զարժանիս
սքանչման : և խորշել նմանութեամ իւրն,
և նմանութեամ գիտութէ զպատուղս օգ
տակարութէ, և զգովութի և զպա
տիւն նոյ : Ոչ կամի զի քարոզիցի
ինքն, կամ իւրայ ինքն : Այլ բաղ
ձայ զի քարեբանիցի ամ ՚ի պայծ
զեւս իւրս, որ զամ յաղագս իւրոյ
սոսկի սիրելութեան առատաձեռնէ :

Շնոր

17. Շնորհս այս է՛ լոյս գեր
բնական, եւ տեսակաւոր պարգե
ւին այ, եւ նշան սեփական ընտրե
ցելոց, իսկ եւ գրաւ յաւիտենակա
նի կեցութե։ Որ վերացուցանէ
զմարդիկ ՚ի յերկրայնոց առ ՚ի սիրել
զերկնայինս, եւ փոխարկէ ՚ի մսեղե
նութե առ հոգեղէնութի։ Որչափ
ուրեմն բնութիւն առաւել ճնշի,
եւ յաղթահարի, այնչափ յաւէտ
ներհեղանի շնորհ։ եւ հանապազ
նորով այցելութե ներքին մարդն
ըստ պատկերի այ վերակերպի։

## Գլուխ. Յիսուն և հինգ երորդ։

### Յաղագս ապականութեան բնութեան և գործունէութեան շնորհին այ ։

1. Տէր ած իմ որ ստեղծեր զիս ըստ պատկերի և ըստ նմանութեան քում շնորհեա ինձ զշնորհս զայս, որ ցուցեր ինձ այնքան մեծ, և հարկաւոր 'ի կեցութի իմ։ զի կարիցեմ նովաւ յաղթահարել զբնութի իմ չարագունեղ, որ քարշէ զիս 'ի մեղս, և 'ի կորուստ ։ Քան զի ըզգամ 'ի մարմնի իմում զօրէն իմս մեղաց որ հակառակ օրէնի իմոյ մտի ։ և ածէ զիս 'ի գերութի առ

'ի հնա

՚ի հնազանդիլ ըն բազում զգայա-
կանութէ : Եւ ո՛չ կարեմ ընդդէմ
կալ ախտից նորին , եթէ ո՛չ նը-
պաստիցէ ինձ քոյդ սրբազան շնորհ
ջերմապէս ներհեղեցեալ ՚ի սիրտ իմ։

2. Պիտոյէ քոյդ շնորհ , և
շնորհ քո մեծ , զի յաղթահարիցի
բնութիւն , միշտ առագն ՚ի չարն ՚ի
մանկութէ իւրմէ : Քանզի Ադա-
մաւ առաջնով մարդով սահեցեալ,
և բծաւո՛րեցեալ մեղօք , ընդ բնաւս
մարդկան պատիժ այսորիկ բծի
ստորէջ : մինչ զի ինքն բնութիւն , որ
բարի , և ուղիղ եղև ՚ի քէն բաղկա-
ցուցեալ , այժմ ՚ի տեղի մոլութէ,
և տկարութէ ապականեցելոյ բը-
նութէ դնիցի : Վասնզի շարժումն
նորին թողեցեալ ինքեան , բարշէ
առ չարն և առ ստորնագոյնս ։

Իսկ

քան խունինչ զօրութիւն մնացեալ ՚ի Եբր. կցայթ իմն թագուցեալ ՚ի գաղափարի : Է՛ բնական բանականութիւն շրջապատեցեալ ՚ի միգաց մեծամեծաց : Որև դեռեւս ունի զդատողութի բարւոյ եւ չարի ; եւ զընտրութի ճշմարտի, եւ ստի : Թէ եւ ո՛չ ունիցի զկարողութի առնլոյ զնմ , զոր առաջարկէ , եւ ո՛չ լիով լուսով ճշմարտութե , ո՛չ իսկ առողջութէ զգածմանց իւրոց արբենայցէ :

3. Աստուած է՛ տր իմ եւ ած իմ, զի համագու՛ արժանամ յօրէնս քոյս ըստ ներքին մարդոյն , գիտելով զպատուիրանս քոյս գոլ բարիս , արդարս , եւ սբս ; եւ կշտամբելով զնմ չար , եւ զնմս մեղս խորշելիս : Բայց մարմնով իմով ծառայեմ

ռայեմ օրինին մեղաց, մինչ հնա-
զանդիմ մանաւանդ զգայականու-
ԹԷ, քան թէ բանականութԷ։ որ
առ՚ ինկամենալ զբարին մերձէ ինձ,
իսկ առ՚ ինկատարել ոչ գտանեմ
զնա։ Ուստի բազմիցս զբարիս
բազումս ինձ առաջադրեմ, բայց
քան զի պակասի շնորհ, զի կարիցէ
օգնել տկարութԷ իմում, սակս
թեթեւոյ իրիք ընդդիմակայութԷ,
յետս ընդոստանում, եւ նուաղիմ։
Աստուստ պատահի, զի զճանա-
պարհս կատարելութԷ ճանաչի-
ցեմ, եւ թէ որպէս՝ պարտիցէ ինձ
առնել, բաւ յայտնապէս՝ տեսա-
նիցեմ, բայց սեփական ապակա-
նութԷ բեռամբն ճմլեցեալ, առ
կատարելագոյնս ոչ յառնիցեմ։

4. Ո՜ թէ ո՜րպէս յա՛ւէտ հա-

կա

կաւորէ ինձ տ̅ր իմ քոյդ շնորհ, առ
՚ի սկսանել զբարին, առ ՚ի յառաջել,
և առ ՚ի կատարել զնոյնն: Քան զի
առանց նմա ոչինչ կարեմ առնել, և
զա̅մ ինչ ¦ քև առնել կարեմ, նպաս
տութ̅ք քոյոյ շնորհի: Ո՛վ ճշմարիտ
երկնային շնորհ, թարց որում ոչ գոյ
սեփական արդիւն, և ոչ ոք ձիր բնու
թ̅ե համարելի է: Այլ և ոչ ոք ար
հեստ, ոչ ոք փարթամութ̅ի, ոչ
ոք գեղեցկութ̅ի, ոչ ոք կարողու
թ̅ի, և ոչ ոք ուշիմութ̅ի, կամ ներ
քողութ̅ի, է՛ ինչ առաջի քո տ̅ր
առանց շնորհաց: Զի ձիրք բնու
թ̅ե առ բարիս և առ չարս են հա
սարակք: Իսկ սեփական ձիր ըն
տրելոցն է շնորհ, կամ սէր: զի
նշանաւորեցեալք արժանիք զաս
նին աւիտենականաց կենաց: Եւ

զի

զի այն քան գերազանցէ այս շնորհ, մինչ զի ո՛չ ձիր մարգարէութե՛, ո՛չ նշանաց արարողութե՛ի, եւ ո՛չ այլ ինչ վեհագոյն հայեցողութե՛ի, իմն համարիլ կարէ ընդ նմա ։ Այլեւ ո՛չ հաւատ, ո՛չ յոյս, եւ ո՛չ այլ ինչ զօրութե՛ի քեզ ընդունելիք են առանց սիրոյ եւ շնորհաց ։ Ո՛ ամէներանեցեալ շնորհ, որ զաղքատս հոգւով, փարթամացուցանես զօրութեամբք ։ Եւ զփարթամս բազմօք բարեօք, խոնարհեցուցանես սրտիւ ։ Եկ ուրեմն եւ էջ առ իս, եւ լից զիս առաւօտային քոյով մխիթարութեամբ, զի մի՛ նուաղեսցի սակս լքման, եւ կարծրութե՛ մտաց հոգի իմ ։ Աղերսեմ 'ի քէն տէ՛ր տուր ինձ գտանել զշնորհս առաջի աչաց քոց ։ Քան զի բաւ՛ական է ինձ

քոյդ

քոյդ շնորհ. Թէ և զայլս որոց ցան-
կայ բնութին իմ, ո՛չ ընդունեցիլ իմ:
Եթէ փորձեցայց և վշտանկեցայց
՚ի նեղութիւնս բազումս, ո՛չ երկեայց
՚ի չարէ, մինչ առ իս լիցի քոյդ շը-
նորհ: Զի նա եղիցի զօրութիւն իմ,
նա տացէ զխորհուրդ, և յօգնու-
թիւն; Որէ քանզբնաւս Թշնամիս,
հզօրագոյն, և քանզբնաւս իմաս-
տունս իմաստնագոյն:

5. Վարդապետ է ճշմարտու-
թեան: ուսուցիչ է ներվարժութեան,
լոյս սրտի: մխիթարիչ տագնապի:
Վանիչ տրտմութեան: բարձօղ եր-
կիւղից, սնուցիչ ջերմեռանդու-
թեան, վճռածիչ արտասուաց: և՞ իրդ
զինչ եմ ես առանց նմա, ո՛չ այլ
քան փայտ չորացեալ: և շիւղ ինչ
անօգուտ ՚ի բացձգելի: Քոյդ ու-

բեմս տր̄ միշտ կանխեսցէ ինձ շնորհ և հետևեսցի, և բարեաց գործոց միանգամայն արասցէ զիս ուշադիր: յի̄ւ քի̄ւ որդւով քով ամէն:

## Գլուխ. Յիսուն և վեց երորդ:

### Թէ զմեզ պատրաստեսցիմք ուրանալ, և հետևել քի̄ խաչիւ հանդերձ:

I. Որդեակ՝ որքան ՚ի քէն կարես ելանել, այն քան առ իս կարասցես չուել: Եւ որ պէս՝ ոչ իմիք բաղձալն արտաքս, պատճառէ զներքին խաղաղութի̄ն այսպէս՝ և ներքսապէս՝ թողուլն զինքն, ընդ այ̄ շարակցէ զմարդ:

ւղրդ՝ կամիմ, զի ուսանիցիս զկատարեալ ուրացութեան անձին ըստ իմում հաճութե, առանց հակասութե, և միջաքանութե: Հետևեա՛ց ինձ ուրեմն, զի ես եմ ճանապարհ, ճշմարտութի, և կեանս: Քան զի առանց ճանապարհի ո՛չ կարէ ոք ընթանալ: առանց ճշմարտութե ոչ ինչ ճանաչի: և առանց կենի ոչ ոք կարէ կեալ: Ես եմ ճանապարհ, որում հետևիլ պարտիս: ճշմարտութի, որում հաւատալ պարտիս: և կեանս յոր յուսալ պարտիս: Ես եմ ճանապարհ անաղարտելի, ճշմարտութի անսուտելի: և կեանս անեզրանալի: Ես եմ ճանապարհ ուղղագունեղ, ճշմարտութի վեհագունեղ: և կեանս ճշմարիտ; կեանս երանելի, և կեանս

անստեղծ : Եթէ մնայցես ՚ի ճանապարհի իմում, ճանաչեսցես զճշմարտութիւն, և ճշմարտութիւն ազատեսցէ զքեզ, և ժամանեսցես կենացն յաւիտենից :

2. Եթէ կամիս մտանել ՚ի կեանս, պահեա զպատուիրանս : Եթէ կամիս զճշմարտութիւն ճանաչել, հաւատա՛ ինձ : Եթէ կամիս կատարեալ գոլ, վաճառեա՛ զամ : Եթէ կամիս աշակերտ գոլ, ուրացի՛ր զանձն քո : Եթէ կամիս ստանալ զերանելի կեանսն, արհամարհեա՛ զկեանսն ներկայ : Եթէ կամիս վերանալ յերկինս, խոնարհեցո՛ զքեզ յաշխարհի աստ : Եւ եթէ կամիս թագաւորել ընդ իս, բարձ զխաչ քո ընդ իս : Քանզի միայն ծառայք խաչին գտանեն

զճանապարհն Երանութե̄, և լու-
սոյն ճշմարտի ։

3. ՏՐ̅ իմ Յս̅, զի անձու-
կ էր կեանն քո, և քամահելի աշխար-
հի, վն̄ որոյ տուր ինձ ընդ պարսա-
ւանաց աշխարհի քեզ հետևիլ։
Քանզի ոչ է ծառայ մեծ քան
զտր̅ իւր, և ոչ աշակերտ առաւե՛լ
քան զվարդապետ իւր։ Մարզեսցի
ուրեմն ծառայ քո ընդ կենի քով,
զի անդ է կեցութի̄ իմ, և սրբու-
թի̄ ճշմարիտ։ Ուստի որ ինչ ար-
տաքոյ նորա ընթեռնում կամ
լսեմ, ոչ զովացուցանէ զիս, և ոչ
բերկրեցուցան է ։

4. Որդեակ՝, քանզի զայսո-
սիկ գիտես, և ընթերցեալ ես զա̄մ,
վն̄ որոյ երանելի ես, եթէ առնիցես
զնոյնս։ Զի որ ունի զպատուի-

րանս իմս, եւ պահէ զնոսա, նա է՛ որ սիրէ զիս: Եւ ես սիրեցից զնա, եւ յայտնեցից նմա զիս, եւ բազմեցուցից զնա ընդ իս նարքայութե հօր իմոյ:

5. ԱՐԴ իմ յն, որպէս ասացեր եւ խոստացար, այն այնպէս եղիցի: եւ ինձ առդիպեսցի մանկաստանալ զնոյնս: Ընկալայ, ընկալայ, 'ի ձեռաց քոց զխաչ քո սէ: բարձից, բարձից զնա մինչեւ 'ի մահ, ոռ վերադրեցեր ինձ: Արդարեւ կեանս ճշմարիտ կրօնաւորի խաչն է՛, բայց ոմ առաջնորդող արքայութե, սկսեալ է՛, ոչ է ձահ յետս դառնալ, եւ ոչ է ըմբռն 'ի բացթողուլ:

6. Արդէ՛ ուրեմն եղբարք, փութասցուք միահաղոյն; եւ Յն եղիցի ընդ մեզ, զի ոռ: Վն յն ըն-

կա

կալաք զխաչս զայս , սոյնպէս վս̃ յի̅ յարատեւեսցուք ՚ի խաչին: Քանզի նա , որ է՛ առաջնորդ մեր եւ յառաջընթաց եղիցի օգնական մեր: Զհաւատսին՝ արքայն մեր ընթանայ առաջի մեր , որ եւ հակամարտիցի փոխանակ մեր: Հետեւեսցուք արիաբար , եւ մի՝ ոք երկնչիցի ի զաւր հուրանաց: Չի եմք պատրաստք ՚ի մեռանել քաջապէս ՚ի պատերազմի: Եւ մի ներբերիցուք զվնաս ինչ փառաց մերոց փախչելով ՚ի խաչէն :

Գլուխ. Յիսուն և եօթն երորդ։

Թէ մարդ ոչ պարտիցի գոլ յոյժ լքեցեալ, յորժամ սահի ՚ի պակասութիւնս ինչ։

1. Որդեակ՝, առաւել հաճոյ է ինձ համբերութիւն և խոնարհութիւն ՚ի ընդդիմութիւնս, քան զսփոփութիւն մեծ, և զջերմեռանդութիւն ՚ի յաջողութիւնս։ Զի՞մ տրտմեցուցանէ զքեզ դոյն ինչ արարեցեալն, և ընդդէմ քեզ ասեցեալն։ Քանզի թէև առաւել ինչ լեալէր, ոչ պարտէիր վրդովել զքեզ։ Այլ այժմ, թող զնա գնալ ՚ի բաց, զի ոչ է առաջինն, և ոչ նորն ինչ, այլ և ոչ

եղիցի

եղիցի յետինն, եթէ զժամանակ ինչ ապրիցիս: Բաւականացեա՛լ քաջ ես դու, մինչ տակաւին ոչ ինչ ընդդիմութիւն պատահի քեզ: Եւ բարեպէս՝ խրատես զայլս և քաջալերես բանիւք: Բայց մինչ առ դուռն քո ժամանէ յանկարծա_ հաս վշտանկութիւն ինչ, իսկոյն նուաղիս ՚ի խորհրդոյ, և ՚ի զօրութէ: Զննկատեա՛ ուրեմն զքոյդ բեկանաւորութիւն մեծ, յոր ներհմտանաս ըն փոքրկունս առարկայս: որք ամենեքեան լինին սակս կեցութէ քոյ, մինչ այնպիսիք և նմանք նոցին առդիպին քեզ:

2. Դի՛ր, ով բարու՛ոք ծանեար՝ ՚ի սրտէ: Եւ եթէ դիպիցի քեզ ինչ ոչ սակայն սատրանկիցէ, և ո՛չ ընդ երկար ժամ ինչ ներպարուրիցէ:

ցէ: Եւ փարթար՝ տուեա՛ համբերաբար՝, եթէ ոչ կարես խնդաբար՝: Քան զի թէ եւ ոչ այնքան յօժարաբար լուիցես, եւ զգայցես զզայրացուցին, սակայն մարտեա՛ զքեզ, եւ մի թողուր ելանել՝ ի բերանոյ քումէ զիր ինչ անկարգաւո՛ր: յորմէ կարիցեն փոքունք գայթակղիլ: Զի փութանակի հանդարտեսցի վրդովումն քո, եւ ցաւ քո ներքին զիջցի շնորհօք: Կենդանի եմ ես տակաւ՛ին ասէ տր̅, եւ պատրաստ առ՝ իօգնել, եւ առաւե՛լ քան զսովորականն մխիթարել, եթէ ապա՛ւինիցիս ինձ եւ ջերմեռանդապէս՝ ներկոչիցես զիս:

3. Լե՛ր հանդարտագոյն հոգւո՛վ, եւ պատրաստեա՛ զքեզ առ մեծագոյն համբերութ̅ի: Զի ոչ է

բոլորն

բոլորն ՚ի զուր վարկեցեալ, մինչ բազմիցս զքեզ տեսանես վշտապ-նեցեալ, կամ ծանրապէս՝ փորձեցեալ: Քան զի մարդ ես, և ո՛չ ա̄ծ: մարմին ես, և ո՛չ հրեշտակ: Եւ զի ա՞րդ կարես դու յարատեւել միշտ ըն նոյնում կացութե̄ առաքինականի, եթէ և հրեշտակաց ո՛չ կարա-այս ՚ի յերկինս, և ո՛չ առաջնոյն մարդոյն ՚ի դրախտին: Ես եմ որ զտխրեցեալս մխիթարեմ անվտանգապէս, և զճանաչօղս տկարութե̄ իւրեանց, առ ա̄ծայնութի̄ իմ վերաբերեմ:

4. ՈՐԴԻ իմ, լիցի բան քո բարեբանեցեալ որ քաղցրագոյն է քան զմեղր, և զխորհուս ՚ի բերանի իմում: Քան զի զինչ առնէի ես ՚ի մէջ այսքանեաց նեղութե̄ց և

անձ

անձկութեանց, եթէ ո՛չ քաջալերէիր
դու զիս սրբազանիւք քոյովք խօ-
սիւք: Արդ՝ միայն թէ հասանից
եմ վախճանապէս՝ 'ի նաւահան-
գիստն կեցութեան, ո՛չ ինչ փոյթ է
ինձ. թէ զինչ, կամ զորքանս կրեա
լիցեմ: Այն որոյ տուր ինձ զվախ-
ճան բարի, եւ զերջանիկ չուումն յայս
մանէ աշխարհէ: Յիշեա՛ զիս
տ̄ր իմ, եւ ուղղեա՛ զիս ուղ-
ղիւ ճանապարհաւ առ
արքայութ̄ն քո.
Ամէն:

Գլուխ.

## Գլուխ. Յիսուն և ութ երորդ :

Յաղագս իրաց բարձրագունից, և գաղտնեաց դատողութեանց Այ̃ անքննելեաց :

1. Որդեակ՝ զգոյշ լեր ՚ի վիճաբանելոյ զնիւթից բարձրագունից, և զգաղտնեաց դատողութեանց Այ̃ : Թէ հիմ այս ոք, այսպէս՝ թողանիցի, և այն ոք, առ այն քան շնորհ վերափոխիցի: կամ թէ, զմէ̃ այս ոք, այնքան վշտագնիցի, և այն ոք, այնքան գերապանծապէս՝ բարձրացուցանիցի : Քանզի այս ոքիկ զա̃մ մարդկային կարողութի̃ գերազանցեն : Եւ ոչ ոք բան, կամ

տրա

տրամաղարկութի կարօղ է հետա- զօտել զդատաստանն ա͞յ : Ուրեմն մինչ զայսոսիկ քեզ ներշնչէ թշնա- մին , կամ այլ ոք հետաքրքիր խն- դրէ ՚ի քէն : Պատասխանեա՛ նմա ընդ մարգարէին , ասելով : Ար- դար ես դու տ͞ր , և ուղիղ է՛ դատաս- տան քո : և զայն : Դատաստանք տ͞ն ճշմարիտք են արդարացուցեալք ներ յինքեանս : Զի դատողութիւնք իմ զարհուրելիք են , և ո՛չ զննելիք, վ͞ս զի են ՚ի մարդկայնոց մտաց ան- բովանդակելիք :

2. Մի՛ և ս ներ խուզիցես կամ տրամաղարկիցես զարդիւնս սր- բոց , թէ ո՞ ՚ի նոցանէ բարձրագոյն իցէ ք͞ն զայլս , կամ ո՞վ իցէ մեծա- գոյն յարքայութեան երկնից : Քան- զի այսպիսիք բազմիցս ծնանին ըղ-

վիճ

վիճմունս, և զընդդիմամարտութիւնս անօգուտս: Անուցանէն զհպարտութի̄ և զմնապարծութի̄: 'Ի սոսցունց և ս ծնանին մախանք, և անհաւանութիւնք, մինչ ոմն զայս, և ոմն զայլոք 'ի սրբոց ջանայ հպարտ օրէն վերապատուել: Որդ զայս պեսս գիտելն, կամ հետազօտելն, զոչինչ պտուղ առբերէն: այլ մանաւանդ անհաճոյ է սրբոց: Այլ զի ոչ եմ ես ա̄ծ անհաւանութե̄, այլ խաղաղութե̄, որ մանաւանդ ըն ճշմարտում խոնարհութե̄, քան թէ ըն սնափականում մնապարծութե̄ կայանայ:

3. Ոմանք առքարշին նախանձու սիրոյն, առ այս կամ առ այն մեծագունին ըղձիւ, բայց մարդկայնով մանաւանդ, քան թէ

ա̄ծայ

ա̃ծայնով ։ Օհ ես եմ որ զընտաւս
մ̃քս ստեղծի , ես ետու նոցին զշ-
նորհս։ Ես շնորհեցի նոցա զփառս։
Ես ծանեայ զարդիւնս իւրաքանչ-
իւրոց նոցին ։ Ես կանխեցի զնո-
սա օրհնութ̃բ քաղցրութ̃ե իմոյ ։
Ես նախածանեայ զսիրելիս իմ
յառաջքան զաւ̂իտեանս ։ Ես ըն-
տրեցի զնոսա յաշխարհէ ։ եւ ոչ նք̃
զիս նախ ընտրեցին ։ Ես կոչեցի ըզ-
նոսա ՚ի ձեռն շնորհաց իմոց ։ առ-
քարշեցի ՚ի ձեռն ողորմութ̃ե ։ Ես
վերածի զնոսա ընդ փորձութ̃իս
զանազանս ։ Ես ներհեղի զմխի-
թարութ̃իս մեծարելիս ՚ի նոսա ։
Ես ետունց̃ զյարատեւութ̃ի ։ Եւ
ես պսակեցի զհամբերութ̃ի նոցին։

4. Ես եմ որ ճանաչեմ զնախ-
կինն եւ զվերջինն ։ Ես եմ որ սիա

րեմ

ռիմ զամենեքումբք անճառելեաւ-
սիրով: Եւ եմ գովելի՝ իմեջ հա-
նուրց սրբոց: Եւ՝ իվեր քան զամ
ենչ բարեբանելի եմ, և պատուելի
ըն իւրաքանչիւրս, զորս փառա-
ւորայես՝ մեծ ացուցի, և նախա-
սահմանեցի, առանց իմիք նախըն
Թացի արդեան: Ով ոք ուրեմն ար
համարհէ զմի որ՝ իփոքրկանց ի-
մոց, և ոչ զմեծագոյնն պատուէ:
Քանն զի զփոքրկունս և զմեծա-
մեծս ես արարի: Եւ ով ոք տարա
յարգէ զմի ումն՝ իսրբոց, տարայար
գէ և զիս, և զայլս ո̄էս յարքայու-
Թէն երկնից: Զի ամենեքեան մի
են շաղկապաւ սիրոյն, զմի ինչ
զգան: զմի ինչ կամին: և ամենե-
քեան միահաղոյն սիրեն զմիմեանս:

5. Այլև որ գերաղանցագոյն

նմին է, առաւե՛լ զնա, քան զինքեանս, եւ քանզպարգեւս իւրեանց սիրեն ։ Քանզի յափշտակեցեալք՝ իվեր ք̄ զինքեանս, եւ քարշեցեալք արտաքոյ սեփականին սիրելութեան, բոլորովիմբ փութան առ սէրն իմ, նորում զմայլեալ՝ յարահանգչին։ Ո՛չինչ է որ կարիցէ զնոսա զզուեցուցանել, կամ վհատեցուցանել։ Քանզի լիք են յաւիտենականաւ ճշմարտութեամբ, եւ բորբոքին սիրով հրոյն անշիջանելեաւ ։ Լռեսցեն ուրեմն մարմնաւորք եւ շնչաւո՛րք մարդիք յընձեռելոյ, զկացութիւն սրբոց, որք սովորեն միայն սիրել զառանձնական խնդութիւն; եւ հատանեն, եւ առաւկցեն ըստ իւրեանցն հաճոյութեանց, եւ ո՛չ ըստ որում հաճոյէ յաւիտենականին ճշմարտութեան ։

Ըն

6. Ընդ բազում գոյ ազնուու-
թեան, և մանաւանդ նոցին , որք զա-
լով զոյն ինչ լուսաւորեցեալք ,
հազիւ զոք կատարեցելով սիրով
հոգեկանաւ սիրել սովորեն : Քան-
զի տակաւին բազմիցս 'ի բնական-
նէ ըղձէ , և 'ի մարդկայնոյ սիրելու-
թէ , առ այսոսիկ , կամ առ այնո-
սիկ քարշին : Եւ ոչ ունին զին-
քեանս 'ի սորընայինս , այնպէս և
զերկնայնոց պատկերակերպեն :
Բայց գոյ անբաղդատելի իմն տա-
րակայութեն , 'ի մէջ այնոցիկ , զո-
րոց խորհին անկատարք , և 'ի մէջ
այնոցիկ , զորս լուսաւորեցեալք
վերնայնով տարաքօղութէ տե-
սանեն :

7. Օգնէշլեր ուրդեան՝ զնո-
ցունց հոգւոնականէս՝ ընձեռել ,

որ գերազանցեն զքոյդ գիտութ̅ի ։ Ա՜յլ մանաւա՛նդ փութա՛, եւ զգուշ լեր առաւել, զի փարթա՛մ իբր փոք րագունեղ որ մարթիցիս գտանել յարքայութե՛ն երկնից ։ Քա՛ն զի եթէ գիտէր որք, թէ ո՞ իցէ սրբա գոյն ք̅ զայլս, կամ մեծագոյն յար քայութե՛ն երկնից, զինչ օգուտ լինէր նմա այս ծանօթութ̅ի ։ Եթէ ո՛չ այսու ճանաչմամբ զինքն խո նարհեցուցանէր առաջի իմ, եւ յ[illegible]նէր ՚ի մեծագոյն գովութ̅ի ա նուա՜ն իմոյ ։ Ա՛յն զի առաւե՜լ ըն դունելի է այ̅, որ խորհի զմեծու թ̅է մեղաց իւրոց, զփոքրութ̅է զօ րութ̅եց իւրոց, եւ թէ որքան տա րակաց իցէ ՚ի կատարելութ̅է սր բոց, քան զայն որ վիճաբանէ զմե ծագունութ̅է եւ զփոքրագունութ̅է նոցին ։

նոցին։ Ուստի բարեգոյնէ մաղթել զՔեզ ջերմեռանդիւք աղերսանօք, և արտասուօք, և հայցել խոնարհութե̄ մտաց զփառաւոր օժանդակութե̄ն, քան զմնոտեաւ խուզմամբ ուսանելն զգաղտնիս 'նոցին։

8. Նոքա բարեպէս՝, և բարեգունապէս՝ բաւականանան, մինչ տեսանեն զմարդիկ բաւականանալ, և դանդարիլ յունայնաբանութէ իւրեանց։ Զի ոչ պարծին յարդիւնս իւրեանց սեփականս, և զոչ ինչ բարւոյ առագրեն իւրեանց։ Այլ զբոլորն ինձ։ Վ̄ն զի սակս անհնի սիրելութե̄ իմոյ զբնաւս շնորհեցի նոցա։ Եւ այնքան սիրով ա̄ծայնութե̄, և խնդութե̄ վերնազեղականաւ յարաչխանին, մինչ

զի ոչ ինչ պականիցի նոցա ըստ մարմնոյ , և ո՛չ ինչ պականել կարիցէ ըստ երջանկութեան : Եւ այսպէս՝ մեք նմք , որքան բարձրագոյնք են՝ ի խնամս , այնքան խոնարհ հարկոյնք են յինքեանս , և ինձ մեր ձաւորագոյնք և նաշէլագոյնք առ աստուածայնման : Վասնորոյ ընթեռնանի ինգիրս մեզ , թէ արկանեին զպսակս իւրեանց առաջի նյ : Եւ անկան՝ ի վերայ երեսաց իւրեանց յանդիման գտանեն , և երկրպագեին կենդանւոյն՝ յաւիտեանս աւիտենից :

9. Բազումք են խնդրողք , թէ ո՛ իցէ մեծագոյն յարքայութեան նյ : որք անգիտանան , թէ արդեոք արժանիք իցեն համարել՝ ի թիւս փոքրագունեղից : Ով մեծ իմն է գոնեայ գոլն փոքրագունեղ՝ իյերկինս :

կինս: ուր մեծք են ամենեքեան: Այս զի ամենեքեան որդիք ա̄յ կոչին, և են: Ուստի փոքրագունեղն եղիցի՛ հնազաւրս, և մեղաւոր հարիւր ամեայ մեռանիցի: Ա՛ինչ ուրեմն խնդրեցին աշակերտքն, Թէ ո՞ իցէ մեծագոյն յարքայութեան երկնից, լուան զայսպիսի պատասխանի: Եթէ ո՛չ դարձջիք և լինիջիք իբրև զմանկտիս, ո՛չ մտանիցէք յարքայութին երկնից: Որ ոք ուրեմն խոնարհեցուսցէ զինքն իբրև զփոքրիկս այս, նա է մեծագոյն յարքայութեան երկնից:

10. Ա՛յս նոցա, որք անարժան ինչ համարին ինքեանց զյօժարայէն՝ խոնարհիլս ընդ փոքրկանց: Քան զի խոնարհ դուռն արքայութեան երկնից, ո՛չ տայցէ

Թոյլ ն̅ց մտանել ընդ ինքն : Վա՛յ եւ մեծատանց, որք ունին աստ զմխիթարութիւն իւրեանց : Քանզի մինչ աղքատք մտանիցեն յարքայութի̅ն ա̅յ, ն̅ք աշխարհելով մնասցեն արտաքս : Արդ՝ խնդացէք խոնարհք, եւ հրճուեցարուք աղքատք, զի ձեր է արքայութի̅ն ա̅յ :

Բայց սակայն, թէ ըն
ճշմարտութե̅ շր
Ջնջիք :

Գլուխ.

## Գլուխ. Յիսուն և իններորդ:

### Թէ ամ̃ յոյս և ապաւ̂ինութի̃, ընդ միայնում աստուծում ունելի է:

1. Տր̃ իմ, ո՞ է քաջալերու-
թի̃ իմ, զոր ունիմ
ընդ կենցաղում այս
միկ: կամ ո՞ է մեծա-
գոյն սփոփութի̃ իմ 'ի բնաւ̂ից երև-
ելեաց որք են 'ի ներքոյ երկնից: Ո՞չ
ապաքէն դու Տր̃ իմ և Ած̃ իմ; որոյ
ողորմութեան ո՞չ գոյ Թիւ: Ո̃ւր
ինձ բարի ինչ եղև առանց քեզ,
կամ ե՞րբ չար ինչ գոլ կարաց, քև
ներկայիւ: Արդ՝ առաւել կամիմ
գոլ աղքատ յաղագս քո: Քան Թէ

գոլ

գոլ մեծատուն առանց քեզ: Ընտրեմ մանաւանդ պանդխտիլ ընդ քեզ յերկրի, քան թէ առանց քեզ ստանալ զերկինս: Քան զի ուր դուես, անդ է երկին: Եւ անդ՝ մահ, եւ դժոխ, ուր ոչ ես դու: Եւ զի ցանկալի իմես դու, վ՞ որոյ զհետ քոյ հեծել, աղաղակել, եւ աղերսել հարկաւորէ ինձ: Օհ յոչ ոք լինագէս՝ յուսալ կարեմ, որ ՚ի մէջ հարկաւորութեանց պատեհապէս՝ օգնել կարիցէ ինձ, բայց եթէն միայնոյ աստուածոյդ իմմէ: Դու ես զի դուես յոյս իմ, դու ապաւէնութիւն իմ: դու մխիթարիչ իմ, եւ հաւատարմագունեղ ընհամայնում:

2. Ամենեքեան զիւրեանցն խնդրեն: Իսկ դու զկեցութիւն իմ, եւ զյառաջադիմութիւն իմ, միայն

նա

նախատինս : և զա̅մ ինչ ՚ի բարին
ջանս փոխարինես : Թէև զանազա
նից փորձութեանց և ընդդիմադարձու
թեանց զիս արտաքսեցես , սակայն
զայն ա̅մ ՚ի յօգտութիւն իմ կարգա
ւորես , որ սովորես փորձել զհա
զարս ՚ի քոց սիրելեաց : Նորում
փորձութեան առաւել սիրել , և պա
վաբանիլ պարտիս , քան թէ մինչ
լցուցանես զիս մխիթարութեամբ
Երկնայնովք :

3. ՚Ի քեզ ուրեմն Տր̅ Ած̅ իմ
զետեղեմ զբոլոր յոյս իմ , և զապա
ւինութիւն իմ : ՚Ի քեզ զա̅մ նեղութիւն
իմ և զանձկութիւն իմ կայացուցա
նեմ : Քանզի զոր ինչ արտաքոյ
համանկատեմ , զբոլորն տկար ,
և անկայուն գտանանեմ : Զի ոչ առ ոչ
ինչ օգուտք են սիրելիք բազումք ,
և ոչ

Եւ ո՛չ կարեն նպաստել օգնականք հզօրք: Ո՛չ կարեն տալ զպատասխանի օգտակար , խորհրդականք խոհեմք ; եւ ո՛չ կարեն մխիթարել գիրք վարդապետաց: Ո՛չ կարէ՛ ազատել գոյացութի̃ ինչ ամենեւ, եւ ո՛չ տեղի ինչ ապահովականէ՝ եւ աներկեւանականէ՝ պաշտպանել : Եթէ դու ինքն ո՛չ նպաստիցես , օգնիցես , զօրացուցանիցես , ներհմտացուցանիցես , եւ պահպանիցես :

4. Քանզի ա̃մ ինչ որ տեսանի զոլ առ խաղաղութի̃ն , կամ առ ՚ի ստանալ զերջանկութի̃ն , առանց քեզ ո՛չ ինչ է , եւ զոչինչ երջանկութի̃ ճշմարտապէս՝ առբերէ : Ուրեմն վախճան ամենից բարեաց եւ բարձրութի̃ կենաց , եւ խորութի̃

ճառ

ճարտասանութեանց դունս ; և 'ի
քեզ 'ի վեր քան զա̃մ ինչ յուսալն է,
հզօրադունեղ ամփոփումն քոյոց ծա
ռայից ։ Արդ՝ առ քեզ են աչք իմ,
և 'ի քեզ յուսամ ա̃ծ իմ, և ձայր
ողորմութեց ։ Օրհնեալ և սրբեալ
կհոգի իմ երկնայնով օրհնութե̃ ։
Ով եղիցի քեզ 'ի բնակութի̃ մբ,
և յաթոռ յաւիտենականաց քոյոց
փառաց ։ Եւ մի պատանիցի ինչ 'ի
տաճարի քոյոյ արժանապատու
թե, որ զգուշիցէ պաշս քոյոյ հան
դիսավէհութե̃ ։ Ուստի ըստ մե
ծութե̃ բարութե̃ քո, և ըստ բազ
մութե̃ ողորմութեց քոց, նայեաց առ
իս, և անսամ աղօթից քոյդ տնանկի
ծառայի պանդխտեցելոյ երկարա
պէս՝ 'ի յերկրի մահաստուերի ։
Նախախնամեա և պահպանեա ըզ

հոգի

հոգի ծառայի քոյ, 'ի մէջ այսքան
եաց պանդխտութեանց կենաց տապա
կանելեաց ։ Եւ ընկերակցութեամբ
քոյոց շնորհաց, ուղղեա՛ զնա ընդ-
ճանապարհս խաղաղութեան, առ
հայրենին մշտնջենականին
պայծառութեան ։

ԱՄԷՆ ։

Թովմայի Գեմբեցւոյ:

Յաղագս Համահետեւմանն

Քրիստոսի:

Գիրք Չորրորդ:

Յաղագս Սրբազնութե՟:

Յորդորումն ջերմեռանդն առ սր

բազան հաղորդութ՟ին:

Ձայն Քրիստոսի:

1. Եկա՛յք առ իս ա՟մք աշ
խատեցեալք, և բեռ
նաւո՛րք, և ես հան
գուցից զձեզ: ասէ
տ՟ր: Զհացն զոր ես տաց, մար

մին

մին իմ է, վս կենաց աշխարհի : Առէք և կերէք այս է մարմին իմ, որ վս ձեր աւանդեսցի : զայս արարէք առ իմոյ յիշատակն : Որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, նա յիս բնակի, և ես ՚ի նմա :

Զբանս զորս ես խօսեցայ ընդ ձեզ, հոգի և կեանք են :

## Գլուխ. առաջին :

### Թէ որքանիւք պատկառանօք վեր ընդունելի իցէ քս :

Ձայն աշակերտի :

1. Այսոքիկ են բանք քոյք քս, ճշմարտութի աւիտենականն, թէ և ոչ իցեն ընդ միում ժամանակի

մանուկք արտաքսեցեալք, և ո՛չ ըն
միում տեղ̃ւոջ համարեցեալք :
Բայց քան զի քոյք են, և ճշմարիտք,
հաճոյապէս՝ և հաւ̃ատարմապէս՝
բնաւքն են ինձ ընդունելիք : Քոյք
են, և դու արտաքսեցեր զնոսա :
Եւ իմք են, զի մ̃ն կեցութե̃ իմոյ
եսուր զնոսա : Ուստի յօժարու
թ̃բ վերընդունիմ զնոսա ՚ի բերա
նոյ քումմէ : զի սղակի՝ սեռուցին
արտի իմում : Եւ Թէպէտ զարթու
ցանէինզիս այսորիկ, բանք առաքի
նութե̃, որք են լցեալք քաղցրու
թե̃ և սիրով : Սակայն զարհուրե
ցուցանեն զիս յանցանք իմ սեփա
կանք : Եւ յետոյ բախէ զիս անմա
քուր խիղճ մտաց իմոց ՚ի յիմանա
լոյ զայսքանս խորհուրդս : Ձեռ
կոչէ զիս քաղցրութի̃ քոյոց բա

նից , բայց ծանրացուցանէ զիս բազմութիւն մոլութեանց իմոց :

2. Հրամայես , զի համարձակապէս՝ առ քեզ մատչիցիմ , եթէ կամիցիմ ունել զմասն ընդ քեզ : Եւ զի ընդունիցիմ զանմահութեան կերակուրն , եթէ ցանկայցեմ ստանալ զկեանս եւ զփառս աւ̂իտենականս : Եկայք առ իս ամ̄ք աշխատեցեալք , եւ բեռնեցեալք , եւ ես հանգուցից զձեզ : Ո̄ , քաղցր եւ սիրելի բանդ առ ունկս մեղաւ̂որաց : Զի դու տ̄ր իմ եւ ա̄ծ իմ , զտնանկս , եւ զաղքատս հրաւ̂իրես ՚ի հաղորդութիւն քոյոյ սրբազնագունեղի մարմնոյ : Բայց ո՞վ եմ ես տ̄ր իմ , զի իշխիցեմ առ քեզ մերձենալ : Ահա երկինք երկնից բովանդակել զքեզ ոչ կարեն , եւ դու

ասես

ասես. Եկայք առ իս ամենեքեան ։

3. Զի՞նչ կամիցի այդ առա-
քինագունեղ արժանաւորութիւն, և
այդքան տենչալի ներհրաւիրութիւն։
Ո՞վ տէր կարեմ ես իշխել գալ առ
քեզ, որ զաչինչ բարւո՞յ ըստացե-
տեմ 'յիս, որով մարթիցիմ հա-
մարձակիլ: Եւ որպէս ներածից
զքեզ 'ի տուն իմ, որ բազում ան-
գամ վշտացուցի զերեսս քոյ ա-
մենագթածս: Պատկառեն 'ի քէն
հրեշտակք և հրեշտակապետք, եր-
կնչին 'ի քէն սբք և արդարք, իսկ
դու ասես, եկայք առ իս ամենե-
քեան: Ապաքէն' եթէ ոչ դու ա-
սէիր զնոսա, ո՞ հաւատայր թէ
գոյին ճշմարիտ: Եւ եթէ դու ո՛չ
հրամայէիր, ո՞ համարձակէր առ-
մերձենալ ։

4. ԶՀաւ՞աստին՝ Նոյ՝ իշեսնեցն զտապանն զամս հարիւր աշխատեցաւ, զի փրկիւր ընդ սակաւ՞ուց: Իսկ ես զիա՞րդ կարացից ընդ միում ժամու պատրաստել զիս, զի զճարտարապետն աշխարհի հանդերձ մեծարանօք ընդունիցիմ: Մօվսէս պաշտօնեայն քո մեծ, եւ յատուկ սիրելին քո, շինեաց զտապանակն յանփտելեաց փայտից, զորոյ զգեցոյց մաքրագունեղիւ ոսկեաւ, առ՝ ի զետեղել՝ ինմա, զտախտակս օրինաց: Իսկ ես փտեալ ստեղծու՞ածս իշխեմ զքեզ զօրէնադիրդ, եւ զկենսատուդ, այնքան դիւրապէս վերընդունիլ: Սողոմոն իմաստնագունեղ արքայն իսրայէլի, զմեծաշէնն զայն տաճար զամս եօթն՝ իգովութի՝ անու՞ան

քոյ

քոյ կատուոյց : Եզաւ՛ուրս ունծն ըզ
տօն նաւ՛ակատեաց նորին վերա_
հուչակեաց : զհազար նուէրս խա_
ղաղականս քեզ մատոյց : Եւ զտա
պանակն ուխտի հնչմամբ փողոյ
և հրճու՛անաց ըն տեղւոջ նախա_
պատրաստեցելում նմա տեղաւ՛ո
րեաց : Իսկ ես Թշու՛առս , և աղ
քատագունեղս մարդկան , որպէս
՚ի տուն իմ ներածից զքեզ , որ հա
զիւ զկէս ժամ առաքինօրէն սո_
վորեմ վճարել : և երանի Թէ ևս
միանգամ արժանապէս՝ զկէսն
նորին :

5. Մ՞ Թէ ո՞րքան Ջանացին
նոքա հաճոյանալ քեզ ով տ՜ր իմ:
Եւ եղո՞ւկ , Թէ որքան՝ դոյնինչէ
զոր ես առնեմ : կամ զո՞րքան հա_
կիրճ ժամանակ լցուցանեմ ես ,

մինչ տրամադրեմ զիս առ ՚ի հա-
ղորդիլ : Հազիւ երբեմն բոլորա-
պէս՝ ժողովեմ զիս , եւ անօսրա-
գունեղապէս՝ ՚ի բենաւից տարացն
դութեց մաքրեմ զիս : Եւ իբրաւի
առաջի քոյոյ կենարարի մ̃ծու-
թ̃եդ , ոչ ինչ անպատեհ խորհո-
ւրդ պարտէ ինձ հանդիպիլ , եւ ոչ
ոք ստեղծուած տիրել պարտի-
մտաց իմոց : Քան զի ոչ զհրեշտակ,
այլ զտէրն հրեշտակաց ընդունիմ
յօթեւանի իմում :

6. Է՛ սակայն մեծ իմն տա-
րակուսութ̃ի ՚ի մէջ տապանակի
ուխտին , հանդերձ իւրայնօք ա-
նօթիւք սրբազանիւք , եւ ի մէջ մաք-
րագունեղի մարմնոյ քոյ հանդերձ
իւրայնօք անճառելեօք զօրութ̃եք;
՚ի մէջ օրինաւորաց այնոցիկ սր

բազ

բազնագործութեանց նախաձեւա_ցուցչաց հանդերձելոց, և 'ի մէջ նո_րին ճշմարտին մարմնոյ քոյ, բը_նաւից հնոց սրբազնագործութեանց լրացուցչին :

7. Ընդէ՞ր ուրեմն յաւէտ ոչ բորբոքիմ առ մեծարելի քոյդ ներկայութիւն: Եւ հի՞մ մեծագունիւ հոգաբարձութեամբ ոչ նախապատրաստեմ զիս առ 'ի ընդունիլ զքոյդ սրբազնութիւն: Որով հետեւ հինքն այնոքիկ մեծ նահապետք և մարգարէք, թագաւորք և իշխանք, համայն ընդհանուր ժողովրդով ցուցանէին զայնքան խղճ ջերմե_ռանդութիւն խնկէմս պաշտաման ածայնոյ :

8. Կաքաւեաց առաքինա_գունեղ արքայն Դաւիթ հա_

ձայնու կարողութէ առաջի տա-
պանակին ա̄յ, վերայադրելով ըզ
բարերարութիս վաղուրեմն չնոր-
հեցելոյս Հօրդ իւրոյ: Նյաղմեաց
զզան ողանս տեսանս գործարա-
նաց երգոց: Հրատարակեաց զսաղմ-
ոսս, եւ ներկայացոյց երգիլ համ-
դերձ ուրախութէ: Ներբողեաց
եւ ինքն զնոյնս ըն քնարով: Ներ
չնչութէ սրբոյ Հոգւոյն չնորհաց
ուսոյց ժողովրդեանն Իսրայելի,
ընդորով սրտիւ գովաբանել զա̃ծ,
եւ համաձայնիւ բերանով իւրա-
քանչիւրս ա̂ւուրս բարեբանել եւ
քարոզել զնոյնն: Հոր՝ եթէ ներ
գործիւր յայնժամ այնքան ջեր-
մեռանդութի, եւ արտասուակայանայր
յանդիման տապանակին կտակի
վերայիշուածն ա̃ծայնոյ փառաւորութե,
Որքան

Որքան այժմ պիտոյէ ինձ, և համայնի ժողովրդեանն քրիստոնէի ունել զվերայարգութիւն, և զջերմեռանդութի̄ առաջի սրբազնութեան, և 'ի ճաշակումն գերազանցագունն ղի մարմնոյն Քի̄ :

9. Ընթանան բազումք առ զանազանս տեղիս, 'ի տեսանել զաշխարս սրբոց, և աջանչանան 'ի լսելն զվարս նոցին, վերանկատեն զմեծաշէն տաճարս, և համբուրեն զսրբազանս ոսկերս նոցին ներպատեցեալս յապրշումեղէնս և յոսկիս: Եւ ահա՜ սակս դու ներկայ ես աստ առնի 'ի վե̄ սրբոյ սեղանոյս ո̄վ ա̄ծ իմ, և սր̄դ սրբոց, ստեղծիչդ մարդկան, և տ̄դ հրեշտակաց: Բայց միջս ըն տեսանելիս այնպիսիս սնոտի զբօսումն միայնէ մարդկան,

Եւ'նո

եւ նորութեն տեսանեցելոց : եւ դոյնինչ երեւի պատուղ զապտութեն : Եւ մանաւ՟անդ, ուր է՛ յոյժ թեթեւ, եւ առանց ճշմարտի ապաշաւութեն տըրամընթացութի : Իսկ աստ ըն սըբազնութեն որ է 'ի վ՟ի սրբոյ սեղանոյս, բոլորդ ներկայ ես ա՟ծ իմ, եւ մարդ, յս՟ քս՟ : ուր վերստանանի առատագոյն պտուղ յա՟ւիտենականի կեցութե . որքանիցս՝ արժանապէս՝ եւ ջերմեռանդապէս՝ զեր ընկալեալ լինիս : Բայց առայս ո՛չ կարէ քարշել զոք թեթեւութի ինչ, եւ ո՛չ սնոտի զբօսութի, ո՛չ իսկ ըզգայականութի: այլ ըստ հաստատուն հաւ՟ատ, առաքինի յոյս, եւ մաքուր սէր :

10. Ո՜ անտեսանելի ճարտարապետդ աշխարհի ա՟ծ, որպէս՝

սքան

ողջամնչաբար ներգործես ընդ մեզ, և որպէս քաղցրաբար, և համոյաբար տրամադրես ընդ ընտրեցելոց քոց: որոց զքեզ ըն սրբազնութե ՙի ճաշակութիւն առաջադրես: Քանզի այս զա̃մ իմացողութի մարդկան զերազանցէ, և յատկապէս՝ զսիրտս առաքինեաց առքարշէ ։ և զինդս բորբոքէ: Ոի քոյք ճշմարիտք հաւատարիմք, որք զբոլոր կեանս իւրեանց տրամադրեն առ ՙի զգաստութիւն, յայսմանէ արժանաւորեղէ սրբազնութե, զմեծ շն նորհ ջերմեռանդութե և զճշմարիտ սէր առաքինութե յաճախապէս վերընդունելին:

11. Ո՜վ զարմանալի, և ծածկեցեալ շնորհ սրբազնութե, զոր ճանաչեն միայն հաւատացեալք

քի ; Իսկ անհաւատք եւ ծառայք մեղաց , ոչ կարեն ներհմտանալ ։ Այսու սքանչութ՟ե յարաբերի հոգեւոր շնորհ , եւ վերանորոգի ընդ հոգ՟ւոյ կորուսեցելոյն առաքինութ՟ի: վերստանի իսկ գեղեցկութ՟ին, խորթնացեալ ՚ի ձեռն մեղաց ։ Եւ այնք՟ն առաւել է երբեմն այս շնորհ , մինչ զի ՚ի լրութ՟ե առաքերեցելոյ ջերմեռանդութ՟ե, ոչ միայն միտ, այլ եւ տկար մարմինն զգայցէ պատա տագոյնս կարողութ՟իս ձրեցեալս ինքեան ։

12. Սակայն կարի ցաւիլ պարտիմք եւ ողորմիլ յամրութ՟ե մերում, եւ խստունկանութ՟ե , որ ոչ մեծապունիւ ըղձիւ դիմիցեմք ՚ի ընդունելիլ զքե՟ , նորում քոլոր յոյս եւ արդիւն կեցուցանելեաց կայանայ ։

նայ ։ Քանզի նա՛ է սրբութի մեր , և փրկութի ։ Նա՛ է մխիթարութի ճանապարհորդաց , և յաւ՜իտենական զմայլումն սրբոց ։ Յաւելի՛ է ուրեմն , զի քաղումք զփրկականս զայս խորհուրդ , դոյնինչ ՚ի միտ ածեն ։ որ ուրախանան զերկին , և պահպանէ զընթհանուր աշխարհ ։ Մ՞հ կուրութե , և խստութե սրտի մարդկայնոյ , որ զանձառելի զայս պարգև յաւ՜էտ ո՛չ ածէ ՚ի միտ ։ այլ հանապազորդականաւ սովորութե անկանի ՚ի յապաւել անհոգութի ։

13. Քանզի եթէ այս սրբազնագունեղ սրբազնութի հաւակիւր միայն ընդ միուոմ տեղւոջ , և ՚ի մէն միայնոյ քահանայէ , սրբազնագործիւր ընդ բոլորում աշխարհի ։ Մ՞ ըքանիւ ըղձիւ այնորիկ տե֊

ղւոյ ,

զե̂ոյ, և այնորիկ քահանայի եմ, զգած էին մարդիկ, առ՚ի տեսանել զհռչակումն ա̃ծայնոյ խորհրդոյն։ Իսկ այժմ, որ բազմացան քահանայք, և ըն բազումս տեղիս մատուցանի քս̃, զի առաւ̂ել երևիցի շնորհ, և սէրն ա̃յ ՚ի մարդիկ։ Տ̃ր որքան առաւել է սրբազան հաղորդութիւն սփռեցեալ ընդ տիեզերս։ Վ̃ն որոյ գոհութիւն քեզ բարի քս̃, հովիւ մշտնջենաւ̂որ, որ զմեզ զաղքատս, և պանդուխտս, որ ժամանցուցեր, յագեցուցանել քոյով պատու̂ական մարմնով և արեամբ, և ընդունել զայս խորհուրդ, նոյն՝ և հրաւ̂իրել պատգամաւ քոյոյ սեփականի բերանոյ, ասելով։ Եկայք առ իս ա̃մք աշխատեցեալք և բեռնաւ̂որք, և ես հանգուցից զձեզ։ Գլուխ.

## Գլուխ. Երկրորդ:

### Թէ մեծ բարութիւն, և սէրն այ ընդ սրբազնութեան ընձեռուն մարդկան:

Ձայն աշակերտին:

1. Ի բարութիւն քո, և ՚ի մեծ ողորմութիւն քո տէր իմ ապաւինեցեալ, մատչիմ տկար առ կեցուցիչդ, քաղցեալս և ծարաւի առ աղբիւրդ կենաց, աղքատս առ արքայդ երկնից: Ծառայս առ տէրդ, ստեղծուածս առ ստեղծողդ, ՚ի բաց լքեցեալս առ մխիթարիչդ իմ գթած: Բայց ուստի է ինձ այս, զի գայցես առ իս: Եւ զինչ եմ ես,

զի

զի շնորհիցես ինձ զքեզ ։ Զի ո՞րք-
կարեմ մեղաւո՛րս երեւիլ առաջի
քոյ ։ Եւ ո՞րպէս արժան համարիս
դու գալ առ մեղաւո՛րս ։ Քան զի
դու ճանաչես զծառայ քո, եւ գի-
տես, զի զոչինչ բարի՛ոյ ունի յին
քեան, որոյ սակս զայս շնորհիցես
նմա ։ Խոստովանիմ ուրեմն զաղ-
տեղութիւնիմ, եւ գովաբանեմ զբա-
րեգթութիւն քո, եւ զգոհութիւնս մա-
տուցանեմ սակս սիրոյ քոյ ։ Զի
վասն քոյ զայս առնես, եւ ո՛չ վասն իմոց
արդեանց ։ Այլ զի քոյդ բարութիւն
յայ՛տ ինձ յայտնիցի, սէր քո ա-
ռաւելապէս ներկրիցի, եւ խոնար-
հութիւն քո, կատարելապէս գովի-
ցի ։ Եւ քան զի քեզ հաճոյէ այս,
եւ դու հրամայեցեր այսպէս լինիլ,
հաճոյէ ուրեմն եւ ինձ քոյդ արժա-

նաւ

նա՛ւորութիւն: Եւ երանի թէ սնօ րէնութեն իմ ոչ արգելուցու:

2. Ո՛վ քաղցրագութեղ, եւ ամենագթած յո̃, զո՛րքանս մեծարանս եւ զշնորհակալութիւս հանդերձ մշտնջենա՛ւորիւ գովութե̃ ասկս ընդունելոյ պարտազան մարմին քո սպասաւորիս քեզ, որոյ զարժանապատուութի̃ն ոչ ոք ՚ի մարդկանէ կարօղ է ճառել: Բայց զինչ խորհեցայց յայսմիկ հաղորդութ̃է, ՚ի մերձենալն առ տր̃ իմ, զոր ոչ կարեմ արժանապէս մեծապատուե՛լ, սակայն ջերմեռանդապէս քաղձամ մերընդունիլ: Զինչ խորհեցայց բարեգունապէս՝ եւ օգտակարապէս՝, բայց յայնմանէ, զի քոլորապէս՝ խոնարհեցուցանիցեմ զիս առաջի քո, եւ զքոյդ անհուն

բարութիւն ՚ի վերայ իմ բարձրացուցա-
նիցեմ: Գովեմ զքեզ տէր իմ, և
յաւիտեան բարձրացուցանեմ ;
Արհամարհեմ զիս, և խոնարհե-
ցուցանեմ առաջի քո, մինչև ՚ի-
խորութիւն նուաստութեան իմոյ:

3. Ահա՝ դու սրբութիւն սր-
բոց, և ես աղտեղութիւն մեղաց ;
Ահաւասիկ՝ դու խոնարհիս առ
իս, որ ոչ եմ արժանի ակնարկել
առ քեզ: Ահաւասիկ՝ դու գաս
առ իս, և կամիս գոլ ընդ իս, դու
հրաւիրես զիս առ քոյդ խրախ-
ճան, դու շնորհել կամիս ինձ զեր-
կնային կերակուր, և զհաց հրե-
շտակաց առ ՚ի ճաշակել: Ո՛չ զայլ
ինչ, այլ զքեզ ինքն, զհացդ կեն-
դանի, որ ՚ի յերկնից իջեր, և տաս
զկեանս աշխարհի:

Ահա՝

4. Ահա՛ այսէ՛, ուստի սէր
ելութին յառաջագայի : Արդ՛ ո՞ր
պիտի է՛ այս արժանաւորութիւն որ
արտամիայլէ : կամ որքան՛ մեծա-
մեծք շնորհակալութիւք , և գովու-
թիւք սակս այսոցիկ քեզ վերընծա-
յել պարտին : Ո՜ թէ որքան՛ առող-
ջարար , և օգտակար է քոյդ խոր-
հուրդ , որ զայս հաստատեցեր :
և որքան՛ քաղցր, և վայելուչ է խրախ-
ճանն , նորում զքեզ շնորհես մեզ
՚ի կերակուր : Ո՜ թէ որքան զար-
մանալի է գործ քո տր , որքան կա-
րող է զօրութիւն քո , և որքան անճա-
ռելի է ճշմարտութիւն քո : Քան զի
ասացեր և եղեն ամէն , և եղև այն,
զոր հրամայեցեր :

5. Է՛ իր զարմանալի, և հա-
ւատարմութեան արժանի , յաղթա-

հարօղ եւս մարդկայնոյ իմացողու-
թէ, զի դու տ̅ր իմ եւ ա̅ծ իմ, ճշ-
մարիտ ա̅ծ եւ մարդ, 'ի ներքոյ փո-
քու տեսակի հացի եւ գինւոյ ամբող-
ջապէս՝ պարունակիցիս : Եւ անհա-
տաբար 'յընդունողաց ճաշակի-
ցիս : Դու ո՛վ տ̅ր̅դ բոլորից, որ
ո՛չ ուրուք ունիս զկարօտութ̅ի,
եւ կամեցար 'ի ձեռն սրբազնութ̅ե
բնակիլ 'իմեզ, պահեա՛ զսիրտ իմ,
եւ զմարմին իմ անբիծ, զի զուա՛ր
թիւ, եւ մաքրով ըստգիտութ̅է,
մարթիցիմ բազմիցս ճաշակել ըզ
քոյդ խորհուրդ : Եւ առնուլ 'ի կե-
ցութ̅ի իմ մշտնջենաւո՛ր, զոր դու
'ի մեծագոյն պատիւ քո, յիշատակ
անջնջելի սրբեցեր, եւ ներկայա-
ցուցեր :

6. Ուրախ լեր հոգի իմ, եւ

շնոր

շնորհակա՛լ լեր զոյ սակս այսքա-
նւոյ պարգեւոյ պատուա՛կանին , եւ
ամփոփութԹէ եղականին , նորայսմիկ ձո-
րոյ արտասուա՛աց քեզ Թողեցելոյ :
Քանզի որքանիցս մերապատու-
ւ՛եա զխոնարհութիւն զայս , եւ ընդու-
նիս զմարմինն քո : եւ յնքանիցս
առնես զգործ քոյոյ փրկութԹէ: Եւ
լինիս մասնակից բնա՛ւից արդ-
եանցն քո : Քանզի ո՛չ երբէք նո-
ւազի սէրն քո , եւ ո՛չ երբէք սպառի
մեծութԹի քաւչարարութԹէ նր :
Այս որոյ նորիւ միշտ նորոգութԹէ
մտաց պատրաստս զքեզ առ այս արտ-
մադրել : Եւ զմեծ խորհուրդ փրկու-
ԹԷ , զգուշիւ վերանկատմամբ ՚ի
միտ ածել : Եւ ա՛յնքան մեծ , նոր ,
եւ վայելուչ քեզ տեսանիլ պարտի
այս սրբազնութԹի , մինչ հաւաչա-

կեա, կամ լսես ըղձատարագ, որ ոչես Թէ ՚ի նոյնում աւուր քրիստոս յղացեալ ՚ի յարգանդի կուսին, ՚ներմարմնանայր, կամ կախեալ՚ի խաչին վս̄ կեցութե̄ մարդկան, չարչարիւր, և մեռանէր։

## Գլուխ. Երրորդ։

### Թէ օգտակարիցէ միշտ հաղորդիլն ։

### Զայն աշակերտի ։

1. Սահա աւասիկ՝ ես առ քեզ գամ տր̄ իմ, զի բարի լինիցի ինձ շնորհիւ քով։ և ուրախացայց ըն խրախճանն քում սրբազանի, զոր պատրաստեցեր քաղցրութե̄

քով

քով աղքատն ա͞ծ ։ Ահաւասիկ՝ ՚ի քեզ է բոլորն զոր ցանկալ կարեմ և պարտիմ ։ և դու ես կեցութ͞ի իմ և փրկութ͞ի իմ, յոյս իմ և արիութ͞ի իմ, վայելչութ͞ի իմ և փառն իմ ։ Ուրախացո՛ ուրեմն այսօր զհոգի ծառայի քո ։ Քանզի առ քեզ տ͞ր իմ յ͞ս համբարձի զանձն իմ ; Եւ բաղձամ նարդեանս ջերմեռանդապէս՝ և յարգօրէն զքեզ վեր ընդունել ։ Ցանկամ իսկ ներածել զքեզ ՚ի տունն իմ, ո͞պզի ընդ Զաքէի արժանաւորեցիմ ընդունել զքոյդ օրհնութ͞ի, և համարել ՚ի թիւս որդւոյն Աբրահամու ։ Զի հոգի իմ ցանկայ քում մարմնոյ, և սիրտ իմ բաղձայ միաւորել ընդ քեզ ։

2, Արդ՝ աւանդեա՛ ինձ զքեզ,

Լիբաւականն է ինձ : Քանզի բայց ՚ի քէն ո՛չ ոք մխիթարութի՛ արժէ ինչ : զի առանց քեզ գոլ ո՛չ կարեմ, և առանց այցելութե՛ քոյ կեալ ո՛չ մարթիմ : Վասն որոյ պարտ է ինձ յա՛ճախապէս՝ մատչիլ առ քեզ , և ըն դունիլ զքեզ զայլեղանխու կեցութե՛ իմոյ , զի մի՛ գուցէ նուաղիցիմ ՚ի ճանապարհի , գոլով զրկեցեալ ՚ի յուռճկէ երկնայնոյ : Քանզի դու ով ամենողորմ յս՛ , ՚ի քարոզելն քո ժողովրդեան , և ՚ի բժշկելն զպէս պէս ցաւս նոցին , ասացեր երբեմն : Ո՛չ կամիմ արձակել զնս՛ նօթիս ՚ի տունս իւրեանց , զի մի՛ նուաղիցեն ՚ի ճանապարհի : Արա՛ սուրինակս ըստ այնմ և ընդ իս , որ զքեզ սակս մխի թարութե՛ հաւատացելոց թողեր ըն սրբազնութե՛ : Օհ դու ես

քաղցր զովացուցմն հոգեաց , և որ զքեզ արժանապէս ճաշակէ , լինի մասնակից , և ժառանգորդ յաւի-տենականաց փառաց : Եւ իրաւի հարկաւոր է ինձ , որ այնքան բազմիցս սահիմ , և մեղանչեմ , և այնքան ընդարմանամ , և նուաղիմ , զի ՚ի ձեռն յաճախից աղօթից , և խոստովանութեանց , և ՚ի ձեռն վեր ընդունելման սրբազանն մարմնոյ քո , վերանորոգիցեմ զիս , մաքրիցեմ , և բորբոքեցեմ ; մի՛ գուցէ ըզ բազում ժամանակս ՚ի բաց կալով , ՚ի սրբազանն նմին յառաջադրութ͞է անկանիցիմ :

3. Քանզի մեղքն են պգայութ͞իք մարդկան առ չարն ՚ի մանկութ͞է իւրեանց : Եւ եթէ ոչ հաստանիցէ ՚ի յօգնութ͞ի ա̃ծայլն ապեղա-

նին ,

նին , վաղվաղակի սահին ՚ի չարա_
գոյնս : Իբրեւ զի քաջ է ուրեմն զմար
դիկ ՚ի չարէն հաղորդութենէն սր
բաղձան , եւ հաստատէ զնոսա ՚ի բա
րին : Քանզի եթէ այժմ այսքան
յոյլ , եւ յամր եմ , մինչ հաղորդիմ ,
կամ պատարագեմ , զինչ եղիցի
յայնժամ , մինչ զդեղ ինչ ո՛չ ըն
դունիցիմ : Եւ ո՛չ խնդրիցեմ զայս
քան մեծ օգնութիւն : Եւ թէպէտ
ո՛չ եմ ընդունակ յամենայնում ա_
ւուր , եւ ո՛չ բարեպէս տրամադրեց
եալ ՚ի պատարագել : Սակայն տա
րոյց զփոյթ ընդպատեհս ժամա_
նակս , առ ՚ի ընդունել զնծայինս
խորհուրդ , եւ առնել զիս մաս
նակից այսքանում շնորհի : Զի
զի այս է մնանա՛ ադուկան իմն մխի
թարութիւն հոգեւոց հաւատացե_
լոց ,

լոց, ըստ որքան ժամանակ պանդխ-
տին նայամին մեռելոտւոյ մարմնո-
ում: զի բազմիցս իբր յիշատակ
ծյն իւրոյ, մտօք ջերմեռանդութեք
վերընդունիցի զբաղձալին իւր ։

4. Ո՜վ սքանչանալի քոյոյ առա-
քինութե՛ 'ի դէմս մերս արժանա-
ւորութեան, որ դու տր̄ իմ և ա̄ծ իմ,
ստեղծող և այցելու ամենից հո-
գեաց, առ աղքատիկ հոգի իմ գալ
արժան համարիս, և բոլորիւ քոյով
ա̄ծութեք և մարդկութեք պա-
րարտացուցանել զախորժակն նո-
րին ։ Երջանիկ է միտս, և երանեց-
եալ է հոգին, որ զքեզ տր̄ և ա̄ծ
արդիւնաւո՛րն ջերմեռանդապէս՝
վերընդունիլ, և 'ի վերընդունիլն
զքեզ հոգեկանաւ ըմանիլ խնդութեք ։
Ո՜ թէ որքան մեծ է տր̄ զոր ըն-

դու-

դուստի, որքան բաղձալի՛ է զոր ածէ ՚ի յօթեւան իւր, որքան վայելուչ է զոր ընդունին յընկերակցութ̅ի, որքան հաւատարիմ է զոր ընդունին ՚ի խնդրելութ̅ի, եւ որքան գեղեցիկ է եւ պատուական փեսայն, զորոյ փառս: զի է առաւել ք̅ զբնաւս սիրելիս. եւ է՛ սիրելի ի վեր քան զբնաւս ցանկալիս: Լռեսցեն առաջի երեսաց քոց ով նազելի իմ քաղցրագունեղ, երկին եւ երկիր, եւ ա̅մ զարդ նոցա: Քան զի զորինչ ունին գովելի, եւ վայելուչ, են յարժանաւորմանէ քոյոյ ձոխութե, եւ ոչ երբեք ժամանեսցեն ՚ի վայելչութ̅ի քոյոյ անուան, որոյ իմաստութեն ոչ գոյ թիւ:

## Գլուխ. Չորրորդ :

### Թէ բազում են բարիք պարգևի- ցին ջերմեռանդապէս հա- ղորդեցելոց :

1\. Տէ՟ր իմ և ա՟ծ իմ, ժա-
մանեա՛ քում ծառայի
օրհնութ՟բ քաղցրու-
թե՟ն քո: զի առ քոյդ-
մեծայարգու սրբազնութի, արժա-
նապէս՝ և ջերմեռանդապէս՝ ար-
դիւնաւորիցիմ առմատչիլ: Զար-
թո՛ զսիրտ իմ առ քեզ, և մերկացո՛
զիս ՚ի ծանրութէ այսորիկ մար-
մնոյ: Այց արա ինձ ՚ի փրկութե՟
քում, առ ՚ի ճաշակել հոգ՟ւով ըզ
քաղցրութի քո, որ նայսմիկ սր-

բազ

բաղձութէ , եթէ ըն յաղէեր լեա_
պէս՝ ծածկի : Լուսաւորեմ եւ
զաչս իմս , առ՚ի տեսանել զխոր
հուրդս այս մեծ , և կարողացո զիս
առ՚ի հաւատալ զնոյնս , աներկբա
յիւ հաւատով : Քանզի ոչ է կա
րողութի մարդկան քոյդ գործառ
նութի , և ո՛չ է մտացածին մարդ
կան քոյդ սահմանադրութի : Ուս
տի առ՚ի իմանալ և ընդունել զայս;
ո՛չ որք յինքէնէ գտանին ընդունակ,
զի գերազանցէ եւս զհրեշտակային
նրբութի , Օհ՜չ ուրեմն եւ մեղա
ւորս , և անարժանս , հողս , և մո
խիրս , կարեմ զայսքան վեհագոյն
սրբազնութի հետազօտել , եւ ի_
մանալ :

2. ՍՈՒՐԲ իմ մաքրութէ սրտի
իմոյ , բարեաւ և հաստատանով հա

ւատով ,

ճառով, քոյով ևս հրամանաւ,
հանդերձ յուսով, և պատկառա-
նօք առ քեզ մերձենամ, և ճշմար-
տապէս՝ հաւատամ, զի դու ներ-
կայ ես յայսմիկ սրբազնութե̄ ա̄ծ,
և մարդ: Կամիս ուրեմն զի վեր-
ընդունիցիմ զքեզ, և զիս սիրով
միաւորիցեմ ընդ քեզ: Ուստի
աղաչեմ զքոյդ բարեգթութի̄, և
մաղթեմ, շնորհել ինձ, զտեսա-
կաւոր իմն շնորհ առ այս, զի բո-
լորապէս՝ ի քեզ հալեցեալ, սիրով
քով զեղանիցիմ, և զոչինչ յօտա-
րայնոյ մխիթարութե̄ զխոյզ ու-
նիցիմ: Քանզի այս բարձրագու-
նեղ և ամենապատուական սրբազնութի̄ս
է՛ կեցութի̄ հոգւոյ և մարմնոյ իմոյ,
և սպեղանի բնաւից հոգեկանաց
հիւանդութե̄ց իմոց: Որով մոլու-

թի̄ք

թիւք իմ փառաւորին, ախտք իմ սան ձահարին , և փորձութիւք իմ յաղթահարին , կամ նուաղին : Սովաւ հեղանի մեծագոյն շնորհ, առատանայ սկսեցեալն առաքինութի հաստի հաւատն , հաստատի յոյսն, և բորբոքեցեալ տարածի սէրն:

3. Քան զի զբազումս շնորհեալ ես բարութիս , և տակաւին զբազումս շնորհես ՚ի ձեռն սրբաղնութե , քոյոց սիրելեաց ջերմեռանդապէս՝ հաղորդողաց : Ընծիմ ընդունող հոգւոյ իմոյ , փառաւորիչ հիւանդութէ մարդկայնոյ, և շնորհօղ զմի մշտնջենաւորի մխիթարութե : Զի զբազումս մխիթարութիս ներհեղուս ՚ի նոսա ընդդէմ զանազանից նեղութեց , և ՚ի խորոյ սստորանկման նոցին յատկականի ,

կանի , վերածես 'ի յոյս քոյոյ նա-
խախնամութե՟ , իսկ և նորով իւ՟իք
շնորհիւ ներքսապէս՝ զու՟արթա-
ցուցանես , և լուսաւորես : Զի
որք տագնապեցեալք 'ի նախնումն,
յառաջքան զհաղորդութի՟ն, Թարց
ըղձի իմիք զմնքեանս զգայի՟ն , Զկ
նի զու՟արթացեալք կերակրով , և
ըմպելեաւ երկնային փոխարկեց
եալս 'ի բարեգոյնս գտանիցեն զին
քեանս : Եւ մի՛ այնորիկ տուատ-
ձրապէս՝ վարիս ընդ ընտրեցելոց
քոց, կի ճշմարտապէս՝ ճանաչիցեն,
և յայտնապէս ներհմտանայցեն ,
թէ որքան տկարութի՟ս ունիցին
յինքեանս, և թէ որքան շնորհս
վերընդունիցին 'ի քէն : Քան զի
'ի յինքեանց , ցուրտք , խիստք , և
անպտուղքինք են , իսկ 'ի քէն , Ջեր

մեռանդք, զօ՛րութք, և առաքե-
նիք արդիւնաւո՛րին լինել : Զի
ո՞վ է որ մերձենայ խոնարհաբար
առ աղբիւրն քաղցրութե՛ն , և ո՛չ
վերընդունի անտուստ զսակա-
ւինչ քաղցրութե՛ն ; Կամ ո՞վ է որ կայ
առ առատագոյն ինչ հուր , և ո՛չ
զգայ անտուստ զսակաւ ինչ ջեր-
մութե՛ն : Եւ ահա դու աղբիւր ես ,
յաւ՛էժաբար լի , և ամենառատ :
նմանապէս՝ և հուր բորբոքեցեալ ,
և անսպառ :

4. Ուստի եթէ ո՛չ է ինձ ձահ
յուզել ՚ի լիութե՛ն աղբերն , և ո՛չ լոյ
քոն է մինչև ցյագեցութի՛ն արբել:
Եդից սակայն զբերան իմ ՚ի յանկն
երկնայնոյն ծորանի , զի փարթամ՝
անտուստ զկաթիլ իմն փոքրիկ ըն-
դունիցիմ , առ ՚ի զովացուցանել ըզ

ծարաւ

ծառայութիւն իմ, և մի խնայեա առ
չորեցին: Եւ եթէ ոչ բոլորովիմք
երկնային, կամ այնքան հրաշեալ,
մինչ զի Սերոբէ, և քերոբէ գոլ
կարեցեմ, Մանաւանդ սակայն ջեր
մեռանդութեան պաշտպանել, և նա
խապատրաստել զանիրաւ իմ, զի զո
նեա գտնիցիմ՝ ի ծայնոյ լուցման
զբոյն, հեշտականաւ ընդունմամբ
կենարարի սրբազնութեան համաս
տանայցեմ: Բայց սակայն որինչ
պակասին ինձ, ով բարերար, և մերկից
ամենասուրբ, լրացո՛ դու փոխա
նակ իմ զթածապէս՝, և վայելչա
պէս՝: որպամենեւեան արժանիս
համարեցայց կոչել առ քեզ աւելով:
Եւ կայք առ խո ամենեքեան աշխա
տեցեալք և բեռնեցեալք, և ես հան
գուցից զձեզ:

5. Ես Թերեւս աշխատիմ քր
տամբք երեսաց իմոց, տագնապիմ
ցաւ̂օք սրտի իմոյ, ծանրանամ մե
ղօք, վշտագնիմ փորձութե̄բք, եւ այլ
ովք բազմօք տգեղիւք ախտիւք
պատաղիմ, եւ վարանիմ: Եւ ո՛չ է
այլոք որ օգնիցէ, ո՛չ ոք է, որ փրկիցէ.
Եւ ո՛չ ոք որ̄ ապրեցուցանիցէ, բայց
՚ի քէն տր̄ ա̄ծ իմ եւ փրկիչ իմ, առ
որ յանձնեմ զիս եւ զիմայինս հա
մայնս, զի պաշտպանիցես զիս, եւ վե
րածիցես ՚ի կեանս յաւ̂իտենականս:
Ուստի վերընկալ զիս ՚ի գովութի̄
եւ ՚ի փառս անուա̂ն քոյ, որ զմարմին
քո եւ զարիւն, ՚ի կերակուր, եւ յըմպէ
լի ինձ պատրաստեցեր, եւ շնորհեա՛
տր̄ ա̄ծ իմ եւ կեցուցիչ իմ, զի յա
ճախելով առ քոյդ խորհուրդ, աճի
ցի իղձ ջերմեռանդութե̄ իմոյ :

Գլուխ.

## Գլուխ. Հինգերորդ :

### Յաղագս արժանաւորութե սրբ բաշխութէ, և կարգութեան քահանայականի :

### Ձայն աշակերտի :

1. Եթէ ունէիր զհրեշտակական մաքրութի, և երանելոյն Յոհաննու մկրտչի զսրբութի, ոչ էիր տակաւին արժանի առ ի ընդունելոյ կամ առձեռնել զայս սրբազնութի : Քանզի ոչ է ըստ երախտեաց մարդկան, թէ որ սրբազնագործիցէ, կամ շօշափիցէ զսրբազնութիւն քն, և ճաշակիցէ զհացն հրեշտակաց : Ոի մե

ծէ խորհուրդն, և մեծէ արժա_
նաւորութեն քահանայական; Որոց
արեցեալէ այն, որ ո՛չ է չնորհեցեալ
հրեշտակաց : Վ՛ս զի քահանայք
միայնք օրինաւորե՝ յեկեղեցւոջ
ձեռնադրեցեալք, ունին զկարողու
թի պատարագելոյ, և սրբազնա_
գործելոյ զմարմինն քի : Եւ թէ_
պէտ քահանայն պաշտօնեայ ա՛ն
է, որ՝ ինքն արկանէ զբանն ա՛յ, ՝ի
ձեռն հրամանաց, և սահմանադ
րութեն ա՛յ : Այսպէս ա՛ծ է՝ անդ
առաջին հեղինակ, և անտեսանելի
ներգործիչ, որոյ ՝ի ներքոյ գոյ ա՛մ
ինչ զոր կամի, և լինի ա՛մ ինչ զոր
հրամայէ :

2. Չուաւել ուրեմն հաւա_
տալ պարտիս ա՛յ ամենակարողի,
նայսմիկ զերապանցագութեանցն սր

բոց

բաղնութե̃ , քան թէ քում սեփհա-
կանի զգայութե̃ , կամ այլում ու-
մեք նշանի երևելոյ : Ուստի հան
դերձ երկիւղիւ , և պատկառանօք
պարտէ մերձենալ առ այս գործ :
Արդ զգուշ լեր ՚ի քեզ , և տես , թէ
որպիսի պաշտօն ա̂ւանդեցեալ իցէ
քեզ , ՚ի ձեռն ձեռնադրութե̃ եպիս
կոպոսին , որասէ : Ահա̂ւասիկ
եղեր քահանայ , և սրբազնագործե-
ցար առ ՚ի պատարագել : Արդես
այժմ թէ որպէս հա̂ւատարմա-
բար և ջերմեռանդապէս ՚ի ժամա-
նակի քում պատարագես մատու-
ցանել ա̅յ զպատարագ : և ցուցա-
նել զքեզ անբասիր : Զի ոչ թե-
թևացուցեր զբեռն քո , այլ ՚ի ներ
քոյ ծանրագունի լծոյ կրթութե̃
կապեցեր զքեզ , զ̂ի որոյ պիտոյ է

ընդ կատարելագոյն սրբութ͞ն :
Քան զի պա՛րտէ քահանային բնա
ւիւք զօրութ͞եք զարդարել, և ըն
ձեռել այլոց զօրինակ բարի, և ո՛չ
կենցաղավարիլ ՚ի ճանապարհս աշ
խարհականաց, կամ ընդ արանց
կատարելոց ՚ի կերպի :

3. Քահանայ սրբազանիւք
զարդուք զգեցեալ, է՛ փոխանորդ
ք͞ի, զի զ͞ա͞ծ սակս իւր, և սակս հա
մայնի ժողովրդեանն, հեզապէս՝
և խոնարհապէս՝ աղերսիցէ : Ու
նի յետկոյս, և յառաջկոյս զնշան
տէրունականի խաչին, ՚ի յիշատակ
չարչարանացն ք͞ի : Յառաջկոյսն
շուրջառին կրէ զնշան խաչին, զի
զշաւիղս ք͞ի զգուշապէս՝ նշմարի
ցէ : և ջանայցէ ջերմապէս՝ նմին հե
տեւիլ : Իսկ յետկոյսն նորին խա

չիւ

չիւ նշանեցեալ է, զի զիւրաքան-
չիւրս ընդդիմադարձութիւնս ներքեր-
եցեալս յայլուստ, հեզաբար վ̀ն̃ Ա̃յ
բառնայցէ : Առաջին իւր տանի ըզ
խաչն, զի լայցէ զմեղս սեփականս ;
Եւ յետոյ իւր տանի զնոյնն, զի զայ-
լոց եւս յանցանս, ցա̂ւակցաբար
ողբայցէ : Եւ զինքն գոլ միջնորդ ՚ի
մէջ Ա̃յ եւ մարդկան գիտայցէ հաս-
տատեցեալ : Եւ մի՛ յապաղիցի ՚ի մա-
տուցանելոյ զաղօթս, մինչեւ զշ-
նորհս եւ զողորմութիւնս արժան-
ա̂ւորիցի առստանալ : Արդ՝ մինչ
քահանայն մատուցանէ զպատա-
րագ, պատուէ զԱ̃ծ, ուրախացու-
ցանէ զհրեշտակս, վերաշինէ զեկե-
ղեցին, օգնէ կենդանեաց, շնորհէ
մեռելոց զհանգիստ, եւ զինքն ամե-
նից բարեաց առնէ մասնակից :

Գլուխ.

## Գլուխ. ԺԵց Երորդ :

### Հարցումն ներկրթութեան յառաջ քան զհաղորդութիւն : Ձայն աշակերտի :

1. Մինչ զքոյդ արժանապատուութիւն տէր իմ, եւ զիմս նուաստութիւն ՚ի միտ ածեմ, կարի զարհուրիմ, եւ պատկառեմ : Քանզի եթէ ոչ մատչիմ առ քեզ, փախչիմ ՚ի կենաց, իսկ եթէ վարիմ անարժանապէս՝ ներընթանամ ՚ի յանցանս : Զինչ ուրեմն արարից, ով տէր իմ, օգնականիմ, եւ ուղղիչիմ :

2. Դու ուսո՛ ինձ զճանապարհս

պարհս ուղիղս , և առաջնորդեա
զինձ զհամառօտ իմն կրթութի
պատեհ առ սրբազան հաղորդու-
թեն: Քանզի օգտակար է գիտելն,
թէ որպէս ջերմեռանդաբար , և
պատկառօրէն պարտիցէ ինձ նա
խապատրաստել քեզ զսիրտ իմ ·
առ՚ի ընդունել առողջարարաբար
զքոյդ սրբազնութի , կամ առ՚ի
հռչակել զայսքան մեծ ,
և զքաղցրային սրբազնա
գործութի :

## Գլուխ. Եօթներորդ:

### Յաղագս զննման յատկականին խղճի մտաց, և զսպման յառաջադրութէ:

### Ձայն աշակերտի:

1. Աւելեր քան զամ ինչ, հանդերձ ծայրագոյն խոնարհութեամբ սրտի, և մեծաւ երկրպագութեամբ, լիով հաւատով, և բարեպաշտին դիտաւորութեամբ, պատուոյն Այ, պարտէ քահանային Այ մատչիլ առ ՚ի հուչակել, առ ՚ի շօշափել, և առ ՚ի ճաշակել զայս սրբազնութին: Այ որոյ զգուշացես՝ զննեա զխիղճ մտաց քոց, և

ըստ

ըստ կարողութե՟ քում, ճշմարտիւ ապաշաւ՟ութե՟, և խոնարհիւ խոստովանութե՟, մաքրեա՛ զնա, և պայծառացո՛, մինչ զի ոչունիցիս զծանրութի՟ ինչ, կամ զպայցես, որ զքեզ համախայթիցէ, և զազատ մատչումն քո առ այն, արգելուցու: Ըստուցիր ուրեմն զանհաճոյութի՟ ընաւ՟ից քոյոց մեղաց հասարակօրէն, և յաղագս հանապազորդականաց անցու՟ածոց քոց, առաւ՟ել յառակապէս ցաւ՟եաց, և ողբա՛: Եւ եթէ ունիցիս զժամանակ, նաև առանձնութե՟ սրտի քո, զբնաւս թշուա՟ռութիս ախտից քոց խոստովանեաց տ՟յ:

2. Հեծեա՛, և ցաւ՟եաց, որ դեռևս այդ քան մարմնաւ՟որ իցես, և աշխարհական, այդ քան անմեռ

եյաղ

